

Հավելված

Երևան քաղաքի ավագանու

2017 թվականի հոկտեմբերի 31-ի N 56-Ն որոշման

Երևանի զարգացման 2018- 2022թթ. հնգամյա ծրագիր

Միքելի համաքաղաքացիներ

Երևանի 2018-2022թթ. զարգացման տեալականի կենտրոնում քաղաքացին է և նրա կյանքի որակի բարելավումը, արժանապատիվ կյանքի համար բավարար պայմանների ստեղծումն ու ապահովումը:

Երևանի զարգացման 2018-2022թթ. հնգամյա ծրագրում արտացոլված են Երևանի ավագանու ընտրություններում մեր նախընտրական ծրագրի դրույթները:

2800-ամյա մեր քաղաքն ունի ձևավորված ավանդույթներ, ազգային դիմագիծ, երևանցու բնութագիր: Դրա հետ մեկտեղ անժխտելի է արդի կյանքին ու աշխարհին ներդաշնակ և համահունչ քայլերու հրամայականը:

Կոչված լինելով ապահովելու քաղաքի համաչափ և կայուն զարգացումը՝ համայնքի ղեկավարը և ավագանին միաժամանակ պարտավոր են համահունչ քայլեր ձեռնարկել գլոբալացվող աշխարհի մարտահրավերներին դիմակայելու և ժամանակի պահանջներին համապատասխան բարելավված քաղաքային միջավայր ունենալու համար:

Օրենքով սահմանված լիազորությունների պատշաճ իրականացմանը զուգահեռ քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում մեր նախաձեռնած բարեփոխումները կոչված են ապահովելու քաղաքային տնտեսության կառավարման առավելագույն արդյունավետությունը՝ կիրառելով առկա առաջատար փորձը, նորարարական լուծումներ տալով քաղաքային խնդիրներին՝ ստեղծելով բարենպաստ միջավայր և բնակիչների, և՛ քաղաքում գործունեություն ծավալող գործարար շրջանակների համար:

Մայրաքաղաք Երևանը աննախադեպ զարգացում է ապրել հատկապես վերջին տարիներին, վերափոխվել է՝ դառնալով ավելի առաջադեմ, մաքուր, գեղեցիկ, հարմարավետ և հյուրընկալ:

Սակայն դեռևս առկա են հիմնախնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն, և Երևանի զարգացման 2018-2022թթ. հնգամյա ծրագրում դրանց լուծման ուղղությամբ նախատեսվում են հստակ ծրագրեր, աշխատանքներ և միջոցառումներ:

Երևանի հասարակական տրանսպորտի համակարգի բարեփոխումների արդյունքում ակնկալում ենք լուծել հրատապ և օրակարգային քաղաքային այս հիմնախնդիրը՝ միաժամանակ կարևորելով նաև այն փաստը, որ ժամանակակից և քաղաքի պայմաններին համապատասխան ընտրված շարժակազմը կնպաստի ոլորտի անվտանգության բարձրացմանը, քաղաքի կենտրոնի բեռնաթափմանը, խցանումների կրճատմանը, ինչն էլ իր հերթին կհանգեցնի արտանետումների կրճատմանն ու մեր մայրաքաղաքի էկոլոգիական վիճակի բարելավմանը:

Ներկայումս առաջնահերթ խնդիրներից է հանդիսանում վերելակային տնտեսության հիմնահարցը: Պետք է ապահովել վերելակային տնտեսության ամբողջական արդիականացումը և միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգ սպասարկումը:

Աշխարհի մայրաքաղաքների առջև ծառացած հիմնախնդիրներից կարևորագույնն այսօր կանաչ տարածքների ավելացումն է, ինչպես նաև բնապահպանական մարտահրավերներին դիմակայելն ու արդյունավետ լուծումներ մշակելը: Էներգախնայող համակարգերի և ջրային տնտեսության խնայողաբար ու արդյունավետ օգտագործման մեխանիզմների ներդրումով մենք զգալի քայլ ենք կատարել էկո մայրաքաղաք ունենալու հարցում: 2018-2022թթ. ընթացքում ոչ միայն կշարունակվեն և տրամաբանական ավարտին կհասցվեն սկսված աշխատանքները, այլև կիրականացվեն հեռանկարային նոր ու հավակնոտ ծրագրեր: Երևանի համար նոր աղբավայրի կառուցումը և հին աղբավայրերի մեկուսացումը, աղբի տեսակավորումն ու վերամշակումը մեր առաջնահերթությունների շարքում են: Այդ շարքում է նաև կանաչ տարածքների շարունակական ավելացումն ու խնամքը:

Երևանի բնակիչների համար հարմարավետ շենքային պայմաններ ապահովելը, որակյալ կոմունալ ծառայություններ կազմակերպելը առաջնահերթ խնդիրներ են հանդիսանում: Բարեկարգման բոլոր ծրագրերի հիմքում կլինի քաղաքի համաչափ զարգացումը, և հենց այս տեսլականով կշարունակվեն իրականացվել Երևանի փողոցների, մայրերի, ճանապարհների և խաղահրապարակների բարեկարգման և լուսավորված աշխատանքները, ինչպես նաև անհրաժեշտ ու հարմարավետ կահավորանքի ավելացումը:

Կրթական որակի բարելավումը, երեխաների կրթության համար մեկնարկային հավասար պայմաններ ստեղծելը, հասանելիության բարձրացումը, կրթական հաստատությունների պայմանների և հարմարավետության բարձրացումը, ինչպես նաև ներառական կրթության համակարգի զարգացումը ևս քաղաքապետարանի առաջնային խնդիրների շարքում է գնտվում:

2018-2022թթ. զարգացման կարևորագույն ոլորտներից է սոցիալական ապահովությունը: Առաջիկա տարիներին կշարունակվեն հոգածության բազմաշերտ ծրագրեր իրականացվել:

Մայրաքաղաք Երևանը դեռևս ամբողջությամբ և արժանիորեն բացահայտված չէ գրոսաշրջիկների կողմից: Զբոսաշրջության ոլորտը զարգացնելու ուղղությամբ կիրականացվեն մի շարք ծրագրեր, որոնց արդյունքում կավելանա գրոսաշրջիկների թիվը՝ շնորհիվ միջազգային կապերի ընդլայնման և քաղաքային-գրոսաշրջային միջոցառումների կազմակերպման:

Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովումը Երևանի զարգացման ծրագրերի գերակայություններից է: Երևանի քաղաքապետարանը կարևորում է համայնք - մասնավոր հատված համագործակցության հաստատումը և ընդլայնումը քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում՝ նպատակ ունենալով վերջինիս միջոցով ոլորտում ապահովել անհրաժեշտ ներդրումներ, բարձրացնել տվյալ ոլորտներում կառավարման արդյունավետությունը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների որակը՝ ստեղծելով քաղաքային բարելավված միջավայր:

Ապագայի Երևանի տեսլականը կառուցված է մասնակցային կառավարման սկզբունքի վրա. սկզբունք, որի հիմքը արդեն ամրապնդվել է վերջին տարիներին: Էլեկտրոնային կառավարման պարզեցված մեխանիզմները, հասանելիությունը բոլոր տեսակի սոցիալական ցանցերում, կարևոր որոշումներին քաղաքացիների մասնակցությունը հանրային խորհրդատվությունների միջոցով արդեն իսկ գրանցված հաջողություններ են:

Միաժամանակ, ապագայի քաղաքի տեսլականը ենթադրում է էներգախնայող, ջերմախնայող համակարգերի, էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոցների ինտեգրում քաղաքային միջավայր, ինչը հաջողությամբ արդեն փորձարկվել է տարբեր ծրագրերի միջոցով: Այս գաղափարներն իրատեսական են, օրվա հրամայականն են, և դրանց հիմքում ընկած է ժամանակի փիլիսոփայությունը. ամեն ինչ պետք է ծառայի քաղաքացու հարմարավետությանը, ժամանակի խնայողությանը, արագ տեղաշարժին և տեղեկությունների արդյունավետ փոխանակմանը: Առաջիկա տարիներին կշարունակվեն ջանքեր գործադրվել Երևանը «խելացի» քաղաք դարձնելու ուղղությամբ. Երևանն այսօր արդեն բոլոր հիմքերն ունի՝ դառնալու ապագայի քաղաք:

Երևանցու շահերից բխող այս բոլոր ծրագրերը իրականացնելու ենք միասին, համատեղ՝ միասնական ջանքերով, փոխադարձ վստահությամբ՝ ի նպաստ քաղաքացու և հանուն Երևանի:

Տարոն Մարգարյան

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	6
ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ	8
ԵՐԵՎԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ	18
ԳԼՈՒԽ 2. ԵՐԵՎԱՆԻ 2018-2022ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	20
ԳԼՈՒԽ 3. ԵՐԵՎԱՆԻ 2018-2022ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ	22
ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ	22
ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ	33
ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ	38
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ	45
ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ	48
ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ	52
ՏՐԱՆՍՊՈՐՏ	60
ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ.....	66
ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ.....	74
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	81
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ	85
ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ.....	90
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ	93
ԵՐԵՒԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ.....	94
ՄՇԱԿՈՒՅԹ	97
ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ.....	106
ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ.....	111
ԳԼՈՒԽ 4 ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԵՐ	116
ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	116
ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	122
ԱՐԱԲԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	127
ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	133
Է Ր Ե Բ Ո Ւ Ն Ի Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Շ Ր Ջ Ա Ն	137

ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	143
ՄԱԼԱԹԻԱ-ՍԵՔԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	150
ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	156
ՆՈՐՔ-ՄԱՐԱՇ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	162
ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ	166
ՇԵՆԳԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	172
ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ.....	179

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանն աշխարհի հնագույն քաղաքներից մեկն է և գտնվում է Արևելյան Եվրոպայի և Արևմտյան Ասիայի հատման կետում:

Երևանը Հայաստանի 12-րդ մայրաքաղաքն է: Քաղաքը հիմնադրել է Արգիշտի Առաջինը մ.թ.ա. 782 թվականին: Երևանը Հայաստանի խոշորագույն տնտեսական, գիտական և մշակութային կենտրոնն է: Մայրաքաղաքի բնակչությունը կազմում է 1075.8 հազ. մարդ, որը կազմում է հանրապետության բնակչության ավելի քան 35%-ը:

Երևանում է գտնվում Հայաստանի Հանրապետության նախագահի նստավայրը, Ազգային ժողովն ու ՀՀ կառավարությունը, ՀՀ բոլոր նախարարությունները և պետական կառավարման մարմինները, հասարակական և այլ կազմակերպությունների, տարբեր միությունների, հիմնադրամների, հանձնաժողովների, դատաիրավական մարմինների, զանգվածային լրատվության միջոցների գերակշիռ մասը: Մայրաքաղաքում են գործում ՀՀ-ում միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների գրասենյակները, օտարերկրյա պետությունների ներկայացուցչությունները, արտերկրյա ֆինանսական, հասարակական և մշակութային հաստատությունների հայաստանյան գրասենյակներ, Հայաստանում գործող բանկերն ու ֆինանսական հաստատությունները:

Երևանում է գտնվում իր տեսակով եզակի՝ հին ձեռագրերի կենտրոն Մատենադարանը, բազմաթիվ գիտական հաստատություններ, համալսարաններ և ինստիտուտներ, երկու տասնյակ թատրոն և մոտ 60 թանգարան, համերգասրահ և մարզական կենտրոն: 2012թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն Երևանը հռչակեց «Գրքի համաշխարհային մայրաքաղաք», նույն թվականին նշվեց հայ գրատպության 500 ամյակը:

Լինելով վարչական, տնտեսական, ֆինանսական, գիտական և մշակութային կենտրոն՝ քաղաքը նաև հանդիսանում է տարածաշրջանային փոխադրումների կարևորագույն տրանսպորտային և տարանցիկ հանգույց: Երևանում է գտնվում Զվարթնոց միջազգային օդանավակայանը, Հայաստանում գործող 2 ազատ տնտեսական գոտիները: 2015թ. հունվարից Հայաստանը դարձել է Եվրասիական տնտեսական միության անդամ, ինչը նոր հնարավորություններ է ստեղծում ապրանքների, ծառայությունների, կապիտալի և աշխատուժի ազատ տեղաշարժման տեսանկյունից:

Երևանի տնտեսությունը բազմաճյուղ է՝ գյուղմթերքի վերամշակումից մինչև տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաներ: Երևանի ՀՆԱ-ն, ըստ ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության կատարված հետազոտությունների, 2015թ. կազմել է 2,833,215.6 մլն դրամ, որը Հայաստանի Հանրապետության ՀՆԱ-ի շուրջ 56%-ն է (ՀՀ ՀՆԱ-5.032.089.0 մլն): 2015թ. ՀՆԱ-ն աճել է 2014թ. ցուցանիշի նկատմամբ մոտ 3.6%-ով: Մեկ շնչի ՀՆԱ-ն կազմել է շուրջ 2,644.158 մլն դրամ: Երևանում ՀՆԱ-ի բաշխվածությունը ըստ ոլորտների հետևյալն է՝ ծառայություն 57.7%, առևտուր 16.6%, արդյունաբերություն 13.4%, շինարարություն 11.9 %, գյուղատնտեսություն 0.4%:

Երևանում տնտեսապես ակտիվ բնակչությունը 2015թ. կազմել է 420.7 հազ. մարդ: Նույն թվականին զբաղվածների թիվը կազմել է 293.8 հազ. մարդ: Երևանում 2015թ. միջին աշխատավարձը կազմել է 180 105 ՀՀ դրամ, որը ավել է ՀՀ նույն ցուցանիշից 8 490 ՀՀ դրամով:

Երևանին են բաժին ընկնում հանրապետության արդյունաբերության ընդհանուր ծավալի 41.2%-ը, շինարարության՝ 63.7%-ը, մանրածախ առևտրի՝ 76.4%-ը, ծառայությունների՝ 82.2%-ը, շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի՝ 76.5%-ը:

Արտաքին առևտրի շրջանառությունը Երևանում 2015թ. կազմել է 1 576 987.7 մլն դրամ, այդ թվում՝ արտահանում 343 908.3 մլն դրամ և ներմուծում 1 233 079.4 մլն դրամ:

Հայաստան ժամանող զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երևանը հանդիսանում է առաջին հյուրընկալն ու հիմնական հանգրվանը: Երևանում գործում են շուրջ 300 հյուրանոցային տնտեսության օբյեկտներ, որոնք կազմում են հանրապետության հյուրանոցային տնտեսության օբյեկտների՝ 56.6%-ը: Ընդհանուր առմամբ Երևանում հյուրանոցային տնտեսության օբյեկտների կողմից առաջարկվող հյուրանոցային համարների թիվը 2013 թվականի առաջարկի նկատմամբ աճել է 30.6%-ով:

Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2016թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետություն է ժամանել 1 259 657 զբոսաշրջիկ: 2015թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 5.7%-ով: 2016թ. հունվար-դեկտեմբեր ամիսներին զբոսաշրջության նպատակով Հայաստանի Հանրապետությունից մեկնել է 1 262 687 մարդ կամ 2015թ. համապատասխան ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 6.3%-ով:

ԵՐԵՎԱՆԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2017թ. տարեկզբի դրությամբ Երևան քաղաքի մշտական բնակչությունը կազմել է 1175.8 հազար մարդ, իսկ բնակչության խտությունը՝ 5272 մարդ մեկ քառակուսի կիլոմետրի վրա: Երևանը զբաղեցնում է 223.0կմ² տարածք: Զբաղեցրած տարածքով ամենամեծ վարչական շրջաններն են՝ Էրեբունի՝ 4749 հա, Շենգավիթը՝ 4060 հա, Աջափնյակը՝ 2582 հա, Մալաթիա-Սեբաստիան՝ 2516 հա, իսկ ամենափոքր տարածք զբաղեցնում են Ավանը՝ 726 հա, Դավթաշենը՝ 647 հա, Նորք-Մարաշը՝ 476 հա: Երևանի բնակչության մեջ համեմատաբար մեծ տեսակարար կշիռ ունեն Շենգավիթը՝ 13.0% (139.6 հազ. մարդ), Մալաթիա-Սեբաստիան՝ 12.7% (136.7 հազ. մարդ), Նոր-Նորք վարչական շրջանը՝ 12.2% (131.0 հազ. մարդ), Էրեբունի վարչական շրջանը՝ 11.8% (127.2 հազ. մարդ), Կենտրոնը և Արաբկիրը՝ համապատասխանաբար 11.7% և 10.8% (125.6 հազ. մարդ) և (115.4 հազ. մարդ): Ամենափոքր տեսակարար կշիռն ունեն՝ Նորք-Մարաշը՝ 1.1% (11.8 հազ. մարդ) և Նուբարաշենը՝ 0.9%-ը (9.8 հազ. մարդ):

Աղյուսակ 1

Երևանի վարչական շրջանների տարածքը և բնակչության թվաքանակը 2017թ. հունվարի 1-ի դրությամբ¹

	Տարածքը, հա	Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը, %	Բնակչության թվաքանակը, հազ. մարդ	Երևանի բնակչության թվաքանակում տեսակարար կշիռը, %
Ք. ԵՐԵՎԱՆ	22300	-	1 075.8	-
Աջափնյակ	2582	11.6	109.2	10.1
Ավան	726	3.2	53.0	4.9
Արաբկիր	1329	5.9	115.4	10.8
Դավթաշեն	647	2.9	42.5	3.9
Էրեբունի	4749	21.3	127.2	11.8
Կենտրոն	1335	6.0	125.6	11.7
Մալաթիա-Սեբաստիա	2516	11.3	136.7	12.7
Նոր Նորք	1411	6.3	131.0	12.2
Նորք-Մարաշ	476	2.1	11.8	1.1
Նուբարաշեն	1724	7.7	9.8	0.9
Շենգավիթ	4060	18.2	139.6	13.0
Քանաքեռ-Զեյթուն	773	3.5	74.0	6.9

¹ ՀՀ ԱՎԾ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016

Երևան քաղաքում բնակչության շարունակական աճ է արձանագրվել: Մասնավորապես Երևանում 2013թ. նկատմամբ 2017թ. բնակչությունը աճել է շուրջ 9.5 հազ.: Աճ են արձանագրել Աջափնյակ, Էրեբունի, Մալաթիա-Սեփաստիա, Նոր Նորք, Նուբարաշեն, Շենգավիթ վարչական շրջանները:

Աղյուսակ 2

Բնակչության թվաքանակի դինամիկան ըստ Երևանի վարչական շրջանների, հազ. մարդ²

	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.
Ք. ԵՐԵՎԱՆ	1 066.3	1 068.3	1 071.5	1 073.7	1 075.8
Աջափնյակ	108.7	108.8	108.9	109.1	109.2
Ավան	53.3	53.1	53.1	53.1	53.0
Արաբկիր	117.2	116.7	116.2	115.8	115.4
Դավթաշեն	42.5	42.5	42.5	42.5	42.5
Էրեբունի	124.4	125.0	125.8	126.5	127.2
Կենտրոն	126.0	125.8	125.8	125.7	125.6
Մալաթիա-Սեփաստիա	133.7	134.4	135.2	135.9	136.7
Նոր Նորք	127.4	128.4	129.5	130.3	131.0
Նորք-Մարաշ	12.0	11.9	11.9	11.8	11.8
Նուբարաշեն	9.7	9.7	9.8	9.8	9.8
Շենգավիթ	137.2	137.8	138.6	139.1	139.6
Քանաքեռ-Զեյթուն	74.2	74.2	74.2	74.1	74.0

Երևանի բնակչության դինամիկան կայուն աճ է արձանագրել 2013-2015թթ.: Բացառությամբ Նորք-Մարաշ վարչական շրջանի՝ 2015թ. մյուս վարչական շրջանները ունեցել են բնակչության աճի դրական միտում:


ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅՈՒՆ

Երևանը հանրապետության խոշորագույն արդյունաբերական և տնտեսական կենտրոնն է: 2015թ. հանրապետության արդյունաբերության 41,2%-ը բաժին է ընկել Երևանին: Երևանի արդյունաբերության հիմնական ճյուղերն են սննդամթերքի (ներառյալ խմիչքներ) արտադրությունը, քիմիական և մետաղագործական արդյունաբերությունը: 2015թ. տվյալներով Երևանն արդյունաբերական արտադրանքի ծավալի ցուցանիշների մեծությամբ 13 անգամ գերազանցել է Շիրակի մարզին, 4.5 անգամ Լոռու մարզին, շուրջ 4 անգամ Կոտայքի մարզին, իսկ Սյունիքի մարզին՝ 3 անգամ:

² ՀՀ ԱՎԾ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016

Գծանկար 1


Արդյունաբերական արտադրանքի ծավալները, մլն դրամ³



Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը 2010-2015թթ. Երևանում ավելի բարձր է եղել միջին հանրապետականից: 2015թ. միջին հաշվով մեկ բնակչին ընկնող թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը Երևանում միջին հանրապետականին գերազանցել է 71 489.6 դրամով: Բացի այդ, միջին հաշվով, Երևան քաղաքի մեկ բնակչին ընկնող թողարկված արդյունաբերական արտադրանքի ծավալը 2010-2015թթ. մշտապես գրանցել է աճ:

Գծանկար 2

Երևանի արդյունաբերական արտադրանքի ծավալը ամբողջ հանրապետության արդյունաբերական արտադրանքի ծավալում, %




Երևանի արդյունաբերական արտադրանքի ծավալի մեջ առաջատար դիրք են զբաղեցնում մշակող արդյունաբերությունը և էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունն ու բաշխումը՝

³ 2010-2015թթ. ԱՎԾ վիճակագրական տարեգիրք

79.6 % և 17.7% համապատասխանաբար: Մշակող արդյունաբերությանը Երևանը առաջատար դիրք է զբաղեցնում նաև ամբողջ հանրապետությունում: Մասնավորապես 2015թ. այն կազմել է ամբողջ հանրապետության մշակող արդյունաբերության շուրջ 52.4%-ը: Իսկ էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունը և բաշխումը կազմել է ամբողջ հանրապետության շուրջ 37.3%-ը:

Գծանկար 3

Արդյունաբերական արտադրանքի ծավալն ըստ արտադրության բաժինների, % 2015թ.⁴



Երևան քաղաքի մշակող արդյունաբերության մեջ թողարկված արտադրանքի ընդհանուր ծավալում առավել մեծ տեսակարար կշռով առանձնանում է սննդամթերքի արտադրությունը՝ 35,8%: Խմիչքների արտադրությունը կազմում է 11.7%, պոլիգրաֆիական գործունեություն, գրառված կրիչների բազմացում՝ 2.9%, հիմնային մետաղների արդյունաբերությունը՝ 16.1%, ծխախոտային արտադրատեսակների արտադրությունը՝ 12,6%:


ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

2011-2015թթ. հանրապետության ընդհանուր շինարարության ծավալներն աստիճանաբար կրճատվել են՝ 504.8 մլրդ. դրամից հասնելով 481.5 մլրդ. դրամի, անկումը կազմել է շուրջ 5%: Մակայն Երևան քաղաքը նույն ժամանակահատվածում գրանցել է շուրջ 11% աճ: 2015թ. Երևանի շինարարության ծավալները կազմել են ամբողջ հանրապետության ծավալի շուրջ 63.7%-ը:

⁴ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016

Գծանկար 4


Շինարարության ծավալներն ըստ ՀՀ մարզերի և ք. Երևանի 2010, 2013 և 2015թթ. %⁵



Շահագործման հանձնված բնակելի շենքերի մակերեսով Երևանը նույնպես բացարձակ առաջատար է ՀՀ-ում: 2011թ. Երևանում շահագործման հանձնված բնակելի շենքերի մակերեսը կազմել է ամբողջ հանրապետության շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսի շուրջ 85.4%-ը, իսկ 2015թ. այդ ցուցանիշը կազմել է շուրջ 76.5%:

Գծանկար 5

Շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը ք. Երևանում, քմ⁶



Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների 1 քմ շուկայական միջին գների համեմատականում՝ ըստ վարչական շրջանների ամենաբարձր եռյակը կազմում են Կենտրոն վարչական շրջանը՝ 427 000 դրամ, Արաբկիր վարչական շրջանը՝ 333 000 դրամ,


⁵ 2010-2015թ. վիճակագրական տարեգիրք

⁶ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը՝ 270 000 դրամ, իսկ ամենացածր գինը՝ Նուբարաշեն վարչական շրջանում՝ 156 000 դրամ:

Գծանկար 6


Երևան քաղաքի բազմաբնակարան շենքերի բնակարանների 1 քմ շուկայական միջին գները՝ ըստ վարչական շրջանների, դրամ⁷



Երևան քաղաքում բնակելի տների 1 քմ շուկայական միջին գների համեմատականում¹¹ ըստ վարչական շրջանների ամենաբարձր եռյակը կազմում են Կենտրոն վարչական շրջանը՝ 476 000 դրամ, Արաբկիր վարչական շրջանը՝ 380 000 դրամ, Նորք-Մարաշ վարչական շրջանը՝ 300 000 դրամ, իսկ ամենացածր գինը կրկին սահմանվել է Նուբարաշեն վարչական շրջանում՝ 150 000 դրամ:

Գծանկար 7

Երևան քաղաքի բնակելի տների 1 քմ շուկայական միջին գներն ըստ վարչական շրջանների /դրամ/⁸



Երևան քաղաքի բնակարանային ֆոնդը 2015թ. կազմել է 24 068 238 քմ, որը կազմել է ամբողջ հանրապետության բնակարանային ֆոնդի 25.3%-ը: Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր

⁷ Հայաստանի Հանրապետության սոցիալ-տնտեսական վիճակը 2017 թվականի հունվար-ապրիլ ամիսներին

⁸ Նույն տեղում

մակերեսով 2015թ. կազմել է շուրջ 22.5քմ: Բազմաբնակարան շենքերում բնակարանների քանակը 2015թ. կազմել է 230 138 բնակարան կամ ամբողջ հանրապետության բազմաբնակարան շենքերում բնակարանների ընդհանուր քանակի 55.9%-ը: Բնակելի տների ընդհանուր քանակը 2015թ. կազմել է 55 626, ինչը կազմել է ամբողջ հանրապետության բնակելի տների 36.0%-ը:


ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հայաստանի Հանրապետության մանրածախ առևտրի շրջանառության զգալի հատվածը բաժին է ընկնում Երևանին: Մասնավորապես՝ 2011թ. շուրջ 77%-ը, 2012թ. շուրջ 91%-ը, 2015թ. շուրջ 83%-ը:

Ծառայությունների մատուցման ոլորտում Երևանը նույնպես առաջատար է հանրապետությունում: 2010-2015թթ. ընթացքում այս ցուցանիշը հանրապետությունում կայուն աճ է արձանագրել՝ 49.2%՝ 2015 թվականին հասնելով 1 144 605.3 մլն դրամի: Սակայն մատուցվող ծառայությունների 82.2%-ը բաժին է ընկնում հենց Երևանին, իսկ մնացած 17.8%-ը հանրապետության տասը մարզերին:

Գծանկար 8⁹

Ծառայությունների ծավալը՝ ըստ ք. Երևանի և ՀՀ /մլն դրամ/




Հանրապետությունում մշակույթի, զվարճությունների և հանգստի ոլորտի ծառայություններից բնակչության օգտվելու աստիճանը անցած վեց տարիների ընթացքում Երևան/մարզեր հարաբերակցությունը 79.6/20.4-ից դարձել է 74.9/25.1, իսկ կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտում՝ 87.7/12.3 հարաբերակցությունը դարձել է 85.2/14.8: Դրա հետ մեկտեղ, այնպիսի կարևոր ոլորտներում, ինչպիսիք են կրթությունը և առողջապահությունը, ունենք հակառակ պատկերը: Կրթության ոլորտի ծառայություններից բնակչության օգտվելու աստիճանը 2010թ. Երևան/մարզեր 86.5/13.5 հարաբերակցությունը 2015թ. հասել է 88.5/11.5, իսկ առողջապահության և բնակչության սոցիալական սպասարկման ծառայություններից օգտվելու 72.9/27.1 հարաբերակցությունը փոխվել է ի օգուտ Երևանի՝ 2015թ. հասնելով 84/14:

⁹ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016

Մեկ բնակչին ընկնող ծառայությունների մեծությամբ առաջատարը կրկին Երևանն է, որը միջին հանրապետականին գերազանցում է 2.3 անգամ:

Գծանկար 9

Միջին հաշվով մեկ բնակչին ընկնող ծառայությունների ծավալը, ՀՀ դրամ



ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ


Գյուղատնտեսությունը հանդիսանում է Երևան քաղաքի տնտեսության ամենափոքր հատվածը: Սակայն այս ոլորտը յուրաքանչյուր տարի գրանցում է համախառն արտադրանքի աճ: Ընդ որում 2011 թվականին 2015 թվականի նկատմամբ գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճը կազմել է ավելի քան 60 %՝ ավելանալով 4.2 մլրդ դրամով: Այսինքն կարելի է փաստել, որ չնայած տնտեսության մեջ ունեցած փոքր հատվածին՝ գյուղատնտեսությունն արագ զարգացող ճյուղ է հանդիսանում: Գյուղատնտեսության մեջ առաջատար ճյուղը կազմում է անասնաբուծությունը՝ շուրջ 59.8%, իսկ բուսաբուծությունը՝ 40.2%:

ԳԱԶԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ԶՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ

Երևանը գրեթե ամբողջությամբ լուծել է գազաֆիկացման խնդիրը: 2016թ. հունվարի 1-ի դրությամբ Երևանի գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը կազմել է 1 643.8 կմ, իսկ գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը 267 631: Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը 2016թ. ավելացել է 2012թ. նկատմամբ շուրջ 63 կմ-ով: 2015թ. սպառողներին տրված գազի շուրջ 35%-ը կամ 607.560 մլն. մ³ բաժին է ընկել Երևանին:

Գծանկար 10

Երևանի զագաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը 2012-2016թթ. հունվարի 1-ըրությունը, կմ¹⁰



Երևանի ջրամատակարարման ցանցի երկարությունը 2015թ. կազմել է 814.1 կմ, փողոցային ցանցի երկարությունը՝ 897.4 կմ, իսկ միջթաղային և միջբակային ցանցի երկարությունը՝ 400.2 կմ: 2015թ. Երևանի սպառողներին տրված ջուրը կազմել է շուրջ 63.9 մլն. մ³: 2015թ. Երևանի կոյուղու համակարգի փողոցային միագիծ ցանցի երկարությունը կազմել է 587.3 կմ, իսկ միջթաղային և միջբակային ցանցի երկարությունը՝ 266.7 կմ:

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ ՎԱՐԿԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԻՆՂԵՔՄՆԵՐ

1. Երևանը՝ կայուն զարգացող քաղաք:

2016թ. միջազգային «Ֆիչ Ռեյթինգս» հեղինակավոր գործակալությունը Երևան քաղաքն առաջին անգամ դասակարգեց քաղաքների վարկանիշային աղյուսակում, այն է՝ B+ (կայուն վարկանիշ) անվանակարգում:

2. Երևանը մատչելի քաղաք՝ ապրելու և աշխատելու համար:

2016թ. գործարար աշխարհում հայտնի «Ֆաստքոմպանի» (Fastcompany.com) հեղինակավոր պարբերականը հրապարակեց ապրելու և աշխատելու համար աշխարհի 10 ամենամատչելի քաղաքների ցանկը, որը ներառում է նաև Երևանը: «Քաղաքում արձանագրված տնտեսական վերելքը Երևանի սրճարանները լցրել է օտարերկրյա աշխատակիցներով», - գրում է պարբերականը: տասնյակում են ընդգրկվել նաև Բանգկոկը (Թայլանդ), Բալին (Ինդոնեզիա), Բեյրութը (Սերբիա) և այլ քաղաքներ:

3. Երևանը հարմարավետ քաղաք՝ կյանքի որակի տեսանկյունից:

2016թ. «Մըրսեր» (Mercer) միջազգային խորհրդատվական ընկերությունը Երևանն ընդգրկեց աշխարհի այն քաղաքների ցանկում, որոնք առավել հարմարավետ են ապրելու տեսանկյունից: Ընտրության չափանիշներն են եղել կրթության հնարավորությունները, հանգստության մակարդակը, հանգստի կազմակերպումը, քաղաքական կայունությունը, տրանսպորտը, բնապահպանությունը և այլն: Հայաստանի մայրաքաղաքը «Quality of living» վարկանիշում է, որում

¹⁰ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016

ընդգրկված են աշխարհի 230 քաղաքներ: Քաղաքների ցանկում են նաև Վիլնյուսը (Լիտվա), Տալինը (Էստոնիա), Ռիգան (Լատվիա), Մոսկվան և Մանկտ Պետերբուրգը (ՌԴ):

4. Երևանը՝ Եվրոպայի հնագույն քաղաք:

2016թ. Բրիտանական հեղինակավոր «Դեյլեգրաֆ» պարբերականը (The Telegraph) հրատարակել է Եվրոպայի 16 հնագույն քաղաքների ցանկը, որոնք արժե կյանքում գոնե մեկ անգամ այցելել: «Հռոմի հիմնադրումից 30 տարի առաջ Հայաստանի ներկայիս մայրաքաղաքն Ասիայից դեպի Եվրոպա ընկած ճանապարհին կարևոր առևտրային կանգառ է եղել: Այն ենթարկվել է հռոմեացիների, բյուզանդացիների, պարսիկների, արաբների, սելջուկների, մոնղոլների ու թուրքերի, իսկ ավելի ուշ՝ 1920թ. խորհրդային Կարմիր բանակի ներխուժումներին», - գրել է պարբերականը Երևանի մասին՝ աղյուսակում առաջարկների հատվածում ավելացնելով Հայաստանի մայրաքաղաքը: Եվրոպայի հնագույն քաղաքների ցանկում են հայտնվել նաև Ջադարը (Խորվաթիա), Լիսաբոնը (Պորտուգալիա), Աթենքը (Հունաստան), Հռոմը (Իտալիա) և այլն:

5. Երևանը արագ զարգացող քաղաք՝ Էլեկտրոնային կառավարման տեսանկյունից:

2003թ. ի վեր ԱՄՆ-ի հեղինակավոր «Ռաթգրս» (Rutgers) համալսարանը հրապարակում է աշխարհի քաղաքների գնահատման ցանկը՝ Էլեկտրոնային կառավարման տեսանկյունից: 2014թ. ի վեր Երևանը վարկանիշային աղյուսակում առաջատար դիրքերում է, ընդ որում, Էլեկտրոնային կառավարման ընդհանուր ցուցանիշով Երևանը լավագույն քաղաքների հնգյակում է, իսկ Էլեկտրոնային կառավարման մատչելիության կամ օգտագործման հարմարավետության չափորոշիչով աշխարհի 100 խոշոր քաղաքների շրջանում՝ 1-ին հորիզոնականում: Ցուցակում ընդգրկված են նաև Սեուլը (Կորեա), Նյու Յորքը (ԱՄՆ), Հոնկոնգը (Չինաստան), Սինգապուրը (Սինգապուր):

ԵՐԵՎԱՆԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Երևան քաղաքի 2017 թվականի բյուջեն եկամուտների գծով կազմում է 84,344,931.5 հազ. դրամ, իսկ ծախսերի գծով՝ 84,412,931.5 հազ. դրամ:

Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի ընդամենը փաստացի եկամուտները կազմել են 77,331,108.2 հազար դրամ՝ ծրագրված 75,704,536.0 հազար դրամի նկատմամբ, կամ կատարողականը կազմել է 102.2%: Ընդ որում՝ Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի վարչական մասով ծրագրված 75,694,536.0 հազար դրամ ընդամենը եկամուտների դիմաց փաստացի մուտքագրվել է 77,312,741.5 հազար դրամ՝ ապահովելով 102.1% կատարողական:

Երևան քաղաքի 2016 թվականի բյուջեի միջոցների հաշվին իրականացվել է 78,481,116.5 հազար դրամի ծախսեր՝ կազմելով ճշտված ծրագրի 100.2%-ը: Ընդ որում, 2016 թվականի փաստացի կատարված ծախսերի ծավալը ավել է 2015 թվականի փաստացի կատարողականից 1,402,679.0 հազար դրամով:

Միաժամանակ բյուջետային տարվա ավարտին պարտքեր չեն թողնվել և փաստացի կատարողականի սահմաններում բոլոր ստանձնած պարտավորությունները ամբողջությամբ ֆինանսավորվել են:

Աղյուսակ 3

Երևան քաղաքի բյուջեի ցուցանիշները 2014-2016թթ.

N	Բովանդակություն	հազ. ՀՀ դրամ		
		2014	2015	2016
1	Բյուջեի եկամուտները	68.013.073.51	76,561,620.2	77,331,108.2
2	Բյուջեի ծախսերը	69.094,291.24	77.078,437.5	78,481,116.5
3	Մեփական եկամուտների տեսակարար կշիռը համայնքի բյուջեի ընդհանուր եկամուտների մեջ	27.6%	24.9%	25.7%
4	Կապիտալ ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր եկամուտների մեջ	11.6%	4.9%	3.1%
5	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ	98.5%	106.5%	98.9%
6	Համայնքի բյուջեի եկամուտների փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ	98.6%	108.4%	102.1%
7	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը հաստատված պլանի նկատմամբ	99.4%	106.9%	100.1%

8	Համայնքի բյուջեի ծախսերի փաստացի կատարումը ճշտված պլանի նկատմամբ	97.3%	108.2%	100.3%
9	Համայնքի աշխատողների աշխատանքի վարձատրության ծախսերի տեսակարար կշիռը բյուջեի ընդամենը ծախսերի մեջ	6.5%	6.8%	6.5%
10	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային եկամուտը	63.7	71.5	71.5
11	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային սեփական եկամուտը	16.9	17.9	18.9
12	Բնակչության մեկ շնչին ընկնող բյուջետային ծախսը	64.7	71.9	72.6

Տեղական ինքնակառավարման սկզբունքներից է տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը:

Այդ նպատակով Երևանի պաշտոնական www.yerevan.am կայքում ամենօրյա թարմացման ռեժիմով գործում է Երևան քաղաքի տարեկան ինտերակտիվ բյուջեն, որը հնարավորություն է ընձեռում յուրաքանչյուր շահագրգիռ քաղաքացու առցանց տեղեկացված լինել քաղաքային տնտեսության ֆինանսական շրջանառության մասին: Իրականացվում է Երևանի ավագանու նիստերի առցանց հեռարձակումը www.yerevan.am կայքով: Արդեն իսկ կայացել է քաղաքի կարևորագույն խնդիրների՝ ներառյալ Երևանի բյուջեի, վերաբերյալ հանրային քննարկումների և բաց լսումների ինստիտուտը:

ԳԼՈՒԽ 2. ԵՐԵՎԱՆԻ 2018-2022ԹԹ. ԶԱՐԳԱՅՄԱՆ ԳԵՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. *Երևանի տարածքային համաչափ և կայուն զարգացման ապահովում*
2. *Երևանի կենտրոնի բեռնաթափման և քաղաքը շրջանցող ճանապարհների ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովում*
3. *Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի համակարգային բարեփոխում, նոր և արդյունավետ երթուղային ցանցի մշակում և կիրառում, էլեկտրոնային և միասնական տոմսային համակարգի ներդրում, սոցիալական խմբերի համար գեղջային համակարգի կիրառում, միջազգային չափանիշներով սպասարկման ծառայությունների մատուցում*
4. *Փողոցային լուսավորության համակարգի արդիականացում, էներգախնայող համակարգերի ներդրում, վերգետնյա մալուխային ցանցի ստորգետնյա անցկացում, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացում*
5. *Ժամանակակից նոր աղբավայրի կառուցման և հին աղբավայրի մեկուսացման ծրագրերի իրականացում*
6. *Վերելակային տնտեսության արդիականացում, կառավարման ժամանակակից համակարգի ներդրում*
7. *Շենքերի և բակային տարածքների բարեկարգում և բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովում*
8. *Բնակելի ֆոնդի վերանորոգում և պահպանում, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովում*
9. *Մայրաքաղաքի բնակելի ֆոնդի վթարայնության հետազոտման աշխատանքների իրականացում, ինչպես նաև 4-րդ կարգի վթարային շենքերի բնակիչների անվտանգության ապահովման ծրագրի շարունակականության ապահովում*
10. *Զբոսաշրջության զարգացմանը խթանող քաղաքականության իրականացում*
11. *Մայրաքաղաքի բնապահպանական իրավիճակի համակարգված բարելավում*
12. *Հանգստի գոտիների ստեղծում, միջազգային չափանիշներին համապատասխան կանաչապատման աշխատանքների իրականացում*
13. *Նոր կառուցապատվող թաղամասերում ենթակառուցվածքների ստեղծում*
14. *Գործարարության և ներդրումների համար բարենպաստ միջավայրի ապահովում, համայնքի և գործարար միջավայրի միջև փոխշահավետ համագործակցության խթանում*
15. *Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում*
16. *Մշակութային ժառանգության պահպանություն, առողջ ապրելակերպի խրախուսում և դրանց իրականացման համար նպաստավոր պայմանների ստեղծում*
17. *Առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող քաղաքացիների համար քաղաքային առօրյան ավելի մատչելի դարձնելու մարդասիրական ծրագրի հետևողական իրագործում*
18. *Հաշմանդամություն ունեցող անձանց համար մյուսների հետ հավասար հիմունքներով ֆիզիկական միջավայրի, փոխադրամիջոցների, տեղեկատվության և հաղորդակցության, ինչպես նաև այլ հարմարությունների ու ծառայությունների մատչելիության ապահովում:*
19. *Առողջապահության համակարգի կառավարման արդյունավետության բարձրացում, բնակչությանը մատուցվող առողջապահական ծառայությունների որակական բարելավում,*

- Երևանի քաղաքապետարանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների շենքերի հիմնանորոգում և ժամանակակից բուժսարքավորումներով համալրում
20. Երեխաների իրավունքների պաշտպանություն և անչափահասների հետ տարվող աշխատանքների բարելավում
21. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովում և այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողագուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի իրագործում
22. Մայրաքաղաքի արտաքին ձևավորման և շենքերի արտաքին տեսքի կարգաբերման շարունակական ծրագրերի իրականացում
23. Բնակչության անվտանգության, հասարակական կարգի և համակեցության կանոնների պահպանության ապահովում
24. Կառավարման համակարգի բարեփոխումների և տեղական ինքնակառավարման արդյունավետության ապահովում, իրավական դաշտի կատարելագործում, նորագույն տեխնոլոգիաների ներդրում, հաղորդակցության ժամանակակից միջոցների կիրառում և բնակչի հետ հետադարձ կապի ակտիվացում
25. Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցում և սպասարկման որակի բարելավում
26. Նպատակային տնտեսական և սոցիալական քաղաքականության վարման միջոցով տնտեսական և քաղաքացիական կյանքին բնակչության անմիջական մասնակցության խթանում
27. Միջազգային համագործակցության ընդլայնում, քույր և գործընկեր քաղաքների հետ արդյունավետ համագործակցության ակտիվացում, միջազգային լավագույն փորձի ուսումնասիրություն ու կիրառում

ԳԼՈՒԽ 3. ԵՐԵՎԱՆԻ 2018-2022ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Ժամանակակից քաղաքի զարգացման դիմագիծն ու այցեքարտը քաղաքաշինությունն է: Քաղաքաշինական ծրագրերն են, որ ձևավորում են քաղաքային միջավայր և փոխում մարդկանց առօրյա կյանքն ու ապրելակերպը: Զարգացման մարտահրավերների և լավագույն փորձի փոխանակման ու նոր ծրագրերի իրականացման հիմքում ունենալով Երևանի 2005-2020թթ. գլխավոր հատակագծում ամրագրված հիմնական դրույթները՝ իրականացման տարբեր փուլերում համակողմանի և ներդաշնակորեն կյանքի են կոչվել քաղաքի զարգացման ներդրումային գրավչությանը և գործարար միջավայրի բարելավմանն ու կենսական հարմարավետության որակական բարձրացմանն ուղղված ծրագրեր՝ նպատակ ունենալով Երևան քաղաքի համաչափ տարածական զարգացման առաջնահերթության սկզբունքի արմատավորումը:

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի իրականացման հիմնական միջոցառումների ծրագրով ընթացել է քաղաքի ծրագրավորված քաղաքաշինական քաղաքականության իրականացումը:

2014-2017 թվականների ընթացքում մշակվել են Ավան, Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների, ինչպես նաև Իսակովի, Լենինգրադյան և Աթենքի փողոցներով պարփակված տարածքների համար գոտիավորման նախագծեր: Նշված ծրագրային փաստաթղթերը սահմանում են տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ միջավայրի ձևավորման նպատակով:

Ճանապարհաշինություն

Երևանի գլխավոր հատակագծով դեռևս տասնամյակներ առաջ նախատեսված ճանապարհաշինարարական (հատկապես շրջանցող մայրուղիների և տրանսպորտային հանգույցների) ծրագրերը միջազգային կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով դառնում են իրականություն: Ծրագրերն իրականացվում են Երևանի զարգացմանը համահունչ, հաշվի առնելով ոլորտի առաջնահերթություններն ու իրագործելիության հնարավորությունները:

Շրջանցիկ ճանապարհ-հարավային մուտք

Երևանի շրջանցիկ նոր ճանապարհը իրար կմիացնի մայրաքաղաքի հյուսիսային և հարավային մուտքերը:

Արշակունյաց պողոտա-Շիրակի փողոց-Արտաշատի 5կմ երկարությամբ և 24-28 մետր լայնությամբ ճանապարհը հանձնվել է շահագործման 2016 թվականին, որի անընդհատ երթևեկությունն ապահովվում է Արտաշատի խճուղու երկաթուղային գծանցի վրայով կառուցված 270մ երկարությամբ ուղեանցով (էստակադա) և Շիրակի փողոց-Արշակունյաց պողոտա հատման մասի շրջանաձև երթևեկությամբ 2 ուղեանցեր պարունակող ճանապարհով: Գնացույցային ճանապարհահատվածում կառուցվել է վերելակով համալրված վերգետնյա հետիոտնային անցում:

Շարունակվում են 2016 թվականից սկսած Շիրակի փողոցից դեպի Արգավանդի հատված տանող ճանապարհի շինարարական աշխատանքները, որի ընթացքում նախատեսվում է

Հրազդան գետի վրա կառուցել 252մ երկարությամբ կամուրջ: Ծրագրի շրջանակում իրականացվել են շրջանցիկ ճանապարհի Կարմիր բլուր հնավայրի հարակից տարածքի հնեաբանական պեղումներ, որի աշխատանքներն ավարտվել են:

Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատվածի շինարարական աշխատանքները սկսվել են 2017 թվականին:

Բաբաջանյան-Աշտարակ նոր ճանապարհահատվածի նախագծային փաթեթով ընթանում է շինարարական աշխատանքների մրցութային գործընթացը:

Քաղաքային ճանապարհային ցանց

Երևան քաղաքի տրանսպորտային հաղորդակցուղիների, հանգույցների թողունակության բարձրացման, բնականոն երթևեկության կազմակերպման, շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցման, տրանսպորտային հոսքերի անարգել կազմակերպման նպատակով կառուցվել են՝

- ✓ Լենինգրադյան փողոցը Ծովակալ Իսակովի պողոտային կապող 3.1 կմ երկարությամբ նոր մայրուղին,
- ✓ Ուլնեցի-Ռուբինյանց փողոցները միացնող նոր ավտոճանապարհը՝ շուրջ 2.5 կմ երկարությամբ,
- ✓ Վերակառուցվել և բացվել են ճանապարհային մի շարք խաչմերուկներ, այդ թվում՝ Գլինկայի փողոցը Տիգրան Մեծ պողոտային միացնող ճանապարհային հատվածը (Սարալանջի փողոցի շարունակություն), Տեղյան փողոցի շարունակությունը (Գլխավոր պողոտայի հատման հատվածը Ամիրյան փողոցին միացնող ճանապարհ), Վիլնյուսի փողոցի՝ Նոր-Նորքի 8-րդ զանգվածը 9-րդ զանգվածին միացնող 537մ ճանապարհահատվածը, Դավթաշեն 2-րդ թաղամասը Եղվարդի խճուղուն և Տ.Պետրոսյան փողոցին միացնող ճանապարհային հանգույցը:

Վթարայնություն ունեցող շենքերի հիմնախնդիրների լուծման ծրագիր

Քաղաքի տարածքում խիստ վնասված բնակելի ֆոնդի խնդիրների լուծման ուղղությամբ մշակված նպատակային ծրագրերի շրջանակներում և Գլխավոր հատակագծով նախանշված վթարային բնակարանային ֆոնդի իրացման ծրագրային գործընթացին և «Երևան քաղաքի 3-րդ և 4-րդ կարգի վթարայնություն ունեցող բազմաբնակարան շենքերի հիմնախնդիրների լուծման ծրագրի հայեցակարգի» դրույթների համապատասխան, վթարային շենքերի բնակիչների անվտանգության ապահովման համատեքստում 2013-2015 թվականներին կառուցվել է թվով 6 բազմաբնակարան շենք Աջափնյակ վարչական շրջանի Սիսակյան 22, Մարգարյան 37, Մարգարյան փողոցի հ.45, Շինարարների 15, Շինարարների 6 և Սիսակյան 16 հասցեներում, որոնցով հնարավորություն ստեղծվեց լուծել 2014 թվականի հունվարի 1-ի դրությամբ հաշվառված Սիսակյան փողոցի հ.3, Արցախի 4-րդ նրբանցքի հ.10, Արցախի հ.10/2, Նոր-Արեշ 35-րդ փողոցի հ.127/1, Բաղրամյան 4 նրբ.15, Շինարարների փողոցի հ.35/1 մուտք/, Բրյուսովի փողոցի հ.66, Հալաբյան փողոցի հ.3 շենքի 3-4-րդ մուտքեր և Տիգրան Մեծի հ.47 հասցեներում քանդման ենթակա 4 կարգի վթարային բազմաբնակարան և հանրակացարանային շենքերում բնակվող ընտանիքների վերաբնակեցման, ինչպես նաև վթարային շենքերի քանդման հիմնախնդիրը: Արդյունքում 2013-2016 թվականների ընթացքում քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային շենքերից նոր, հարմարավետ բնակարաններ են վերաբնակեցվել շուրջ 650 ընտանիքներ:

Քաղաքաշինական ներդրումային ծրագրեր

Քաղաքի ողջ տարածքով համաքաղաքային գործառնությունների համաչափ վերաբաշխման, կենտրոնի բեռնաթափման և առավել կանոնակարգված ծավալատարածական զարգացման

նպատակով քաղաքի վարչական շրջաններում պետություն-համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ կառուցվել են հասարակական նշանակության ժամանակակից կառույցներ և համալիրներ.

- ✓ **ուսումնամարզական**՝ սահադաշտով ֆիզիկական առողջության կենտրոնը (Մալաթիա-Սեբաստիա), «Ռիբոկ» բազմաֆունկցիոնալ սպորտային ակումբը (Դավթաշեն), «Մուլտի Ուելնես կենտրոն» բազմաֆունկցիոնալ սպորտային համալիրը (Կենտրոն),
- ✓ **մշակութային և հոգևոր**՝ Կոմիտասի թանգարան-ինստիտուտը Կոմիտասի անվան պանթեոնին կից տարածքում (Շենգավիթ), Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի վերակառուցումը և ընդարձակումը (Կենտրոն), Ֆ.Նանսենի թանգարան (Նոր-Նորք), Կաթողիկե եկեղեցու համալիր՝ «Մուրբ Աննա» նորակառույց եկեղեցին (Կենտրոն),
- ✓ **առևտրային**՝ «Ռոսիա Մոլ», «Տաշիր Սթրիթ», «Երևան Տոնավաճառ» առևտրային կենտրոններ (Կենտրոն), «Ռիո» բազմաֆունկցիոնալ առևտրահասարակական կենտրոն (Արաբկիր),
- ✓ **հյուրանոցային**՝ DoubleTree-by-Hilton միջազգային դասակարգմամբ 4S հյուրանոցը (Կենտրոն), և «Օպերա Մուլթ» հյուրանոցը (Կենտրոն), «Ռեդիսոն բլու հոթել Երևան» հյուրանոցը (Քանաքեռ-Զեյթուն), «ԻԲԻՍ» (Կենտրոն),
- ✓ **վարչական**՝ կառավարական վարչական նոր համալիրը Վազգեն Սարգսյան 3 հասցեում (Կենտրոն),
- ✓ **բնակելի**՝ «Մատչելի բնակարաններ երիտասարդ մասնագետներին» բնակարանային ապահովության սոցիալական ծրագրի շրջանակներում կառուցվել է բազմաբնակարանային համալիր (կատարվել է առաջին փուլը) (Ավան), «Պետական ծառայողներին մատչելի բնակարաններով ապահովման ծրագրի» շրջանակներում Երազ բնակելի թաղամասում (Ադոնց փողոցի 6/1 հասցե) մեկ շենքային համալիր (Արաբկիր),
- ✓ **հասարակական**՝ Աբովյան, Բախակյան և Մոսկովյան փողոցների խաչմերուկներում ամբողջությամբ վերակառուցված ստորգետնյա անցում, որում ապահովված է հետիոտնի համար նախատեսված անցումների հնարավորությունը, ինչպես նաև առևտրի և ժամանցի ժամանակակից կենտրոնի գործառնությունը: Այն հարմարեցված է բնակչության սակավաշարժ խմբերի համար՝ հատուկ վերելակների, ամբարձիչների և սահանգույցների կահավորմամբ: Ընթացքի մեջ են Երևանի կրկեսի նոր շենքի, միջազգային չափորոշիչներին համապատասխանող «Կամար» բիզնես կենտրոնի, «Երազ» բնակելի թաղամասի 8 նոր մասնաշենքի, Կոմիտաս և Ազատության պողոտաների խաչմերուկին հարակից եկեղեցու, Ավանի ուսումնամարզական համալիրի, «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանի շինարարական աշխատանքները:

Հանգստի գոտիներ

Հասարակական նշանակության հանգստի գոտիների բարելավման, քաղաքի կառուցվածքահատակագծային համակարգում միջազգային չափանիշներին համապատասխան նոր հասարակական հանգստի կազմակերպման և սպասարկման գոտիների և կանաչ տարածքների հավասարակշռված զարգացման նպատակով, վերականգնման աշխատանքներ են իրականացվել Երևան քաղաքի զբոսաշրջային այցեքարտերից մեկը հանդիսացող Գլխավոր պողոտա-զբոսայգում (Մարյան փողոցից մինչև Խանջյան փողոց ձգվող զբոսայգի): Ամողջությամբ արդիականացվել է «Վերնիսաժը» Հանրապետության և Խանջյան փողոցների միջանկյալ հատվածը, ինչպես նաև Նալբանդյան և Հանրապետության փողոցների միջանկյալ զբոսայգու հատվածը:

Ավարտական փուլում են գտնվում Սարյան փողոցից Մաշտոցի պողոտայի միջանկյալ հատվածի զբոսայգու շինարարական աշխատանքները:


Վերաբացվել է Երևանի կենդանաբանական այգին՝ հիմնանորոգված ու արդիականացված: Այգու հիմնանորոգման և բարեկարգման աշխատանքներն իրենց մեջ ներառել են նաև ժամանակակից սարքավորումներով հագեցած բուժական կետի կառուցումը: Աշխատանքների արդյունքում այգու նախկինում կենդանաբանական և օգտագործելի 7 հա տարածքը կրկնապատկվել է և ներկայումս հասել 16 հեկտարի: Այգու հիմնանորոգման ծրագիրը կավարտվի 2018 թվականին:

Քաղաքաշինական թույլտվություններ

Քաղաքաշինական գործունեությունը կարգավորող օրենսդրական դաշտում իրականացվել են բարեփոխումներ և փոփոխություններ, որոնք գործընթացը դյուրացնելու հստակ ուղղվածություն են ունեցել:


Բարեփոխումների արդյունքում զգալիորեն կրճատվել են քաղաքաշինական փաստաթղթերի քննարկման և տրամադրման ժամկետները, միաժամանակ պարզեցվել է կառուցապատողի կողմից տեխնիկական պայմանների ձեռքբերման գործընթացը՝ հնարավորինս նվազագույնի հասցնելով կառուցապատողի շփումը մատակարար կազմակերպությունների հետ: Զգալիորեն կրճատվել է նաև աշխատանքային նախագծերի համաձայնեցման ու շինարարության թույլտվությունների տրամադրման համար նախատեսված ժամկետները:

ՀՀ կառավարության համապատասխան որոշմամբ համալրվել է ցածր ռիսկայնության օբյեկտների ցանկը, որի համար շինարարության թույլտվություն չի պահանջվում: Կառուցապատողի (հայտատուի) հայեցողությամբ կառուցապատման թույլտվությունների ստացման գործընթացը կարող է իրականացվել նաև էլեկտրոնային քաղաքաշինական թույլտվությունների տրամադրման համակարգի կիրառմամբ:



Գծանկար 11. Քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման գործընթացի ցուցանիշները՝ ըստ տարիների

Եռամսյակային վիճակագրություն 2017թ.



Գծանկար 12. Քաղաքաշինական փաստաթղթերի տրամադրման գործընթացի ցուցանիշները՝ ըստ 2017 թվականի առաջին և երկրորդ եռամսյակների

Հիմնախնդիրներ

1. Երևան քաղաքի՝ մինչև 2030 թվականը քաղաքաշինական զարգացման հիմնական ուղղությունների հստակեցում:
2. Երևանի ճանապարհափողոցային ցանցի՝ մինչև 2030 թվականը զարգացման հիմնական ուղղությունների հստակեցում:
3. Քաղաքային նշանակության մայրուղիների պատշաճ որակի ապահովում, ճանապարհափողոցային ցանցի ընդլայնում, ժամանակակից չափանիշներին համապատասխանող ճանապարհների և դրանց երկայնքով արդիականացված ստորգետնյա ենթակառուցվածքների և ժամանակակից էներգախնայող լուսավորության համակարգերի կառուցում, մայրաքաղաքի կենտրոնը բեռնաթափող ու շրջանցող ճանապարհների կառուցում, անընդհատ երթևեկություն ապահովելու նպատակով տարբեր մակարդակների վրա տրանսպորտային հանգույցների և նոր ուղեբաժանքների կառուցում, ճանապարհային ցանցի կառավարման արդյունավետության բարձրացում, ավտոկայանատեղերի կառուցում, գոյություն ունեցող ճանապարհների ծանրաբեռնվածության թեթևացում:
4. Երևանի գլխավոր հատակագծի իրագործմանն ուղղված միջոցառումների իրականացում, այդ թվում՝ ընթացքի ուսումնասիրություն, հաշվառում, անհրաժեշտ ճշգրտումների իրականացում, համապատասխան ծրագրերի, գոտիավորման նախագծերի մշակում:
5. Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման կարգավորման համար օրենքով նախատեսվող անհրաժեշտ իրավական և նախագծային փաստաթղթերի մշակում:
6. Երևան քաղաքի քաղաքաշինական կադաստրի ստեղծում և ներդրում:
7. Մայրաքաղաքի բնակելի ֆոնդի վթարայնության հետազոտման աշխատանքների իրականացում, քանդման ենթակա 4-րդ կարգի վթարային բազմաբնակարան և հանրակացարանային շենքերում բնակվող ընտանիքների վերաբնակեցման հիմնախնդրի լուծմանն ուղղված ծրագրերի շարունակականության ապահովում:
8. Բնակելի թաղամասերի վերակառուցման և ամբողջականացման, զբոսաշրջային ռեսուրսների զարգացման, հանգստի և ժամանցի նոր գոտիների ստեղծման նպատակով

քաղաքային տնտեսության զարգացմանն ուղղված քաղաքաշինական ներդրումային ծրագրերի մշակում:

9. Նոր այգիների և հանգստի գոտիների հիմնադրում, զբոսայգիների և կանաչ տարածքների վերականգնում:
10. Մայրաքաղաքի ճարտարապետական կերպարի ձևավորման և շենքերի արտաքին տեսքի կարգաբերման շարունակական ծրագրերի իրականացման ապահովում:
11. Երևան քաղաքի թաղամասերի և բնակարանային ֆոնդի արդիականացում:
12. Քաղաքաշինական միջավայրում հաշմանդամություն ունեցող անձանց տեղաշարժման մատչելիության ապահովմանն ուղղված համալիր ծրագրերի և նախագծերի մշակում ու իրականացում:
13. Կայուն զարգացման «ՌԻՕ+20» գաղաթաժողովի որոշումների իրագործմանն ուղղված «Կայուն քաղաքներ: Կանաչ ճարտարապետություն», «Խելացի քաղաքներ», «Կանաչ քաղաքաշինություն» և «Լանդշաֆտի Եվրոպական Կոնվենցիայի» սկզբունքներից և գաղափարախոսությունից բխող միջոցառումների իրականացում:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1. Երևանի գլխավոր հատակագծի լրամշակման ու դրա իրագործման հետ կապված ծրագրեր

Ծրագրի նպատակ

- Երևանի 2005-2020թթ. գլխավոր հատակագծում քաղաքի զարգացման նոր ուղղությունների ընդգրկում և գործողության ժամկետի մինչև 2030թ. երկարացում,
- քաղաքի ճանապարհափողոցային ցանցի մինչև 2030 թվականը զարգացման համալիր սխեմայի կազմում,
- Երևանի գլխավոր հատակագծի իրագործման ընթացքի ուսումնասիրության իրականացում, կատարված աշխատանքների հաշվառում և հետագա ճշգրտումների նպատակով անհրաժեշտ միջոցառումների ամրագրումը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է աշխատանքներ 3 հիմնական ուղղություններով՝

1. Գլխավոր հատակագծի ճշգրտման և լրամշակման աշխատանքներ,
2. Երևանի ճանապարհափողոցային ցանցի բարելավման ուղղությամբ պլանավորում,
3. Երևանի գլխավոր հատակագծի իրագործման ընթացքի ուսումնասիրություն, հաշվառում:

2. Երևանի որոշ վարչական շրջանների գոտիավորման նախագծերի մշակումներ

Ծրագրի նպատակ

Քաղաքաշինական գործունեության կարգավորման նպատակով պարտադիր մշակման ենթակա, քաղաքաշինական ծրագրային տարածական պլանավորման փաստաթղթերի ստեղծում, որը ներառում է Նոր Նորք, Նուբարաշեն, Մալաթիա-Սեբաստիա, Էրեբունի վարչական շրջանների չմշակված հատվածների գոտիավորման նախագծերի մշակում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախագծերը տարածական զարգացման մանրամասն պայմանները սահմանող գործադրական (օպերատիվ) բնույթի փաստաթղթեր են և հիմք են քաղաքաշինական նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման, շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման ու շինարարության թույլտվության համար: Նախագծերը բաղկացած են գրաֆիկական և տեքստային մասերից:

Նախագծային տարածքը՝

- Նոր Նորք վարչական շրջանի համար կազմում է 1 449,8 հա,
- Նուբարաշեն վարչական շրջանի համար՝ 1724.0 հա,
- Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի գոտիավորման նախագծով ապահովված տարածքը կազմում է 1205.5հա, իսկ չմշակված նախագծային տարածքը՝ 1310.5 հա,
- Էրեբունի վարչական շրջանի գոտիավորման նախագծով ապահովված տարածքը 1097.2 հա է, չմշակված նախագծային տարածքը՝ 3752.8 հա:

3. Երևան քաղաքի քաղաքաշինական կանոնադրության (նախագծի) մշակում

Ծրագրի նպատակ

«Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածով սահմանված քաղաքի քաղաքաշինական կանոնադրության ընդունում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը, ելնելով տեղական առանձնահատկություններից, հաշվի առնելով ՀՀ օրենսդրությանը, համայնքի գլխավոր հատակագծի և տարածքների գոտիավորման պահանջները, ուղղված է տվյալ համայնքում քաղաքաշինական միջավայրի գեղագիտական հատկանիշների պահպանությանն ու կատարելագործմանը՝ ճարտարապետական և լանդշաֆտային ձևավորման, ինչպես նաև սարքավորումների և այլ տարրերի տեղադրման կամ ձևափոխման, հարդարման նյութերի, երանգավորման և արտաքին լուսավորության պայմանների ու չափորոշիչների սահմանման միջոցով:

Երևան քաղաքի քաղաքաշինական կանոնադրության մշակման շրջանակներում կմշակվի կանոնադրություն ըստ փուլերի՝ վարչական շրջաններով:

Կենտրոն վարչական շրջանի քաղաքաշինական կանոնադրությունը կմշակվի «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի միջոցառումների շրջանակներում:

4. Երևան քաղաքի քաղաքաշինական կադաստրի ստեղծում և ներդրում (նախնական կամ առաջին փուլ)

Ծրագրի նպատակ

ՀՀ քաղաքաշինության մասին օրենքի հոդված 20-ի, Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքի հոդված 55.13-ի ապահովում՝ Երևան քաղաքի քաղաքաշինական կադաստրի ստեղծում և ներդրման ուղղությամբ աշխատանքների պլանավորում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է քաղաքաշինական կադաստրի ստեղծման և ներդրման ուղղությամբ տեխնիկական նախագծի մշակում և կադաստրի ստեղծման և ներդրման ուղղությամբ աշխատանքների պլանավորում: Քաղաքաշինական կադաստրը տեղեկատվական համակարգ է, որը հիմք է քաղաքաշինական քաղաքականության և տարածքային զարգացման ռազմավարության, քաղաքաշինական նախագծային փաստաթղթերի մշակման, քաղաքաշինական գործունեության նկատմամբ վերահսկողություն իրականացնելու համար և պարունակում է ստույգ տեղեկություններ քաղաքաշինական գործունեության օբյեկտների, տարածքների գոտիավորման և օգտագործման, տարածքների և բնակավայրերի քաղաքաշինական պլանավորման և կառուցապատման, քաղաքաշինական փաստաթղթերի, նորմերի, իրավական այլ ակտերի, հողամասերի և այլ անշարժ գույքի օգտագործման, քաղաքաշինական սահմանափակումների և սերվիտուտների, տարածքների սոցիալական, ինժեներատրանսպորտային և այլ ենթակառուցվածքների բարեկարգման, սեյսմիկ իրադրության, շինարարության համար ինժեներաերկրաբանական և գեոդեզիական, քաղաքաշինական գործունեության վրա ազդող այլ

գործոնների մասին: Քաղաքաշինական կադաստրը ներառում է նաև քաղաքաշինական գործունեության իրականացման համար անհրաժեշտ տվյալներ՝ այլ ճյուղային կադաստրներից և տեղեկատվական համակարգերից:

5. Երևանի Փոքր կենտրոնի կառուցապատման կանոնակարգման հիմնախնդիրներից բխող միջոցառումներ

Ծրագրի նպատակ

Երևանի «Փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի հաստատումից հետո դրա տեղայնացում՝ նախատեսված ընթացակարգերի իրագործում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է հետևյալ ենթակետերը և համապատասխան աշխատանքները՝

1. Երևանի «Փոքր կենտրոնի» (այսուհետ՝ Փոքր կենտրոն) սահմանների նախագծի մշակում: Նախատեսվում է հստակեցնել և Երևանի ավագանու հաստատմանը ներկայացնել «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի նախագծի հավելվածով նախատեսված փոքր կենտրոնի սահմանները (ՀՀ օրենքի նախագծի 31-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով):
2. Փոքր կենտրոնի քաղաքաշինական զարգացման ռազմավարության մշակում, որը ենթակա է հաստատման ՀՀ կառավարության կողմից՝ «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի նախագծի 31-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետով:
3. Երևանի Փոքր կենտրոնի քաղաքաշինական գոտիավորման նախագծերի լրամշակում, որը ենթակա է հաստատման Երևանի ավագանու կողմից՝ «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի նախագծի 31-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:
4. Երևանի գլխավոր հատակագծի նախագծի լրամշակում, որը նախատեսված է «Երևանի փոքր կենտրոնի կառուցապատման մասին» ՀՀ օրենքի նախագծի 31-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով:

6. «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայրի ստեղծում

Ծրագրի նպատակ

Ստեղծել «Հին Երևան» պատմաճարտարապետական միջավայր:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն նախատեսվում է իրականացնել «Հին Երևան» նախագիծը Գլխավոր պողոտայի տարածքում՝ Աբովյան, Փ.Բյուզանդ, Ե.Կողբացի և Արամի փողոցներով սահմանափակվող թաղամասում:

Ճարտարապետական նախագծի մտահղացմամբ առաջարկվել է վերստեղծել միջավայրը՝ արդիականացնելով տարածքը, ամրացնելով կիրառական ենթակառուցվածքները, միաժամանակ մեծացնելով տարածքի առևտրային և մշակութային նշանակությունը, բարելավել պատմական կառուցապատված տարածքները, սահմանել կանոնավոր կառուցապատմամբ արգելոցային գոտի՝ ներգրավելով այն քաղաքի կենսագործունեության մեջ: Այս հատվածում պահպանվել է 19-րդ և 20-րդ դարասկզբի բնակելի տների ճարտարապետությանը պատկանող 14 հուշարձան: Դրանք կհամարվեն նաև ապամոնտաժված այլ պատմական հուշարձաններով:

7. Երևանի 33-րդ թաղամասի վերակառուցում

Ծրագրի նպատակ

Կենտրոն վարչական շրջանում գտնվող «Ֆիրդուսի» տոնավաճառի տարածքում նախատեսվող նոր թաղամասի կառուցման նպատակն է տարածքի բարեկարգումը, կանաչապատումը, առավել արդյունավետ պլանավորումը և օգտագործումը հաշվի առնելով քաղաքացիների մեթոդյա պահանջները և կարիքները:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվող ծրագրով թաղամասը կունենա բազմաֆունկցիոնալ նշանակություն: Այն կունենա նաև բնակելի, և՛ կոմերցիոն հատվածներ: Տարածքում նախատեսվում է նոր փողոցների, հասարակական և սպասարկման օբյեկտների, բիզնես կենտրոնների, հյուրանոցների և բազմաֆունկցիոնալ բնակելի շենքերի կառուցում: Այստեղ նախատեսվում է նաև կառուցել շուրջ 40 մետր բարձրություն և 85 մետր տրամագիծ ունեցող շրջանաձև հրապարակ, որի տակ կկառուցվի բազմահարկ ստորգետնյա ավտոկայանտեղի: Նոր թաղամասի կառուցման ընթացքում տարածքում առկա 19-րդ դարի հուշարձանները կմնան կանգուն: Ըստ Ա.Թամանյանի գլխավոր հատակագծի այս տարածքն անվանվել էր Հարավային պողոտա: Ներկայիս «Ֆիրդուսի» տոնավաճառի տարածքը, որը մի կողմից գտնվում է Հանրապետության հրապարակի, իսկ մյուս կողմից՝ Տիգրան Մեծ փողոցի հարևանությամբ, հետագայում նոր ճանապարհով կմիացվի Վերնիսաժի հետ, որը նաև կունենա մշակութային նշանակություն: Նախագծվող թաղամասը՝ շենքերը, ճանապարհները, անցումները, հարմարեցված կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց և բնակչության սակավաշարժ խմբերի համար:

Երևան քաղաքի գլխավոր հատակագծի համաձայն տարածքը կհանդիսանա ճարտարապետական մեկ համալիր՝ բնակելի թաղամասի և բնակարանային ֆոնդի արդիականացմամբ, բարելավմամբ: Հիմնովին կվերակառուցվի ինժեներատեխնիկական ենթակառուցվածքները, որոնք այժմ գտնվում են անբավարար վիճակում:

8. «Երևանյան պողոտա» պատմական Երևանի դիմագիծը ներկայացնող ծրագիր

Ծրագրի նպատակ

Խթանել Հայաստանում զբոսաշրջության և մասնավորապես մշակութային զբոսաշրջության զարգացմանը՝ ստեղծելով հայկական մշակույթի ներկայացման յուրօրինակ հարթակ:

Ծրագրի համառոտ նկարագրություն

«Երևանյան պողոտա» ներդրումային ծրագրով նախատեսվում է կառուցել նոր ճարտարապետական համալիր Երևանի բուսաբանական այգու հարակից տարածքում: Այն կզբաղեցնի շուրջ 1.4 հա տարածք և կունենա թամանյանական ճարտարապետությանը բնորոշ մոտեցումներով կառուցված շենքեր, փողոցներ, հրապարակներ, կանաչապատ տարածքներ:

«Երևանյան պողոտա» համալիրը կառաջարկի հանգստի և ժամանցի կազմակերպման բազմաթիվ լուծումներ:

9. Երևան քաղաքում համայնք-մասնավոր համագործակցությամբ նախատեսվող քաղաքաշինական ծրագրեր

Ծրագրի նպատակ

Պատմամշակութային հուշարձանների ու պատմական միջավայրի պահպանում և օգտագործում, քաղաքի կառուցապատման ամբողջականացում և արդիականացում, զբոսաշրջային միջավայրի բովանդակային կատարելագործում, մշակութային կառույցների ստեղծում, քաղաքի տրանսպորտային երթևեկության համակարգի բարելավում՝ ստորգետնյա բազմահարկ տարածքների ստեղծմամբ, քաղաքաշինական ծրագրերում ներդրումների խթանմանն ուղղված կառուցապատման համար անհրաժեշտ փաստաթղթային գործընթացների պարզեցում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

1. Երևան քաղաքի գլխավոր հատակագծով նախատեսված Տիչինա, Կոնդ, Սարի թաղ թաղամասերի համալիր կառուցապատում,
2. Ստորգետնյա ավտոկայանատեղեր՝ Շահումյանի և Սախարովի հրապարակներում,
3. «Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանի կառուցում Աբովյան պուրակի հարակից տարածքում,

- 4.«Էրեբունի», «Կարմիր Բուր» և «Շենգավիթ» պատմահնագիտական արգելոց-թանգարանների վերակառուցման ծրագրերի իրականացում՝ զբոսաշրջիկների սպասարկման կենտրոնների կառուցմամբ,
- 5.«Հայկական գյուղ» ծրագիր՝ պատմամշակութային, հնագիտական բաղադրիչներով հագեցած զբոսաշրջության կենտրոն՝ գյուղական միջավայրի ներկայացմամբ,
- 6.Երևանի «Դալմայի այգիներ» անտառպուրակային պատմամշակութային համալիրի ծրագրի մշակում,
- 7.«Զվարթնոց» օդանավակայան տանող նոր ավտոմայրուղու կառուցում,
- 8.Կոմիտասի պողոտային զուգահեռ այլընտրանքային ճանապարհի կառուցում:

10. Երևան քաղաքի հանգստի նոր գոտիների հիմնման, այգիների և զբոսայգիների վերականգնման աշխատանքներ

Ծրագրի նպատակ

Քաղաքի կառուցվածքահատակագծային համակարգում միջազգային պահանջների համապատասխան նոր հասարակական գոտիների և հանգստի կանաչ գոտիների հավասարակշռված զարգացում, հարմարավետ միջավայրի սպահովում երևանցիների ու մայրաքաղաքի հյուրերի համար հասարակական նշանակության հանգստի գոտիների բարելավում:

Մայրաքաղաքի կենդանաբանական այգու համապատասխանեցում ժամանակակից չափորոշիչներին՝ դարձնելով այն բնապահպանական, կրթամշակութային, ժամանցային և զբոսաշրջային տարածաշրջանային նշանակության կենտրոն:

Ծրագրի համառոտ նկարագրություն

1. Երևանի հիմնադրման 2800 ամյակին նվիրված այգու կառուցում (1,5հա)
2. Կոմիտասի այգու հիմնանորոգման աշխատանքների իրականացում,
3. «Հաղթանակ» զբոսայգում միջազգային չափանիշներին համապատասխան հանգստի գոտու և զվարճանքի կենտրոնի ստեղծում (27հա),
4. Միջազգային չափանիշներին համապատասխան Կենդանաբանական այգու վերակառուցման ավարտ,
5. Հրազդանի կիրճի բարեկարգման ծրագիր՝ մարզական և մարմնակրթական բաղադրիչներով արկածային-զբոսաշրջային կենտրոնի ստեղծմամբ:
6. Երևանում նոր ճուպանուղային ցանցի կառուցում:

11. Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագիր

Ծրագրի նպատակ

Ստեղծել անվտանգ և հարմարավետ ճանապարհային ցանց՝ կայուն ենթակառուցվածքներով և տրանսպորտային համակարգով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է Երևանում կառուցել միջազգային չափանիշներին համապատասխանող ճանապարհներ, ինչը զգալիորեն կբեռնաթափի մայրաքաղաքի կենտրոնը տրանսպորտային հոսքերից: Տրանսպորտային նոր ցանցի ներդրում, որը կապահովի անվտանգ և արդյունավետ երթևեկություն մայրաքաղաքում: Ծրագրով նախատեսվում է նոր կառուցված ճանապարհների երկայնքով ստեղծել արդիականացված ստորգետնյա ենթակառուցվածքներ և ժամանակակից էներգիանայող լուսավորության համակարգ:

Ծրագրում ընդգրկված են հետևյալ փողոցները՝ համապատասխան տեխնիկական ցուցանիշներով.

Արգավանդ-Շիրակ ճանապարհահատված

- Երկարությունը՝ 2,7 կմ
- Երթևեկելի հատվածի լայնությունը՝ 28մ
- Երկկողմանի երթևեկություն
- 6 երթևեկության գոտի
- 1 ճանապարհային հանգույց
- կամուրջի կառուցում Հրազդան գետի վրայով

Դավթաշեն-Աշտարակ ճանապարհահատված

- Երկարությունը՝ 5,4 կմ
- Երթևեկելի հատվածի լայնությունը՝ 22մ-28մ
- Երկկողմանի երթևեկություն
- 6 երթևեկության գոտի
- Հավելյալ սպասարկման ճանապարհ
- 2 ճանապարհային հանգույց

Բաքաջանյան-Աշտարակ ճանապարհահատված

- Երկարությունը՝ 9,4 կմ
- Երթևեկելի հատվածի լայնությունը՝ 14մ-21մ
- Երկկողմանի երթևեկություն
- 4-6 երթևեկության գոտի
- 3 հիմնական ուղեանցերի կառուցում
- 1 ճանապարհային հանգույց

Փովակալ Բասկովի պողոտայից մինչև Արշակունյաց պողոտա՝ Կենտրոնը շրջանցող ճանապարհ, որը հանդիսանում է կառուցված՝ Բասկովի պողոտան Լենինգրադյան փողոցին կապող մայրուղու անմիջական շարունակությունը, ինչն իր մեջ ներառելու է Արշակունյաց պողոտայի վրա նախատեսված հանգույցի և Հրազդան գետի վրայով անցնող նոր կամրջի կառուցում:

12. Երևանի ճանապարհային հանգույցների տրանսպորտային հոսքերի կարգավորման, բեռնաթափման վերգետնյա և ստորգետնյա համալիր լուծումներին ուղղված աշխատանքներ

Ծրագրի նպատակ

Երևան քաղաքում երթևեկության ինտենսիվության մեծացման հետ կապված հիմնախնդրի լուծում՝ հիմնական մայրուղիներում տրանսպորտային հոսքերի անթույլատրելի խտացումների վերացում, ճանապարհային ցանցի արդյունավետության բարձրացում՝ երթևեկության արդյունավետ կառավարման միջոցով, շրջակա միջավայրի էկոլոգիական վիճակի բարելավում, ճարտարապետական-գեղագիտական, ինժեներատեխնիկական և այլ պահանջների պահպանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է թվով 3 տրանսպորտային հանգույցների նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթների մշակման ավարտ և շինարարության իրականացման համար ներդրումների ներգրավում:

1. Արշակունյաց պող., Ագաթանգեղոսի և Գր.Լուսավորիչ փողոցների հատման հանգույց (կրկեսի խաչմերուկ):
2. Արշակունյաց պող. և Գ.Նժդեհի փողոցի հատման մասում՝ «Հայրենիք» կինոթատրոնի խաչմերուկ,
3. Արշակունյաց պող., Բագրատունյաց պողոտա (Աշխատանքի հրապարակ):

ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ

Գովազդային գործունեությունը մայրաքաղաքում իրականացվում է «Գովազդի մասին» ՀՀ օրենքի, «Բազմաբնակարան շենքերի մասին» ՀՀ օրենքի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի, Երևան քաղաքի ավագանու 2009թ. «Երևան քաղաքի վարչական շրջանների ղեկավարներին լիազորություն պատվիրակելու և արտաքին գովազդի տեղաբաշխման (տեղադրման) համայնքային կանոնները հաստատելու մասին» 37-Ն որոշման, և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

Երևան քաղաքում գովազդային դաշտի սուբյեկտներին պայմանականորեն կարելի է բաժանել 2 խմբի՝ մասնագիտացված գովազդային գործունեությամբ զբաղվող կազմակերպություններ, որոնք տնօրինում են գովազդային տարածքներ և, դրանք վարձակալությամբ հանձնելով, ստանում են շահույթ, և երկրորդ խումբ՝ շենք շինությունների վրա, իրենց գործունեության հասցեներում գովազդ տեղադրող կազմակերպություններ:

Երևանի քաղաքապետարանն իրականացնում է մեծ և փոքր գովազդային վահանակների և շենք-շինություններին տեղադրված գովազդային մակերեսների գույքագրում, էլեկտրոնային բազայի միջոցով կառավարում, գովազդի մասով վարչական շրջանների աշխատանքների համակարգում, մշակված հայեցակարգի տեղայնացում, գովազդային վահանակների արդիականացում, շենք-շինությունների վրա տեղադրվող գովազդային վահանակների անձնագրերի մշակում և գովազդային դաշտի օպտիմալացմանն ու արդիականացմանն ուղղված այլ ծրագրեր: Իրականացվում են «Գովազդի մասին» ՀՀ օրենքին չհամապատասխանող, ինչպես նաև ինքնակամ և ապօրինի տեղադրված գովազդային վահանակների հայտնաբերման և ապամոնտաժման աշխատանքներ, հսկողություն է իրականացվում մայրաքաղաքի տարածքում առկա գովազդային վահանակների հայալեզու գրվածքն օրենսդրության պահանջներին համապատասխանեցնելու ուղղությամբ:

Քաղաքի արտաքին տեսքի բարելավման և փողոցների ամբողջական տեսողական ընկալման նպատակով դեռևս 2012թ. Երևանի քաղաքապետարանը ձեռնամուխ եղավ Փոքր կենտրոնից մեծ և միջին չափի գովազդային վահանակների ապամոնտաժմանը և փոխարինմանը քաղաքային չափերի փոքր գովազդային կրիչներով: Ծրագրի շրջանակում մայրաքաղաքի Փոքր կենտրոնից ապամոնտաժվեց ավելի քան 160 մեծ գովազդային վահանակ՝ հնարավորություն ընձեռելով գովազդային արդիական կրիչների տեղադրման համար:

Վերջին 5 տարիների ընթացքում Երևանում համայնք-մասնավոր հատված համագործակցությամբ մի շարք ներդրումային ծրագրեր են իրականացվել՝ որպես փոխհատուցում ներդրողներին գովազդային մակերեսների տրամադրմամբ: Այս սկզբունքով մայրաքաղաքում կառուցվել է 14 վերգետնյա անցում, տեղադրվել՝ 50 էլեկտրոնային չվացուցակ, 10 նորառձ կանգառասրահ, 80 հեծանվային կանգառ, 15 ժամացույց և քաղաքային կահույքի այլ բաղադրիչներ:

Այս նպատակին հասնելու համար Երևանի քաղաքապետարանում ներդրվեց մայրաքաղաքում գովազդների գույքագրման միասնական բազա, որի հիման վրա առաջին քայլերն արվեցին նաև թույլտվությունների տրամադրման էլեկտրոնային եղանակին անցնելու համար, ինչն էականորեն կրճատեց գովազդի թույլտվություն ստանալու ժամանակն ու խոչընդոտները:

Լայնածավալ աշխատանքներ են տարվել նաև շենք-շինությունների վրա տեղադրված գովազդային վահանակների՝ գործող օրենքի պահանջներին համապատասխանեցման ուղղությամբ: Արդյունքում 5 տարիների ընթացքում օրենքի պահանջներին է համապատասխանեցվել ավելի քան 20.000 գովազդային վահանակ: Էականորեն բարելավվել է նաև շենք-շինությունների վրա փակցվող գովազդների որակը, սակայն ընդհանուր շենքի

ճարտարապետությունը և գովազդների տեղադրման միասնական ոճը պահպանելու ուղղությամբ քայլեր ձեռնարկելը դարձել է օրվա հրամայական:

Հիմնախնդիրներ

1. Շենքերի և շինությունների վրա տեղադրվող գովազդային վահանակների կանոնակարգում
2. Էլեկտրոնային կառավարման համակարգի կատարելագործում
3. Արտաքին գովազդի դաշտի կառավարման օպտիմալացում
4. Համայնք-մասնավոր հատված համագործակցության ընդլայնում
2. Վարչական շրջանների բակային տարածքների գեղագիտական ձևավորում
3. Ֆասադային հատվածների, կամարանցումների վերանորոգում, նկարազարդում
4. Տոնական ձևավորման հայեցակարգի և արտաքին ձևավորման գեղարվեստական բովանդակությանը վերաբերող ընդհանուր պահանջների մշակում

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1. Կամարանցումների վերանորոգում և գունազարդում

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է ապահովել Երևանի կամարանցումների պատճառ և գեղեցիկ տեսքը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երևան քաղաքում վերջին 5 տարիների ընթացքում վերանորոգվել և գունազարդվել է շուրջ 360 կամարանցում, որոնք ժամանակի ընթացքում վնասվում են և առաջանում է վերանորոգման, գունազարդման թարմացման աշխատանքների կարիք: Յուրաքանչյուր տարվա սկզբին իրականացվում են կամարանցումների գույքագրման աշխատանքներ, սահմանվում է դրանց վնասվածության աստիճանը, որի հիման վրա իրականացվում են վերանորոգման և գունազարդման աշխատանքներ:

2. Պանելային շենքերի ֆասադների գունազարդում

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է քաղաքային միջավայրին գեղագիտական տեսք հաղորդել՝ անբարեհաճ տեսք ունեցող ֆասադային հատվածները գունազարդման միջոցով բարեկարգելը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երևան քաղաքում կան բազմաթիվ պանելային շենքեր, որոնց ֆասադները գեղագիտական առումով չեն համապատասխանում մայրաքաղաքի կոլորիտին: Յուրաքանչյուր տարի Երևանում բազմաբնակարան պանելային շենքերի արտաքին պատշաճ տեսքի ապահովման համար մշակվում են պանելային շենքերի ֆասադների գունազարդման էսքիզներ: Էսքիզների հիման վրա կիրականացվեն պանելային շենքերի ֆասադների գունազարդման և պատշաճ տեսքի բերման աշխատանքներ:

3. Բակային տարածքների գեղագիտական ձևավորման աշխատանքներ

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է գեղագիտական տեսք հաղորդել Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների բակային տարածքներին:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երևան քաղաքում գոյություն ունեն բազմաթիվ բակային տարածքներ, որոնց նոր շունչ հաղորդելու համար նախատեսվում է իրականացնել բակային տարածքների նկարազարդման աշխատանքներ:

4. Դիտահորերի դեկորատիվ թուջե կափարիչների պատրաստում և տեղադրում

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է նպաստել մայրաքաղաքի արտաքին տեսքի բարելավմանը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երևան քաղաքի կենտրոնական, առավել երևացող հատվածներում տեղակայված դիտահորերի կափարիչները կփոխվեն նոր, մայրաքաղաքի կոլորիտին համահունչ պատկերներով (նուռ, խաղող, կենաց ծառ, ծիրան և այլն): Համայնք-մասնավոր համագործակցության շրջանակում Ա.Սպենդիարյանի անվան օպերայի և բալետի ազգային ակադեմիական թատրոնի տարածքում արդեն իսկ կատարվել է առաջին փորձը: Այս ծրագիրը միտում ունի առավել զրավիչ և հարմարավետ դարձնել հանգստի և զբոսանքի համար նախատեսված տարածքները:

5. Փողոցների, այգիների կահավորման աշխատանքների իրականացում

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է նպաստել մայրաքաղաքի արտաքին տեսքի բարելավմանը և հարմարավետության բարձրացմանը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է Երևան քաղաքի բոլոր վարչական շրջանների գլխավոր փողոցում, կենտրոնական այգիներում, հրապարակներում տեղադրել «Երևան» գրվածքով նստարաններ, ձուլվածքով աղբամաններ, զրուցարաններ, հայտարարությունների վահանակներ, տեղադրել քաղաքային միջավայրը ներկայացնող կառույցների վերաբերյալ կողմնորոշիչ միասնական ցուցանակներ: Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում նախատեսվում է տեղադրել նաև նստարաններ, որոնք նախատեսված կլինեն շենքերի ներքին բակերի, համեմատաբար փոքր փողոցների կահավորման համար: Անհրաժեշտության դեպքում նախատեսվում է պարբերաբար վերանորոգել նախորդ տարիներին տեղադրված և վնասված գույքը:

6. Մետաղյա հենասյուների վերանորոգում և հատուկ պաշտպանիչ նյութով երեսպատում

Ծրագրի նպատակ

Մայրաքաղաքի մետաղյա հենասյուները գերծ պահել հայտարարություններից, գրաֆիտից:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կիրականացվեն մետաղյա հենասյուների վերանորոգման և հատուկ պաշտպանիչ նյութով երեսպատման աշխատանքներ, որի շնորհիվ մետաղյա հենասյուները գերծ կմնան գրաֆիտից, տարատեսակ ներկերից ու սոսինձներից, թղթե աֆիշներ և հայտարարություններ կպցնելուց, նաև կպահպանվի սյան արտաքին մակերեսը կորոզիայից, խոնավության, ագրեսիվ նյութերի և յուղերի ներթափանցումից:

7. Ինստալիացիաների տեղադրում

Ծրագրի նպատակ

Երևան քաղաքի գեղագիտական տեսքի բարելավման նպատակով քաղաքային կահույքի, քաղաքային խորհրդանիշների տեղադրում ինստալիացիաների տեսքով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է քաղաքային խորհրդանիշների և քաղաքային կահույքի տեղադրում՝ մայրաքաղաքի կոլորիտին համահունչ: Ընտրվում են վայրեր, որտեղ կա դրանց կարիքը, ապա տվյալ տարածքին համահունչ ստեղծվում է տեղադրվող ինստալիացիայի էսքիզ, որից հետո իրականացվում են աշխատանքներ այն պատրաստելու և տեղադրելու ուղղությամբ:

8. Շենքերի գովազդային անձնագրերի մշակում և գովազդների համապատասխանեցում գովազդային անձնագրերին

Ծրագրի նպատակ

Շենքերի վրա գովազդների տեղադրման կանոնակարգում՝ կախված շենքի ճարտարապետական առանձնահատկություններից:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Յուրաքանչյուր շենքի համար նախագծվում են գովազդի համար նախատեսված բոլոր տեղադիրները, գովազդի չափերը, պատրաստման նյութը և տեսակը: Տնտեսվարողներին կտրվի խելամիտ ժամանակ իրենց գովազդները համապատասխանեցնելու գովազդային անձնագրի պահանջներին, սահմանված չափորոշիչներին: Արդյունքում ակնկալվում է շենքերի վրա գովազդների կանոնակարգված տեղադրում, որը բխում է շենքի ճարտարապետական առանձնահատկություններից: Ծրագրի շրջանակում կմշակվեն նոր գովազդների տեղադրման կանոններ:

9. Արտաքին գովազդի դաշտի կառավարման օպտիմալացում

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է՝ կառավարման արդյունավետության բարձրացումը, բնակիչների կողմից ձևավորված կառավարման մարմնի միջոցով շենքերի արտաքին տեսքի պահպանումը, տուրքերի հավաքագրման արդյունավետության բարձրացումը, գովազդի տեղադրման թույլտվությունների ստացման ժամանակի կրճատումը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ներկայումս տնտեսվարողները իրենց գործունեության հասցեներում գովազդ տեղադրելիս աշխատում են և համատիրությունների հետ (վարձավճար), և համայնքի հետ (տեղական տուրք): Սա շփոթություն է առաջացնում տնտեսվարողների մոտ և շահերի բախում՝ համատիրության և համայնքի միջև: Նախատեսվում է յուրաքանչյուր շենք դիտարկել որպես մեկ ամբողջություն և տնտեսվարողների կողմից տեղական տուրքի վճարումը տեղափոխել համատիրությունների իրավունքների և պարտականությունների տիրույթ: Ծրագիրը հնարավորություն կտա համայնքին կրճատել կառավարման օբյեկտների թիվը և համատիրությունների միջոցով առավել արդյունավետ կառավարել դաշտը: Համատիրություններին հնարավորություն կտրվի մուտքեր ապահովել ընթացիկ խնդիրների լուծման համար, իսկ տնտեսվարողները «մեկ պատուհանի» սկզբունքով կվճարեն գովազդի համար նախատեսված գումարները:

Արդեն իսկ ստեղծված էլեկտրոնային բազայի հիման վրա կստեղծվի կայք, որի միջոցով տնտեսվարողները/համատիրությունները կտեսնեն յուրաքանչյուր շենքի գովազդային անձնագիրը և հնարավորություն կունենան էլեկտրոնային եղանակով ուղարկել հայտեր գովազդի տեղադրման թույլտվություն ստանալու համար: Հնարավորություն կտրվի նաև էլեկտրոնային եղանակով վճարել արտաքին գովազդի համար նախատեսված տեղական տուրքի գումարը: Արդյունքում՝ գովազդի տեղադրման հստակ չափորոշիչների մասին տեղեկատվության տրամադրում ըստ առանձին շենքերի, թույլտվությունների ստացման ժամանակի կրճատում և կառավարման առավել արդյունավետ տարբերակի ներդրում:

10. Ներդրումային ծրագրերի իրականացում՝ որպես փոխհատուցում գովազդային մակերեսների տրամադրման սկզբունքով

Ծրագրի նպատակ

Բնակչության համար հարմարավետ կենսակերպ ապահովող գույքի և պոտենցիալ գովազդային տարածքների ավելացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Բնակչության հարմարավետ կենսակերպի ապահովման բազմաթիվ տարրեր, ինչպիսիք են օրինակ քաղաքային կահույքը, կանգառասրահները և վերգետնյա անցումները կարող են կառուցվել՝ որպես փոխհատուցում գովազդային տարածքների տրամադրմամբ:

11. Արտաքին գովազդի ամենամյա միջազգային փառատոնի կազմակերպում

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է՝ մասնագիտական սեմինարների, կոնֆերանսների կազմակերպումը, տարվա գովազդային ծրագրերի գնահատումն ու մրցանակաբաշխությունը, միջազգային կապերի ընդլայնումը և տուրիզմի զարգացումը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Յուրաքանչյուր տարի արտերկրից հրավիրված մասնագետների և համաշխարհային ճանաչում ունեցող գովազդային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ միասին Երևանյան գովազդային կազմակերպությունները հնարավորություն կունենան քննարկել ոլորտի զարգացման տենդենցները և տեղական արտադրության լավագույն գովազդային արտադրանքը կպարզևատրվի Երևանի քաղաքապետարանի կողմից:

12. Քաղաքային միջավայրը ներկայացնող կառույցների վերաբերյալ կողմնորոշիչ միասնական ցուցանակների տեղադրում

Ծրագրի նպատակ

Երևանում քաղաքային միջավայրը ներկայացնող կառույցների վերաբերյալ տեղեկատվական ցուցանակների արտաքին տեսքի նկատմամբ միասնական մոտեցման ցուցաբերում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է տեղադրել քաղաքային միջավայրը ներկայացնող կառույցների վերաբերյալ կողմնորոշիչ միասնական ցուցանակներ: Մասնավորապես կտեղադրվեն կողմնորոշիչ միասնական ցուցանակներ մշակութային կրթօջախների և տուն-թանգարանների դիմաց:

ՇՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

Երևան քաղաքի փողոցների և անցումների ընդհանուր երկարությունը կազմում է շուրջ 945կմ, Երևան քաղաքում առկա են շուրջ 1080 փողոցներ, իսկ փողոցների, հրապարակների, կամուրջների, մայթերի, բակային տարածքների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 24.348.634քմ:

2013-2017թթ. Երևանի բոլոր վարչական շրջաններում բարեկարգվել է 1600 բակ՝ համարվելով շուրջ 550 մանկական խաղերով, ինչպես նաև 1.200 մարգասարքով ու բակային կահավորանքի այլ տեսակներով:

Աղյուսակ 4

Երևան քաղաքի փողոցների վերաբերյալ՝ ըստ վարչական շրջանների 2017թ.

Հ/Հ	Վարչական շրջան	Փողոցների ընդհանուր երկարությունը (կմ)	Փողոցների ընդհանուր մակերեսը (հազ. մ²)
1	Աջափնյակ	66.67	1018.9
2	Արաբկիր	86.0	1158.1
3	Ավան	52.39	720.0
4	Դավթաշեն	67.0	536.0
5	Էրեբունի	101.9	2177.8
6	Կենտրոն	106.0	2920.0
7	Մալաթիա-Մեքաստիա	97.79	1478.53
8	Նոր Նորք	87.4	1533.3
9	Նորք-Մարաշ	49.0	390.5
10	Նուբարաշեն	20.9	161.2
11	Շենգավիթ	147.7	2140.9
12	Քանաքեռ-Զեյթուն	59.4	966.1
Ընդհանուր		942.2	15201.3

Մայրաքաղաքում բնակիչների և հյուրերի անվտանգ և հարմարավետ տեղաշարժը ապահովելու նպատակով ըստ անհրաժեշտության կառուցվում են հետիոտնային անցումներ, վերանորոգվում և շահագործման բարենպաստ պայմաններ են ստեղծվում առկա անցումներում:

2013-2017թթ. ընթացքում հիմնանորոգվել և պատշաճ տեսքի է բերվել 4 ստորգետնյա անցում, կառուցվել է 8 նոր վերգետնյա անցում: Նոր անցումների ստեղծման վայրերն ընտրվում են ուսումնասիրության և մասնագիտական քննարկումների արդյունքում՝ հաշվի առնելով քաղաքացիների առաջարկները: 2017թ. դրությամբ Երևանում առկա է 66 անցում՝ 27 վերգետնյա և 39 ստորգետնյա:

2013-2017թթ. ընթացքում մայրաքաղաքում կառուցվել է շուրջ 2337 թեքահարթակ, որից 1947-ը կառուցվել է Երևանի քաղաքապետարանի ծրագրերով, իսկ 390-ը՝ համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում: Ծրագիրը շարունակական է, որն իականացվում է շահագրգիռ հասարակական կազմակերպությունների հետ համատեղ քննարկումների արդյունքում:

Մայրաքաղաքի փողոցների մի շարք հասցեներում տեղադրվել են տեսողություն խնդիրներ ունեցող քաղաքացիների համար նախատեսված հատուկ անհարթություններով նախագծուղացնող բետոնե սալիկներ:

Հարմարավետություն և անվտանգություն ապահովող շինարարական աշխատանքների իրականացումից բացի բարեկարգման ծրագրերը ենթադրում են նաև մայրաքաղաքին հարիր արտաքին տեսքի ապահովում:

Կատարվում են մայթերի և եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ, մասնավորապես. վերանորոգվում կամ փոխարինվում են նորերով մայթերի ձևավոր բետոնե, բազալտե և տրավերտինե սալիկները, վերանորոգվում և տեղադրվում են նոր բետոնե և բազալտե եզրաքարեր: 2013-2017թթ. սալիկապատվել են շուրջ 57 000 քմ ընդհանուր մակերեսով մայթեր, և վերանորոգվել շուրջ 12 000 մ ընդհանուր երկարությամբ եզրաքարեր:

Մայրաքաղաքի պատշաճ տեսքն ապահովվում է նաև շենքերի ճակատային հատվածների մաքրման, լվացման, նորոգման և ներկման, բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների վերանորոգման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների շնորհիվ: 2013-2017թթ. վերանորոգվել և ամրացվել է շուրջ 800 պատշգամբ:

Որպես մայրաքաղաքի այցեքարտ՝ կարևորվում են կամուրջների և կամրջային կառույցների արտաքին տեսքն ու հուսալիությունը:

Կամուրջների հիմնանորոգման նախագծեր կազմելիս հաշվի են առնվում ստացված առաջարկությունները և, կատարվող ուսումնասիրությունների արդյունքում, հնարավորության սահմաններում, իրականացվում են հիմնանորոգման աշխատանքներ:

Մայրաքաղաքի բնակիչների և հյուրերի հանգստի կազմակերպման համար անհրաժեշտ հարմարավետ պայմաններ ստեղծելը հանդիսանում է գերակա խնդիր, որի լուծման նպատակով իրականացվում են նոր հանգստի գոտիների, այգիների, պուրակների ստեղծման, բակային տարածքների ու խաղահրապարակների հիմնանորոգման և պահպանման աշխատանքներ:

Ակտիվ հանգստի կազմակերպման և առողջ ապրելակերպի խթանման նպատակով մեծ ուշադրություն է հատկացվում բակերի բարեկարգման աշխատանքներին, ինչպես նաև մինի ֆուտբոլի դաշտերի կառուցմանը: Ներկայումս մայրաքաղաքում շահագործվում են 126 մինի ֆուտբոլի դաշտեր:

Կրթական, նախադպրոցական, արտադպրոցական և մարզական հաստատություններում իրականացվում են հիմնանորոգման, ջեռուցման ապահովման, տանիքների վերանորոգման աշխատանքներ:

Երևանի քաղաքապետարանի ծրագրերով ամբողջությամբ ավարտվել են Երևանի համայնքային ենթակայության պոլիկլինիկաների ջեռուցման համակարգերի կառուցման աշխատանքները: Կատարվում են պոլիկլինիկաների լուսամուտների փոխարինման աշխատանքներ:

Մայրաքաղաքին յուրահատուկ տեսք ու թարմություն են տալիս շատրվանները, ջրավազանները և բազմաթիվ ցայտաղբյուրները, որոնք բնորոշ են մեր մայրաքաղաքին:

Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում առկա 37 ջրային կառույցների շահագործումն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանի ծրագրերով յուրաքանչյուր տարի նախատեսվում են դրանց ընթացիկ նորոգման և պահպանման աշխատանքներ:

Հիմնախնդիրներ

1. Քաղաքային նշանակության մայրուղիների պատշաճ որակի ապահովում
2. Երևան քաղաքի փողոցների բարեկարգում, հիմնանորոգում
3. Հողային ծածկույթով (գրունտային) ճանապարհների վերակառուցում, ասֆալտապատում
4. Մայրերի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում
5. Քանդված և վնասված, վթարային հենապատերի հիմնանորոգում, անվտանգության աստիճանի բարձրացում նոր հենապատերի կառուցում
6. Վթարային պատշգամբների նորոգում
7. Կամրջային կառույցների հիմնանորոգում
8. Նոր հանգստի գոտիների ստեղծում
9. Բակերի և այգիների բարեկարգում
10. Գործող զբոսայգիների բարեկարգում և տարածքի ընդարձակում
11. Շենքերի ճակատային մասերի մաքրում, լվացում, ներկում

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1. Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է ապահովել հուսալի և ժամանակակից ճանապարհներ և ապահովել անվտանգ երթևեկություն:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է իրականացնել ասֆալտբետոնե ծածկի պահպանման և վերանորոգման աշխատանքներ տարեկան նորմատիվային չափաքանակի սահմաններում: Կախված եղանակային տատանումներից, ասֆալտբետոնե շերտի հաստությունից և մինչև 60տ ծանրություն ունեցող տրանսպորտային միջոցների անընդհատ երթևեկությունից օբյեկտիվորեն առաջացող ֆիզիկական և մեխանիկական մաշվածությունից, ասֆալտբետոնե ծածկը պարբերական վերանորոգման կարիք ունի և յուրաքանչյուր տարի գույքագրվում են այն փողոցներն ու մայրուղիները, որոնք առաջնահերթ վերանորոգման և հիմնանորոգման կարիք ունեն և համապատասխան հիմնավորումներից հետո իրականացվում են այդ աշխատանքները:

Մայրաքաղաքը առավել բարեկեցիկ և հարմարավետ դարձնելու նպատակով վերանորոգման աշխատանքներ են կատարվում նաև բակային տարածքներում: Բացի այդ իրականացվում են մայրաքաղաք մտնող մայրուղիների, հրապարակների և վերանորոգման կարիք ունեցող այլ տարածքների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգման աշխատանքներ:

2013-2016թթ. ժամանակահատվածում Երևանում ասֆալտապատվել է շուրջ 6 մլն քմ փողոց-բակային տարածք:

Քաղաքի կայուն և համաչափ զարգացման գերակա սկզբունքի համատեքստում աշխատանքներն իրականացվելու են բոլոր վարչական շրջաններում: Տարեկան ծրագրերի շրջանակում կատարվում է վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայրերի ասֆալտբետոնե ծածկի

վիճակի գույքագրում: Գույքագրման արդյունքում կազմվում են հասցեական սխեմաներ՝ անհրաժեշտ աշխատանքների իրականացման համար:

Ասֆալտապատման աշխատանքները ներառում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդում, առաջացած շին. աղբի բարձում, տեղափոխում (թափոնատեղի), խճե հիմքի իրականացում և 3-4սմ ասֆալտբետոնե ծածկի իրականացում: Ծրագրի շրջանակում յուրաքանչյուր տարի կիրականացվի ասֆալտբետոնե ծածկի պահպանմանն ուղղված վերանորոգման աշխատանքներ առնվազն 2017թ. համար նախատեսված ծավալներով:

Իրականացվելու են նաև ճանապարհների ճաքերի վերանորոգում պողիմերային և բիտումոպոլիմերային մածուցիկ նյութերով, որն էապես երկարացնում է ճանապարհի ասֆալտբետոնե ծածկի ծառայության ժամկետը:

2. Ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգում (գրունտային)

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է ապահովել հողային պաստառով ճանապարհների ասֆալտապատումը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է իրականացնել չասֆալտապատված հողային պաստառով փողոցների և նոր կառուցվող թաղամասերի գրունտային ճանապարհների հիմնանորոգման աշխատանքներ:

3. Եզրաքարերի վերանորոգում

Ծրագրի նպատակ

Փողոցների պատշաճ վիճակի և արտաքին տեսքի ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Գույքագրման արդյունքում արձանագրված բացակայող հատվածներում իրականացվելու է նոր եզրաքարերի տեղադրում, թեքված եզրաքարերի պարագայում դրանց ուղղում, ինչպես նաև բետոնե եզրաքարերի վերանորոգում:

4. Մայրերի վերանորոգում (սալիկապատում)

Ծրագրի նպատակ

Փողոցների մայրերի պատշաճ վիճակի, հարմարավետության և արտաքին տեսքի ապահովում

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է մայրերի վնասված, քանդված և բացակայող հատվածներում նոր սալիկների տեղադրում կամ հնի օգտագործմամբ վերանորոգում:

5. Հենապատերի վերանորոգում

Ծրագրի նպատակ

Փողոցների պատշաճ վիճակի և անվտանգության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Վերանորոգման կարիք ունեցող հենապատերից առաջնահերթության սկզբունքով իրականացվելու է հենապատերի հիմնանորոգում, կառուցվելու են նոր հենապատեր՝ որպես թիրախ ունենալով գույքագրված հասցեներում խնդիրների ամբողջական լուծումը: Երթևեկության անվտանգության նկատառումներից ելնելով կատարվելու են քարաթափման կանխարգելիչ, ինչպես նաև թեք լանջերից գլորվող քարերից պաշտպանիչ համալիր միջոցառումներ:

6. Թեքահարթակների կառուցում

Ծրագրի նպատակ

Հաշմանդամություն ունեցող անձանց համար հանրային տարածքներում տեղաշարժման մատչելիության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երևանի զարգացման ծրագրերով և մասնավոր հատվածի հետ համագործակցության արդյունքում հաշմանդամություն ունեցող քաղաքացիների համար մատչելի պայմաններ ապահովելու, նրանց տեղաշարժը դյուրին և ապահով դարձնելու նպատակով մայրաքաղաքի փողոցների խաչմերուկներում, բանուկ մասերում, հասարակական վայրերում և հանգստի գոտիներում կառուցվում են թեքահարթակներ:

Հասարակական շահագրգիռ կազմակերպությունների կողմից ներկայացված, հաշվառված և կառուցված թեքահարթակների առումով ծրագիրն ըստ էության մոտենում է ավարտին, սակայն այն համարվում է շարունակական նոր հիմնավոր առաջարկների առկայության պարագայում և ընդգրկելու է Երևանի բոլոր վարչական շրջանները:

Թեքահարթակի կառուցման անհրաժեշտությունը՝ որպես պարտադիր պայման նշվում է բազմաբնակարան, բազմաֆունկցիոնալ և հասարակական տիպի շենքերի նախագծային աշխատանքների համար տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքներում, իսկ օբյեկտների շինարարական աշխատանքների ավարտից հետո, հանձնաժողովի կողմից կազմված հանձնման-ընդունման, հետագայում նաև փաստագրման ակտերը հաստատվում են միայն թեքահարթակների առկայության դեպքում:

Նախատեսվում է հանրային շենքերում ապահովել թեքահարթակներ:

Նախատեսվում է նաև շարունակել տեսողության խնդիր ունեցող անձանց համար ուղղորդող և նախագգուշացնող սալիկների տեղադրումը:

7. Հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում և պահպանում

Ծրագրի նպատակ

Բարեկարգ, գեղեցիկ պուրակների և շատրվաններով զբոսայգիների ավելացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է իրականացնել առկա հանգստի գոտիների և զբոսայգիների պատշաճ պահպանմանն ուղղված աշխատանքներ, ինչպես նաև գույքագրել համապատասխան վայրեր՝ ապահովելով նոր հանգստի գոտիների և զբոսայգիների կառուցում Երևանի համաչափ զարգացման սկզբունքով:

8. Բակերի բարեկարգում՝ ներառյալ խաղահրապարակների և մինի ֆուտբոլի դաշտերի կառուցում

Ծրագրի նպատակ

Բակերի բարեկարգում, երիտասարդ սերնդի ակտիվ հանգստի կազմակերպում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ակտիվ հանգստի կազմակերպման և առողջ ապրելակերպի խթանման նպատակով մեծ ուշադրություն է հատկացվում բակերի բարեկարգման աշխատանքներին, ինչպես նաև խաղահրապարակների և մինի ֆուտբոլի դաշտերի կառուցմանը: Նախատեսվում է շարունակել բակային տարածքների բարեկարգման ծրագիրը Երևանի բոլոր վարչական շրջաններում մինչև դրանց ամբողջական ավարտը, կառուցել նոր խաղահրապարակներ և ֆուտբոլի դաշտեր, տեղադրել բակային հանգստի նպատակային կահավորանք, խաղահրապարակներում տեղադրել առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համար հարմարեցված խաղեր, ապահովել դրանց ընթացիկ պահպանումն ու անվտանգությունը:

9. Վթարային պատշգամբների նորոգում

Ծրագրի նպատակ

Բազմաբնակարան շենքերի պատշաճ վիճակի, բնակիչների անվտանգության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Մայրաքաղաքի պատշաճ տեսքը և անվտանգությունը ապահովվում է նաև բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների վերանորոգման ծրագրի շրջանակներում իրականացվող աշխատանքների շնորհիվ: Ծրագրի շրջանակում իրականացվելու են բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների քայքայված հատվածների հիմնանորոգման, բազրիքների ներկման աշխատանքներ: Ծրագիրը շարունակվելու է մինչև խնդրի լիարժեք կարգավորումը՝ բնակիչների անվտանգության ապահովման նպատակով:

10. Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում

Ծրագրի նպատակ

Երևան քաղաքի մանկապարտեզների պատշաճ վիճակի և հարմարավետության, նախադպրոցական կրթության համար նպաստավոր պայմանների ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգման ծրագիրը իրականացվում է բոլոր վարչական շրջաններում:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է ամբողջական կերպով հիմնանորոգել մանկապարտեզների շենքերը, թարմացնել կահույքն ու կենցաղային գույքը:

11. Հանրային շենքերի էներգախնայողության ծրագիր

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է հանրային շենքերում իրականացնել էներգետիկ արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, ներառյալ նաև արևային էներգիայի օգտագործումը՝ ապահովելով հարմարավետ պայմաններ:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երևան քաղաքի հանրային շենքերում (մանկապարտեզներ, պոլիկլինիկաներ, մշակութային օջախներ, սպորտդպրոցներ և այլն) նախատեսվում է իրականացնել էներգաարդյունավետությանը և էներգախնայողությանն ուղղված հիմնանորոգման աշխատանքներ, որը կներառի սեյսմակայունության ապահովման, արտաքին պատող կոնստրուկցիաների ջերմամեկուսացման, դռների և լուսամուտների փոխարինման, ջեռուցման/հովացման, օդափոխության և օդորակման համակարգերի, լուսավորության համակարգերի վերակառուցման և վերականգնվող էներգիայի աղբյուրների ինտեգրման, հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի հասանելիության ապահովման բաղադրիչները:

Ծրագրով նախատեսվող հանրային շենքերի մի մասում, հիմնականում մանկապարտեզներում, կիրականացվեն էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքներ, իսկ մյուսներում՝ արագ հետգնում ապահովող էներգաարդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ, ինչպես օրինակ լուսավորության, ջեռուցման համակարգերի արդիականացման և այլ աշխատանքներ: Ծրագրով նախատեսվում է նաև վերականգնվող էներգիայի՝ արևային ֆոտովոլտային կայանների և արևային ջրատաքացուցիչների կիրառումը:

Ծրագիրն իրականացվելու է Եվրոպական ներդրումային բանկի, Միավորված ազգերի զարգացման ծրագրի և E5P-ի (Արևելյան Եվրոպայի էներգաարդյունավետության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամ) աջակցությամբ:

12. Կամուրջների և կամրջային կառույցների շահագործում, պահպանում

Ծրագրի նպատակ

Մայրաքաղաքի պատշաճ տեսքի, անխափան երթևեկության ապահովում, բնակչության տեղաշարժի անվտանգություն:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է Երևան քաղաքի կամուրջների, ուղեանցների, տրանսպորտային հանգույցների, վերգետնյա անցումների և կամրջային կառույցների շահագործման և պահպանման աշխատանքների իրականացում: Մասնավորապես կիրականացվի կամուրջների և կամրջային կառույցների դեֆորմացիոն կարերի, ջրահեռացման խողովակների մաքրում, հենարանների և թռիչքային կառուցվածքների գնում, վնասվածքների դեպքում՝ վերանորոգում, բազրիքների, եզրաքարերի, լուսավորության սյուների և այլ էլեմենտների նորոգում, ներկում, երթևեկելի մասի և մայթերի նորոգում, մաքրում:

13. Ջրային կառույցների շահագործում և պահպանում

Ծրագրի նպատակ

Մայրաքաղաքի արտաքին տեսքի բարելավում, հանգստի գոտիներում զովության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում առկա 37 ջրային կառույցների շահագործումն ապահովելու նպատակով Երևանի քաղաքապետարանի ծրագրերով յուրաքանչյուր տարի նախատեսվում են դրանց ընթացիկ նորոգման և պահպանման աշխատանքներ: Շահագործվում և սպասարկվում են մայրաքաղաքի շատրվանները, ջրավազանները, Երևանյան ջրամբարը, Հրազդան գետի վրա բարածները, Գետառ, Ջրվեժ, Ողջաբերդ գետերը:

Միաժամանակ, ծրագրի շրջանակներում կգույքագրվեն առկա հանգստի գոտիներում շատրվանների կառուցման հնարավորությունները և կկառուցվեն նորերը:

Կիրականացվի նաև ցայտաղբյուրների վերանորոգում և նորերի կառուցում:

14. Երևան քաղաքի փողոցներում աղբամանների հարմարեցված հարթակների կառուցում

Ծրագրի նպատակ

Փողոցների պատշաճ վիճակի, աղբահանության ծառայության մատուցման, բնակչության և փողոցային երթևեկության անվտանգության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն


Ծրագրով նախատեսվում է մայրաքաղաքի փողոցների մայթերին տեղադրված և քաղաքացիների ազատ տեղաշարժին, ինչպես նաև երթևեկությանը խոչընդոտող աղբամանների տեղադրման համար հարմարեցված հարթակների կառուցում:

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Երևան քաղաքի վարչական տարածքը 01.07.2016թ. դրությամբ կազմում է 22328 հա, որից պետական սեփականության հողերը՝ 3386,8 հա, համայնքային սեփականության հողերը՝ 10773,7 հա, քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը՝ համապատասխանաբար 5473.6 հա և 2679 հա, օտարերկրյա պետությունների սեփականությունը՝ 14.9 հա:

Գծանկար 13


Երևան քաղաքի վարչական տարածքը՝ ըստ սեփականության սուբյեկտների՝ տոկոսային արտահայտությամբ



Հողային հաշվեկշռում արտացոլվում է հողային ֆոնդը՝ ըստ նպատակային նշանակության, հողատեսքերի ու գործառնական նշանակության, սեփականության սուբյեկտների, սեփականության և օգտագործման ձևերի:

Գծանկար 14

Երևան քաղաքի վարչական տարածքը՝ ըստ նպատակային նշանակության՝ տոկոսային արտահայտությամբ



Համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման գործընթացը ներառում է դեպքեր, երբ շենք, շինություններն իրենց գործառական նշանակությամբ չեն օգտագործվում, ինչը ունի հստակեցման կարիք: Նշվածը հնարավորություն կտա գույքահարկի բազայում կատարել համապատասխան փոփոխություններ՝ գույքահարկի և/կամ վարձավճարի չափերը համապատասխանեցնելով գույքի փաստացի օգտագործման նշանակությամբ:

Երևանի քաղաքապետարանի հաշվեկշռում առկա է այնպիսի անշարժ գույք, որ տարիներ շարունակ ընդգրկված լինելով գույքի կազմում՝ ենթարկվել է բարոյական և ֆիզիկական մաշվածության, ավելին, նշված գույքը պահանջում է լրացուցիչ չհիմնավորված ծախսեր՝ կապված պահպանման և շահագործման հետ:

Երևան քաղաքում դեռևս առկա են խորհրդային ժամանակներից քաղաքացիների կողմից գրադեցրած, սակայն մինչ օրս չմասնավորեցված բնակարաններ:

Առկա են Երևան համայնքի սեփականությունը համարվող գույքեր, որոնք դեռևս չունեն իրավունքների պետական գրանցում համայնքի անվամբ:

Երևան քաղաքի Հաղթանակ, Չարբախ, Նորագավիթ, Նուբարաշեն, Սիլիկյան, Ջրաշեն, Մուշական և Մուշավան, ինչպես նաև այլ թաղամասերում առկա են նախկինում տնամերձ՝ բնակարանային շինարարության, ինչպես նաև գյուղատնտեսական գործունեություն ծավալելու համար հատկացված, բայց դեռևս չսեփականաշնորհված հողամասեր:

Առկա են դեպքեր, երբ հողամասերի գործառնական և/կամ նպատակային նշանակությունները չեն համապատասխանում գործող օրենսդրությանը և ունեն հստակեցման կարիք:

Հիմնախնդիրներ

- 1. ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի հ.2387-Ն որոշման շրջանակներում չհասցեավորված շենք-շինությունների և հողամասերի հասցեավորում,*
- 2. Տնամերձ, բնակարանային շինարարության համար հատկացված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման հարցերի լուծում,*
- 3. Համայնքային սեփականություն հանդիսացող շենք-շինությունների և հողամասերի վարձակալության դրույքաչափերի համապատասխանեցում Երևանի ավագանու կողմից սահմանված չափերին,*
- 4. Երևանի սեփականություն համարվող գույքի կազմից բարոյական և ֆիզիկական մաշվածություն ունեցող, լրացուցիչ չհիմնավորված ծախսեր պահանջող գույքի մասնավորեցման գործընթացի իրականացում:*

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

Նախատեսվում է իրականացնել հողային հաշվեկշռի կազմման և անշարժ գույքի օտարման տարեկան ծրագրի մշակում, և դրա հիման վրա իրականացնել Երևան քաղաքի զարգացման նպատակով ներդրումների ներգրավմանն ուղղված համապատասխան ծրագրերի մշակման և իրականացմանն աշխատանքներ:

1. Շենքերի ու շինությունների կառավարում

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է իրականացնել համայնքի սեփականությունը հանդիսացող շենքերի և շինությունների արդյունավետ կառավարում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է՝

- «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին», «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, ինչպես նաև ՀՀ կառավարության համապատասխան որոշումների հիման վրա Երևան համայնքի սեփականությունը հանդիսացող, սակայն դեռևս չգրանցված գույքերի նկատմամբ իրավունքի պետական գրանցման աշխատանքների կազմակերպում:
- Քաղաքացիների և իրավաբանական անձանց կողմից առանց համապատասխան պայմանագրերի համայնքային սեփականություն հանդիսացող գույքերի օգտագործման դեպքերի հայտնաբերում և համապատասխան ձևակերպումների իրականացում:
- Երևանի սեփականություն համարվող գույքի կազմից բարոյական և ֆիզիկական մաշվածություն ունեցող, լրացուցիչ չհիմնավորված ծախսեր պահանջող, ինչպես նաև ակտիվ շահագործման փուլում չգտնվող գույքի մասնավորեցման գործընթացի իրականացում:
- Քաղաքացիների կողմից զբաղեցրած Երևան համայնքի սեփականություն հանդիսացող բազմաբնակարան բնակելի շենքերում գտնվող բնակարանների անհատույց մասնավորեցման գործընթացի կազմակերպում:
- Երևան համայնքի սեփականությունը համարվող գույքային միավորների հայտնաբերման, հաշվառման, չափագրման, գույքագրման և դրանց նկատմամբ համայնքի սեփականության իրավունքի պետական գրանցման աշխատանքների իրականացում:
- Քաղաքացիների և իրավաբանական անձանց սեփականությունը հանդիսացող շենքերի, շինությունների գործառական նշանակությունների համապատասխանեցում փաստացի օգտագործմանը:
- Համայնքի սեփականություն հանդիսացող շենքերի ու շինությունների կառավարման ամենամյա ծրագրերի մշակում:

2. Հողերի հետ կապված հարաբերությունների կառավարում

Ծրագրի նպատակ

Ծրագիրը նպատակ է հետապնդում կարգավորել հողերի հետ կապված հարաբերությունները:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է՝

- Օրենսդրությամբ սահմանված կարգով իրավունքներ չձևակերպած, սակայն նախկինում սեփականաշնորհված հողամասերի հաշվառման, գույքագրման, դրանց նկատմամբ իրավունքի վերականգնման և ձևակերպման գործառնություն:
- Երևան քաղաքի Հաղթանակ, Զարբախ, Նորագավիթ, Նուբարաշեն, Սիլիկյան, Զրաշեն, Մուշական և Մուշավան, ինչպես նաև այլ թաղամասերում տնամերձ, բնակարանային շինարարության համար հատկացված հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի վերականգնման հարցերի լուծում:
- Նախկինում կնքված հողամասերի, ինչպես նաև շինությունների վարձակալության պայմանագրերի ժամկետների և դրույքաչափերի վերանայում և վարձավճարների համապատասխանեցում Երևանի ավագանու կողմից սահմանված դրույքաչափերին համապատասխան:
- Համապատասխան իրավական ակտերի միջոցով նախատեսվում է հողամասերի գործառնական և նպատակային նշանակությունները համապատասխանեցնել գործող օրենսդրության պահանջներին:
- Համայնքի սեփականություն հանդիսացող հողերի կառավարման ամենամյա ծրագրերի մշակում:

ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Երևան քաղաքում գործում են առևտրի 8587 օբյեկտ, սպառողական ապրանքների 7, գյուղատնտեսական արտադրանքի 10, գյուղմթերքի փոքրածավալ 18 շուկաներ, 5 տոնավաճառ, 24 առևտրի կենտրոն, հանրային սննդի 1608 և կենցաղային ծառայություններ մատուցող 2908 օբյեկտներ:

Աղյուսակ 5

Երևան քաղաքում գործող առևտրի և սպասարկման
օբյեկտների թիվը ըստ վարչական շրջանների

Հ/Հ	Վարչական շրջան	Առևտրի օբյեկտների թիվը	Հանրային սննդի օբյեկտների թիվը	Կենցաղային սպասարկման օբյեկտների թիվը
1	Աջափնյակ	532	55	134
2	Ավան	333	36	91
3	Արաբկիր	1111	160	280
4	Դավթաշեն	197	25	77
5	Էրեբունի	641	49	207
6	Կենտրոն	1880	849	1059
7	Մալաթիա-Սեբաստիա	958	120	260
8	Նոր Նորք	1047	64	288
9	Նորք-Մարաշ	56	11	15
10	Նուբարաշեն	68	5	12
11	Շենգավիթ	1354	170	313
12	Քանաքեռ-Զեյթուն	410	64	172
	Ընդամենը	8587	1608	2908

Առևտրի օբյեկտների 62,8%-ը, հանրային սննդի կազմակերպման օբյեկտների 77.3%-ը և կենցաղային ծառայություններ մատուցող օբյեկտների 62%-ը կենտրոնացված են Կենտրոն, Արաբկիր, Շենգավիթ և Նոր Նորք վարչական շրջաններում:

Մայրաքաղաքի բնակչության սպառողական պահանջարկը հիմնականում բավարարվում է խանութներում և սպառողական ապրանքների շուկաների միջոցով իրականացվող մանրածախ առևտրի միջոցով: Եթե առևտրի այդ տեսակների շրջանառությունը մանրածախ առևտրի ողջ ծավալում 2017թ. 1-ին եռամսակի ընթացքում կազմել է 91%, ապա գյուղատնտեսական արտադրանքի շուկաների, տաղավարների ու կրպակների միջոցով կատարվող առևտրի շրջանառությունն ունի փոքր տեսակարար կշիռ և նշված ժամանակաշրջանում այն կազմում է ընդամենը 2.6%:

Երևանում առևտրի շրջանառության ծավալի մոտ 90%-ը բաժին է ընկնում Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա, Արաբկիր, Էրեբունի և Շենգավիթ վարչական շրջաններին, չնայած նշված վարչական շրջաններում ապրում է քաղաքի բնակչության մոտ 60%-ը: Դա բացատրվում է այդ վարչական շրջաններում առևտրի խոշոր կազմակերպությունների առկայությամբ: Մնացած 7 վարչական շրջանների տարածքներում իրականացվող առևտրի շրջանառությունը առանձին-առանձին վերցրած կազմում է ընդամենի 0.03%-ից մինչև 6%:

Առևտրի շրջանառության 47.6%-ը իրականացվում է խոշոր, մնացած 52.4%-ը՝ փոքր և միջին բիզնեսի կողմից:

Չնայած Երևան քաղաքում բացօթյա ապօրինի առևտրի արգելմանը՝ դեռևս այն հսկողության ուժեղացման և կանոնակարգման կարիք ունի:

Անհավասարաչափ են տեղաբաշխված առևտրի, հանրային սննդի, սպասարկման ծառայություններ մատուցող և զվարճանքի օբյեկտները:

Հիմնախնդիրներ

1. Պիտանիության ժամկետներն անցած ապրանքների վաճառքի նկատմամբ խիստ հսկողության սահմանում:
2. Օրենսդրության համապատասխան բացօթյա առևտրի պատշաճ կազմակերպում և ապօրինի առևտրի արգելում և կանխարգելում:
3. Երևան քաղաքի փողոցներում և պողոտաներում տեղակայված կրպակների (տաղավարների), ինչպես նաև բացօթյա փոքրածավալ շուկաների ու տոնավաճառների և շինանյութերի վաճառքի կետերի մի մասի ապամոնոտաժման կամ արդիականացման անհրաժեշտություն:
4. Առևտրի օբյեկտներում սգո ծիսակատարություններին վերաբերող ապրանքների նմուշների՝ առևտրի օբյեկտից դուրս ցուցադրումն արգելելու ուղղությամբ հսկողության խստացման անհրաժեշտություն:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1. Բացօթյա առևտրի նկատմամբ անհրաժեշտ հսկողության իրականացում և կանոնակարգում:

Բացօթյա ապօրինի առևտրի կանխարգելում և արգելում:

Ծրագրի նպատակ

Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանություն:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Բացօթյա ապօրինի առևտուրը բերում է բազմաթիվ բացասական հետևանքներ: Առաջին հերթին բացօթյա ապօրինի առևտուրը վտանգում է սպառողների առողջությունը: Արևի, անձրևի ու ձյան ազդեցության, փոշու և մեքենաների արտանետումների հետևանքով գյուղատնտեսական մթերքները արագ որակազրկվում են, քիմիական պրոցեսների հետևանքով դրանցում առաջանում են թունավոր նյութեր և սպառնում բնակչության առողջությանը: Առողջապահության

նախարարության կողմից արձանագրվել են բնակչության շրջանում թունավորման բազմաթիվ դեպքեր, որոնք առաջացել են փողոցներից գյուղմթերքներ գնելու և սպառելու հետևանքով:

Բացօթյա ապօրինի առևտուրը առաջացնում է նաև փողոցներում հակասանիտարական վիճակ, խոչընդոտում հետիոտնի և տրանսպորտի երթևեկին, երբեմն ստեղծում ճանապարհատրասպորտային պատահարների առաջացման իրավիճակ: Առևտրի գործունեությունից առաջացած աղմուկի հետևանքով խանգարվում է մարդկանց հանգիստն ու անդորրը՝ առաջացնելով նրանց շրջանում դժգոհություններ: Առևտուր իրականացնելու համար անհրաժեշտ զանազան պարագաների տեղադրման հետևանքով աղճատվում է քաղաքի տեսքը՝ ստեղծելով գեղագիտական տեսանկյունից ոչ հաճելի պատկեր:

Ուստի օրենսդրական պահանջներն ապահովելու, սպառողների իրավունքներն ու շահերը պաշտպանելու, նրանց վերը նշված բացասական հետևանքներից զերծ պահելու նպատակով առաջիկա 5 տարիների ընթացքում կտրուկ միջոցառումներ կձեռնարկվեն բացօթյա ապօրինի առևտրի արգելման ու կանխարգելման ուղղությամբ:

2.Գյուղատնտեսական արտադրանքի, սպառողական ապրանքների շուկաների, տոնավաճառների կազմակերպում

Ծրագրի նպատակ

Սպառողների իրավունքների և շահերի պաշտպանություն:

Ծրագրի համառոտ նկարագրություն

2011 թվականից սկսած Երևանի քաղաքապետարանի և ՀՀ գյուղատնտեսության նախարարության համագործակցության շնորհիվ մայրաքաղաքում գյուղմթերքների առևտուրը կանոնակարգվելու, բացօթյա ապօրինի առևտուրը վերացնելու, արտադրող-սպառող անմիջական կապն ապահովելու, ազգաբնակչությանը թարմ ու որակյալ, մատչելի մթերքներով ապահովելու նպատակով Արաբկիր վարչական շրջանում, Կասյան փողոցի սկզբնամասում և Կենտրոն վարչական շրջանի «Մալիբու» սրճարանի հարևանությամբ հաջողությամբ գործունեություն են իրականացրել գյուղատնտեսական մթերքների սեզոնային տոնավաճառները, որտեղ առևտուր են իրականացնում միայն գյուղմթերք արտադրողները: Առաջիկա 5 տարիների ընթացքում Երևան քաղաքի մնացած վարչական շրջաններում պահանջարկ առաջանալու դեպքում աշխատանքներ կտարվեն գյուղմթերքների նոր շուկաների կազմակերպման և գործունեության իրականացման ուղղությամբ:

3.Բացօթյա սրճարանների գործունեության կանոնակարգում

Ծրագրի նպատակ

Բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանություն:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ գործող բացօթյա հանրային սննդի օբյեկտների գործունեության հետևանքով երբեմն խոչընդոտվում է հետիոտնի երթևեկը, որն առաջացնում է քաղաքացիների դժգոհությունը: Ուստի առաջիկա 5 տարիների ընթացքում աշխատանքներ կտարվեն, որպեսզի բացառվեն նման դեպքերը:

4.Երևան քաղաքում չգործող, լքյալ, հողի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժում, ինչպես նաև առևտրի առանձին օբյեկտների ու շինանյութի վաճառքի կետերի արդիականացում

Ծրագրի նպատակ: Բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանություն:

Ծրագրի համառոտ նկարագրություն: Չնայած վերջին տարիների ընթացքում Երևան քաղաքում իրականացվել են առևտրի և սպասարկման ոլորտի մեծ թվով կրպակների ապամոնտաժման

աշխատանքներ, սակայն դեռևս ապամոնտաժման կամ արդիականացման կարիք ունեն Երևան քաղաքի փողոցներում և պողոտաներում տեղակայված կրպակների (տաղավարների) մի մասը: Մայրաքաղաքում քաղաքակիրթ առևտուր կազմակերպելու նպատակով առաջիկայում միջոցներ կձեռնարկվեն չգործող, լքյալ, հողի վարձակալության ժամկետը լրացած, ոչ հարիր տեսք ունեցող առևտրի և սպասարկման կրպակների ապամոնտաժման ու արդիականացման ուղղությամբ: Առաջնահերթությունը կտրվի կանաչ տարածքներում և մայրերի վրա տեղադրված կրպակների ապամոնտաժմանը: Հետևողական աշխատանքներ կիրականացվեն հատկապես սեփականաշնորհված տարածքներում շինանյութերի վաճառքի կետերի պարտադիր պարսպապատման ու սահմանազատման ապահովման, սանիտարական կանոնների պահպանման և շրջակա միջավայրի աղտոտման դեպքերի բացառման ուղղությամբ:

5. Թափառող կենդանիների կացարանի կառուցում, վնասագերծում

Ծրագրի նպատակ

Բնակիչների իրավունքների և շահերի պաշտպանություն, նրանց անվտանգության և ազատ տեղաշարժման իրավունքի ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Թափառող կենդանիների առկայությունը փողոցներում խիստ վտանգավոր է բնակչության համար: Ապացուցված է, որ թափառող կենդանիներից մարդկանց են փոխանցվում մոտ 45 տեսակի հիվանդություններ, որոնցից ամենավտանգավորը կատաղություն հիվանդությունն է՝ գրեթե 100% մահվան ելքով: Թափառող շները բացասական ազդեցություն են ունենում բուսական և կենդանական աշխարհի վրա, կարող են առաջացնել ճանապարհատրանսպորտային պատահարներ: Դրանք խանգարում են քաղաքացիների անդորրը և կարող են թողնել նաև այլ բացասական հետևանքներ: Շատ երկրներում փողոցային կենդանիների առկայությունը արգելված է օրենքով և դրանց փողոցում լքելու դեպքում կենդանիներին տիրապետողները ենթարկվում են մեծ չափերի հասնող վարչական տուգանքների:

Ծրագրի իրականացումը կնպաստի թափառող կենդանիների կողմից մարդկանց և բուսական ու կենդանական աշխարհին պատճառված բացասական հետևանքների նվազեցմանն ու վերացմանը: Երևան քաղաքում բացակայում են թափառող կենդանիների տիպային կացարանները: Առաջիկայում աշխատանքներ կտարվեն այդ գործում մասնավոր միջոցների ներգրավմամբ բոլոր հարմարություններով հագեցած կացարանի կառուցման համար:

«Կենդանիների մասին», «Կենդանիների պաշտպանության մասին» ՀՀ օրենքների բացակայությունը Երևան քաղաքում խոչընդոտում է թափառող կենդանիների վնասագերծման ծառայությունների արդյունավետ իրականացմանը:

Ուստի հաջորդ տարիների ընթացքում առաջարկություններ կներկայացվեն նշված օրենքների նախագծերի մշակման և ընդունման անհրաժեշտության մասին:

Կուսումնասիրվեն նաև թափառող կենդանիների վերացման, ընտանի կենդանիներ պահելու կանոնների, շների զբոսանքի և վարժեցման կազմակերպման և այլ հարցերի վերաբերյալ տարբեր երկրներում կիրառվող առաջավոր փորձը և աշխատանքներ կտարվեն դրա ներդրման ուղղությամբ:

ԿՈՄՈՒՆԱԼ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Բազմաբնակարան շենքերի կառավարում

Երևանում առկա 4878 բազմաբնակարան շենքերից 4544-ը կառավարվում է 183 համատիրությունների կողմից, 85-ը՝ լիազորագրային կառավարիչների, 120-ը՝ վարչական շրջանների ղեկավարների:

ՀՀ կառավարության 2007 թվականի հոկտեմբերի 4-ի «Բազմաբնակարան շենքի ընդհանուր բաժնային սեփականության պահպանման պարտադիր նորմերը սահմանելու մասին» հ.1161-Ն որոշման հիման վրա Երևանի քաղաքապետարանում մշակվել և կիրառվում են պարտադիր նորմերի վերահսկման մեխանիզմներ: Դրա արդյունքում բարձրացել է պարտադիր նորմերի կատարմանն ուղղված աշխատանքների արդյունավետությունը, բարելավվել է կառավարման մարմինների հաշվետվողականությունը՝ դառնալով ավելի թափանցիկ:

«Համատիրությունների մասին» և «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքներով սահմանված վերահսկողության մեխանիզմների ոչ հստակությունը որոշակի դժվարություններ է ստեղծում ընդհանուր ժողովի հրավիրման, բյուջեների կազմման և հաստատման, ֆինանսական միջոցների գանձման և ծախսման, կանոնադրական այլ պահանջների կատարման նկատմամբ վերահսկողության իրականացման համար:

Ոլորտում առկա խնդիրների կարգավորման նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ հավանություն է տրվել ՀՀ բազմաբնակարան բնակարանային ֆոնդի կառավարման, պահպանման և շահագործման բարելավման հնգամյա ռազմավարական ծրագրին, որի շրջանակներում ՀՀ արդարադատության նախարարության կողմից մշակվել և ներկայացվել է «Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» ՀՀ օրենքի նոր նախագիծ:

Մայրաքաղաքի բարձրահարկ բազմաբնակարան շենքերի թվով 4428 վերելակները սպասարկվում և շահագործվում են վարչական շրջաններում կազմավորված վերելակային ծառայությունների ու համատիրությունների կողմից:

Աղյուսակ 6

Երևանի բնակելի շենքերի, անհատական բնակելի տների, մուտքերի, վերելակով շենքերի և վերելակների թիվը՝ ըստ վարչական շրջանների

h/h	Վարչական շրջան	Բնակելի շենքերի ընդհանուր թիվը	Անհատական բնակելի տների թիվը	Վերելակով շենքերի թիվը	Վերելակների ընդհանուր թիվը
1	Ավան	237	1643	217	361
2	Արաբկիր	692	3007	264	459
3	Աջափնյակ	426	3398	168	338
4	Դավթաշեն	191	1348	182	407
5	Էրեբունի	261	14353	88	218
6	Կենտրոն	764	8329	276	581
7	Մալաթիա-Սեփաստիա	586	5597	495	960
8	Նորք-Մարաշ	10	2950	3	8
9	Նոր Նորք	682	250	316	593

10	Նուբարաշեն	35	1092	4	6
11	Շենգավիթ	636	6842	161	279
12	Քանաքեռ –Զեյթուն	358	3975	137	218
	Երևան	4878	52784	2311	4428

Երևանի բազմաբնակարան բնակելի շենքերի թիվը կազմում է 4878, որոնց մեծ մասը կենտրոնացված են Կենտրոն, Նոր Նորք և Շենգավիթ վարչական շրջաններում, իսկ անհատական բնակելի տների թիվը 52784, որոնց մեծ մասը կենտրոնացված են Էրեբունի, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջաններում:

Երևանի բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ տանիքների մակերեսը կազմում է 1247138 քմ, իսկ բազմաբնակարան բնակելի շենքերի թեք տանիքների մակերեսը՝ 2099433 քմ:

Աղյուսակ 7

Երևանի բազմաբնակարան բնակելի շենքերի հարթ և թեք տանիքների մակերեսն ըստ վարչական շրջանների

h/h	Վարչական շրջան	Հարթ տանիք, քմ	Թեք տանիք, քմ
1	Ավան	89432	13868
2	Արաբկիր	129555	415136
3	Աջափնյակ	115085	216284
4	Դավթաշեն	123380	850
5	Էրեբունի	65129	167077
6	Կենտրոն	111564	419098
7	Մալաթիա–Սեբաստիա	226576	56659
8	Նորք-Մարաշ	3200	3348
9	Նոր Նորք	217285	358030
10	Նուբարաշեն	1648	37100
11	Շենգավիթ	87960	394070
12	Քանաքեռ -Զեյթուն	76324	17913
	Երևան	1247138	2099433

Հիմնախնդիրներ

- Վերելակային տնտեսության ամբողջական արդիականացում և միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգ սպասարկում
- Հարթ և թեք տանիքների հիմնանորոգում
- Ընդհանուր օգտագործման տարածքների վերանորոգման կարիք ունեցող շենքերի առկայություն:
- Բազմաբնակարան շենքերի կառավարման մարմինների մասնագիտական կարողությունների ոչ բավարար մակարդակ
- Բազմաբնակարանային ֆոնդի վերաբերյալ օրենսդրական դաշտի կատարելագործում.
«Բազմաբնակարան շենքի կառավարման մասին» նոր օրենքի ընդունման անհրաժեշտություն:
- Միջազգային չափանիշներին համապատասխանող նոր աղբավայրի, աղբի տեսակավորման և վերամշակման գործարանի կառուցում:

Կոշտ թափոնների կառավարում

Երևան քաղաքի սանիտարական մաքրման ենթակա փողոցների, հրապարակների, կամուրջների, մայրերի, բակային տարածքների և այլ կառույցների ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 24.348.634քմ: Մայրաքաղաքի տարածքից օրական հավաքվում և տարբեր աղբավայրեր է տեղափոխվում շուրջ 1000-1300տ:

Մայրաքաղաքի աղբահանության և սանիտարական մաքրման աշխատանքներն իրականացվում է մրցույթում հաղթող ճանաչված «Սանիթեք» և «Սանիթեք Ինթերնեյշնլ» ՍՊ ընկերությունների կողմից: Արդյունքում.

- մշակվել ու ներդրվել են աղբահանության և սանիտարական մաքրման գործընթացի վերահսկման նոր մեխանիզմներ,
- մայրաքաղաքում տեղադրվել են եվրոպական արտադրության ավելի քան 8400 նոր աղբամաններ,
- աղբահանության, սանմաքրման և ձնամաքրման աշխատանքերը սկսել են իրականացվել շուրջ 140 նոր մեքենա-սարքավորումներով:

Նուբարաշենի քաղաքային աղբավայրը գործարկվել է 1950-ական թվականներին և գտնվում է մայրաքաղաքի կենտրոնից մոտ 9-10 կմ հեռավորության վրա՝ զբաղեցնելով շուրջ 52.3 հա տարածք:

Մայրաքաղաքի տարածքից Նուբարաշենի աղբավայր է տեղափոխվում տարեկան միջին հաշվով 290-320 հազ. տոննա կենցաղային աղբ: Այն ի սկզբանե չի նախագծվել և կառուցվել որևէ ընդունված ստանդարտով որպես աղբավայր, չի համապատասխանում միջազգային /կամ որևէ/ տեխնիկական, բնապահպանական և սանիտարահիգիենիկ չափանիշների և բացառապես հանդիսանում է որպես աղբի կուտակման վայր:

Աղբավայրում առկա չէ հիմքի մեկուսացում և չի կատարվում առաջացող մեթան գազի հավաքում: Աղբավայրը չունի ժամանակակից պահանջները բավարարող հոսքաջրերի հավաքման որևէ տեխնիկական համակարգ, որի պատճառով հոսքաջրերը հոսում են առկա աղբավայրից դուրս՝ առանց որևէ պաշտպանիչ արգելքների: Աղբավայրը չունի անհրաժեշտ ենթակառուցվածքներ հավաքվող աղբն ընդունելու համար: Հեռացվող թափոնները ուղղակիորեն բեռնաթափվում ու խառնվում են (հիմնականում առանց տոփանման) թափոնների հավաքագրման առաջնային գծում: Աղբավայրը ցանկապատված և առանձնացված չէ: Նվազագույն ընդունելի շահագործում իրականացնելու համար աղբավայրն ապահովված չէ անհրաժեշտ քանակությամբ և որակի մեքենա-մեխանիզմներով:

Քաղաքային աղբավայրում ջերմոցային գազերի արտանետումը, ինքնաբռնկման երևույթները կանխելու նպատակով 2009թ. Երևանի քաղաքապետարանը ճապոնական «Շիմիձու» ընկերության հետ կնքել է համաձայնագիր Նուբարաշենի թափոնակուտակիչում կենսագազի հավաքման և այրման ծրագրի իրականացման վերաբերյալ: Պայմանագրի գործողության ժամանակահատվածում մինչև 2023 թվականը, ըստ հաշվարկների, պետք է իրականացվի 512 հազար տոննա CO₂ գազին համարժեք արտանետումների սերտիֆիկացված կրճատում:

2015թ. ՀՀ կառավարության, Երևանի քաղաքապետարանի, Եվրոպական միության և Եվրոպական ներդրումային բանկի միջև ստորագրվել է կոշտ կենցաղային թափոնների ոլորտում համագործակցելու պատրաստակամության մասին փոխըմբռնման հուշագիր:

Մայրաքաղաքում լիարժեք և արդյունավետ լուծում են ստացել աղբահանության և սանիտարական մաքրման ոլորտի (ներառյալ ձմռան ամիսներին) հիմնախնդիրները, ինչպես նաև

ուղորտում ներդրվել է ժամանակակից կառավարման համակարգ՝ ապահովելով եվրոպական չափանիշներին համապատասխան որակյալ ծառայություններ:

Երևան քաղաքի վարչական շրջանների բազմաբնակարան շենքերի խցանված աղբամուղերի մաքրման, ախտահանման, աղբընդունիչի վերանորոգման, շինարարական աղբի տեղափոխման, ինչպես նաև գետերի հունների մաքրման աշխատանքների իրականացման համար կնքվել է ծառայությունների գնման պայմանագիր 10 տարի ժամկետով:

Հիմնախնդիրներ

1. Երևանի քաղաքային նոր աղբավայրի կառուցում ժամանակակից միջազգային չափանիշների խստագույն պահպանմամբ
2. Գործող աղբավայրերի մեկուսացում՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան
3. Մայրաքաղաքում աղբավերամշակման գործարանի կառուցման իրագործելության բազմակողմ ուսումնասիրություն և անհրաժեշտության դեպքում կառուցում՝ համայնք-մասնավոր հատվածի փոխշահավետ համագործակցությամբ
4. Չսահմանված վայրերում աղբ թափելու նկատմամբ վերահսկողության խստացում՝ իրավական ակտերի հստակ ամրագրմամբ


Արտաքին լուսավորություն

Երևան քաղաքի արտաքին լուսավորության ցանցի զարգացման ծրագրերի գլխավոր նպատակն է մայրաքաղաքի բնակչության անվտանգ տեղաշարժման ապահովումը, արձանագրվող ճանապարհատրանսպորտային պատահարների կրճատումը, էներգախնայող համակարգերի և լուսատուների կիրառման հաշվին լուսավորվող ժամանակահատվածի ավելացումը, ցանցի արտաքին տեսքի արդիականացումը, շահագործման դյուրինացումը:

Իրականացված աշխատանքների արդյունքում շահագործվող արտաքին լուսավորության ցանցի երկարությունը 2013թ. (1337 կմ և 1387 օբյեկտ) համեմատ 2017թ. դարձել է 1555 կմ և 2165 օբյեկտ: Վերջին տարիների ընթացքում կապիտալ ներդրումների հաշվին վերակառուցվել է արտաքին լուսավորության ցանցի զգալի մասը:

Գծանկար 15

Երևանի գործող արտաքին լուսավորության ցանցի երկարությունը 2013-2017թթ., կմ



Հիմնախնդիրներ

1. Երևան քաղաքում արտաքին լուսավորության ցանցի արդիականացում, կառավարման արդյունավետության բարձրացում՝ էներգախնայող լուսատուների ավելացմամբ, ինչը հնարավորություն կտա՝

- ունենալ շահագործման հեռակառավարման համակարգ,
- հզորությունների կառավարմամբ ապահովել լուսավորության տևողության ավելացում,
- իրականացնել մալուխային ցանցի տեղափոխում ստորգետնյա հատված:

2. Չլուսավորվող փողոցների, բակերի, նրբանցքների և խաղահրապարակների լուսավորում:

3. Լուսատեխնիկական լաբորատորիայի բնականոն աշխատանքի ապահովում:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1. Օրենսդրական փոփոխությունների միջոցով ներդնել համատիրությունների կառավարման նոր մոդել, որը կներառի գործառնությունների հստակեցում, պատասխանատվության սահմանում և բնակչությանը հաշվետու լինելու մեխանիզմներ: Նախատեսվում է մշակել և ներդնել «Էլեկտրոնային համատիրություն» ծրագիրը:
2. Վերանորոգել բոլոր բազմաբնակարան շենքերի հարթ տանիքները:
3. Մշակել և իրականացնել բազմաբնակարան շենքերի թեք տանիքների ամբողջական հիմնանորոգման հիմնախնդրի հայեցակարգ:
4. Ավարտին հասցնել բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքները:
5. Իրականացնել բազմաբնակարան շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի նորոգման աշխատանքներ:
6. Իրականացնել առանց կոյուղատար համակարգի թաղամասերում դրանց կառուցումը:
7. Ապահովել ջրամատակարարման և ջրահեռացման քաղաքային ցանցի հիմնանորոգման և արդիականացման երկրորդ փուլի աշխատանքների իրականացումը:
8. Ապահովել աղբահանության և սանմաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավումը:
9. Հանրային տարածքներում ապահովել հասարակական զուգարանների առկայությունը:
10. Ապահովել վերգետնյա և ստորգետնյա անցումների կառուցման ծրագրի շարունակականությունը: Արդեն իսկ կառուցվածները վերանորոգել և պահպանել պատշաճ տեսքը: Տեղաշարժման մատչելիությունն ապահովելու նպատակով վերգետնյա և ստորգետնյա անցումներն ապահովել հատուկ սարքավորումներով և վերելակներով:
11. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի բնակիչների համար կառուցել նոր բազմաբնակարան շենքեր: Պարբերական հետազոտությունների միջոցով հսկողություն իրականացնել վթարային շենքերի նկատմամբ և ապահովել դրանց անհրաժեշտ ամրացումը:

1. Բազմաբնակարան շենքերի ջերմամեկուսացում և էներգետիկ արդյունավետության բարձրացում

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է նպաստել բազմաբնակարան շենքերի էներգաարդյունավետության բարձրացմանը և վերականգնվող էներգետիկ ռեսուրսների օգտագործմանը՝ խթանելով

ջերմոցային գազերի արտանետումների նվազեցումը Երևանում գոյություն ունեցող շենքերի ֆոնդից:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը համալիր միջոցառումների, օրենսդրական և կազմակերպչական բարելավումների միջոցով կստեղծի բարենպաստ միջավայր էներգաարդյունավետ ներդրումների համար, ինչպես նաև մասշտաբավորման ընդունակ բիզնես մոդել, որը կհանգեցնի էներգիայի էական խնայողությանը և դրա արդյունքում ջերմոցային գազերի արտանետումների կրճատմանը: Համալիր միջոցառումները կներառեն՝ շենքի արտաքին պատերի ջերմամեկուսացման դիմադրության մեծացում՝ արտաքին մակերևույթի վրա ջերմամեկուսիչ նյութի տեղադրմամբ, շենքի շքամուտքի աստիճանավանդակներում դռների և պատուհանների փոխարինում, նկուղային հարկի բացվածքներում պատուհանների տեղադրում, տանիքի ջրամեկուսացում, շքամուտքերի լուսավորության արդիականացում, ինչպես նաև արևային կայանքների տեղադրում: Ծրագրի իրականացման արդյունքում շենքերի ջերմային մեկուսացման միջոցով նախատեսվում է ապահովել մոտ 50-60 տոկոս էներգախնայողություն:

Ծրագիրը միտված է Երևանում շենքերի էներգաարդյունավետ արդիականացմանն ուղղվող ներդրումների մասշտաբավորմանը և ներդրումային ռիսկերի նվազեցմանը: Այս լայնածավալ ծրագիրն իրականացվում է Երևանի քաղաքապետարանի, ՄԱԶԾ և այլ դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությամբ:

2. Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագիր

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է իրականացնել կոշտ թափոնների կառավարման բարեփոխումների ծրագրի 2-րդ և 3-րդ փուլերը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Երևան քաղաքում կառուցել միջազգային չափանիշներին համապատասխան նոր աղբավայր, բազմակողմ քննարկել աղբի տեսակավորման և վերամշակման գործարանի կառուցման ու արդյունավետ շահագործման անհրաժեշտությունը, մեկուսացնել, բարեկարգել Նուբարաշենի և Աջափնյակի գործող աղբավայրերը, կառուցել արտանետվող գազերի հավաքման և այրման կայան, տեղադրել գեներատոր էլեկտրաէներգիայի ստացման համար:

Նոր աղբավայրի ամբողջ տարածքը նախատեսված է 8.8 մլն մ³ աղբի ծավալի համար, որը, Երևան քաղաքում տարեկան 350 հազար տոննա աղբի գնահատված ծավալի պարագայում, կապահովի շուրջ 28 տարի շահագործում: Աղբավայրի ընդհանուր տարածքը նախատեսվում է բաժանել 4 գոտիների, որից յուրաքանչյուր գոտու շահագործման ժամկետը սահմանված է մոտ 5 տարի: 8.8 հա մակերեսով գոտում նախատեսվում է կառուցել ջրհավաք ջրանցքներ մոտ 1400 գծմ, մեկ անձրևաջրերի կուտակման ավազան, շահագործման համար անհրաժեշտ գրունտային ճանապարհներ: Կկառուցվի նաև գրասենյակային շինություն, լաբորատորիա, հիմնական մոտեցնող ճանապարհ մոտ 900մ, մեքենաների անվադողերի մաքրման կայան, վառելիքի լցակայան, ավտոկայանատեղի, ցանկապատ և դարպաս, անհրաժեշտ հաղորդողներ, ինչպես նաև ջրավազան (ներառյալ աղբի ցողման համար անհրաժեշտ խողովակների տեղադրումը):

Հին աղբավայրերի երկար տարիներ չշահագործվող տարածքներում կիրականացվեն մեկուսացման աշխատանքներ՝ ապահովելով բարեկարգ (կանաչ) տարածքների առկայությունը, իսկ մնացած հատվածներում կիրականացվի ժամանակավոր մեկուսացում, որտեղ նստեցումները դադարելուց հետո միայն կարող է առաջանալ վերջնական մեկուսացման անհրաժեշտություն:

Նոր կառուցվող աղբավայրը կարող է ծառայել ինչպես Երևան քաղաքին, այնպես էլ հարակից 4 մարզերին՝ Արարատ, Արմավիր, Կոտայք և Արագածոտն:

Ծրագիրը կիրականացվի Եվրոպական ներդրումային բանկի, Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի, Եվրամիության հարևանության գործիքի և Արևելյան Եվրոպային Էներգախնայողության և շրջակա միջավայրի գործընկերության հիմնադրամի աջակցությամբ:

Կոշտ թափոնների կառավարման բարեփոխումների ծրագրի 3-րդ փուլը՝ աղբի տեսակավորման և վերամշակման գործարանի կառուցումը, նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում՝ դրա իրագործելության արդյունավետության բազմակողմ ուսումնասիրությունից հետո:

3. Երևանի արտաքին լուսավորության ցանցի արդիականացում

Ծրագրի նպատակ

Ընդլայնել արտաքին լուսավորության ցանցը՝ ապահովելով բոլոր փողոցների, բակային տարածքների և հանրային օգտագործման բոլոր տարածքների արտաքին լուսավորությունը, արդիականացնել քաղաքային լուսավորության համակարգը, բարձրացնել կառավարման արդյունավետությունը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Քաղաքային լուսավորության ցանցի արդիականացման նպատակով նախատեսվում է իրականացնել լուսատուների փոխարինում Էներգախնայող LED լուսատուներով, փոխարինել վթարային հենասյուները և բոլոր օդային մալուխներն անցկացնել ստորգետնյա կապուղիներով՝ ապահովելով անվտանգությունը:

Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի ֆինանսավորմամբ կիրականացվի Երևան քաղաքի թվով 28 փողոցների լուսավորության համակարգերի արդիականացում:

Ծրագրի շրջանակում նախատեսվում է՝

- վերակառուցել վերը նշված փողոցների հենասյուները՝ հաշվի առնելով լուսադիոդային լուսատուների լուսատեխնիկական տվյալները,
- անհրաժեշտության դեպքում վերանայել հենասյուների բարձրությունը և տեղադրման հեռավորությունը՝ երթևեկելի և հետիոտնի համար նախատեսված վայրերում ապահովելով առանց ստվերի լուսավորություն,
- փոխարինել նատրիումային լուսատուները ժամանակակից և որակյալ լուսադիոդային լուսատուներով,
- օդային մալուխներն անցկացնել ստորգետնյա եղանակով,
- ունենալ շահագործման հեռակառավարման համակարգ,
- հզորությունների կառավարմամբ ապահովել լուսավորության տևողության ավելացում:

Սույն ծրագիրը նախատեսվում է իրականացնել վարկային և դրամաշնորհային միջոցների ներգրավմամբ:

Արտաքին լուսավորության ցանցի արդիականացման աշխատանքներ կիրականացվեն նաև «Քաղաքային կանաչ լուսավորություն» ծրագրի շրջանակներում՝ վերականգնվող նպատակային ֆոնդում կուտակված խնայողության հաշվին:

Ծրագրով նախատեսվում է իրականացնել արտաքին լուսավորության ցանցի շահագործման և պահպանման և ընթացիկ նորոգման աշխատանքներ:

Արտաքին լուսավորության ցանցի կառավարման արդյունավետության բարձրացման նպատակով նախատեսվում է այն հանձնել հավատարմագրային կառավարման:

4. Վերելակային տնտեսության ամբողջական արդիականացում, արդյունավետ կառավարման մոդելի ներդրում

Ծրագրի նպատակ

Լուծել վերելակային տնտեսության հիմնահարցը, ապահովել վերելակային տնտեսության ամբողջական արդիականացումը և միջազգային չափանիշներին համապատասխան անվտանգ սպասարկումը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երևան քաղաքում ներկայումս շահագործվող մոտ 4500 վերելակերի մեծ մասը տեղադրվել է խորհրդային ժամանակահատվածում: Վերելակային տնտեսությունն ամբողջական արդիականացման կարիք ունի: Վերելակային տնտեսության կառավարման արդյունավետությունը բարձրացնելու, համակարգը նոր վերելակներով համալրելու, վերազինելու, արդիականացնելու նպատակով համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակում բանակցություններ են վարվում մասնավոր ընկերությունների հետ:

Միաժամանակ Երևանի քաղաքապետարանը բանակցում է միջազգային գործընկեր կազմակերպությունների հետ վերելակների տեխնիկա-տնտեսական ուսումնասիրության համար տեխնիկական աջակցություն տրամադրելու հնարավորության վերաբերյալ, որն իր մեջ ներառում է վերելակների գույքագրում և մանրամասն ուսումնասիրություն, առկա խնդիրների, անհրաժեշտ գործողությունների ցանկի պատրաստում, ներդրման գումարի գնահատում, մրցույթային փաթեթների կազմում և այլն:

ՏՐԱՆՍՊՈՐՏ

Երևան քաղաքի բնակչության տրանսպորտային սպասարկումն իրականացվում է ավտոբուսներով, միկրոավտոբուսներով, տրոլեյբուսներով և մետրոպոլիտենով:

Երևանի քաղաքային հասարակական տրանսպորտի համակարգն իր մեջ ներառում է «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն», «Երևանի էլեկտրատրանսպորտ», «Երևանի ավտոբուս», «Երևանտրանս» ՓԲ ընկերությունները և թվով 53 մասնավոր կազմակերպություններ, որոնք պայմանագրային հիմունքներով կանոնավոր ուղևորափոխադրումներ են իրականացնում Երևանի ներքաղաքային ավտոբուսային և միկրոավտոբուսային երթուղիներում:

Երթուղային ցանց

Երևան քաղաքում գործող կանոնավոր ուղևորափոխադրումների երթուղային ցանցով նախատեսված է 68 միկրոավտոբուսային (1421 միավոր շարժակազմ), 46 ավտոբուսային (616 միավոր շարժակազմ) և 10 տրոլեյբուսային երթուղի (108 միավոր շարժակազմ):

2017 թվականին Երևանի քաղաքապետարանը հայտարարել է Երևանի հասարակական տրանսպորտի ոլորտի համակարգային բարեփոխումների մեկնարկի մասին, ինչի շրջանակներում Ասիական զարգացման բանկի աջակցությամբ հայտարարված միջազգային մրցույթում հաղթող ճանաչված «Դաբլյու Վայ Ջի Ինտերնեյշնլ Լիմիթիդ» խորհրդատվական կազմակերպությունը լավագույն միջազգային փորձի հիման վրա մշակում է մայրաքաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների փաթեթ, որն իրենից ենթադրում է հստակ հաշվարկների և չափորոշիչների հիման վրա նոր արդյունավետ երթուղային ցանցի նախագծում, հստակ պատկերացում տրանսպորտային պարկի քանակի և տեսականու, սպասարկման չափորոշիչների, ինչպես նաև ուղևորահոսքի մասին, միասնական էլեկտրոնային տոմսային համակարգերի ներդրման հնարավորության վերլուծություն, զեղչային համակարգի կիրառման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում, հասարակական տրանսպորտի մնացած ձևերի արդյունավետ փոխհամագործակցություն, շահագործում և այլն:

Ավտոբուսային և միկրոավտոբուսային փոխադրումներ

Երևան քաղաքի ավտոբուսային հավաքակազմը համալրված է տարբեր մակնիշների և ուղևորատարողության շուրջ 620 ավտոբուսով: Ավտոբուսային երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկվում են «Երևանի ավտոբուս» ՓԲԸ-ի և 18 մասնավոր կազմակերպությունների կողմից:

Երևան քաղաքում փաստացի գործում են 41 ավտոբուսային երթուղիներ, որոնցում օրական միջին հաշվով շահագործվում է 430-440 միավոր շարժակազմ:

Մայրաքաղաքում փաստացի գործում է 72 միկրոավտոբուսային երթուղի: Միկրոավտոբուսային երթուղիներում օրական շահագործվում է 1000-1100 միավոր շարժակազմ: Նշված երթուղիները պայմանագրային հիմունքներով սպասարկում են 39 մասնավոր կազմակերպություններ: Հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակում երթուղային նոր ցանցով նախատեսվում է առավելագույնի հասցնել ավտոբուսային երթուղիները, հնարավորինս բացառելով միկրոավտոբուսային երթուղիների առկայությունը:

Վերգետնյա էլեկտրատրանսպորտ

«Երևանի էլեկտրատրանսպորտ» ՓԲԸ-ի հաշվեկշռում առկա է 79 տրոլեյբուս: Ընկերության կողմից ներկայումս սպասարկվում են 5 տրոլեյբուսային երթուղիներ, օրական գիծ է դուրս բերվում միջին հաշվով 45-48 միավոր շարժակազմ:

Հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակում, հաշվի առնելով մայրաքաղաքի բնապահպանական ծրագրերի գերակայությունը, հասարակական տրանսպորտի մնացած ձևերի արդյունավետ փոխհամագործակցության ու շահագործման համատեքստում նախատեսվում է համալրել տրոլեյբուսային հավաքակազմը և ավելացնել երթուղիները, միաժամանակ արդիականացնելով վերգետնյա էլեկտրատրանսպորտի արդյունավետ և անվտանգ գործունեությունն ապահովող ենթակառուցվածքները:

Մետրոպոլիտեն

Երևանի մետրոպոլիտենում առկա է 45 վագոն: Աշխատանքային օրերին գիծ է դուրս բերվում 26 վագոն (13 շարժակազմ), իսկ շաբաթ և կիրակի օրերին՝ 24 վագոն (12 շարժակազմ):

Մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը ընդհանուր ուղևորափոխադրումների ծավալում կազմում է մոտ 7.7%: Հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակում հասարակական տրանսպորտի մնացած ձևերի արդյունավետ փոխհամագործակցության և նոր երթուղային ցանցի ներդրման համատեքստում աշխատանքներ են իրականացվելու մետրոպոլիտենով ուղևորափոխադրումների տեսակարար կշիռը և շահագործման արդյունավետությունը բարձրացնելու ուղղությամբ՝ ապահովելով մետրոպոլիտենի արդիականացման, անվտանգության պահպանման և զարգացման ծրագրերի շարունակականությունը:

Հասարակական տրանսպորտի կանգառներ

Երևան քաղաքում սահմանված է հասարակական տրանսպորտի թվով 834 կանգառ, որոնցից 348-ում տեղադրված են կանգառասրահներ և կանգառանշաններ, 486-ում՝ միայն կանգառանշաններ:

Հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակում վերենայվելու է կանգառների շահագործման գործող սկզբունքը, դրանց արդիականացմանը զուգընթաց հստակեցվելու է տեղաբաշխումն ըստ նոր երթուղային ցանցի:

Ավտոկայանատեղեր

Երևան քաղաքում ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունն իրականացվում է «Ավտոտրանսպորտային միջոցների կայանատեղերի տեղական վճարի մասին» ՀՀ օրենքի համաձայն: Երևան քաղաքի ավագանու համապատասխան որոշմամբ Երևան համայնքը ավտոկայանատեղերի կազմակերպման ծառայությունն իրականացնող «Փարկինգ Սիթի Մերվիս» ՓԲԸ բաժնետոմսերն ընդունեց որպես նվիրատվություն և ապա 100% բաժնեմասով համայնքային սեփականություն հանդիսացող այդ բաժնետոմսերը հանձնեց վերջինիս հավատարմագրային կառավարմանը:

Մայրաքաղաքի բնապահպանական խնդիրների լուծման համատեքստում Երևան քաղաքում էլեկտրամոբիլների տարածմանը խթանելու նպատակով Երևանի ավագանու որոշմամբ բացառապես էլեկտրական շարժիչով աշխատող ավտոտրանսպորտային միջոցների համար սահմանվել է ավտոկայանատեղի տեղական վճարի գծով արտոնություն՝ ազատելով հաշվարկված ավտոկայանատեղի տեղական վճարի վճարումից:

2018-2022 թվականներին նախատեսվում է ապահովել ավտոկայանատեղիների կանոնակարգման գործընթացի շարունակականությունը, մասնավորապես ծանրաբեռնված փողոցներում դրանց կրճատման հնարավոր տարբերակների կիրառմամբ:

Հաշմանդամություն ունեցող անձանց տրանսպորտային սպասարկում

Հասարակական տրանսպորտի մատչելիությունն ապահովելու նպատակով բնակչության սակավաշարժ խմբերի համար հարմարեցվել է 25 ավտոբուս և 2 տրոլեյբուս, իսկ 75 ավտոբուսներում տեղադրվել են կանգառների ազդարարման ավտոմատ ձայնային համակարգեր: Նույն համատեքստում՝ թվով 101 վճարովի կայանատեղերում, համապատասխան կահավորանքի միջոցով, առանձնացվել են տեղեր տեղաշարժման դժվարություն ունեցող անձանց տրանսպորտային միջոցների համար:

Հասարակական տրանսպորտի սպասարկման համատեքստում՝ 2018-2022թթ. շարունակվելու են Երևանի ընդհանուր մատչելիությանն ուղղված ծրագրերը, որոնք ուղղված են լինելու հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման որակի բարելավմանը:

ՀԻՄՆԱԽՆԴԻՆԵՐ

1. Ոչ արդյունավետ գործող երթուղային ցանց:
2. Հասարակական տրանսպորտի ձևերի արդյունավետ փոխհամագործակցության ու շահագործման բացակայություն:
3. Վերգետնյա տրանսպորտի շարժակազմի տեսականու և դրանց տեխնիկական չափանիշների ոչ բարվոք վիճակ:
4. Սպասարկման համար գանձվող վճարի շրջանառության թափանցիկության բացակայություն:
5. Միասնական տոմսային համակարգի բացակայություն:
6. Սպասարկման ձևի և որակի չափորոշիչների ոչ հստակ սահմանում:
7. Շահագործման մեխանիզմի կառավարման արդյունավետ մոդելի բացակայություն:
8. Կանգառների արդյունավետ տեղաբաշխման խնդիր:
9. Միկրոավտոբուսների տեսակարար մեծ կշիռ:
10. Ոչ ժամանակակից տրանսպորտային միջոցների սպասարկման արդյունքում առաջացող բնապահպանական խնդիրներ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1. Երևանի ներքաղաքային հասարակական տրանսպորտի նոր երթուղային ցանցի և միասնական տոմսային համակարգի ներդրում. նոր քաղաքային ավտոբուսների ներկրման գործընթացի իրականացում

Ծրագրի նպատակը

Նոր երթուղային ցանցի ստեղծում, միասնական տոմսային համակարգի ներդրում, ուղևորների սպասարկման որակի և անվտանգության աստիճանի բարձրացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Մշակել և կիրառել Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի նոր և արդյունավետ երթուղային ցանց: Ապահովել հասարակական տրանսպորտի՝ միջազգային չափանիշներով սպասարկման ծառայությունների մատուցում՝ կազմավորելով նոր օպերատոր: Միկրոավտոբուսների հնարավորինս բացառման գերակա սկզբունքով ձեռք բերել նոր երթուղային ցանցին համապատասխան, սպասարկման ժամանակակից պահանջները բավարարող մեծ և

միջին տեղատարողության նոր ավտոբուսներ: Ներդնել էլեկտրոնային և միասնական տոմսային նորագույն համակարգ՝ սոցիալական խմբերի համար հստակ գեղչային համակարգի կիրառմամբ:

2. Հասարակական տրանսպորտի կանգառների տեղաբաշխում և կահավորում, ավտոկայանատեղերի կանոնակարգում

Ծրագրի նպատակը

Հասարակական տրանսպորտի կանգառների տեղաբաշխում և կահավորում՝ ուղևորների սպասարկման որակը բարձրացնելու նպատակով, ավտոկայանատեղերի կանոնակարգում

Ծրագրի համառոտ նկարագրություն

Արդիականացնել բոլոր կանգառասրահները համապատասխան կահավորանքով և նոր տեղաբաշխմամբ: Տեղեկատվական նորագույն տեխնոլոգիաների ներդրմամբ ապահովել երթուղիների, չվացուցակների, տրանսպորտային միջոցի գտնվելու վայրի և ժամանման իրական ժամանակի վերաբերյալ տեղեկությունների առցանց հասանելիությունը: Ապահովել ավտոկայանատեղերի կանոնակարգում՝ ծանրաբեռնված փողոցներում դրանց կրճատման հնարավոր տարբերակների կիրառմամբ:

3. Ավտոբուսների կահավորում հատուկ վերելակային հարմարանքներով, կանգառների անվանումների հայտարարման սարքերի տեղադրում ավտոբուսների ուղեւորահներում

Ծրագրի նպատակը

Բնակչության սակավաշարժ խմբերի համար հասարակական տրանսպորտից օգտվելու մատչելիության և հարմարավետության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Հաշմանդամություն ունեցող անձանց համար ապահովել տեղաշարժի հարմարավետություն, հասարակական տրանսպորտում շարունակել կանգառների ձայնային ազդարարման համակարգերի, ինչպես նաև տեղաշարժը դյուրինացնող համապատասխան սարքավորումների տեղադրման գործընթացը, խաչմերուկներում կահավորել ձայնաազդանշանային լուսացույցներ:

4. Մետրոպոլիտենի անխափան և անվտանգ աշխատանքի ապահովում և վագոնների արդիականացում

Ծրագրի նպատակը

Երևանում մետրոպոլիտենի աշխատանքի որակի, հուսալիության և անխափան աշխատանքի ապահովում, էներգահամակարգի հուսալիության, ազդանշանային համակարգի, շարժասանդուղքների աշխատանքի հուսալիության բարձրացում, ուղևորների անվտանգության ապահովում, կայարանների և համալիրների վերանորոգում և պատշաճ տեսքի ապահովում, հարմարավետության և սպասարկման որակի բարձրացում

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ազդանշանային և հեռահաղորդակցության համակարգի արդիականացում՝ թվային վերահսկման սարքով հագեցած ազդանշանային բլոկավորման համակարգի փոխարինում, գերավազքով աշխատող թվով 15 շարժասանդուղքների վերանորոգում, օդափոխման համակարգի արդիականացում, նախասրահների վերանորոգում, կառամատույցների երկաթյա կրող հեծանների փոխարինում, վերականգնում, Քրիստափորի փողոցի վրա գտնվող «Մետրո կամուրջի» թռիչքային հեծանների հիմնանորոգում:

Նախատեսվում է արդիականացնել մետրոպոլիտենի 12 վագոն՝ 8 գլխամասային, 4 միջանկյալ:

Նոր երթուղային ցանցի ներդրման համատեքստում ապահովել մետրոպոլիտենի շահագործման արդյունավետության բարձրացումը:

5. Վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորների սպասարկման որակի և անվտանգության բարձրացմանն ուղղված միջոցառումների իրականացում

Ծրագրի նպատակը

Ապահովել վերգետնյա էլեկտրատրանսպորտով ուղևորների սպասարկման բարձր որակ, մատչելիություն և անվտանգ փոխադրում, շարժակազմի արդիականացում, տրոլեյբուսային ցանցի ինտեգրում ընդհանուր տրանսպորտային ցանցին:

Ծրագրի համառոտ նկարագրություն:

Ֆիզիկապես և բարոյապես մաշված հպակային ցանցի թարմացում, հին և մաշված հպակային ցանցի լարերի փոխարինում նորերով, քարշի ենթակայանների բարձր և ցածր լարման մալուխների փոխարին փոխարինում:

Հասարակական տրանսպորտի բարեփոխումների շրջանակում նոր տրոլեյբուսների ձեռքբերում:

6.Քաղաքային տրանսպորտի շարժակազմերի օպտիմալացում

Ծրագրի նպատակը

Այլընտրանքային, բնապահպանական տեսանկյունից անվտանգ տրանսպորտային միջոցների (էլեկտրամոբիլներ, էլեկտրաավտոբուսներ) կիրառում, էլեկտրատրանսպորտի խթանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Էլեկտրատրանսպորտի խթանման, այդ նպատակով էլեկտրամոբիլների, էլեկտրաավտոբուսների շահագործման համար ենթակառուցվածքների (մասնավորապես՝ լիցքավորման կայանների) ստեղծում և հետագա զարգացում: Գործընթացի շրջանակներում հնարավորություն կստեղծվի մայրաքաղաքի կանոնավոր փոխադրումների երթուղիներում էլեկտրաավտոբուսների կիրառման համար:

7.«Ակտիվ քաղաքացի» ծրագիր

Ծրագրի նպատակը

Ներդնել «Ակտիվ քաղաքացի» համակարգը, որի միջոցով քաղաքացիները հնարավորություն կունենան:

- մասնակցելու Երևան քաղաքի համար առանցքային որոշումների կայացմանը՝ առցանց տարբերակով,
- մասնակցելու Երևանի առաջնահերթությունների սահմանմանը,
- հաշվետվություններ ստանալու՝ կատարված աշխատանքների և դրանց ընթացքի մասին,
- առաջարկություններով հանդես գալու և մասնակցելու դրանց իրականացմանը:

Ծրագրի համառոտ նկարագրությունը

Քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում բարեփոխումներ իրականացնելու ժամանակ նախատեսվում է ստեղծել իրազեկման և փոխգործակցության մի շարք հարթակներ, որոնք ապահովելու են մասնակցային կառավարումն ու հանրային լայն նշանակություն ունեցող որոշումների ընդունման մեջ քաղաքացիների ներգրավվածությունը:

Քաղաքապետարանի պաշտոնական կայքը հնարավորություն է ընձեռում քաղաքացիներին իրենց առաջարկությունները և հարցերը առցանց ուղարկել Երևանի ավագանու ադամներին, խմբակցություններին և մշտական հանձնաժողովներին՝ ապահովելով քաղաքացիական մասնակցությունը որոշումների կայացման գործընթացում: Շարունակվելու են նաև ավագանու նիստերի ուղիղ հեռարձակումը պաշտոնական կայքում:

Շարունակվելու է iYerevan.am հարթակի գործունեությունը՝ Երևանի բարեկարգմանն ուղղված ծրագրերի մշակման, քննարկման և իրականացման համար քաղաքացիների առաջարկները, տեսակետներն ու կարծիքները ստանալու նպատակով:

Իր գործենությունն է շարունակելու նաև Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումների հանրային փոխգործակցության հարթակը, որի նպատակն է ապահովել բարեփոխումների գործընթացի մասին իրազեկվածությունն ու քաղաքացիական մասնակցությունը:

transport.yerevan.am-ը կայքում առկա են տեղեկություններ բարեփոխումների ամբողջ գործընթացի, մասնագիտական խմբի աշխատանքի, ինչպես նաև միջազգային խորհրդատու կազմակերպության կողմից ներկայացված հաշվետվությունների վերաբերյալ: Հարթակում ընթանում են առցանց քննարկումներ ու քվեարկություն՝ հնարավորություն տալով քաղաքացիներին իրենց մասնակցությունն ունենալու որոշումների կայացման գործընթացին էլեկտրոնային կառավարման ժամանակակից գործիքների միջոցով:

2018-2022 թվականներին նախատեսվում է մշակել և ներդնել աղբահանության, կոմունալ խնդիրների, բարեկարգման խնդիրների, բնակֆոնդի պահպանման, համատիրությունների գործունեության և մի շարք այլ ոլորտների փոխգործակցության հարթակներ՝ ավելի հարմարավետ Երևան ունենալու համար:

Մշակվող ծրագրեր


Մշակել և ապա ներդնել երթևեկության կանոնակարգմանը և փողոցային տրանսպորտային հոսքերի բեռնաթափմանն ուղղված երթևեկության կառավարման (ներառյալ լուսացուցային օբյեկտները, ճանապարհային նշանները և այլն) միասնական ծրագիր:

Մշակել մետրոպոլիտենի ցանցի զարգացման հավանական ուղղությունների և նոր կայարանների կառուցման երկարաժամկետ ծրագիր՝ ֆինանսավորման մեխանիզմների հստակեցմամբ:

ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Առաջնային է Հայաստանի Հանրապետության քաղաքացու որակյալ կրթության, ազգային և համամարդկային արժեքներով նրա դաստիարակության խնդրի լուծումը: 21-րդ դարի մրցունակ պետության հիմքը մրցունակ կրթական համակարգի ստեղծումն է: ՏՀՏ-ների արդյունավետ օգտագործումը, դասագրքերի և ուսուցչական ձեռնարկների բովանդակության արդիականացումը, կրթության պատասխանատուների նպատակային գործունեության և այլ պահանջների ապահովումը որակյալ կրթության երաշխիքն է: Շեշտադրվում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների համընդհանուր ներառման հարցը բոլոր կրթական հաստատություններում:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են թվով 159 հանրակրթական և 160 նախադպրոցական ուսումնական հաստատություններ: Ավագանու՝ 08.02.2011թ. հ.182-Ն որոշմամբ մանկապարտեզների ղեկավարումը պատվիրակվել է վարչական շրջանների ղեկավարներին՝ վերահսկողության գործառույթը վերապահելով քաղաքապետին:




Գծանկար 16. Մանկապարտեզների և դպրոցների բաշխվածությունը՝ ըստ վարչական շրջանների

Երեխաների դպրոցական կրթության համար մեկնարկային հավասար պայմաններ ստեղծելն առաջնային խնդիր է եղել: Եվ լուծումը մանկապարտեզների պատմության մեջ աննախադեպ երևույթ դարձավ. Երևանի քաղաքապետի՝ 31.03.2011թ. հ.1101-Ա որոշմամբ Երևանի

քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում Երևան քաղաքում հաշվառված ծնողների համար (նաև սիրիահայ) երեխաների նախադպրոցական կրթությունն իրականացվում է անվճար՝ քաղաքապետարանի ֆինանսական ներդրմամբ:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության 160 համայնքային մանկապարտեզների երեխաների ցուցակային թիվը կազմում է 31383:



Գծանկար 17. Մանկապարտեզների երեխաների բաշխվածությունը՝ ըստ վարչական շրջանների

Շուրջ 60-ի է հասնում մայրաքաղաքում գործող ոչ պետական նախադպրոցական ուսումնական հաստատությունների թիվը:


Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ մանկապարտեզներում յուրաքանչյուր երեխայի բազմակողմանի զարգացման, ունակությունների, ձիրքերի դրսևորման համար հավասար պայմաններ ապահովելու նպատակով՝

- Հիմնովին լուծվել է մանկապարտեզների ջեռուցման հիմնախնդիրը: Մասնակի և հիմնովին նորոգվել է 140 մանկապարտեզ:
- Մշակվել և ներդրվել է «Մանկապարտեզ» էլեկտրոնային հերթագրման համակարգը:
- Յուրաքանչյուր տարի՝ սկսած 2011 թվականից, ապահովվել է շուրջ 30000 երեխայի նախադպրոցական անվճար կրթություն:
- Ներառական կրթություն է իրականացվում 8 մանկապարտեզներում՝ ներառված 168 երեխաների համար (հ.92 մանկապարտեզը հատուկ կարիքներով երեխաների վերականգնողական և խնամքի ցերեկային կենտրոն):
- Սոցիալապես անապահով ընտանիքների շուրջ 80 երեխայի նախադպրոցական կրթությունը կազմակերպվում է գիշերակացով:
- 2013-2017թթ. ընթացքում մանկապարտեզների գույքային պայմանները բարելավվել են շուրջ 50000 միավոր գույքի ներդրմամբ:

Երևանում առկա է 143 հիմնական դպրոց, 13 միջնակարգ դպրոց, որից 1-ը՝ կրթահամալիր («Հակոբ Կոջոյան» կրթահամալիր), 3 հատուկ դպրոց, որից մեկը՝ կրթահամալիր (Խոսքի ծանր

խանգարումներ ունեցող երեխաների հ.8 հատուկ): Երևանում ոչ պետական լիցենզավորված ուսումնական հաստատությունների թիվը՝ 46:

Աշակերտների ընդհանուր թիվը կազմում է շուրջ 94 հազար: Մեկ մանկավարժին բաժին ընկնող աշակերտների թվաքանակը կազմում է շուրջ 15:



Գծանկար 18. Դաշնային շրջանների աշակերտների բաշխումը ըստ վարչական շրջանների

Պետության կողմից քաղաքապետին պատվիրակված լիազորությունների շրջանակում հետևողական աշխատանք է տարվել Երևանի 159 դպրոցներում կրթական միջավայրի բարելավման ուղղությամբ, սակայն դպրոցները հիմնականում կարիք ունեն համապատասխան նյութատեխնիկական բազայով ապահովման և գույքի նորացման, իսկ շենքերը՝ վերանորոգման:

Վերջին տարիների ընթացքում Երևանի քաղաքապետարանի բյուջեով ապահովվել է չջեռուցվող 36 ավագ և հիմնական դպրոցների ջեռուցումը:

Երևանի քաղաքապետարանի հանրակրթական հաստատություններում կրթության որակի բարելավման և մրցունակության ապահովման նպատակով՝

- Մշակվել և իրականացվել են ուսուցիչների վերապատրաստման ծրագրեր՝ կրթության ազգային ինստիտուտի, տարբեր բուհերի համապատասխան ամբիոնների և այլ կրթական հաստատությունների, ինչպես նաև կրթական ծրագրեր իրականացնող միջազգային հասարակական կազմակերպությունների համագործակցությամբ:

- Խրախուսվել են մասնագիտական պատրաստվածությունը խորացնող և ազգային հոգևոր արժեքները սովորողների սեփականությունը դարձնող մանկավարժական համակազմերը, անհատ ուսուցիչները: Կրթության որակի բարձրացմանը նպաստող նորարարական, ինչպես նաև այլընտրանքային ծրագրեր իրականացնող ուսուցիչների գործունեությունը գնահատող միջոցներից է «Երևան քաղաքի տարվա լավագույն ուսուցիչ» մրցույթի անցկացումը:

- Կազմակերպվել են գիտելիքների միջդպրոցական մրցույթներ, ստուգատեսներ, դպրոցական առարկայական օլիմպիադաներ՝ մրցանակներով և անվանակարգերով խրախուսվող դպրոցականների օրինակը միջոց դարձնելով ուսման հանդեպ ոգևորության խթանմանը:

- Համակարգվել են դպրոցներում սովորողների և մանկավարժների՝ համակարգչային գրագիտության մակարդակի բարձրացմանը միտված աշխատանքները՝ որպես նորագույն տեխնոլոգիաների դասապրոցեսում լայնածավալ կիրառման հիմք:
- Դպրոցականների արժեքային համակարգի՝ ազգային նկարագրով ձևավորմանը նպաստելու նպատակով ծրագրվել և իրականացվել են պատմական կարևոր իրադարձություններին, հայ նշանավոր անհատներին նվիրված համաքաղաքային միջոցառումներ: Ավանդույթ է անվանակիր դպրոցների անվանատուներին նվիրված շաբաթների, տասնօրյակների և միամսյակների, ինչպես նաև ՀՀ քաղաքացու համակողմանի զարգացմանը նպաստող այլ միջոցառումների կազմակերպումը:
- Իրականացվող մարզական և այլ կարգի մրցույթներում ապահովվել է հաշմանդամություն ունեցող երեխաների ընդգրկումը: Վերջիններիս համար մայրաքաղաքի մշակութային օջախներ այցելելու ծրագրեր են իրականացվել:
- Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող 2011 աշակերտի համար ներառական կրթություն է իրականացվել մայրաքաղաքի 54 դպրոցում, որտեղ աշխատում են շուրջ 384 հատուկ մանկավարժներ, սոցիալական աշխատողներ, հոգեբաններ և լոգոպեդներ:
- Հաջողությամբ ավարտվել է շախմատի մուտքը դպրոց, աշակերտները ապահովվել են դասագրքով, դպրոցները՝ համապատասխան գույքով: Կարևորելով այս իմաստուն խաղի դերը երեխայի մտքի զարգացման գործում՝ հիմնվել է ընդհանուր թվով շախմատի 11 դպրոց՝ Երևանի բոլոր վարչական շրջաններում երեխաների համար ապահովելով շախմատի դպրոցի հասանելիությունը անվճար հիմունքներով:
- Փորձի փոխանակման նպատակով կազմակերպվել են ուսուցիչների և աշակերտների փոխայցելություններ Երևանի քույր քաղաքներ (Ստեփանակերտ, Սանկտ Պետերբուրգ), իսկ համագործակցության ծրագրերի շրջանակում՝ Գերմանիայի Դաշնային և Իրանի Իսլամական հանրապետություններ (Իսպահան):

Հիմնախնդիրներ

1. *Կրթության որակի բարելավմանն ուղղված միջոցառումների շարունակականության և մրցունակության ապահովում:*
2. *Հանրակրթական ուսումնական հաստատությունների շենքային պայմանների, դպրոցների մարզադահլիճների և սպորտհրապարակների համապատասխանեցում ժամանակակից պահանջներին:*
3. *Ներառական կրթություն իրականացնող դպրոցների և մանկապարտեզների, հատուկ դպրոցների շենքային պայմանների համապատասխանեցում սովորողների ֆիզիկական կարիքներին: Համընդհանուր ներառման մեկնարկի համար լիարժեք պայմանների ապահովում: Ներառական կրթություն իրականացնող դպրոցների և միջազգային կազմակերպությունների համագործակցության ընդլայնում:*
4. *Հատուկ դպրոցների սննդի ռացիոնի հարստացում: Երեխաների առողջության պահպանմանն ուղղված ծրագրերի ֆինանսավորում, երեխաների խնամքի ծառայությունների որակի բարելավում:*
5. *Դպրոցների գրադարանային ֆոնդի համալրում գեղարվեստական, մեթոդական և մասնագիտական գրականությամբ: Էլեկտրոնային գրադարանների ստեղծում, հարստացում:*
6. *Դպրոցների ազատ տարածքների հարմարեցումով կամ համապատասխան տարածքի հնարավորություն ունեցող մանկապարտեզներում առանց քնի և մեկանգամյա սննդով նախադպրոցական կրթության կազմակերպում 5-6 տարեկան*

մանկապարտեզ չհաճախող երեխաների համար՝ դպրոցական կյանքի մեկնարկային հավասար պայմանների ապահովման նպատակով:

7. Նորագույն տեխնոլոգիաների ներդրում հանրակրթական ուսումնական հաստատություններում:

2018-2022 թվականներին նախատեսվող ծրագրեր

Կրթության ոլորտում ներդրված ջանքերն ու ռեսուրսները վաղվա մեր արժանապատիվ օրվա երաշխիքն են, որի իրականացումը պահանջում է շարունակել կրթության որակի բարձրացմանն ուղղված, ինչպես նաև դպրոցականի՝ ազգային նկարագրով արժեքային համակարգի ձևավորմանը միտված միջոցառումների իրականացումը:

Շարունակական բնույթ են կրելու հետևյալ նախատեսվող միջոցառումները՝

- մանկավարժների խրախուսման նպատակով «Երևան քաղաքի տարվա լավագույն տնօրեն, տարվա լավագույն ուսուցիչ, տարվա լավագույն դաստիարակ», ինչպես նաև ՀՀ ԿԳ նախարարության նույնանուն մրցույթների քաղաքային փուլերի անցակցում, սովորողների մարզական, Ազգային ժողովի գավաթի կիսաեզրափակիչ խաղերի (քաղաքային, հանրապետական փուլեր), առարկայական օլիմպիադաների կազմակերպում և անցկացում: Իրականացվող մարզական և այլ կարգի մրցույթներում հաշմանդամություն ունեցող երեխաների ընդգրկում: Վերջիններիս համար մայրաքաղաքի մշակութային օջախներ այցելելու ծրագրերի իրականացման շարունակականության ապահովում,

- անվանակիր դպրոցների անվանատուներին նվիրված շաբաթների, տասնօրյակների և միամյակների, ինչպես նաև ՀՀ քաղաքացու համակողմանի զարգացմանը նպաստող այլ միջոցառումների կազմակերպում՝ մտավոր առանձնահատուկ օժտվածությամբ դպրոցականների հայտնաբերման նպատակով,

- «Օգնի՛ր դպրոցիդ», «Օգնի՛ր մանկապարտեզիդ» կայք էջերի ակտիվացմանն ուղղված միջոցառումների իրականացում,

- Երևանի քաղաքապետարանի www.yerevan.am պաշտոնական կայքում, «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի պահանջներին համապատասխան, առավելագույնս ապահովել Երևանի ենթակայության դպրոցների վերաբերյալ տեղեկատվության առկայությունը:

- Մեկնարկել դպրոցների շենքերում ներառական կրթության համար լիարժեք պայմանների ապահովման ծրագիրը:

1.Նախադպրոցական կրթության մատչելիություն

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակը նախադպրոցական կրթության մատչելիությունն է. երեխաների սահուն անցումը դպրոց՝ մեկնարկային հավասար պայմանների ապահովմամբ: Երեխայի ներդաշնակ զարգացումն ու դաստիարակությունը, նրա ֆիզիկական և հոգեկան առողջության պահպանումն ու ամրապնդումը նախադպրոցական կրթության հիմնական նպատակներից են:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երևանցի երեխաների նախադպրոցական կրթությունը մանկապարտեզներում շարունակվելու է իրականացվել անվճար՝ Երևանի բյուջեի միջոցներով:

Նախատեսվում է.

- մանկապարտեզների շենքերի ամբողջական հիմնանորոգում, կահույքի և կենցաղային գույքի թարմացում:
- մանկապարտեզներում հերթերի հիմնախնդրի ամբողջական կարգավորում:

- երեխաների էլեկտրոնային գրանցման համակարգի ներդրում մանկապարտեզներում, ծրագրային փորձարկումից հետո www.yerevan.am պաշտոնական կայքում հասանելիության և երեխաների էլեկտրոնային գրանցման շարունակականության ապահովում:
- մանկապարտեզների վարձակալությամբ տրված տարածքները աստիճանաբար մանկապարտեզներին վերադարձնելու գործընթացի իրականացում:

Նախատեսվում է յուրաքանչյուր վարչական շրջանում ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզի առկայության ապահովում:

Կիրականացվի մանկապարտեզների աշխատողների առողջապահական պարտադիր ապահովագրման ծրագիրը:

Մանկապարտեզներում երեխաների ընդունելությունը կազմակերպելու համար «Մանկապարտեզ» հերթագրման էլեկտրոնային նոր համակարգի ներդրումն ապահովել է ընդունելության անաչառությունը, այն շարունակվելու է երեխաների էլեկտրոնային գրանցմամբ: Արդյունքում լիարժեքորեն կապահովվի նախադպրոցական կրթությունը՝ մանկապարտեզներում հերթերի հիմնախնդրի ամբողջական կարգավորմամբ:

Հերթագրված, բայց մանկապարտեզ չընդունված երեխաները, դպրոցահասակ չհաշվառված երեխաները թիրախային այն խմբերն են, որոնց համար անհրաժեշտ է դպրոցամուտի մեկնարկային հավասար պայմանների ապահովում:

Միաժամանակ կշարունակվի միջազգային կրթական ծրագրեր իրականացնող ՀԿ-ների համագործակցությամբ դպրոցների ազատ տարածքներում նախակրթարանների կազմակերպում՝ 5-6 տարեկան մանկապարտեզ չհաճախող երեխաների համար:

2.Ժամանակակից տեխնոլոգիաների կիրառմամբ կրթության որակի բարձրացում

Ծրագրի նպատակ

Ծրագրի իրականացման հիմնական նպատակը դասապրոցեսում SՀS-ների նպատակային կիրառման արդյունքում ուսման որակի, մրցունակ կրթության ապահովումն է քաղաքապետարանի հանրակրթական դպրոցներում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կրթության որակի բարձրացման առաջին պայմաններից է դասապրոցեսի հետաքրքիր կազմակերպումը: Սովորողների հետաքրքրությունը, կարողությունները և հմտությունները զարգացնելու համար կարևոր է դասապրոցեսը տեղեկատվական տեխնոլոգիաների նպատակային կիրառմամբ ապահովելը:

Ծրագիրը ենթադրում է «Ինֆորմացիոն տեխնոլոգիաների ձեռնարկատիրական միություն» հասարակական կազմակերպության աջակցությամբ, որպես մեկնարկ, ընտրված 10 դպրոցներում բացել ինժեներական խմբակ-լաբորատորիաներ (ռոբոտաշինություն): Ռոբոտաշինությունը, լինելով ժամանակակից դպրոցականին հոգեհարազատ ոլորտ՝ կլիթանի մաթեմատիկաբնագիտական գիտելիքների խորացումը, կնպաստի արտադասարանական դաստիարակությանը:

«Microsoft» ընկերության հետ մեկնարկվելիք «ԹՎային դարաշրջանի դպրոցներ» ծրագրի իրականացումը քաղաքապետարանի դպրոցներում հնարավորություն կտա ծրագրի մեջ ընդգրկված դպրոցի առաջին դասարանցիներին և դասվարներին ստանալ «Windows 10» սարքավորումներ, որոնք հնարավոր կլինի օգտագործել որպես դյուրակիր համակարգիչներ, ինչպես նաև դրանցով կատարել տնային առաջադրանքներ:

3. Դպրոցական շենքերի հիմնանորոգում

Ծրագրի նպատակ

Ծրագրի իրականացման նպատակը Երևանի ենթակայության հանրակրթական դպրոցների շենքային պայմանները ժամանակակից պահանջներին համապատասխանեցումն է՝ որակյալ կրթության ապահովման համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Գույքագրվել և ՀՀ քաղաքաշինության նախարարություն է ներկայացվել հանրակրթական, հատուկ ուսումնական հաստատությունների անմխիթար վիճակում գտնվող շենքերի վերաբերյալ տեղեկատվություն:

Հայաստանի Հանրապետությունում սեյսմիկ անվտանգության բարելավման ծրագրի շրջանակում կառուցվելու կամ ամրացվելու են պետական հանրակրթական դպրոցներ՝ համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 13.07.2017թ. հ.805-Ն որոշման: Նշված որոշմամբ հաստատվել է «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական դպրոցների սեյսմիկ անվտանգության բարելավման 2015-2030 թվականների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ 23.07.2015թ. հ.797-Ն որոշման մեջ կատարված փոփոխություններով քաղաքապետարանի ենթակայության թվով 12 դպրոցների ցանկը, որոնք ենթակա են վերակառուցման կամ ամրացման (հ.հ.6,15,18,51, 68,95,116,111,122,135,153, 188):

4. Սովորողների արժեքային համակարգի ձևավորման աջակցություն «Երևանի քաղաքապետարանի հանրակրթական դպրոցներում՝ «Երևանագիտություն» առարկայի ներդրմամբ

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակը դպրոցականի ազգային արժանապատվության գիտակցության զարգացումն է, ինչպես նաև նրանց մեջ հետաքրքրության արթնացումը Երևանի ծննդյան, պատմության, զարգացման տարբեր շրջանների վերաբերյալ և հայրենաճանաչության միջոցով Երևանի հանդեպ սիրո և պատասխանատվության զգացումների խորացումը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի իրականացման նպատակով ապահովվելու է համագործակցություն՝ Երևան քաղաքի պատմության թանգարանի, «Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարանի» հետ:

Երևանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների՝ համապատասխան մեկական մասնագետներ նախապատրաստում կանցնեն մեկ օր Երևանի պատմության թանգարանում, մեկ օր Էրեբունի թանգարանում: Կծանոթանան աշխատանքային խմբի կողմից ստեղծված ծրագրին, կատանան համապատասխան նյութեր (էլեկտրոնային), գրականության ցանկ, դիդակտիկա:

Դասղեկի ժամերին 7-8-րդ դասարաններում կուսումնասիրվի դասընթացը: Սովորողների կողմից նյութի յուրացման մակարդակի ստուգումը կկազմակերպվի խաղ-մրցույթների միջոցով (դպրոցական, քաղաքային փուլեր), հաղթողների պարգևատրումը, անվանակարգերի հատկացումը կկատարվի Էրեբունի-Երևան տոնակատարության շրջանակում:

5. Համագործակցության, փորձի փոխանակման ծրագիր

Ծրագրի նպատակ

Ծրագրի իրականացման նպատակը մանկավարժների մասնագիտական կարողությունների զարգացման, նորագույն մեթոդներին հասու լինելուն աջակցելն է:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Արժևորելով մայրաքաղաքի վաստակաշատ մանկավարժների ներուժը՝ նախատեսվում է Երևանյան դպրոցներում և մանկապարտեզներում կազմակերպել «Վարպետաց դասեր»՝ «ՀՀ վաստակավոր մանկավարժի», «Տարվա լավագույն ուսուցչի» կոչումով, «Մովսես Խորենացի»

մեղալակիր, ինչպես նաև նորարարական փորձով հայտնի մանկավարժի կողմից: Դպրոցների տնօրենների փորձի փոխանակման և «Լավագույն տնօրենի» փորձի մասսայականացման գործընթացի կազմակերպում՝ շահագրգիռ կազմակերպությունների աջակցությամբ:

Ծրագիրը ներառում է հանդիպումներ կրթության ոլորտի զարգացման խնդիրներով զբաղվող միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների հետ: Փորձի փոխանակման նպատակով շարունակվելու են ուսուցիչների և մանկապարտեզների դաստիարակների փոխայցելություններ Երևանի քույր քաղաքների կրթական հաստատություններ, Հայաստանի Հանրապետության մարզեր՝ իրականացնելով նաև աշակերտների և ուսուցիչների ճանաչողական փոխայցելություններ: Նախատեսվում է նաև Երևանի և Սփյուռքի դպրոցների միջև հեռուստակամուրջ՝ հայրենագիտության դասերի կազմակերպման, ինչպես նաև միջմշակութային կապերի ստեղծման նպատակով:

Կիրականացվի համագործակցություն ներառական կրթություն իրականացնող մանկապարտեզների, դպրոցների և ծնողների միջև՝ երեխայի կարիքով պայմանավորված աշխատանքների շարունակականության ապահովման նպատակով:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Քաղաքների՝ այդ թվում նաև Երևան քաղաքի օդային և հողային միջավայրը կտրուկ տարբերվում է բնականից: Մթնոլորտում գազերի, փոշու և ծխի բարձր պարունակությունները, ինչպես նաև օդի և հողի ջերմային և ջրային ռեժիմների առանձնահատկությունները, քարե, բետոնե և մետաղական մակերևույթները, ասֆալտային ծածկույթը, ինչպես նաև քաղաքային տնկարկների օգտագործման ինտենսիվությունը բացասաբար է ազդում բնակչության կենսունակության և առողջության վրա:

Երևանը համարվում է հանրապետության բնակչության և տնտեսության առումով կենտրոնացված քաղաք, որը դեռևս խորհրդային տարիներից աչքի է ընկել օդային ավազանի աղտոտման բարձր մակարդակով: Անկախության առաջին տարիներին սոցիալ-տնտեսական ճգնաժամի արդյունքում ստեղծված արդյունաբերական կոլապսը համեմատաբար «լուծեց» Երևանի օդային ավազանի աղտոտման խնդիրները: Այս հանգամանքը բերեց քաղաքի երկրաքիմիական վիճակի որակական և քանակական ցուցանիշների որոշակի փոփոխությունների:


Ներկայումս Երևան քաղաքում հաշվառված է մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործություն ունեցող մոտ 420 կազմակերպություն, օդի և հողի աղտոտման հիմնական պատճառներից են շարունակաբար ավելացող տրանսպորտային միջոցները, հաշվառված է շուրջ 200 000 ավտոմեքենա: Շրջակա միջավայրի վրա ոչ պակաս ազդեցություն ունի մայրաքաղաքի ջրային ավազանի էկոլոգիական վիճակը:

Նշված գործոնների ազդեցությամբ է պայմանավորված ածխաթթու գազի ավելացումը մոտ 10 անգամ: 1000 ավտոմեքենաներն օրական արտանետում են 3.2 տոննա ածխածնի օքսիդ, 200-400 կգ այլ գազանման նյութեր, 50-100 կգ ազոտային նյութեր:

Երևան քաղաքի բոլոր վարչական շրջաններում հողերը բնութագրվում են աղտոտման գումարային գործակցի (ԱԳԳ) բարձր մակարդակով.

Գծանկար 19

Աղտոտման գումարային գործակիցը ք. Երևանում 2017թ.




Նման անցանկալի երևույթները մեղմելու և կանխելու առումով մեծ դերակատարություն ունեն կանաչ տնկարկները:

Երևան քաղաքի կանաչ զանգվածը կազմում է 6758.5 հա, որից ընդհանուր օգտագործման կանաչ մակերեսը կազմում է 860.0 հա:

Համեմատության համար պետք է նշել, որ 1990թ. մայրաքաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքը կազմել է 908.3 հա, իսկ 2003 թվականին՝ 540.0 հա:


Գծանկար 20
Ք. Երևանի ընդհանուր օգտագործման կանաչ տարածքները



Ինչպես նշվեց, 2017թ. գույքագրման տվյալների համաձայն Երևան քաղաքի ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածը կազմում է 862.0հա, որից զբոսայգիներ և պուրակներ՝ 213հա, սիզամարգեր՝ 165հա, ծաղկանոցներ՝ 7,3հա, Հրազդանի կիրճ՝ 248,1հա, անտառպուրակներ՝ 228,6հա:

Վերջին 8 տարվա Երևանի քաղաքապետարանի ծրագրով իրականացվել են ոռոգման ցանցերի ընդլայնման, նորերի ստեղծման լայնածավալ աշխատանքներ, որն իր հերթին նպաստեց կանաչ տարածքների բարելավմանը, վերականգնմանը և ավելացմանը:


Գծանկար 21
Ք. Երևանի ոռոգման ցանցի երկարությունը, կմ



2013-2016թթ. ընթացքում կանաչ զանգվածն ավելացել է շուրջ 32,5 հա, անցկացվել և վերանորոգվել է շուրջ 75կմ ոռոգման ցանց, վերագործարկվել և ստեղծվել են նոր պոմպակայաններ՝ թվով 16 հատ, ստեղծվել են 8 խորքային հորեր: Վերակառուցված և բարեկարգված հանգստի գոտիների թիվը կազմել է 14, ծաղկապատման համար օգտագործված ծաղիկների քանակը կազմել է 9,530.0 հազ., տնկված ծառերի և թփերի քանակը՝ 199000 հատ:

Գծանկար 22


ք.Երևանի զբոսայգիների և պուրակների մակերեսը, հա



Երևան քաղաքի կանաչապատման ոլորտի զարգացման 1980-1990 թվականների ընթացքում ծաղկային մակերեսը հասավ 2.8-3.0 հա չափի: Վերջին տարիներին քաղաքի ծաղկային մակերեսը բազմապատկվել է՝ 2017 թվականին այդ ցուցանիշը մոտեցել է 7.3 հեկտար սահմանին:

Գծանկար 23

ք.Երևանի զբոսայգիների և պուրակների մակերեսը, հա



Քաղաքային միջավայրի էկոլոգիական պայամանների բարելավման համար անհրաժեշտ պայման է հանդիսանում Երևան քաղաքի կանաչապատման ներկայիս վիճակը, որը դեռևս բավարար չէ մայրաքաղաքի կանաչ տարածքի կազմակերպման համար ներկայացվող ժամանակակից պահանջներին:

Քաղաքի ոչ բարենպաստ էկոլոգիական իրավիճակը պահանջում է կանաչապատման որոշակի ռազմավարության մշակում, որը կայանում է մի շարք փուլերի հաջորդական իրականացման մեջ, որոնք ուղղված կլինեն տարբեր տեսակի կայուն քաղաքային տնկարկների ստեղծմանը՝ ընդունակ ոչ միայն պահպանելու դեկորատիվությունը և հարատևությունը, այլև հնարավորինս առողջացնելու կենսամիջավայրը:

Երևան քաղաքում մեկ բնակչին ընկնող կանաչ տարածքը կազմում է 7,8 քմ, իսկ ոռոգելի տարածքի մակերեսը՝ 517 քմ:

Հիմնախնդիրներ

1. Շրջակա միջավայրի տարրերի (օդ, ջուր, հող) աղտոտվածության նվազեցմանն ուղղված մեխանիզմների և միջոցառումների մշակում և իրականացում:
2. Կանաչ տարածքների հետևողական վերականգնում և ընդլայնում:
3. Նոր հանգստի գոտիների հիմնում, գոյություն ունեցող հանգստի գոտիների բարեկարգում:
4. Մայրաքաղաքի բնապահպանական վիճակը բարելավելու նպատակով պաշտպանիչ կանաչ բուֆերային գոտիների ստեղծում:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1. Ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների ավելացում

Ծրագրի նպատակ

Ծրագրի հիմնական նպատակն է ավելացնել յուրաքանչյուր քաղաքացուն բաժին ընկնող կանաչ մակերեսը, մայրաքաղաքի կանաչ զանգվածը հասցնել 890 հա-ի:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Մայրաքաղաքի բնապահպանական վիճակը բարելավելու նպատակով գալիք հնգամյակի ընթացքում ընդհանուր օգտագործման կանաչ զանգվածի ավելացում՝ նոր սիզամարգերի ստեղծման, ծառատունկի, ծաղկապատման շնորհիվ:

2. Հանգստի նոր գոտիների ստեղծում, առկա հանգստյան գոտիների վերականգնում

Ծրագրի նպատակ

Ապահովել մայրաքաղաքի բնակիչների, այցելուների, զբոսաշրջիների հանգստի պատշաճ մակարդակը՝ նոր հանգստի գոտիների ստեղծման կամ առկա հանգստյան գոտիների ավելացման միջոցով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երևանում ներկայումս հաշվառված են թվով 90 պուրակներ, այգիներ և հանգստի գոտիներ: Ծրագրով նախատեսվում է ստեղծել նոր հանգստի գոտիներ և վերականգնել առկա հանգստյան գոտիները: Նոր հանգստի գոտիների և առկա հանգստյան գոտիների վերականգնմամբ կբարելավվի ոչ միայն քաղաքի առանձին հատվածների էկոհամակարգը, այլ նաև կապահովվեն բարենպաստ պայմաններ բնակչության հանգստի համար՝ ստեղծելով ժամանակակից պահանջներին համապատասխանող կանաչապատման էլեմենտների կիրառմամբ զբոսայգիներ, պուրակներ:

3. Ծիծեռնակաբերդի անտառայության վերականգնում

Ծրագրի նպատակ

Ստեղծել ժամանակակից պահանջներին համապատասխանող հանգստի գոտի և բարեկարգել հուշակոթողի տարածքը, «Ծիծեռնակաբերդի» հուշահամալիրի կանաչ գոտու վերականգնումը և նոր կանաչ տնկարկների հիմնումը շատ կարևոր է, քանի որ Երևան քաղաքի համար այդ տարածքները հանդիսանում են բուֆերային գոտիներ, ունեն էկոլոգիական մեծ նշանակություն (փոշեկլանիչ, քամիները մեղմացնող, քաղաքային կենսաբազմազանությանը նպաստող, ռեկրեացիոն և այլն):

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի իրականացման շրջանակներում նախատեսվում է կատարել ռոզգման ցանցի մասնակի նորոգում, հզոր պոմպակայանի ստեղծում, ծառերի առողջացման նպատակով մասսայական էտ, բուժման և ծառատունկի աշխատանքներ: Կանաչապատման միջոցառումները կնպաստեն ազգաբնակչության առողջության բարելավմանը՝ ստեղծելով նրանց համար զբոսանքի և հանգստի համար հարմարավետ պայմաններ:

4. Կոմիտասի անվան այգու հիմնանորոգում և ընդլայնում

Ծրագրի նպատակ

Վերակառուցել Կոմիտասի անվան զբոսայգին, այն համապատասխանեցնել ժամանակակից հանգստի գոտու և տեսարժան վայրի պահանջներին:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է իրականացնել այգու բարեկարգման, ինչպես նաև լայնածավալ կանաչապատման, դեկորատիվ բարձր որակ ունեցող տնկիների տնկման և ծաղկապատման էլեմենտների կիրառմամբ աշխատանքներ:

5. Երևան քաղաքի բուֆերային գոտու ձևավորում

Ծրագրի նպատակ

Մայրաքաղաքի արվարձաններում ստեղծել կանաչ տնկարկներով պաշտպանիչ շերտ, որը կնպաստի ընդհանուր էկոլոգիական վիճակի բարելավմանը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Բուֆերային գոտու հիմնական նպատակն է մեղմացնել մայրաքաղաքը քամիների ազդեցությունից, տնկվող ծառատեսականին օժտված կլիմայի փոշեկլանիչ և վնասակար արտանետումները կլանող հատկություններով: Այդ նպատակով բուֆերային գոտի հանդիսացող տարածքներում նախատեսվում է իրականացնել մասսայական ծառատնկման, նոր ռոզգման ցանցերի և պոմպակայանների ստեղծման, ծառերի սանիտարական էտման և այլ աշխատանքներ:

6. Երևանի 2800-ամյակին նվիրված այգու ստեղծում

Ծրագրի նպատակ

Երևանի 2800-ամյակին նվիրված այգու ստեղծում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է Երևանի 2800-ամյակին նվիրված նոր այգու վերակառուցում: Նախատեսվում է իրականացնել այգու բարեկարգման, ինչպես նաև լայնածավալ կանաչապատման, դեկորատիվ բարձր որակ ունեցող տնկիների տնկման և ծաղկապատման էլեմենտների կիրառմամբ աշխատանքներ:

7. Կանաչապատ տարածքների խնամքի իրականացում նորագույն մոտեցումներով

Ծրագրի նպատակ

Կիրառել կանաչ տարածքների խնամքի և սպասարկման նորագույն մոտեցումներ, բարձրացնել կանաչապատման ծառայությունների որակը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կաթիլային ոռոգումը՝ ոռոգման մեթոդ է, որի օգնությամբ բույսերը խոնավության օպտիմալ քանակություն են ստանում ողջ վեգետացիոն ժամանակաշրջանի ընթացքում: Դա իր հերթին ապահովում է արմատների ինտենսիվ շնչառությունը և նպաստում է նրանց ակտիվ զարգացմանը: Կաթիլային ոռոգման միջոցով ջուրը դոզատորի միջոցով անմիջականորեն մատակարարվում է բույսերի արմատային աճող գոտի կարգավորելի փոքր չափաբաժիններով: Այն ապահովում է ջրի և այլ ռեսուրսների զգալի խնայողություններ (էլեկտրաէներգիա, խողովակաշար, պարարտանյութեր և աշխատուժ): Երևանում առաջնահերթ է կաթիլային եղանակով ոռոգման համակարգի ներդրումը և դրա աստիճանական ընդլայնումը: Նախատեսվում է ստեղծել ծաղկանոցներ, որոնք համալրված կլինեն բազմամյա ծաղկասածիլներով:

8. Կանաչապատման ժամանակակից մեքենա-սարքավորումների ձեռքբերում, կառավարման մոդելի փոփոխություն

Ծրագրի նպատակ

Կանաչապատ տարածքների որակյալ խնամք և սպասարկում, մատուցվող կանաչապատման ծառայությունների որակի բարձրացում, կանաչապատման ծառայությունների էլեկտրոնային վերահսկման մեխանիզմների ներդրում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երևանում կանաչապատ տարածքների որակյալ խնամքի և սպասարկման, մատուցվող կանաչապատման ծառայությունների որակի բարձրացման նպատակով անհրաժեշտություն կա ձեռք բերել կանաչապատման ժամանակակից մեքենա-սարքավորումներ, ինչպես նաև իրականացնել կառավարման մոդելի փոփոխություն: Այն հնարավորություն կտա ապահովել միջազգային չափանիշներին համապատասխան և միասնական մոտեցումներով կանաչապատման աշխատանքներ:

9. Այլընտրանքային կանաչապատում

Ծրագրի նպատակ

Կանաչապատման սակավ հնարավորությամբ տարածքներում կիրառել այլընտրանքային կանաչապատում, Երևան քաղաքի ինտենսիվ կառուցապատման պայմաններում կանաչապատման ոլորտում հույժ կարևոր միջոցառում հանդիսացող ուղղաձիգ կանաչապատման կիրառումը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Մագլցող, փաթաթվող բույսերի տնկման միջոցով կիրառել ուղղաձիգ կանաչապատում, ստեղծել միայնակ կամ խմբակային եղանակով տնկարկներով կանաչ հատվածներ, ռոկարիաներ (քարե պարտեզ): Ուղղաձիգ կանաչապատումը հնարավորություն է տալիս ոչ մեծ մակերեսի վրա ստանալ առավելագույն կանաչ զանգված, քանի որ վերոհիշյալ բույսերն աճում են և բազմանում շատ արագ՝ ստեղծելով գեղեցիկ դեկորատիվ պատկերներ:

Այդ առումով հետագա տարիների ընթացքում նախատեսվում է ուղղաձիգ կանաչապատման էլեմենտների օգտագործում՝ մայրաքաղաքի տարբեր փողոցներում շենքերի և շինությունների ֆասադներին գեղագիտական տեսք հաղորդելու նպատակով:

10. Ոռոգման ցանցի ընդլայնման և նորոգման աշխատանքներ

Ծրագրի նպատակ

Մայրաքաղաքի կանաչ զանգվածը ապահովել ոռոգման ջրով՝ կանաչ տնկարկների վիճակի բարելավման, կանաչապատման և ծաղկապատման աշխատանքների արդյունավետության բարձրացման նպատակով բավարար ոռոգում ապահովելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երևան քաղաքի ոռոգման ցանցի երկարությունը կազմում է շուրջ 475.2 կմ: Սակայն ոռոգման ցանցի ներկայիս վիճակը բավարար չէ Երևան քաղաքում ոռոգման խնդրի լուծման համար:

Ոռոգման ցանցի ընդլայնումը, գոյություն ունեցող ցանցի վերանորոգումը հնարավորություն կընձեռնի ունենալ խնամված կանաչ զանգված, որը հատկապես կարևոր է՝ հաշվի առնելով Երևան քաղաքի կլիմայական պայմանները:

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Առողջապահության ոլորտի գերակայությունը առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն է, մատչելիության ապահովումը, սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավումը, գույքի արդիականացումը, վերազինումը:

Առողջապահության ոլորտի գերակա խնդիրներից է համարվում առողջապահական ընկերությունների շենքային պայմանների բարելավումը: 2010-2016թթ. ընթացքում իրականացվել են նշված գերակայության ապահովմանն ուղղված մի շարք գործողություններ (շենքերի մասնակի վերանորոգում, ջեռուցման համակարգի անցկացում, թեքահարթակների կառուցում): Միայն 2013-2016թթ. Երևան քաղաքի բյուջեից նշված գերակայության ապահովման համար հատկացվել է 379,510.8 հազար դրամ, իսկ 2017 թվականին՝ նախատեսվել է 194.000.0 հազար դրամ:

Երևան քաղաքի ազգաբնակչությանը որակյալ բուժօգնությունների մատուցման և մատչելիության բարձրացման տեսանկյունից կարևոր հիմնախնդիր է հանդիսանում բուժհաստատությունների հագեցվածությունը:

2017թ. Երևանի ենթակայությամբ գործում են թվով 32 առողջապահական կազմակերպություններ, որոնցից 4-ը բժշկական կենտրոններ են (այդ թվում՝ 1 մասնագիտացված հիվանդանոց, 2 ընդհանուր պրոֆիլի հիվանդանոց, 1 ծննդատուն), 2-ը՝ դիսպանսեր, 1-ը՝ շտապբուժօգնության ծառայություն, 1-ը՝ գիտահետազոտական ինստիտուտ-մասնագիտացված հիվանդանոց, 2-ը՝ ծննդատուն և 22-ը՝ պոլիկլինիկա:

2011-2015թթ. հիվանդանոցային մահճակալների թիվը կայուն աճ է արձանագրել:

Աղյուսակ 8

Հիվանդանոցային մահճակալների թիվը, հատ¹¹

	2011թ	2012թ	2013թ	2014թ	2015թ
Երևան	13 490	12 938	12 664	12 896	13 117
ՀՀ առանց Երևանի	7 486	7 569	7 592	7 835	7 880

Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպություններից 25-ը մատուցում են ամբուլատոր-պոլիկլինիկական ծառայություն, որոնց բարոյապես և ֆիզիկապես մաշված սարքավորումները փոխելու և արդի բուժման նոր մեթոդներին համապատասխանացնելու նպատակով 2013-2017թթ. ձեռք է բերվել և բուժհաստատություններին անհատույց օգտագործման հիմունքներով տրամադրվել է 223 ժամանակակից բուժսարքավորում՝ ընդամենը՝ 305,456.2 հազար դրամի, այդ թվում 3 ռենտգեն ապարատ:

Նշված սարքավորումների ձեռքբերումով հնարավոր եղավ ոչ միայն հզորացնել ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների հագեցվածությունը, բարձրացնել մատուցվող ծառայությունների որակը, այլ նաև ապահովել պետական պատվերի շրջանակներում չներառված վճարովի հիմունքներով մատուցվող բժշկական ծառայությունների տևական աճ:

Բուժհաստատությունները նոր բուժսարքավորումներով հագեցնելու ծրագիրը կրում է շարունակական բնույթ, որը հնարավորություն է ստեղծում ստանալ լրացուցիչ եկամուտ, ինչը իր

¹¹ Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016

հերթին հնարավորություն է տալիս ոչ միայն ապահովել բուժհաստատությունների ընթացիկ գործունեությունը, այլև ստեղծել ֆոնդեր հետագա զարգացման համար:

Կոմպյուտերային տոմոգրաֆիայի հետազոտությունը շատ կարևոր է առանձին հիվանդությունների ախտորոշման և արդյունավետ բուժման կազմակերպման համար, իսկ պետության կողմից երաշխավորված թանկարժեք ու դժվարամատչելի հետազոտությունների ցանկում ներառված լինելը այն հասանելի չի դարձնում հասարակության լայն շերտերի համար, որն էլ կարևոր հիմնախնդիրներից մեկն է Երևան համայնքի բնակիչների համար բուժօժանայությունների մատուցման մատչելիության ապահովման տեսանկյունից: Այս խնդրի կարգավորման նպատակով Երևան քաղաքապետարանի կողմից ձեռք է բերվել կոմպյուտերային տոմոգրաֆիայի ծառայություն, որից 2014 թվականից առ այսօր օգտվել է 843 քաղաքացի: Նշված ծառայության ձեռքբերումը հնարավորություն է տալիս որոշ չափով մեղմել սոցիալական լարվածությունը, ինչպես նաև ապահովել առանձին խմբերում ընդգրկված անձանց համար նշված ծառայության սպառումը:

Հիմնախնդիրներ

1. Առողջապահության ծառայության որակի բարձրացում, Երևան քաղաքի բնակչության համար պետության կողմից երաշխավորված թանկարժեք և դժվարամատչելի հետազոտությունների անցկացման մատչելիության ապահովում,

2. Առողջապահական հաստատությունների հիմնանորոգում և ընթացիկ վերանորոգում

3. Բժշկական սարքավորումների արդիականացում:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1. Առողջապահական օբյեկտների վերանորոգում, կառավարման արդյունավետության բարձրացում

Ծրագրի նպատակը

Ծրագրի իրականացման հիմնական նպատակը Երևանի ենթակայության առողջապահական կազմակերպությունների վերանորոգումը և շենքային պայմանների բարելավումն է:

Ծրագրի համառոտ նկարագրությունը

Առողջապահության ոլորտի գերակա ուղղություններից է սահմանվել Երևանի ենթակայության առողջապահական հիմնարկների շենքային պայմանների բարելավումը: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ապահովել բոլոր պոլիկլինիկաների հիմնանորոգման ծրագրի ամբողջական իրականացում:

Երևանի ենթակայության բուժհաստատություններում վերանորոգման աշխատանքների ընթացքում կապահովվի հաշմանդամություն ունեցող անձանց սպասարկման մատչելիությունը:

Կկատարվեն տանիքների հիմնանորոգման և ընթացիկ վերանորոգման աշխատանքներ (ըստ անհրաժեշտության):

Նախատեսվում է իրականացնել Երևանի քաղաքապետարանի ենթակայության տակ գտնվող առողջապահական կազմակերպությունների կառավարման արդյունավետության բարձրացման ծրագիր՝ մասնավոր ներդրումների ներգրավմամբ:

2. Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռքբերում

Ծրագրի նպատակը

Ծրագրի իրականացման հիմնական նպատակը Երևանի ենթակայության բուժհաստատություններում առկա ֆիզիկապես և բարոյապես մաշված սարքավորումների մասնակի փոխարինումն է նորով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Վաղ շրջանում հիվանդությունների հայտնաբերման և դրանց հետագա բարդությունների կանխարգելման և արդյունավետ բուժման նպատակով ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել լաբորատոր-գործիքային հետազոտություններ իրականացնող սարքավորումներ, այդ թվում՝ ռենտգեն ախտորոշիչ ապարատ, մամոգրաֆիայի ապարատ, դենսիտոմետրիա:

Աչքի պաթոլոգիաների կանխարգելման, համալիր ախտորոշման և վերջնական արդյունք ապահովելու նպատակով նախատեսվում է Երևանի ենթակայության ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների ակնաբուժական կաբինետների հագեցում աուտոտեֆոնակտոմետրով, ճեղքային լամպով, տոնոմետրով, տեսողության սրության ստուգման սարքով, տեսողության ստուգման ուսանելիքների հավաքածուով և ակնոցի շրջանակով:

3. Բնակչությանը կոմպյուտերային և մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայության տրամադրում

Ծրագրի նպատակը

Ծրագրի իրականացման հիմնական նպատակը Երևանի բնակչության համար կոմպյուտերային և մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիայի ծառայությունների տրամադրումն է:

Ծրագրի համառոտ նկարագրությունը

Կոմպյուտերային (ԿՏ) և մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիայի (ՄՌՏ) հետազոտությունները շատ կարևոր են առանձին հիվանդությունների ախտորոշման և արդյունավետ բուժման կազմակերպման համար: Նշված ծառայությունների ձեռքբերումը հնարավորություն կտա որոշ չափով մեղմել սոցիալական լարվածությունը, ինչպես նաև ապահովել առանձին խմբերում ընդգրկված անձանց համար նշված ծառայության սպառումը:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Երևան քաղաքի բնակիչների համար ձեռք բերել կոմպյուտերային և մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտության ծառայություններ:

4. Երևան քաղաքի բնակչության շրջանում սրբինինգային հետազոտության իրականացում

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է՝

1. Երևան քաղաքի բնակչության շրջանում գնահատել ածխաջրատային փոխանակության խանգարմամբ (ավելցուկային քաշ, ճարպակալում, մետաբոլիկ համախտանիշ, շաքարային դիաբետ) և սրտանոթային շատ բարձր ռիսկով պացիենտների տարածվածության աստիճանը, գնահատել նրանց փոխկապակցվածությունն ու ախտաբանական առանձնահատկությունները, ինչպես նաև կիրառելով ժամանակակից միջազգային ստանդարտներին համապատասխան նորարարական բուժական միջոցառումներ՝ իրականացնել բուժման արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումներ:

2. Կոլոռեկտալ քաղցկեղի վաղ հայտնաբերում, լիարժեք բուժում, մահացության ցուցանիշի նվազեցում:

Ծրագրի համառոտ նկարագրությունը

Հետազոտության առաջին փուլում Երևան քաղաքի բնակչության շրջանում սրբինինգային հետազոտության իրականացում, երկրորդ փուլում բարձր ռիսկի խմբում գտնվող 300 անձանց

համար լաբորատոր-ախտորոշիչ հետազոտությունների իրականացում, երրորդ փուլում հիվանդների շարունակական հսկողություն տարածքային ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություններում:

Ծրագրի ընթացքում նախատեսվում է առողջության դպրոցների կազմակերպում, դասընթացների անցկացում, հարցաշարերի տպում, բուկլետների պատրաստում:

Կոլոնեկտալ քաղցկեղը համարվում է լայնորեն տարածված հիվանդություն (ՀՀ-ում գտնվում է քաղծկեղով հիվանդացության դասակարգման 3-րդ տեղում): Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ՁԼՄ-ների, տարբեր տեղեկատվական հարթակների, բուկլետների միջոցով հիվանդության բնույթի մասին տեղեկատվության տրամադրում, ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունների օնկոլոգների միջոցով թիրախային խմբի հայտնաբերում, սկրինինգ թեստերի միջոցով հետազոտության անցկացում, արդյունքում հայտնաբերված կասկածելի հիվանդների ուղղորդում Երևան քաղաքի գլխավոր քիմիոթերապևտ-ուռուցքաբանի մոտ՝ անվճար խորհրդատվության լիարժեք բուժման միջոցների որոշման նպատակով:

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել որպես պիլոտային ծրագիր, որից հետո, գնահատելով ծրագրի արդյունավետությունը, այն կկրի շարունակական բնույթ:

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅՈՒՆ

Սոցիալական ապահովության բնագավառում Երևանի քաղաքապետարանի ռազմավարությունն ուղղված է քաղաքացիների սոցիալական երաշխիքների պաշտպանությանն ու իրականացմանը՝ պետական և համայնքային սոցիալական ծրագրերի իրականացմամբ, որը միտված է լինելու մայրաքաղաքի բնակչության սոցիալական ռիսկի խմբերի սոցիալական պաշտպանությանը, սոցիալական ռիսկերի աստիճանական կրճատմանը:

Հաշմանդամության ոլորտում իրականացվող քաղաքականությունը, հիմնական մոտեցումները և նպատակային ծրագրերը ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, հավասար պայմանների ու հնարավորությունների ապահովմանը, նրանց սոցիալական ներառմանը: Նպատակային քաղաքականություն է լինելու ռիսկային իրավիճակներում հայտնված և սոցիալապես խոցելի մարդկանց (տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, տեղահանվածների, անօթևանների, ազատազրկման վայրերից ազատ արձակված անձանց) և այլ սոցիալական խմբերի սոցիալական իրավունքների պաշտպանությունը:

Հաշմանդամության ոլորտում իրականացվող քաղաքականությունը, հիմնական մոտեցումները և նպատակային ծրագրերը ուղղված են հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների պաշտպանությանը, հավասար պայմանների ու հնարավորությունների ապահովմանը, նրանց սոցիալական ներառմանը:

Երևանի քաղաքապետարանի սոցիալական առաջնահերթություններից է նաև տարեցների սոցիալական ապաստարկման ծրագրերի իրագործումը ինչպես տնային պայմաններում, այնպես էլ պետության ամբողջական խնամքի ներքո՝ տուն-ինտերնատների միջոցով, նաև պետություն-ՀԿ-համայնք համագործակցությամբ կազմակերպված ցերեկային խնամքի կենտրոններում:

Հիմնախնդիրներ

1. Բնտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում:
2. Հաշմանդամություն ունեցող անձանց համար մատչելի միջավայրի ձևավորում և նրանց՝ հասարակությանն աստիճանական ինտեգրում:
3. Տարեցների շրջանում աղքատության հաղթահարում:
4. Տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց համար սոցիալ-վերականգնողական կենտրոնների ստեղծում:
5. Բազմազգակ ընտանիքների բնակարանային և սոցիալ-կենցաղային պայմանների բարելավում:
6. Տեղահանված սիրիահայերի հասարակական ինտեգրման և սոցիալական օժանդակության ծրագրեր:
7. Անօթևան անձանց հիմնախնդիրների լուծում:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1. Պետական սոցիալական օժանդակության ծրագրեր

Ծրագրի նպատակ

Ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում, բնակչությանը մատուցվող սոցիալական ծառայությունների կատարելագործում, հասցեականության մեծացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրագործում, կարիքավոր բնակչության հայտնաբերում, հաշվառում, պետական նպաստների նշանակում:

Աջակցություն ՍՍՏԲ-ների կողմից սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության տարբեր խմբերի հաշվառմանը, փաստագրմանը:

Աջակցություն ՍՍՏԲ-ների կողմից սոցիալական աջակցության կարիք ունեցող բնակչության տարբեր խմբերի պետական նպաստների նշանակման գործընթացում:

Սոցիալական ոլորտում բարեփոխումների արդյունքում ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգի ներդրում, որը կնպաստի սոցիալական ծառայությունների մատուցման մատչելիությանը, կմեծացնի հասցեականությունը:

Ծրագրի արդյունքում ակնկալվում է նոր որակի ծառայությունների տրամադրում, սոցիալական ծառայությունների մատչելի մատուցում, սոցիալական պաշտպանության ոլորտի տեղեկատվական համակարգերի միջև տեղեկատվության փոխանակությունն ապահովող ինքնաշխատ ծրագրի կիրառում և հասցեականության մեծացում:

2. Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն

Ծրագրի նպատակ

Աջակցել կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքներին, ինչպես նաև համայնքում կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց, աղքատ ընտանիքներին, բազմազավակ ընտանիքներին, պատերազմի վետերաններին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, տարեցներին և հաշմանդամություն ունեցող անձանց, առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին և անօթևան անձանց:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Սոցիալական ապահովության ոլորտում Երևանի քաղաքապետարանի գործունեության կարևորագույն մասն են կազմում նաև սոցիալական խավերի համար իրականացվող միջոցառումները, որոնք որոշակիորեն մեղմում են քաղաքացիների սոցիալական դժվարությունները:

Մարտի 8-ի՝ Կանանց միջազգային օրվա՝ կապակցությամբ կկազմակերպվեն միջոցառումներ՝ նվիրված կարիքավորության գնահատման համակարգում հաշվառված և սոցիալական խմբեր ներկայացնող շուրջ 2000 կանանց, այդ թվում՝ Երևանում բնակվող սոցիալապես անապահով սիրիահայ ընտանիքներին:

Ապրիլի 7-ի՝ մայրության օրվա և գեղեցկության տոնի կապակցությամբ այցելություններ և աջակցություն երևանաբնակ բազմանդամ ընտանիքներ ունեցող մայրերի, երիտասարդ բազմազավակ մայրերի, նոր մայրացող կանանց: Շուրջ 500 ընտանիքների կտրամադրվեն կենցաղային և այլ անհրաժեշտ ապրանքներ:

Ապրիլի 24-ին Մեծ Եղեռնը վերապրած քաղաքացիներին կտրամադրվի դրամական օգնություն:

Հոկտեմբերի 1-ի տարեցների օրվա կապակցությամբ տարեցներին (մասնավորապես 100 և ավելի տարիք ունեցող) կտրամադրվի դրամական օգնություն:

Դեկտեմբերի 3-ին՝ հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա կապակցությամբ կիրականացվեն միջոցառումներ, սոցիալական հիմնախնդիրներով զբաղվող հասարակական

կազմակերպություններին համաքաղաքային նշանակության սոցիալական ծրագրերի իրականացման կամ համաֆինանսավորման նպատակով կցուցաբերվի դրամական օժանդակություն:

Կարիքավորության գնահատման համակարգում ընդգրկված սոցիալապես անապահով ընտանիքների 4000 երեխաների համար Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ նախատեսվում են միջոցառումներ:

3.Սոցիալապես անապահով երևանաբնակ ծնողների համար զինվոր որդիներին տեսակցության կազմակերպում

Ծրագրի նպատակ

Աջակցություն սոցիալապես անապահով երևանաբնակ ծնողներին, ովքեր ունեն սահմանամերձ գոտիներում ծառայող որդիներ:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է կազմակերպել սոցիալապես անապահով երևանաբնակ ծնողների այցելություն սահմանամերձ գոտիների՝ Տավուշի, Սյունիքի և Լեռնային Ղարաբաղի գործառնություն ծառայող իրենց զինվոր որդիներին:

4.Սոցիալապես անապահով անձանց աջակցություն

Ծրագրի նպատակ

Աջակցել ռիսկային իրավիճակներում հայտնված և սոցիալապես խոցելի մարդկանց (տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, տեղահանվածների՝ սիրիահայերի, անօթևանների, ազատազրկման վայրերից ազատ արձակված անձանց) և այլ սոցիալական խմբեր ներկայացնող կյանքի դժվարին իրավիճակում հայտնվածների:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է սոցիալական ծանր պայմաններում գտնվող անձանց դրամական աջակցության տրամադրում:

5.Հասարակական կազմակերպություններին աջակցություն

Ծրագրի նպատակ

Նպատակն է սոցիալական ծրագրերի իրականացման ընթացքում ոչ պետական և առևտրային կազմակերպությունների մասնակցության ձևերի ընդլայնումը:

Երևան քաղաքում հաշմանդամություն ունեցող անձանց ակտիվ կենսագործունեության, ինչպես նաև հասարակության մեջ վերջիններիս լիարժեք ինտեգրման համար անհրաժեշտ պայմանների ստեղծում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Հաշվի առնելով հասարակական կառույցների՝ մարդկանց աջակցելու յուրահատուկ փորձը, ինչպես նաև հենվելով սոցիալական գործընկերության սկզբունքի վրա, համատեղ կիրականացվեն սոցիալական ծրագրեր:

Քաղաքային ենթակառուցվածքների և սոցիալական ոլորտը սպասարկող հիմնարկներում կստեղծվեն հաշմանդամություն ունեցող անձանց համար հատուկ նշանակության պայմաններ, մատչելիության ապահովման նպատակով կտեղադրվեն սարքեր և սարքավորումներ:

Ընտանեկան բռնության ենթարկված անձանց կացարանների ֆիզիկական մատչելիության ապահովման նպատակով Երևանի քաղաքապետարանը համապատասխան հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ կտրամադրի մասնագիտական խորհրդատվություն լուծումների վերաբերյալ:

Երևանի քաղաքապետարանն ըստ անհրաժեշտության կարող է աջակցել նշված կացարաններում հայերեն ժեստերի լեզվի թարգմանության հարցում՝ Հայաստանի խուլերի միավորման հետ համագործակցությամբ գործող շուրջօրյա առցանց հաղորդակցման կենտրոնի միջոցով:

6.Տարեցների համար սոցիալական աջակցության ծրագրերի իրագործում, ցերեկային խնամքի կենտրոնների (բարեգործական ճաշարանների) գործունեության կազմակերպում

Ծրագրի նպատակ

Միայնակ տարեցներին աջակցության ցուցաբերում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի արդյունքում սոցիալապես անապահով տարեցներին կցուցաբերվի կենցաղային սպասարկում և խնամք, որը ներառում է.

- սոցիալական սպասարկողի այցելություն, խնամքի տրամադրում, բարեգործական ճաշարանից անհրաժեշտության դեպքում կերակրի տուն բերում,
- բժշկական օգնություն ցերեկային խնամքի կենտրոններում, բժշկի և բուժքրոջ այցելություն,
- սոցիալ-հոգեբանական օգնություն, որը ներառում է հոգեբանի այցելություն,
- կենցաղային սպասարկում, որը ներառում է սոցիալական սպասարկողի այցելություն՝ ըստ կանչի:

7.Տեղահանված փախստականների (սիրիահայերի) հասարակական ինտեգրման և սոցիալական օժանդակության ծրագրեր

Ծրագրի նպատակ

Սիրիահայերի սոցիալական պաշտպանության քաղաքականությունը նպատակաուղղված է վերջիններիս համար հավասար հնարավորությունների ստեղծմանը՝ կյանքի բոլոր ոլորտներում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Սոցիալական աջակցություն է տրամադրվել հարյուրավոր կարիքավոր սիրիահայ ընտանիքների՝ դրամական աջակցություն, կենցաղային իրեր, հագուստեղեն, պարենային աջակցություններ: Բացի այդ տասնյակ ընտանիքներ ընդգրկվել են պետական սոցիալական աջակցության ծրագրերում: Սիրիահայ կարիքավոր ընտանիքների սոցիալական աջակցության ծրագրերը կրում են շարունակական բնույթ:

Կշարունակվեն կարիքավոր սիրիահայ ընտանիքներին տարաբնույթ սոցիալական աջակցությունների տրամադրումը: Մասնավորապես՝ երեխաներին արտահերթ հիմունքներով ՆՈՒՀ-երում և դպրոցներում ընդգրկումը և հասարակական կյանքին աստիճանական ինտեգրումը:

8.Սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով հաշվառման իրականացում, անօթևան անձանց ժամանակավոր կացարանում տեղավորում

Ծրագրի նպատակ

Ծրագրի արդյունքում նախատեսվում է կարիքավոր ընտանիքների բնակարանային խնդիրների աստիճանական կարգավորում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

ՀՀ կառավարության 10.09.2015թ. հ.1069-Ն որոշմամբ սոցիալական բնակարանային ֆոնդի ձևավորման նպատակով սոցիալապես անապահով և հատուկ խմբերին դասված բնակելի տարածության կարիք ունեցող անձանց (ընտանիքներին) հաշվառման աշխատանքների իրականացում:

Քրեակատարողական հիմնարկներից ազատ արձակված անձանց սոցիալական աջակցության և սոցիալական ներառման խնդիրների կազմակերպում, օթևանի տրամադրում:

9.Սոցիալապես անապահով կարիքավոր, բազմազավակ ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում

Ծրագրի նպատակ

Ծրագիրը նպատակն է կազմակերպել սոցիալապես անապահով կարիքավոր, բազմազավակ ընտանիքների երեխաների ամառային հանգիստը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Սոցիալապես անապահով կարիքավոր, բազմազավակ ընտանիքների շուրջ 1200 երեխաներ (7-13 տարեկան) իրենց ամառային հանգիստը կանցկացնեն Ծաղկաձորի, Հանքավանի և այլ մանկական ճամբարներում: Երեխաների ամառային հանգստի կազմակերպումը իրականացվում է 3 հերթափոխերով: Ծրագիրն ուղղված է գոհված, հաշմանդամ դարձած զինծառայողների և աշխարհագորայինների, ծնողագուրկ և սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների դպրոցահասակ երեխաների ամառային հանգստի կազմակերպմանը: Ծրագիրը կրում է շարունակական բնույթ:

10.«Խելացի Երևան» ծրագիր

Ծրագրի նպատակը

«Խելացի Երևան» ծրագրի նպատակն է քաղաքի ենթակառուցվածքներում տեխնոլոգիական համակարգերի կիրառմամբ նպաստել կառավարման օպտիմալացմանն ու էլեկտրոնային ծառայությունների որակի բարելավմանը:

Ծրագրի համառոտ նկարագրությունը

Երևան քաղաքում կառուցապատման, տրանսպորտի, արտադրությունների և ծառայությունների օրեցօր ավելացումը, տեղեկատվության փոխանակման ծավալների և արագության նոր պահանջները, և ընդհանրապես քաղաքային կյանքի ինտենսիվության բարձրացումը նոր խնդիրներ է առաջ բերում, որոնց լուծման համար անհրաժեշտ են նորարարական մոտեցումներ:

Աշխարհում ընթացող տեխնոլոգիական զարգացումները մարտահրավերներ են նետում՝ առաջ բերելով նոր պահանջներ, ռիսկեր և էկոլոգիական խնդիրներ: Այս միտումը, բնորոշ լինելով զարգացող քաղաքներին, նկատելի է նաև Երևանում:

Տեխնոլոգիաների այս դարաշրջանում ստեղծվող խնդիրներին զուգահեռ հնարավոր են դառնում դրանց խելացի լուծումները:

Ժամանակի պահանջներին համահունչ զարգացման, քաղաքի դիմակայության և անվտանգության բարձրացման, ռեսուրսների խնայողության, էկոհամակարգի բարելավման նպատակով նախատեսվում է մշակել տեխնոլոգիաների ներդրման ռազմավորություն՝ «Խելացի քաղաք» հայեցակարգ: Հայեցակարգի հիման վրա կստեղծվեն տեխնոլոգիական հազեցման ծրագրեր՝ ըստ ոլորտների: Ծրագրերը կիրականացվեն ըստ առաջնահերթության և ֆինանսական հնարավորության:

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԿՈՒԼՏՈՒՐԱ ԵՎ ՍՊՈՐՏ

Երևան քաղաքում գործում է մարզական 4 միություն, 12 մարզական ակումբ, 16 լողավազան, ֆուտբոլի 11 մարզադաշտ, թենիսի 24 կորտ, 4 հրաձգարան, 5 ստադիոն, 37 մարզադահլիճ, 1 նետաձգարան, 1 աթլետիկական մանեժ, 1 հեծանվահրապարակ, թիավարության ու վինդսերֆինգի 3 ջրամբար, մարզամշակութային 2 կենտրոն, հավաքական թիմերի ուսումնամարզական 1 կենտրոն, 1 ձիարշավարան, բազմագործառության 132 փոքր դաշտ և տարբեր գերատեսչական ենթակայության 60 մարզադպրոցներ:

Երևան համայնքի ենթակայությամբ գործում է 40 մարզադպրոց:

Յուրաքանչյուր տարի անցկացվում են 40 մարզաձևերի Երևան քաղաքի առաջնություններ, առողջարարական, հանրային, երիտասարդական 9 միջոցառումներ, Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար 8 մարզաձևերից կազմված բակային փառատոն և ըմբշամարտի միջազգային մրցաշար:

Հիմնախնդիրներ

1. Ֆիզիկական կուլտուրայի, սպորտի զարգացում, մասսայականացում, բնակության և հասարակական վայրերում ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համար համապատասխան պայմանների ստեղծում, առողջ ապրելակերպի մշակույթի ձևավորում:
2. Ազգաբնակչության լայն զանգվածների համար մարզական ակումբներից, մարզաբազաններից օգտվելու մատչելիության ապահովում՝ մասնավորապես աթլետիկական վազքուղիները, լողավազաններն ու մարզադահլիճները:
3. Պետական, համայնքային, հասարակական ու մասնավոր մարզական կազմակերպությունների փոխգործակցության արդյունավետության բարձրացում:
4. Տարածաշրջանային և միջազգային մարզական շարժումների հետ համագործակցության հաստատում և ընդլայնում:
5. Հաշմանդամություն ունեցող մանուկների և պատանիների համար ֆիզիկական կուլտուրայով և սպորտով զբաղվելու համապատասխան պայմանների ստեղծում:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1. Արտադպրոցական դաստիարակության կազմակերպում

Ծրագրի նպատակ

Արտադպրոցական դաստիարակության միջոցով առողջ ապրելակերպի սերմանում, Երևանի ու Հայաստանի հավաքական թիմերի համալրում բարձրակարգ մարզիկներով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակում նախապատրաստվում է առողջ ապրելակերպի արմատավորում ու ներդաշնակ ֆիզիկական զարգացման ապահովում, հայրենիքի պաշտպանությանը պատրաստ ֆիզիկապես առողջ սերնդի դաստիարակում, ընտրված մասնագիտությունների գծով ազգային ու համաշխարհային մարզական փորձի փոխանցում մարզվողներին ու նրանց մարզական ընդունակությունների կատարելագործում, ուսումնամարզական գործընթացում ընդգրկված մարզիկ մարզուհիների նախապատրաստում համապատասխան միջին ու բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելուն, Երևան քաղաքի ու Հայաստանի Հանրապետության հավաքական թիմերի համար բարձրակարգ մարզիկների

նախապատրաստում, հանրակրթական դպրոցների հետ սերտ կապի հաստատում և արտադասարանական աշխատանքներին ու ֆիզկուլտուրային-առողջարարական միջոցառումներին օժանդակում:

2.Սպորտային միջոցառումների կազմակերպում

Ծրագրի նպատակ

Առողջ ապրելակերպի արմատավորում ու ներդաշնակ ֆիզիկական զարգացման իրականացում, մայրաքաղաքում տարբեր մարզաձևերի մասսայականացում և զարգացում, պատանեկան թիմերի սպորտային վարպետության բարձրացում, ուժեղագույն թիմերի և մարզիկների ի հայտ բերում՝ ՀՀ առաջնություններին մասնակցելու և Երևանի ու հանրապետության հավաքական թիմերը համալրելու նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է՝

- Երևան քաղաքի առողջարարական, հանրային, մարզական ու երիտասարդական միջոցառումների տարեկան պլանով նախատեսված Երևան քաղաքի առաջնությունների, մարզաառողջարարական, հանրային միջոցառումների կազմակերպում:
- Համագործակցության ծրագրերով նախատեսված աշխատանքների իրականացում:
- Հայաստանի Հանրապետության առաջնություններում ու տեղական և միջազգային մրցաշարերում Երևան քաղաքի հավաքական թիմերի, երևանյան թիմերի ու մարզիկ-մարզուհիների մասնակցության ապահովում:
- Երևանի թիմերի և երևանցի մարզիկների համար ուսումնամարզական հավաքների կազմակերպում հանրապետական և միջազգային մրցաշարերին նախապատրաստվելու և պատշաճ մակարդակով մասնակցելու նպատակով:
- Երևանի քաղաքապետի փոխանցիկ գավաթի համար անցկացվող «Առողջ սերունդ» պաշտպանված հայրենիք» համաքաղաքային բակային ավանդական փառատոնի կազմակերպում:
- Հանրապետական, միջազգային մրցաշարերում, Եվրոպայի ու աշխարհի առաջնություններում և օլիմպիական խաղերում բարձր արդյունքներ ցուցաբերած երևանցի մարզիկների խրախուսում:

3.Արտադպրոցական կազմակերպությունների շենքերի վերանորոգում, գույքի ձեռքբերում

Ծրագրի նպատակ

Մարզական կազմակերպությունների շենքային պայմանների բարելավում, գործունեության արդյունավետության բարձրացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է Երևանի ենթակայության մարզական կազմակերպությունների շենքերի վերանորոգման և ժամանակակից մարզագույքով ապահովման աշխատանքների իրականացում:

4.Հաշմանդամություն ունեցող անձանց համար սպորտային միջոցառումների կազմակերպում

Ծրագրի նպատակ

Հաշմանդամություն ունեցող անձանց ինտեգրում մայրաքաղաքի հասարակական կյանքին:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է մշակել և իրականացնել հաշմանդամություն ունեցող անձանց սպորտային միջավայր ներառելու պայմանների ապահովման հայեցակարգ:

Նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց համար մարզական միջոցառումների, հաշմանդամություն ունեցող անձանց սպարտակիադանների, փառատոների, ստեղծագործական ցուցահանդեսների կազմակերպում:

5.Նոր հեծանվուղիների ստեղծման ծրագրի շարունակականություն ապահովում

Ծրագրի նպատակ

Մայրաքաղաքում սիրողական հեծանվասպորտի զարգացման միջոցով առողջ ապրելակերպի խթանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակում նախատեսվում է ստեղծել նոր հեծանվային մայրուղիներ և արահետներ, ինչպես նաև կայանատեղեր, որը կնպաստի հեծանվային տրանսպորտի զարգացմանը, քաղաքացիների առողջ ապրելակերպի բարելավմանը:

ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԵՏ ՏԱՐՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

Երիտասարդական պետական քաղաքականության հայեցակարգը սահմանում է երիտասարդական պետական քաղաքականության սուբյեկտները, քաղաքականության սկզբունքները, իրականացման նպատակներն ու հիմնական ուղղությունները: Հասարակական կազմակերպությունները, բուհերի ուսանողական խորհուրդները ակտիվ մասնակցություն են ունենում մայրաքաղաքի երիտասարդական կյանքի զարգացման գործում:

Երևանի քաղաքի ավագանու 2013 թվականի սեպտեմբերի 10-ի հ. 46-Ն որոշմամբ ստեղծվել է Երևանի քաղաքապետին կից երիտասարդության հարցերի խորհուրդը: Երևանի քաղաքապետարանում գործում է երիտասարդական կենտրոն՝ սեմինարներ, քննարկումներ և այլ միջոցառումներ անցկացնելու համար անհրաժեշտ պայմաններով: Խորհուրդը նաև ներգրավվում է համաքաղաքային գրեթե բոլոր ծրագրերին, տարաբնույթ տոնական ու մեծ միջոցառումների կազմակերպչական և կամավորական աշխատանքներին:

Հիմնախնդիրներ

- 1. Մայրաքաղաքի երիտասարդների սոցիալ-տնտեսական գործունեության, զբաղվածության ապահովմանն ուղղված միջոցառումների անցկացում:*
- 2. Երիտասարդների շրջանում առողջ ապրելակերպի խրախուսում:*
- 3. Հայրենասիրական դաստիարակության ուղղությամբ տարվող աշխատանքների ակտիվացում:*

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

Երիտասարդության հետ տարվող աշխատանքներ

Ծրագրի նպատակ

Հասարակական կյանքին երիտասարդների մասնակցության խթանում, իրավագիտակցության բարձրացում, աշխատանքային, սոցիալական խնդիրների ուսումնասիրում, առաջարկությունների, ծրագրերի քննարկում, սեմինարների անցկացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

2018-2022թթ. կշարունակվեն երիտասարդական միջոցառումների կազմակերպման աշխատանքները, մասնավորապես՝ «Կամավորների բանկ», «Բանավեճի ակումբ», «Ընթերցասերների ակումբ», ծառատունկեր, շաբաթօրյակներ և այլն:

Կընդլայնվի միջազգային կազմակերպությունների և դեսպանությունների հետ համագործակցության շրջանակը:

Արդյունավետ համագործակցություն կիրականացվի մայրաքաղաքում գործող երիտասարդական հասարակական կազմակերպությունների, ուսանողական խորհուրդների, սփյուռքի և հանրապետության մարզերի երիտասարդական կազմակերպությունների, ինչպես նաև միջազգային երիտասարդական կառույցների հետ:

ԵՐԵՎԱՆԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Երևանի քաղաքապետարանը իրականացնում է կյանքի դժվարին իրավիճակում հայտնված, առանց ծնողական խնամքի մնացած երեխաների և նրանց ընտանիքների բացահայտման, նրանց խնդիրների գնահատման և մասնագիտական աջակցությանն ուղղված գործառնություններ:

Երևան քաղաքի վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, շահագրգիռ պետական և հասարակական կառույցների հետ համատեղ իրականացվում են կանխարգելիչ միջոցառումներ՝ վարքային խնդիրներ ունեցող հակասոցիալական վարք դրսևորած և մուրացիկությամբ և թափառաշրջիկությամբ զբաղվող անչափահասների ընտանիքների աջակցության և նպատակային ուղորդման նպատակով:

Երևանի քաղաքապետի 2015 թվականի մարտի 2-ի հ.515-Ա որոշման համաձայն իրականացվում է վարչական շրջաններում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների կողմից կատարվող աշխատանքների ամենամյա գնահատում: Աշխատանքների արդյունավետությունը բարձրացնելու նպատակով տրամադրվում է մեթոդական աջակցություն, իրականացվում է բարդ դեպքերի համատեղ քննարկում, խնդիրների բացահայտում և լուծում:

Շահագրգիռ պետական և հասարակական կառույցների, վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների հետ հետևողական աշխատանքի արդյունքում իրականացվում է խնամատար ինստիտուտի խրախուսման գործընթացը, որի հետևանքով ավելացել է խնամատար ընտանիքների և խնամատար ընտանիքներում խնամվող հաշմանդամություն ունեցող առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թիվը:

Որդեգրման գործընթացի թափանցիկության նպատակով որդեգրել ցանկացող անձանց հետ տարվում է աշխատանք՝ տեղեկատվական համակարգում առկա որդեգրման ենթակա երեխաների տվյալներին ծանոթանալու և իրենց նախընտրելի չափորոշիչներով երեխա ընտրելու նպատակով:

Իրականացվում են տարաբնույթ կրթամշակութային միջոցառումներ կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին առողջ ապրելակերպի և քաղաքային պատմամշակութային արժեքներին ինտեգրելու նպատակով:

Աշխատանքներ են տարվում կրթությունից խուսափող երեխաների կրթության շարունակականությունը ապահովելու ուղղությամբ:

Հիմնախնդիրներ

1. Խնամատար ինստիտուտի դերի բարձրացում և խրախուսում:
2. Վարչական շրջաններում գործող խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների աշխատանքների կանոնակարգում և մասնագիտական համալրում:
3. Կրթությունից դուրս մնացած, առանց ծնողական խնամքի մնացած, ծննդյան վկայական չունեցող, հակասոցիալական վարք դրսևորող երեխաների իրավունքների և շահերի պաշտպանության, կրթական համակարգում ընդգրկման և կրթության շարունակական ապահովման, փաստաթղթերի ձեռքբերմանն ուղղված բազմամասնագիտական ծառայությունների տրամադրում:
4. Խնամակալության տակ գտնվող երեխաների և նրանց ընտանիքներին հաշվառում և հնարավորինս աջակցություն:
5. Մոցիալական տարբեր խմբերի երեխաներին և նրանց ընտանիքներին քաղաքային կրթամշակութային, սպորտային միջոցառումներին ընդգրկման ապահովում:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1. Կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների պաշտպանություն

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանության ապահովումը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Շարունակական բնույթ են կրելու անչափահասների կողմից իրավախախտումների, մուրացիկության և թափառաշրջիկության կանխարգելման, հիմնախնդիրների առաջացման պատճառների ուսումնասիրման և համապատասխան միջոցառումների ձեռնարկման նպատակով ուսուկանության անչափահասների գործերով բաժանմունքների հետ համագործության՝ համատեղ նիստերի, շրջայցների կազմակերպման, հասցեական օգնության տրամադրման, երեխաների կողմնորոշման և տեղավորման աշխատանքները:

Շահագրգիռ կառույցների հետ համատեղ կիրականացվեն կրթությունից դուրս մնացած երեխաների հայտնաբերման և նրանց կրթական համակարգում ընդգրկելու ուղղությամբ աշխատանքներ:

Շահագրգիռ կառույցների հետ համատեղ կիրականացվեն նաև ծննդյան վկայական չունեցող երեխաների տվյալների հավաքագրման, վկայականների ձեռքբերման գործընթացին աջակցման աշխատանքներ:

Շարունակական բնույթ են կրում առանց ծնողական խնամքի մնացած երեխաների հայտնաբերման, հաշվառման, կարիքների գնահատման և ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնությունների տրամադրման աշխատանքները:

Աշխատանքներ կիրականացվեն կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաներին խնամքի և պաշտպանության հաստատություններում տեղավորման ուղղությամբ:

Կիրականացվեն նաև կյանքի դժվարին իրավիճակներում գտնվող երեխաների տվյալների մուտքագրում բազայում, ինչպես նաև կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների առանձնահատուկ պայմանների կարիքի վկայագրում:

2. Երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված միջոցառումների անցկացում

Ծրագրի նպատակ

Կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաների ինտեգրումը հասարակության մեջ, հայեցի և բարեկիրթ դաստիարակության ապահովումը և խրախուսումը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Յուրաքանչյուր տարի կկազմակերպվի երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված հեքիաթի հերոսների, մանկական երաժշտական խմբերի մասնակցությամբ տոնական զվարճալի միջոցառում, որի ընթացքում երեխաներին կտրվեն խորհրդանշական նվերներ:

Երեխաների պաշտպանության միջազգային օրը կիրականացվեն այցելություններ ծննդատներ՝ կտրամադրվեն նվերներ հունիսի 1-ին ծնված երեխաներին:

Կկազմակերպվի երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված շրջիկ տիկնիկային թատրոնի ներկայացում «Մարի Իգմիրլյանի անվան մասնագիտացված մանկատուն» և «Երևանի Մանկան տուն» ՊՈԱԿ-ների երեխաների համար, կտրամադրվեն նաև նվերներ:

Նախատեսվում է երեխաների փուլային այցելություններ մայրաքաղաքի մշակութային կենտրոններ՝ գրադարաններ, թանգարաններ, շրջայց «Միթի տուր» ծրագրով, այցելություններ քաղաքային պանթեոն և Հայաստանի պատմական արժեք ունեցող այլ վայրեր:

3.Խնամքի հաստատություններում գտնվող երեխաների իրավունքների պաշտպանության ապահովում

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է խնամքի և պաշտպանության հաստատություններում խնամվող երեխաների՝ ընտանիքում ապրելու իրավունքի իրացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Յուրաքանչյուր տարի վարչական շրջանների խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովների, բուժհաստատությունների և շահագրգիռ այլ կառույցների հետ համատեղ իրականացվում են միջաջառումներ ուղղված՝ մանկալքության դեպքերի կանխարգելմանը:

ՄՇԱԿՈՒՅԹ

Մշակույթի ոլորտում նախատեսվող և իրականացվող ծրագրերի նպատակն է բարձրացնել մշակույթի դերը, պահպանել և տարածել ազգային մշակութային ժառանգությունը, խթանել անհատի, ինչպես նաև հասարակության ստեղծագործական ներուժը, ապահովել ազգային մշակութային ավանդական ձևերի պահպանումը և զարգացումը՝ կապ ստեղծել միջազգային մշակութային կառույցների հետ՝ ապահովելով այդ կառույցներին ինտեգրումը:

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են 73 համայնքային ոչ առևտրային կազմակերպություններ և 1 փակ բաժնետիրական ընկերություն՝ 25 երաժշտական և արվեստի ու 1 կերպարվեստի դպրոցներ, 19 գրադարան, 15 մշակույթի, գեղագիտական կենտրոններ և տներ, 5 թանգարան, 3 թատրոն, 2 մանկական ֆիլիարմոնիաներ, «Երևան» փողային նվագախումբ, Արաբկիրի մշակութային կենտրոն, Կենդանաբանական այգի ՀՈԱԿ-ները և «Հայ-Արտ» ՓԲԸ-ն: 2015 թվականին Երևան համայնքի կողմից հիմնադրվել և գործում են «Ֆ. Նանսենի անվան թանգարանը» և «Արաբկիրի մշակույթի կենտրոն» ՀՈԱԿ-ները:

Գրադարաններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 19 գրադարան և 20 մասնաճյուղ: Բնակչությանը գրադարանային տեղեկատվության սպասարկումն իրականացնելուն զուգահեռ տարիքային տարբեր խմբերի համար իրականացվում է ազատ ժամանցի կազմակերպում՝ գրական, գրական-երաժշտական երեկոներ, գրքերի շնորհանդեսներ, մանկապատանեկան գրքի և երաժշտության շաբաթ, Ազգային գրադարանային շաբաթ, ինչպես նաև՝ հանդիպումներ մշակույթի և արվեստի անվանի գործիչների հետ: Միաժամանակ իրականացվում է ազգային, պետական, հոգևոր տոներին ու հիշարժան տարեթվերին նվիրված գրքային և մշակութային-թեմատիկ ցուցահանդեսներ, հանդիպումներ, շնորհանդեսներ, քննարկումներ, դասախոսություններ, ֆիլմերի դիտումներ և այլն: Ավանդաբար դարձած գրադարանավարի օրվան նվիրված «Հանդիպման վայրը գրադարան» միջոցառումը կազմակերպվում է յուրաքանչյուր տարի:

Հիմնախնդիրներ

1. Մշակույթի բնագավառում տեղեկատվական-հաղորդակցական, նորագույն տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում և կիրառում, ինչպես նաև մշակութային արժեքների թվայնացման գործընթացի խթանում:
2. Տեխնիկական-տեղեկատվական բազայի վերազինում և համալրում:
3. Գրականության համալրում:
4. Գրադարանային գույքի համալրում:

Թանգարաններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 5 թանգարան՝ Երևան քաղաքի պատմության, Ժամանակակից արվեստի, Կարեն Դեմիրճյանի, Ֆրիտյոֆ Նանսենի անվան թանգարանները և «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը, որոնց գործունեությունը նպատակաուղղված է մշտական ցուցադրություն և ժամանակավոր ցուցահանդեսների կազմակերպմանը, գիտահետազոտական աշխատանքներին, միջոցառումների կազմակերպմանը: Յուրաքանչյուր տարի կազմակերպվում են ամենամյա դարձած «Թանգարանային գիշեր», «Եվրոպական ժառանգության օրեր», «Հուշարձանների միջազգային օր»,

ինչպես նաև ազգային, պետական և հիշարժան տարերվերին նվիրված միջոցառումներ և ցուցահանդեսներ:

Հիմնախնդիրներ

1. Թանգարանային նմուշների ամրակայում, վերականգնում, ֆոնդապահոցներում և ցուցադրությունում թանգարանային առարկայի անվտանգ և անհրաժեշտ պայմանների ապահովում:
2. Թանգարաններում տեղեկատվական-հաղորդակցական, նոր տեխնոլոգիաների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում:
3. Ֆոնդապահոցների ջերմախոնավային համակարգի ստեղծում և առկա համակարգերի բարելավում և վերազինում:
4. Մեղիա ոլորտի հետ ակտիվ համագործակցություն և մշակութային արժեքների թվայնացման գործընթացի խթանում:
5. Վերականգնման արվեստանոցների վերազինում անհրաժեշտ նյութերով և տեխնիկայով, վերականգնողների վերապատրաստում միջազգային կենտրոններում:
6. Թանգարանային գիտաշխատողների վերապատրաստում արտերկրի հեղինակավոր թանգարաններում:
7. Թանգարանային հավաքածուների և արխիվի գիտական հետազոտություն և ուսումնասիրում՝ ուսումնասիրման արդյունքները հանրությանը ներկայացում:

Թատրոններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 3 թատրոն՝ Հր.Ղափլանյանի անվան դրամատիկական, Պատանի հանդիսատեսի և Մհեր Մկրտչյանի անվան արտիստական թատրոնները:

Յուրաքանչյուր տարի, թատրոնների խաղացանկերը համալրելու նպատակով, նախատեսվում է իրականացնել շուրջ 10 նոր բեմականացում:

Հիմնախնդիրներ

1. Նորագույն տեխնոլոգիաների, սարքավորումների և էլեկտրոնային կառավարման համակարգերի ներդրում ու կիրառում:
2. Նոր ստեղծագործություններով խաղացանկի համալրում:
3. Երիտասարդ ստեղծագործական ներուժի ընդգրկում:

Երաժշտական և արվեստի դպրոցներ

Երևան քաղաքում գործում է երաժշտական, արվեստի և կերպարվեստի 26 դպրոց:

Նախատեսվում է երաժշտական և արվեստի դպրոցների սաների համերգների, հանրապետական ու միջազգային մրցույթների մասնակցություն, փառատոնների կազմակերպում և մասնակցություն: Կկազմակերպվի երաժշտական և արվեստի դպրոցների մրցույթ-փառատոն և լավագույն սաներին կընձեռնվի հնարավորություն ելույթ ունենալու կամերային և սիմֆոնիկ նվագախմբերի հետ:

Հիմնախնդիրներ

1. Երաժշտական և արվեստի դպրոցների անհրաժեշտ գույքով և երաժշտական գործիքներով համալրելու ծրագրի շարունակություն:

2. Հաշմանդամություն ունեցող և ծնողագուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների երեխաների ընդգրկվածության մեծացման նպատակով կրթական և սոցիալական ծրագրերի ընդլայնում:

3. Հավազույն սաների բացահայտում, հանրապետական և միջազգային հարթակներում ներկայանալու համար նպաստավոր պայմանների ստեղծում:

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում

Շարունակվելու է երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման ծրագիրը՝ միտված մոռացվող ազգային նվագարանների և հայ երաժշտական ավանդույթների պահպանմանը, տարածմանը և հանրահռչակմանը:

Հիմնախնդիրներ

1. Ազգային, լարային և փողային նվագարանների զարգացման և տարածման գործընթացի համար նշված նվագարանների գծով աշակերտների թվի ավելացում

Մշակույթի տներ և գեղագիտական կենտրոններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում է 16 մշակույթի տուն և գեղագիտական, ստեղծագործական ու մշակութային կենտրոններ:

Մշակույթի տներում, գեղագիտական, ստեղծագործական կենտրոններում նախատեսվում է պետական, ազգային տոներին և հիշարժան տարեթվերին նվիրված մշակութային միջոցառումների, համերգային ծրագրերի, ցուցահանդեսների կազմակերպում:

Հիմնախնդիրներ

1. Անհրաժեշտ գույքի, երաժշտական գործիքների, սարքավորումների ապահովում և համալրում:

2. Բնակչության ինտեգրումը մշակութային ծրագրերին:

Այլ մշակութային կազմակերպություններ

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործում են «Հայաստանի փոքրիկ երգիչներ», «Յու. Բախշյանի անվան մանկական ֆիլհարմոնիա», «Երևան» փողային նվագախումբ» ՀՈԱԿ-ները և «Հայ-Արտ» մշակութային կենտրոն» ՓԲԸ-ն:

Մանկական ֆիլհարմոնիաները միավորում են երաժշտական, արվեստի դպրոցների երաժշտական բացառիկ ընդունակություններով օժտված երեխաներին, օժանդակում են գործող երաժշտական և արվեստի դպրոցներում լավագույն ուժերի բացահայտմանը և նրանց ունակությունների դրսևորման համար նպաստավոր պայմանների ստեղծմանը, հարթակների ապահովմանը:

Նախատեսվում է ապահովել վերոնշյալ կազմակերպությունների մասնակցությունը համերգների, փառատոնների, ցուցահանդեսների ինչպես Հայաստանում, այնպես էլ արտերկրում: Մեծացնել հանրության հետ շփման շրջանակը, որը կիսթանի կազմակերպության որակի բարձրացմանն ու հանրահռչակմանը:

Հիմնախնդիրներ

1. Անհրաժեշտ գույքի, սարքավորումների ապահովում և համալրում:

2. Բնակչության ինտեգրումը մշակութային ծրագրերին:

Երևանի կենդանաբանական այգի

Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ է գործում Երևանի կենդանաբանական այգին: Այգու նպատակը վայրի կենդանիների պահպանումն է, վերացող կենդանիների բազմացումն ու ցուցադրումը: Այգում աշխատանքներ են տանում կենդանիների բնական աճի ավելացման, նոր կենդանիների ձեռքբերման և փոխանակման միջոցով նոր տեսականիով ապահովելուն: Այգին նաև զբոսանքի և ժամանցի յուրատեսակ վայր է, որը հնարավորություն է ընձեռում այցելուներին ծանոթանալու վայրի բնաշխարհին, իրականացնում է մշակութային-լուսավորչական գործառնություն:

Հիմնախնդիրներ

1. Նոր ազատավանդակների կառուցում և տարածքի ընդլայնում:
2. Այգում առկա ջրային ռեսուրսների վերամշակման և վերօգտագործման կենտրոնի ստեղծում:
3. Կենտրոնացված ջեռուցման համակարգի ներդրում:
4. Կերախոհանոցի կառուցում:
5. Այգու սահմանագծով պարսպապատում:
6. Կենդանաբանական այգու վերակառուցման և արդիականացման ծրագրի շարունակության ապահովում:

Մշակութային միջոցառումներ

Իրականացվում է պետական և ազգային տոներին նվիրված միջոցառումների շարք՝ Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին, Թատրոնի միջազգային օրվան, «Գարնանամուտ», Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան, Թանգարանների միջազգային օրվան, «Գարուն-Երևան», «Ողջուն Երևանից Ստեփանակերտին», «Վերջին զանգ», Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոնին, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոնին, Զազի միջազգային օրվան, Երիտասարդության միջազգային օրվան, «Երևանյան ամառ» եռամսյա ծրագրին, «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնին, Երևանի օրերը Մոսկվայում, «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը, «Գրադարանավարի օրվան» և հայ ականավոր գործիչների և մտավորականների հիշարժան տարեթվերին:

Միջազգային և տեղի հանրությանը հետաքրքրող միջոցառումների իրականացում՝ խթանելով մայրաքաղաքի զբոսաշրջության ոլորտի զարգացմանը:

Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ մայրաքաղաքում տարվա կտրվածքով նախատեսվում է անցկացնել նաև միջազգային միջոցառումների շարք և մշակութային ծրագրեր ու նախագծեր՝ «Ոսկե Ծիրան» միջազգային կինոփառատոն, «ՀայՖեստ» միջազգային թատերական փառատոն, «Երևանյան հեռանկարներ» միջազգային փառատոն, «Ռեանիմանիա» Երևանի միջազգային անիմացիոն կինոյի և պատկերապատման արվեստի փառատոն և այլն:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1.«Արտադպրոցական դաստիարակություն» ծրագիր (երաժշտական և արվեստի դպրոցներ, մանկապատանեկան ստեղծագործության և գեղագիտական կենտրոններ)

Ծրագրի նպատակ

Նպատակն է իրականացնել մշակութային նախնական մասնագիտական կրթություն, արտադպրոցական գեղագիտական դաստիարակություն, ազգային և համաշխարհային մշակութային ժառանգության ծանոթացում և ուսուցում, նախապատրաստել օժտված և

տաղանդավոր երեխաներին համապատասխան միջին և բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումը շարունակելու համար, իրականացնել մշակութային կրթության և գեղագիտական դաստիարակության տարբեր ձևերի ուսուցում, բնակչության սոցիալական և տարիքային տարբեր խմբերի համար արվեստի զանազան ճյուղերի, մշակույթի և արհեստների ուսուցողական ծրագրեր:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է երաժշտական և արվեստի դպրոցներում դպրոցահասակ երեխաների մշակութային նախնական մասնագիտական կրթության, արտադպրոցական գեղագիտական դաստիարակության, երաժշտարվեստի և արվեստների ուսուցման իրականացում:

Նախատեսվում է արտադպրոցական կազմակերպություններում գերազանց սովորող երեխաների համար կազմակերպել անվճար ուսուցում՝ համայնքային պատվերի համակարգի ներդրման միջոցով:

Նախատեսվում է ապահովել արտադպրոցական կազմակերպությունների շենքերի վերանորոգման և հիմնանորոգման շարունակականությունը:

2. Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում

Ծրագրի նպատակ

Նպատակը լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության իրականացումն է, սովորողների ազատ ժամանցի կազմակերպման միջոցով նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմաններ ստեղծելն է, նրանց հոգևոր, ստեղծագործական ունակությունների, գեղագիտական, ֆիզիկական զարգացումը, սպորտային, ռազմահայրենասիրական դաստիարակությունը, բնապահպանական և կիրառական գիտելիքների ձևավորումը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Լրացուցիչ կրթադաստիարակչական բնույթի գործունեության միջոցով երեխաների, պատանիների և մեծահասակների համար ազատ ժամանցի կազմակերպում, նրանց հետաքրքրությունների զարգացման համար պայմանների ապահովում:

3. Մշակութային միջոցառումների կազմակերպում

Ծրագրի նպատակ

Երևան քաղաքի բնակչության լայն զանգվածների ընդգրկումը պետական, ազգային և այլ միջոցառումներին, ինչպես նաև ազգային մշակույթի և արվեստի հաղորդակցվելու մատչելիության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երևան քաղաքում պետական, ազգային և այլ մասսայական միջոցառումների կազմակերպում և անցկացում՝ նվիրված Ամանորին, Մայրության և գեղեցկության տոնին, Թատրոնի միջազգային օրվան, «Գարնանամուտ», Ցեղասպանության զոհերի հիշատակի օրվան, Թանգարանների միջազգային օրվան, «Ողջույն Երևանից Ստեփանակերտին», «Վերջին զանգ», Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան, Արամ Խաչատրյանի անվան պատանի ստեղծագործողների ամենամյա մրցույթ-փառատոնին, Երևան քաղաքի երաժշտական և արվեստի դպրոցների ստուգատես-փառատոնին, Ջազի միջազգային օրվան, «Երևանյան ամառ» եռամսյա ծրագրին, «Երևանյան հեռանկարներ» միջազգային երաժշտական փառատոնին, Երևանի օրերը Մոսկվայում և Սանկտ Պետերբուրգում, «Էրեբունի-Երևան» տոնակատարությանը, «Գրադարանավարի օրվան» և հայ ականավոր գործիչների և մտավորականների հիշարժան տարեթվերին:

4.Արտադարձական կազմակերպությունների համար գույքի ձեռքբերման ծրագիր

Ծրագրի նպատակ

Երաժշտական և արվեստի դպրոցների աշխատանքն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով անհրաժեշտ գույքով՝ երաժշտական գործիքներով և համապատասխան գույքով ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երաժշտական և արվեստի դպրոցների ժամանակակից պահանջներին համապատասխան գույքով և երաժշտական գործիքներով ապահովում: Նախատեսվում է ձեռքբերել մոտ 150 անուն նոր գործիք:

5.«Արտադարձական դաստիարակություն» երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցում

Ծրագրի նպատակ

Ազգային, լարային և փողային նվագարանների զարգացման և տարածման գործընթացի համար ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսման վարձավճարի փոխհատուցման ավելացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երաժշտական և արվեստի դպրոցներում ազգային, լարային և փողային նվագարանների գծով ուսուցման կազմակերպում: Ծրագիրը գործում է 2007 թվականից, որի արդյունքում նշված դպրոցներում բացվել են ազգային նվագարանների նոր դասարաններ՝ խթանելով ազգային գործիքների պահպանմանը, զարգացմանը և տարածմանը, ինչպես նաև ծրագրի արդյունքում կարևորվում է դասական երաժշտական՝ լարային և փողային գործիքների պրոպանգանդումը: Ծրագրի շրջանակում սովորում են 610 երեխա, որից 328-ը՝ ազգային, 143-ը՝ լարային և 139-ը՝ փողային դասարաններում:

6.Գրադարանային ծառայություն

Ծրագրի նպատակ

Բնակչության գրադարանային տեղեկատվության սպասարկում, ազատ ժամանցի կազմակերպում, հայ և համաշխարհային գրականության հանրահռչակում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Բնակչության գրադարանային տեղեկատվության տրամադրում և սպասարկում, գիտության և մշակույթի լուսաբանում ու մասսայականացում, գիտատեխնիկական գիտելիքների տարածում, գեղագիտական դաստիարակություն, կրթական համակարգի օժանդակում, համաշխարհային և հայ գրականության, պատմության, մշակույթի և այլ արժեքների տարածում, բնակչության ազատ ժամանցի կազմակերպում:

Նախատեսվում է բարձրացնել գրադարանների կենսագործունեության և կառավարման արդյունավետությունը և ապահովել հասանելիությունը՝ նոր տեխնոլոգիաների կիրառմամբ:

7.Թանգարանային ծառայություններ և ցուցահանդեսներ

Ծրագրի նպատակ

Բնակչությանը մշակութային արժեքներին ծանոթացնելը, հանրահռչակելը, ցուցահանդեսների կազմակերպումը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է ժամանակակից և միջին սերնդի արվեստի գործերի ցուցադրություն, գիտական, կրթական գործունեության իրականացում, Երևան քաղաքի պատմությունը, կենցաղն ու մշակույթը ներկայացնող թանգարանային առարկաների և հավաքածուների պահպանում, հայտնաբերում, ուսումնասիրում, թանգարանային ֆոնդի համալրում՝ գնման, հնագիտական պեղումների,

նվիրատվությունների հաշվին, ինչպես նաև թանգարանային ֆոնդերի գիտական ուսումնասիրություններ, որոնց արդյունքում կազմակերպվում են նոր ցուցադրություններ:

8.«Էրեբունի պատմահնագիտական արգելոց-թանգարան» ՀՈԱԿ-ի վերակառուցման-արդիականացման ծրագիր

Ծրագրի նպատակ

Էրեբունի հնավայրի վերականգնում, զբոսաշրջության խթանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան»-ում իրականացվող Էրեբունի հնավայրի վերականգնման և այցելուների սպասարկման բարելավման նախագիծը շարունակական բնույթ է կրելու: Թանգարանի տարածքում կատարվում են գիտական ուսումնասիրություններ, պեղումներ: Նախատեսվում է վերականգնել թանգարանի շենքը և միջնաբերդը, Խալդի աստծո տաճարը, Արգիշտի արքայի պալատը, զիկուրատը, կարասային սրահը, ամֆիթատրոնը, որտեղ կբեմադրվեն թատերականացված ներկայացումներ Երևան քաղաքի պատմական անցյալի վերաբերյալ, հանգստի գոտին, որտեղ կստեղծվի ուրարտական ժամանակաշրջանի խոհանոցի ներկայացման հնարավորություն, ինչպես նաև ուրարտական մշակույթին բնորոշ և պատմական միջավայրը ցուցադրող այլ տարրեր, վարչական շենքը, հուշանվերների խանութը, ցանկապատը, ավտոկայանատեղին:

9.Թատերական ներկայացումներ

Ծրագրի նպատակ

Ազգային թատերարվեստի ավանդույթների պահպանում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում, հին բեմադրությունների վերականգնում, նոր բեմադրությունների ներկայացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Բնակչությանն ազգային թատերարվեստի լավագույն նմուշների ներկայացում, դասական և ժամանակակից լավագույն ստեղծագործությունների բեմադրում: Յուրաքանչյուր տարի նախատեսվում է 9-10 նոր ներկայացումների բեմադրում:

10.Կենդանաբանական այգու ցուցադրություններ

Ծրագրի նպատակ

Վայրի կենդանիների պահպանում, վերացող կենդանիների բազմացում և ցուցադրում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է Երևանի կենդանաբանական այգու վայրի կենդանիների պահպանում, Կարմիր գրքում գրանցված և վերացող կենդանիների բազմացում ու ցուցադրում: Այգու աշխատանքներ են տարվում կենդանիների բնական աճի ավելացման, նոր կենդանիների ձեռքբերման և փոխանակման միջոցով նոր տեսականիով ապահովելու նպատակով: Այգին նաև զբոսանքի և ժամանցի յուրատեսակ վայր է, որը հնարավորություն է ընձեռում այցելուներին ծանոթանալու վայրի բնաշխարհին, իրականացնում է մշակութային-ճանաչողական գործառնություն՝ այցելուներին տալիս է ինչպես բնապահպանական դաստիարակություն, այնպես էլ ձևավորում է շրջակա միջավայրի նկատմամբ հոգատար և մարդասիրական վերաբերմունք:

11.Կենդանաբանական այգու հիմնանորոգման ծրագիր

Ծրագրի նպատակ

Ժամանակակից չափանիշներին համապատասխան այգու հիմնանորոգում և վերակառուցում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Տարիների ընթացքում իրականացվել և շարունակվում է իրականացվել կենդանաբանական այգու վերակառուցման ծրագիրը՝ վերակառուցվել է խոշոր կատվազգիների ազատավանդակը, կառուցվել է լեմուրների կղզին, իրականացվել է լճակի և կղզու վերանորոգում, կառուցվել է ներառական խաղահրապարակը, տոմսարկղը և կենդանաբուծական կլինիկան, վերանորոգվել են ջրագծերը և էլեկտրական մալուխները, իրականացվել է այգու տարածքում սիգամարգերի տեղադրում: Նախատեսվում է այգու արդիականացման գործընթացի շարունակություն, նոր ազատավանդակների կառուցում և տարածքի ընդլայնում, առկա ջրային ռեսուրսների վերամշակման և վերօգտագործման կենտրոնի ստեղծում, կենտրոնացված ջեռուցման համակարգի ներդրում, կերախոհանոցի կառուցում, այգու սահմանագծով պարսպապատում:

12.Երաժշտարվեստի և պարարվեստի համերգների կազմակերպում

Ծրագրի նպատակ

Երաժշտարվեստի բնագավառում հասարակության հոգևոր պահանջների ձևավորումն ու բավարարումը, ազգային երաժշտական կատարողական արվեստի պահպանումը, տարածումը և զարգացումը, ցուցահանդեսների կազմակերպումը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է ազգային երաժշտական կատարողական արվեստի ավանդույթների պահպանում, տարածում ու զարգացում, դասական և ժամանակակից երաժշտական ստեղծագործությունների կատարում: Ներկայացնել երաժշտական և ձայնային ընդունակություններով օժտված երեխաների ստեղծագործական, մասնագիտական հետաքրքրությունները, միջոցառումների և մրցույթների, այդ թվում, համաքաղաքային, հանրապետական մրցույթների, փառատոների կազմակերպումը և միջազգային մրցույթներին, փառատոներին մասնակցության ապահովումը:

13.«Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանի հիմնադրման ծրագիր

Ծրագրի նպատակ

«Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանի հիմնադրում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

«Հրանտ Մաթևոսյան» մշակութային կենտրոն-թանգարանի համար նախատեսված շենքի կառուցման ավարտից հետո նախատեսվում է հիմնադրել նշված մշակութային կենտրոն-թանգարանը, որի նպատակն է՝ հայ ականավոր արձակագիր, կինոսցենարիստ Հրանտ Մաթևոսյանի կյանքն ու գործունեությունը ներկայացնող թանգարանային առարկաների և թանգարանային հավաքածուների պահպանումը, հայտնաբերումն ու հավաքումը, մշակութային գործունեության իրականացումը և ցուցահանդեսների կազմակերպումը:

14.Էրեբունի-Երևան 2800-ամյակի հոբելյանական միջոցառումների կազմակերպում

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է նշել մայրաքաղաքի հոբելյանական՝ 2800-ամյակը, ինչպես նաև հայաստանյան և միջազգային հասարակայնությանը ներկայացնել Երևանի բազմադարյան պատմությունը և մշակույթը, որը կխթանի նաև զբոսաշրջության ոլորտի զարգացմանը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

2018թ. լրանում է Երևանի հիմնադրման 2800-ամյակը, որը նախատեսվում է նշել մեծ շուքով: «Էրեբունի Երևան 2800» տոնակատարությունների շրջանակում Երևան քաղաքի բոլոր հատվածներում կիրականացվեն բազմաբովանդակ և բազմաբնույթ մշակութային, կրթական-ձանաչողական, մարզական բնույթի ծրագրեր և միջոցառումներ: Ամենուրեք կիրականացվեն

տարաբնույթ ֆլեշմոբեր, մայրաքաղաքի տարբեր վայրերում և վարչական շրջաններում տեղատրված հարթակներում կանցկացվի բազմաժանր համերգային ծրագրեր, միջոցառումներ, որոնք կեզրափակվեն շքեղ հրավառությամբ: Կատեղծվի հայկական զարդանախշերով հորելյանական գորգ Երևանի հիմնադրման 2800-ամնակին: Առանձնահատուկ կերպով կարևորվելու են Էրեբունու հիմնադրման իրադարձությունների պատմական բեմականացումները, որոնք ոչ միայն միտված են լինելու արժևորելու փառավոր անցյալը, այլև ձևավորելու համաքաղաքային պատմամշակութային միջավայր արդի մայրաքաղաքում: Երևանցիներին և մայրաքաղաքի հյուրերին կներկայացվի վերակառուցման և արդիականացված ծրագրով նորովի տեսք ստացած «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանը: Երևան քաղաքի մարդաշատ վայրերում կիրականացվեն կերպարվեստի ինտերակտիվ վարպետության դասեր:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանի կողմից վերջին տարիներին իրականացվող բազմաշերտ ու բազմոլորտ միջազգային համագործակցության արդյունքում առկա են ձեռքբերումներ, հաջողված ծրագրեր և համագործակցության ընդլայնում, իսկ հետագա ծրագրերի իրագործումը նպատակաուղղված է լինելու Երևան քաղաքի ճանաչելիության բարձրացմանը, ինչն էլ իր հերթին կնպաստի համայնքի զարգացմանը և նրա բնակիչների կյանքի որակի բարձրացմանը: Երևանի քաղաքապետարանը համագործակցում է արտերկրի ավելի քան 50 քաղաքների հետ և անդամակցում է միջազգային 8 կազմակերպությունների, որոնց հետ ունի լայն պայմանագրային դաշտ և համատեղ իրականացվող տարբեր ծրագրեր:

Երևանի քույր քաղաքներ

- | | |
|------------------------------|--------------------------|
| • Լոս Անջելես (ԱՄՆ) | • Կարաբա (Իտալիա) |
| • Քեմբրիջ (ԱՄՆ) | • Մոնրեալ (Կանադա) |
| • Ամման (Հորդանան) | • Նովոսիբիրսկ (ՌԴ) |
| • Անտանանարիվու (Մադագասկար) | • Դոնի Ռոստով (ՌԴ) |
| • Անտոնի (Ֆրանսիա) | • Ստավրոպոլ (ՌԴ) |
| • Մարսել (Ֆրանսիա) | • Վոլգոգրադ (ՌԴ) |
| • Նիցցա (Ֆրանսիա) | • Ռիգա (Լատվիա) |
| • Բեյրութ (Լիբանան) | • Սան Պաուլու (Բրազիլիա) |
| • Բրատիսլավա (Սլովակիա) | • Սպահան (Իրան) |
| • Բուենոս Այրես (Արգենտինա) | • Վենետիկ (Իտալիա) |
| • Դամասկոս (Սիրիա) | • Քիշնև (Մոլդովա) |
| • Թբիլիսի (Վրաստան) | • Օդեսա (Ուկրաինա) |

Երևանի գործընկեր քաղաքներ

- | | |
|--|--|
| • Աթենք (Հունաստան) | • Մոսկվա (ՌԴ) |
| • Աշգաբադ (Թուրքմենստան) | • Ղազվին (Իրան) |
| • Փարիզ (Ֆրանսիա) | • Մինսկ (Բելառուս) |
| • Առնուվիլ (Ֆրանսիա) | • Պեզարո (Իտալիա) |
| • Դրագինյան (Ֆրանսիա) | • Տոսկանայի մարզ (Իտալիա) |
| • Պլեսի Ռոբինսոն (Ֆրանսիա) | • Պեկին (Չինաստան) |
| • Վիեն (Ֆրանսիա) | • Պողգորիցա (Չեռնոգորիա) |
| • Իլ դը Ֆրանս շրջանային խորհուրդ (Ֆրանսիա) | • Ռիո դե Ժանեյրո (Բրազիլիա) |
| • Լիոն (Ֆրանսիա) | • Սոֆիա (Բուլղարիա) |
| • Բուխարեստ (Ռումինիա) | • Ստեփանակերտ (Արցախի Հանրապետություն) |
| • Դելի (Հնդկաստան) | • Վարշավա (Լեհաստան) |
| • Խանթի-Մանսիյսկ (ՌԴ) | • Վուլբի (Ավստրալիա) |
| • Կալինինգրադ (ՌԴ) | • Տալին (Էստոնիա) |
| • Կրասնոդար (ՌԴ) | • Կիև (Ուկրաինա) |
| • Սանկտ Պետերբուրգ (ՌԴ) | |

Միջազգային կազմակերպություններ

- «Քաղաքապետները հանուն խաղաղության» կազմակերպություն
- ԱՊՀ երկրների, մայրաքաղաքների և խոշոր քաղաքների միջազգային համաժողով (IAC)
- «Տեղական բնապահպանական նախաձեռնությունների միջազգային խորհուրդ» (International Council for Local Environmental Initiatives-ICLEI)
- Ֆրանսախոս քաղաքապետների միջազգային ասոցիացիա (AIMF)
- Միջազգային քաղաքային համայնքների լուսավորում ասոցիացիա (LUCI)
- Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքների կազմակերպություն
- Սևծովյան մայրաքաղաքների ասոցիացիա (BSCA)
- «Եվրոսիթիս» ասոցիացիա

Միջազգային համագործակցություն

- ԵՄ «Քաղաքապետների դաշնագիր» նախաձեռնություն
- Հայ-ֆրանսիական ապակենտրոնացած համագործակցություն

Վերջին շրջանում ծավալվող համագործակցությունն ամրագրվում է 2-5 տարվա կտրվածքով: Երևան քաղաքը համագործակցության լայնածավալ ծրագրեր է իրականացնում Ստեփանակերտի, Մոսկվայի, Փարիզի, Թեհրանի, Ռիգայի, Վիեննայի, Սանկտ-Պետերբուրգի, Մարսելի, Լիոնի, Պլեյի Ռոբինսոնի և այլ քաղաքների հետ:

Վերջին տարիներին Երևան քաղաքը հիմնել է նոր համագործակցություններ Ռիգա (Լատվիա) 2013թ., Խանտի Մանսիսկ (ՌԴ) 2014թ., Աշխաբադ (Ղազախստան) 2014թ., Ամման (Հորդանան) 2014թ., Նովոսիբիրսկ (ՌԴ) 2014թ., Կրասնոդար (ՌԴ) 2014թ., Անտոնի (Ֆրանսիա) 2014 թ. և Վուլբրի (Ավստրալիա) 2017թ. քաղաքների հետ:

Հիմնախնդիրներ

1. Երկկողմ և բազմակողմ համագործակցության ուղղում Երևանում կոնկրետ և արդիական ծրագրերի իրականացմանը:
2. Երևանի քաղաքային տնտեսության տարբեր բնագավառներում միջազգային համագործակցության շրջանակներում հնարավոր ռեսուրսների ներգրավման ակտիվացում:
3. Արտերկրի մայրաքաղաքների և խոշոր քաղաքների հետ եղբայրացման համաձայնագրերի կնքում՝ համագործակցության հստակ ուղղություններով ու կոնկրետ պայմանավորվածությունների ձեռքբերմամբ և բազմակողմ համագործակցության աշխարհագրության ընդլայնմամբ:
4. Միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ գործընկերային կապերի ընդլայնում, ներկայացվածության ապահովում, երկկողմ այցերի կազմակերպում:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1.Էրեբունի-Երևան 2800-ամյակի հոբելյանական միջոցառումների իրականացման հետ կապված նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքներ

Ծրագրի նպատակ

Ծրագրի նպատակն է Էրեբունի-Երևան 2800-ամյակի կապակցությամբ կազմակերպել հոբելյանական, ներկայացուցչական միջոցառումներ, համաժողովներ, գիտաժողովներ և այլ միջոցառումներ:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Հաշվի առնելով մայրաքաղաք Երևանի համաշխարհային մակարդակով բացառիկ հոբելյանական տարիքը և ներկայացուցչական միջոցառումների կարևորությունը՝ նախատեսվում է հյուրընկալել Երևանի քույր և գործընկեր քաղաքների քաղաքապետների գլխավորած պատվիրակություններ, անցկացնել գիտաժողով, համաժողով, կազմակերպել մշակութային և այլ ծրագրեր:

2.Մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունների ընդլայնում

Ծրագրի նպատակ

Մայրաքաղաքի գործընկերային հարաբերությունների ընդլայնում՝ համագործակցության համաձայնագրերի կնքում, թարմացում, առկա համաձայնագրերի շրջանակում կապերի ակտիվացում:

Ծրագրի նպատակն է ներգրավել օտարերկրյա ներդրումներ, ինչպես նաև աջակցել զբոսաշրջության զարգացմանը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

- ստորագրել համագործակցության համաձայնագրեր Քաթարի մայրաքաղաք Դոհայի, Ավստրիայի մայրաքաղաք Վիեննայի, Սլովենիայի մայրաքաղաք Լյուբլյանայի, Եգիպտոսի Արաբական Հանրապետության մայրաքաղաք Կահիրեի, ԻԻՀ Շիրազ, Հունաստանի Ալեքսանդրապոլիս, Մարոկկոյի Տետուան և ՌԴ Չերոկսարի քաղաքների հետ,
- ակտիվացնել համագործակցության կապերը արդեն իսկ կնքված համագործակցության համաձայնագրերի շրջանակներում (Փարիզ, Լոս Անջելես, Վենետիկ, Ռիգա, Սոֆիա, Աթենք, Բեյրութ, Լիոն, Մարսել, Քեմբրիջ (Միացյալ թագավորություն) և այլն,
- թարմացնել համագործակցության համաձայնագրերը ԱՄՆ Մասաչուսեթս նահանգի Քեմբրիջ քաղաքի, Մոնտենեգրոյի մայրաքաղաք Պոդգորիցայի, Բելառուսի մայրաքաղաք Մինսկի, Իտալիայի Տոսկանա և Կանադայի Մոնրեալ քաղաքների հետ,
- կնքել 2018-2020թթ. համագործակցության ծրագիր Երևանի քաղաքապետարանի և Մոսկվայի կառավարության միջև, անցկացնել Երևանի օրերը Մոսկվայում,
- Երևանի քաղաքապետարանի և Սանկտ Պետերբուրգի կառավարության միջև կնքված համագործակցության ծրագրի շրջանակներում նախատեսվում է անցկացնել Երևանի օրերը Սանկտ Պետերբուրգում,
- Երևանի քաղաքապետարանի և Ստեփանակերտի քաղաքապետարանի միջև 2015-2020թթ. համագործակցության ծրագրի շրջանակներում միջոցառումների իրականացում,
- աջակցել ներդրումային միջազգային ցուցահանդեսներին մասնակցության ապահովմանը, գործընկեր քաղաքներում ներդրումային շնորհանդեսների կազմակերպմանը, ակտիվացնել

Երևանի՝ տնտեսապես զարգացած գործընկեր քաղաքներից Երևան գործարար այցելությունների կազմակերպման աշխատանքները,

- ակտիվացնել կապերը Երևանի քաղաքապետարանի ու քույր և գործընկեր քաղաքների տուրիզմի պատասխանատուների միջև,
- իրականացնել Հորդանանի Հաշիմյան Թագավորության մայրաքաղաք Ամմանի հետ համատեղ ծրագրեր,
- իրականացնել եղբայրության պուրակներ և զբոսայգիներ հիմնելու ծրագրեր,
- խրախուսել և ընդլայնել վարչական շրջանների և գործընկեր քաղաքների, ինչպես նաև խոշոր քաղաքների վարչական միավորների միջև համագործակցությունը,
- տրամադրել տեղեկատվություն Երևանի քույր և գործընկեր քաղաքներին Երևանում անցկացվելիք միջոցառումների և փառատոնների վերաբերյալ:

3. Միջազգային համագործակցությունների շրջանակներում համատեղ ծրագրերի մշակում և միջոցառումների իրականացում

Ծրագրի նպատակ

Միջազգային համագործակցությունների շրջանակներում ծրագրերի իրականացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

- ակտիվացնել աշխատանքները սփյուռքի կառույցների և ՀՀ դիվանագիտական հաստատությունների հետ կոնկրետ ծրագրերի ներկայացման առումով, համագործակցել միջազգային և տարածաշրջանային կառույցների շրջանակներում,
- անցկացնել 2019թ. Հայ-Ֆրանսիական ապակենտրոնացված համագործակցության հերթական համաժողովը,
- ցուցաբերել ակտիվ մասնակցություն AIMF-ի ամենամյա գագաթաժողովներին, կազմակերպել փոխայցելություններ ֆրանսիական քույր և գործընկեր քաղաքների հետ և մշակել համատեղ ծրագրեր,
- AIMF-ի աջակցությամբ 2018թ. «Էրեբունու արժևորումն ու պահպանումն, արդյունավետությունը և տուրիստական բազմազանության առաջարկը» խորագիրը կրող ծրագրի իրականացում, որի նպատակն է հում աղյուսի արտադրման միջոցով «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի առանձին հատվածների վերականգնում,
- ցուցաբերել ակտիվ մասնակցություն «Եվրոսիթիս» ասոցիացիայի աշխատանքներին, ինչպես նաև ապահովել հնարավոր ներգրավում Եվրամիության կողմից ֆինանսավորվող ծրագրերին,
- ակտիվացնել համագործակցությունը «Համաշխարհային պատմական ժառանգության քաղաքներ» կազմակերպության հետ,
- ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս գործող միջազգային և տարածաշրջանային կառույցների հետ բանակցությունների վարում՝ տեխնիկական օժանդակության տրամադրման վերաբերյալ:

4. Համագործակցությունների շրջանակում քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների աշխատակիցների կարողությունների բարձրացում

Ծրագրի նպատակ

Քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների կարողությունների բարձրացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է քաղաքապետարանի կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումների, ինչպես նաև քաղաքապետարանի ենթակայության հաստատությունների աշխատակիցների վերապատրաստումների կազմակերպում և փորձագիտական աջակցություն, անհրաժեշտության դեպքում նաև օտար լեզուների դասընթացների կազմակերպում:

Ծրագրի շրջանակներում կիրականացվեն նաև փորձի փոխանակման ծրագրեր քույր և գործընկեր քաղաքների հետ համագործակցությունների շրջանակում, որը կներառի

- Երևանի և Թեհրանի քաղաքապետարանների ներկայացուցիչների փոխայցելություններ,
- Երևանի քաղաքապետարանի և Լիոնի Մետրոպոլի միջև համագործակցություն:


Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի և Երևանի քաղաքապետարանի միջև համագործակցության շրջանակներում մասնագիտական սեմինարների և փորձի փոխանակման ծրագրի շարունակական իրականացում՝ ֆրանսիական առաջատար մասնագետների մասնակցությամբ:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը աշխարհի հնագույն բնակավայրերից է: Երևանը, որպես համայն հայության մայրաքաղաք, գիտակրթական, մշակութային և հոգևոր զարկերակ, իր մեջ ներառում է հանրապետության գիտական, կրթական, մշակութային, բազմաթիվ կենտրոններ:

Մայրաքաղաք Երևանում զբոսաշրջության զարգացմանը նպաստել է ինչպես համաշխարհային զբոսաշրջության առաջընթացը, այնպես էլ Հայաստանի յուրօրինակ գրավչությունը: Երևանը մեծ ներուժ ունի զարգացած և ակտիվ, մասնագիտացված զբոսաշրջային լավագույն կենտրոնի ձևավորման համար ոչ միայն տարածաշրջանում, այլև՝ աշխարհում: Մայրաքաղաքը դեռևս ամբողջությամբ և արժանիորեն բացահայտված չէ զբոսաշրջիկների, երբեմն նաև՝ հենց քաղաքի բնակիչների կողմից:

Երևանը Հայաստանի Հանրապետության զբոսաշրջային շուկայում կարևոր դեր և նշանակություն ունի. այն ոչ միայն բազային զբոսաշրջային կենտրոն է հանդիսանում, այլև պետության հիմնական մշակութային և զբոսաշրջային ենթակառուցվածքների կենտրոն: Ըստ ՀՀ ազգային վիճակագրական ծառայության տվյալների՝ 2016թ. Հայաստան է ժամանել 1 259 657 զբոսաշրջիկ: 2015թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ այս ցուցանիշն աճել է 5.7%-ով (նկար 1): 2017թ. հունվար-հունիս ամիսներին ՀՀ է ժամանել 622 381 զբոսաշրջիկ կամ 2016թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ ցուցանիշն աճել է 24.2%-ով: Հայաստան ժամանող զբոսաշրջիկների գերակշիռ մասի համար Երևանը հանդիսանում է զբոսաշրջիկների առաջին հյուրընկալը և հիմնական հանգրվանը, որտեղ զբոսաշրջիկների մեծ մասն այցելում է մայիս-հոկտեմբեր ընկած ժամանակահատվածում:



Գծանկար 24 ՀՀ այցելող զբոսաշրջիկների թվաքանակը՝ ըստ տարիների

Զբոսաշրջային ծառայությունների արագ աճող պահանջարկը վերջին տարիներին

հանգեցրեց հյուրանոցների թվի աճին: 2017թ. հուլիս ամվա դրությամբ Երևանում գործում է 200 հյուրանոցային տնտեսության օբյեկտ՝ 13,5% գերազանցելով նախորդ տարվա ցուցանիշը: Մայրաքաղաքի հյուրանոցային տնտեսության օբյեկտներն ապահովում են 4594 համար և 8014 ննջատեղ:

Այժմ շուկայում գործում են այնպիսի հանրահայտ հյուրանոցային բրենդներ, ինչպիսիք են՝ «Արմենիա Մարիոթ», «Հայաթ Փլեյս», «Բեստ Վեստերն Կոնգրես», «Ռադիսոն Բլյու», «Դաբլ Թրի Բայ Հիլտոն»: 2017թ. մայրաքաղաքում պաշտոնապես բացվեց նաև «Աքքոր» հյուրանոցային ցանցին պատկանող «Իբիս» երեքաստղանի հյուրանոցը:

Ջրոսաշրջային կենտրոնի (դեստինացիայի) զարգացման գլխավոր նախապայմաններից է տվյալ տարածքում տարիների ընթացքում հետևողականորեն ոլորտի զարգացմանն ուղղված ներդրումների իրականացումը:

Այս ուղղությամբ Երևանում վերակառուցվում և արդիականացվում են մի շարք պատմամշակութային շենքեր, օբյեկտներ և ժամանցի վայրեր: Հատկանշական է Երևանի կենդանաբանական այգու վերակառուցումը, որի շնորհիվ այգին ունի բոլոր հնարավորությունները դառնալու Հայաստանի և Հարավային Կովկասի հարուստ կենսաբազմազանությունը ներկայացնող բազմագործառնությո՝ վայր բոլոր տարիքային խմբերի համար, որը հետաքրքիր է ինչպես Երևանի բնակիչների, այնպես էլ՝ զբոսաշրջիկների համար:

Քաղաքային զբոսաշրջության մյուս կարևոր բաղադրիչներից է 2016թ. վերակառուցված Երևանի ամենամեծ հուշանվերների բացօթյա տոնավաճառը՝ «Վերնիսաժ»-ը, որի շնորհիվ զբոսաշրջային կարևոր նշանակություն ունեցող այս վայրը դարձել է ներկայանալի ու հարմարավետ հանրային տարածք՝ հանգստի ու ժամանցի կազմակերպման համար:

Ներկայացնելով Երևան քաղաքի ռեսուրսային ներուժը, կարելի է ասել, որ այստեղ զբոսաշրջության զարգացման հիմնական ուղղությունը հանդիսանում է պատմամշակութային զբոսաշրջությունը. զբոսաշրջիկին հնարավորություն է ընձեռվում ծանոթանալու Երևանի քաղաքային պատմամշակութային ժառանգությանը, տեսարժան վայրերին, ազգային առանձնահատկություններին, յուրօրինակ խոհանոցին և այլն:

Վերջին տարիներին Երևանի քաղաքապետարանը որդերգրել է միջոցառումային զբոսաշրջության ուղու զարգացումը:

Ջրոսաշրջային ենթակառուցվածքների արդիականացման ծրագրերում մասնավոր ներդրողների գրավելու նպատակով մշակվել են ներդրումային փաթեթ-առաջարկներ: Այդ փաթեթները ներառում են «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի, Շենգավիթ հնավայրի, Կարմիր բլուր հնավայրի վերականգնման և զբոսաշրջային ենթակառուցվածքների ստեղծման, «Հաղթանակ» զբոսայգու տարածքի վերակառուցման և արդիականացման, Հրազդանի կիրճում արկածային ժամանցասպորտային կենտրոնի ստեղծման և այլ ծրագրեր:

Բազմաբնույթ ներդրումային ծրագրերը նպաստելու են Երևանի քաղաքակրթական ժառանգության արժանի ներկայացմանը, ցանկացած տարիքային խմբի համար հանգստի ու զվարճանքի ժամանակակից կենտրոնների ստեղծմանն ու կայացմանը:

Երևանը՝ որպես առաջատար զբոսաշրջային քաղաք, վերջին տարիներին պարբերաբար հայտնվում է միջազգային պարբերականների և կայքերի հոդվածներում (Գարդիան, Թեյեգրաֆ, All inclusive, momondo, dzieckowdrodze, 999 stories): Մայրաքաղաքի մասին պարբերաբար հոդվածներ են տպագրվում «Արմենիա» ավիաընկերության, «Տուրինֆո», «Արմենիա Տուրիստական» և այլ զբոսաշրջային ամսագրերում:

Հիմնախնդիրներ

1. Երևանի՝ որպես զբոսաշրջային կենտրոնի ոչ բավարար չափով զովագրում և ներկայացում միջազգային շուկայում:
2. Երևանի քաղաքի զբոսաշրջային բրենդի բացակայություն:
3. Մայրաքաղաքի զբոսաշրջային ենթակառուցվածքների և հետաքրքրություն ներկայացնող վայրերի ոչ բավարար հագեցվածություն՝ միջազգային զբոսաշրջիկների պահանջներին համապատասխան:
Զբոսաշրջիկներին անհրաժեշտ տեղեկատվության ոչ բավարար լինելը:
4. Երևան ժամանող միջազգային ավիաընկերությունների բարձր գնային քաղաքականություն:
5. Սեզոնայնության ազդեցություն, ինչը բացասական է անդրադառնում զբոսաշրջային փաթեթների արժեքի վրա (ձմռանն ավելի պասիվ է մայրաքաղաքում, քան ամռանն ու աշնանը):

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1. Երևանի ճանաչելիության բարձրացում և հանրահռչակում, մարքեթինգային քաղաքականության իրականացում

Ծրագրի նպատակ

Երևանի ճանաչելիության բարձրացում և հանրահռչակում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կարևորելով Երևանի դերը՝ մեծ ուշադրություն է դարձվում մայրաքաղաքի հանրահռչակմանն ուղղված աշխատանքներին միջազգային հարթակներում: Սույն ուղղությունն իր մեջ ներառում է՝

- Երևանի մասին տեղեկատվության տրամադրում ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան զանազան ամսագրերին և թերթերին,
- մայրաքաղաքի մասին հոդվածների պատրաստում,
- Երևանը՝ որպես զբոսաշրջային արդյունք, դիրքավորումը՝ զովագրում ու ներկայացում:

Կարևորվում է նաև օդանավակայանում, քաղաքի մուտք համարվող խոշոր մայրուղիներում և Երևանի մետրոպոլիտենում սոցիալական գովազդի պատրաստման ու տեղադրումը, ուղղորդիչ ցուցանակների տեղադրման կազմակերպումը:

Երևան քաղաքի զբոսաշրջային դիրքավորման և ճանաչելիության բարձրացման նպատակով կարևորվում է «Էրեբունի-Երևան» 2800-ամյակի տոնակատարության կազմակերպումն ու իրականացումը, բազմաբնույթ այլ միջոցառումների կազմակերպումը:

2. Երևանում զբոսաշրջային ենթակառուցվածքների զարգացման ուղղությամբ ծրագրերի իրականացում

Ծրագրի նպատակ

Երևանում էքսկուրսիոն ուղղության զարգացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

«Երևան Սիթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական երթուղու կատարելագործում ու արդիականացում, որը մեծ հետաքրքրություն է առաջացնում ինչպես մայրաքաղաքի հյուրերի, այնպես էլ բնակիչների շրջանում: Իրականացվելու են տոն և հիշատակի օրերին նվիրված (ինչպես նաև առանձին դեպքերում) անվճար ակցիաներ՝ մասնակից դարձնելով երեխաներին, սոցիալապես անապահով խավերին և հաշմանդամություն ունեցող անձանց:

Շարունակվելու է քաղաքապետարանի ենթակայության թանգարանների մասնակցությամբ զանազան ծրագրերի կազմակերպում միտված քաղաքային երթուղու կատարելագործմանը:

3.Երևանում միջոցառումային զբոսաշրջության զարգացում. զբոսաշրջային փառատոների կազմակերպում Ծրագրի նպատակ

Երևանում միջոցառումային զբոսաշրջության զարգացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է զարգացնել «Երևանյան ամառ» եռամսյա միջոցառումների ծրագիրը, որի շրջանակում արդեն ավանդական են դարձել «Համով-հոտով Երևան» տոնածիսական փառատոնը, Երևան տարազ ֆեստը, Երևանի գարեջրի փառատոնը, մշակութային, գործարար բացօթյա ցուցահանդեսները, թեմատիկ տոնավաճառները, զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող սեզոնային փառատոնները, համերգները: Նախատեսվում է նաև երևանյան մթնոլորտը լավագույնս բնութագրող միջոցառումների և փառատոների կազմակերպում:

4.Զբոսաշրջիկների տեղեկատվական աջակցություն

Ծրագրի նպատակ

Ծրագրի հիմնական նպատակն է զբոսաշրջիկներին, մայրաքաղաքի հյուրերին և հանրությանը ծանոթացնել Երևան քաղաքի պատմամշակութային հուշարձաններին և տեսարժան վայրերին:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Սույն ծրագիրը նախատեսում է Երևանի վերաբերյալ տեղեկատվական նյութերի պատրաստում (թուղթիկներ, քարտեզներ, էլեկտրոնային կրիչներով Երևանը ներկայացնող նյութեր) ինչպես հայերեն, այնպես էլ բոլոր այն լեզուներով, որոնք օգտակար կլինեն թիրախային լսարանի համար: Մշակվել է Երևանի զբոսաշրջային քարտեզը, որը 2015 թվականից տպագրվում և տրամադրվում է Երևանում գործող ՀՏՕ-ներին:

Այս ուղղությամբ նախատեսվում է զբոսաշրջային միասնական տեղեկատվական կենտրոնների հիմնում, որը զբոսաշրջիկներին կտրամադրի անհրաժեշտ տեղեկատվություն ճանապարհորդության տարբեր հարցերի, երթուղու, զբոսաշրջավայրերի վերաբերյալ և այլն: Տեղեկատվական կենտրոնների ստեղծումը կնպաստի Երևան այցելած զբոսաշրջիկների իրազեկման մակարդակի բարձրացմանն ու ինքնակոդմորոշմանը:

Զբոսաշրջիկների իրազեկվածությունը բարձրացնելու նպատակով նախատեսվում է նաև պատրաստել կայք մի քանի լեզուներով, որտեղ այցելուները կարող են գտնել հավաստի տեղեկատվություն մայրաքաղաքի պատմության, գործող զբոսաշրջային ծառայությունների վերաբերյալ:

Նախատեսվում է Երևանում կամավոր երիտասարդ-զբոսավարների ծրագրի փորձարկումը (արդեն իսկ մշակվել է «Ես եմ իմ քաղաքի զբոսավարը» ծրագիրը), որի շրջանակում Երևանի զբոսաշրջային վայրերի զբոսաշրջիկներին կտրվի տեղեկատվական աջակցություն: Ծրագիրը միտված է բազմակողմանի կերպով աջակցելու քաղաքի օտարերկրյա հյուրերին, որը քաղաքի կողմից հոգատար վերաբերմունքի դրսևորման արտահայտություն է:

Երևան ժամանող զբոսաշրջիկների համար տեղեկացվածության բարձրացման նպատակով նախատեսվում է մայրաքաղաքի բանուկ, մարդաշատ և զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող հատվածներում, կայարանում, մետրոյում, ավտոկայաններում, քաղաքի մեծ մասշտաբի քարտեզների տեղադրում: Արդեն իսկ մշակվել է «Դու այստեղ ես» ծրագիրը (քարտեզը իր մեջ կընդգրկի թեժ գծի հեռախոսահամարներ զբոսաշրջիկի ինքնակոդմորոշման համար անհրաժեշտ տվյալներով):

Որպես զբոսաշրջության զարգացման կարևոր բաղադրիչ նախատեսվում է նաև ժամանակակից տեխնոլոգիաների կիրառում, բազմաբնույթ հավելվածների ստեղծում:

5. Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացում զբոսաշրջության ոլորտում

Ծրագրի նպատակ

Միջազգային և միջտարածաշրջանային համագործակցության զարգացում զբոսաշրջության ոլորտում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Սույն ուղղությունը ենթադրում է տարաբնույթ միջոցառումների մշակում և իրականացում մի շարք քույր և գործընկեր քաղաքների հետ, մասնավորապես գործարար հանդիպումների, ճանաչողական այցերի, փորձի փոխանակման, սեմինարների, կոնֆերանսների, կլոր-սեղանների կազմակերպում՝ պետական և մասնավոր շահագրգիռ կազմակերպությունների մասնակցությամբ:

ԳԼՈՒԽ 4 ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳՐԵՐ

ԱԶԱՓՆՅԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Աջափնյակ վարչական շրջանը գտնվում է Երևանի հյուսիս-արևմտյան մասում՝ Հրազդան գետի աջ ափին: Շրջանը կազմավորվել է 1950-ական թվականներին և ընդհանուր սահմաններ ունի Արաբկիր, Դավթաշեն, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Արմավիրի, Արագածոտնի և Կոտայքի մարզերին:

Աջափնյակ վարչական շրջանի բնակչությունը կազմում է 109.2 հազ. մարդ, իսկ տեսակարար կշիռը Երևանի բնակչության թվաքանակում կազմում է 10.1%: Այն զբաղեցնում է 2582 հա տարածք, որը կազմում է Երևան քաղաքի ընդհանուր տարածքի 11.6 %-ը¹²:

Վարչական շրջանն ընդգրկում է Սիլիկյան, Նորաշեն, Նազարբեկյան, Գ-1, Վ-3, Վահագնի թաղամասերը, Հալաբյան, Մարգարյան, Շինարարների, Բաշինջաղյան, Լենինգրադյան, Շիրազի, Հասարթյան փողոցներով ճյուղավորված բնակելի զանգվածները:

Հիմնախնդիրներ

1. Հաշմանդամություն ունեցող անձանց համար թեքահարթակների ստեղծում:
2. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում:
3. Էլեկտրական մալուխների կարգավորում բազմաբնակարան շենքերի մուտքերում:
4. Հանգստի գոտիների ստեղծում:
5. Աջափնյակ վարչական շրջանում գործող բոլոր մանկապարտեզների հիմնանորոգում:
6. Մարզադպրոցի նոր շենքի կառուցում:
7. Վարչական շրջանի 3-րդ կարգի վթարային շենքերի ամրացման աշխատանքների իրականացում:
8. Կոյուղագծերի, շենքերի ջրագծերի նորոգում և հիմնանորոգում:
9. Վարչական շրջանի որոշ բնակավայրերում գազաֆիկացման և լուսավորության ցանցի արդիականացում:
10. Վերգետնյա և ստորգետնյա անցումների կառուցում:
11. Դեռևս չլուսավորված բակերում և փողոցներում արտաքին լուսավորության ապահովում, վթարային էլեկտրասայունների փոխարինում նորերով:
12. Բազմաբնակարան շենքերում բնակֆոնդի պահպանման, վերանորոգման աշխատանքների իրականացմանն ուղղված աջակցության ապահովում:
13. Կանաչապատում, ոռոգման ջրագծերի կապիտալ վերանորոգում և նորերի անցկացում:
14. Վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական, բնակարանային-կոմունալ, կենցաղային պայմանների բարելավում:
15. Գյուղմթերքների շուկայի և արդյունաբերական ապրանքների տոնավաճառի կառուցում:
16. Աղբավայրի մեկուսացում:
17. Վերելակային տնտեսության արդիականացում:

¹² ՀՀ ԱՎԾ, ՀՀ մշտական բնակչության թվաքանակը 2017 թվականի հունվարի 1-ի դրությամբ, Հայաստանի Հանրապետության մարզերը և Երևան քաղաքը թվերով, 2016:

1. Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Աջափնյակ վարչական շրջանում առկա է 427 բազմաբնակարան շենք, որից 163-ը բարձրահարկ են (9-16 հարկանի), որտեղ կան 338 վերելակներ:

Փողոցների երկարությունը 66.67 կմ է:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1. Ճանապարհների և մայրերի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում

Ծրագրի նպատակը

Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների և մայրերի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում՝ քաղաքացիների անվտանգությունն ու անխափան երթևեկությունն ապահովելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Տարեկան ծրագրերի շրջանակում կատարվում է վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայրերի ասֆալտբետոնե ծածկի վիճակի գույքագրում, կազմվում են հասցեական սխեմաներ՝ անհրաժեշտ աշխատանքների իրականացման համար: Աշխատանքները ներառում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդում, խճե հիմքի իրականացում և ասֆալտբետոնե ծածկի իրականացում: Աշխատանքները ներառում են դիտահորերի և անձրևոսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում: Նոր թաղամասերի կառուցմանը զուգընթաց առաջանում է նոր փողոցների կառուցման և ասֆալտապատման անհրաժեշտություն:

2. Ոռոգման ցանցի անցկացում

Ծրագրի նպատակը

Աջափնյակ վարչական շրջանում ոռոգման ցանցի ավելացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված ոռոգման ցանցի երկարությունը 33,2 կմ է: Նոր կառուցվող կանաչ տարածքների և սիզամարզերի պահպանումը և խնամքը հնարավոր է միայն կանոնավոր և ժամանակակից ոռոգման ցանցի ավելացմամբ, հատկապես նորակառույց թաղամասերում: Այն կնպաստի բնակչության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

3. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում

Ծրագրի նպատակը

Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում՝ բնակիչների համար բարենպաստ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ տանիքների վերանորոգում:

Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված 427 բազմաբնակարան շենքերից 162-ը հարթ տանիքով բարձրահարկ շենքեր են՝ 115085քմ մակերեսով:

4. Բազմաբնակարան շենքերի լանջավոր տանիքների վերանորոգում

Ծրագրի նպատակը

Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք լանջավոր տանիքների վերանորոգում և հիմնանորոգում

Ծրագրի համառոտ նկարագրություն

Աջափնյակ վարչական շրջանում թեք լանջավոր տանիքների մակերեսը կազմում է 216284քմ:
Ծրագիրը ներառում է հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի թեք լանջավոր անբարեկարգ տանիքների վերանորոգում՝ վնասված ազդեցությունների փոխարինմամբ: Առավել մեծ վնասվածություն ունեցող տանիքները կհիմնանորոգվեն:

5.Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում

Ծրագրի նպատակը

Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի նորոգում՝ բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովման նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ մուտքերի վերանորոգում, որը ներառում է թեքահարթակների կառուցում, սալապատում, պատերի և առաստաղի, դռների և պատուհանների վերանորոգում կամ նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների վերանորոգում, վնասված ապակիների փոխարինում նորերով:

Աջափնյակ վարչական շրջանում հաշվառված է 1325 շքամուտք:

6.Եզրաքարերի վերանորոգում

Ծրագրի նպատակը

Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների, մայրերի եզրաքարերի վերանորոգում՝ ճանապարհահատվածների բարեկարգման նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է Աջափնյակ վարչական շրջանի ճանապարհների մայրերի բազալտե եզրաքարերի վերանորոգում և փոխարինում, որը ներառում է հին վնասված եզրաքարերի փոխարինում, նոր կառուցված թաղամասերում (Վ-3, Գ-1, Ռումինական) նոր եզրաքարերի տեղադրում:

7.Բազմաբնակարան շենքերի պատշգամբների ամրացում

Ծրագրի նպատակը

Աջափնյակ վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների ամրացում, բնակչության անվտանգության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Վարչական շրջանում առկա 272 (մինչև 5 հարկ) բազմաբնակարան շենքերն ունեն 4056 պատշգամբ: Վթարային պատշգամբների ամրացումը և մյուսների վերանորոգումը անհրաժեշտ է իրականացնել բնակչության համար անվտանգ պայմանների ստեղծման, ինչպես նաև վարչական շրջանում շենքերը նույնատիպ տեսքի բերելու համար:

8.Գրունտային ճանապարհների կառուցում

Ծրագրի նպատակը

Նորաստեղծ թաղամասերի գրունտային ճանապարհների կառուցում քաղաքացիների անվտանգությունն ու անխափան երթևեկությունն ապահովելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նորակառույց Գ-1, Վ-3, Նորվեգական, Ռումինական թաղամասերում առկա են 45000քմ մակերեսով գրունտային ճանապարհներ, որոնց կառուցման ընթացքում պետք է կառուցվեն նաև մայրեր: Ծրագրի շրջանակում նախատեսված է իրականացնել եզրաքարերի շարում, մայրերի ստեղծում, երթևեկելի մասերի և մայրերի խճապատում և ասֆալտապատում:

9.Արտաքին լուսավորության ցանցի կառուցում

Ծրագրի նպատակը

Աջափնյակ վարչական շրջանի փողոցների ու բակերի արտաքին լուսավորության ցանցի կառուցում և վերանորոգում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Վարչական շրջանում առկա 171 կմ երկարությամբ արտաքին լուսավորության ցանցից 34 կմ ենթակա է արդիականացման: Նախատեսվում է նոր թաղամասերում արտաքին լուսավորության ցանցի շարունակական ընդլայնում, ժամանակակից տեխնոլոգիայով նոր գծերի անցկացում և հին գծերի արդիականացում ու նորոգում:

2. Կրթություն, մշակույթ, սպորտ

Վարչական շրջանի տարածքում գործում է 20 հանրակրթական դպրոց (4 ավագ, 1 միջնակարգ, 15 հիմնական), 3 ԲՈՒՀ, արհեստակցական 1 ուսումնարան, մասնավոր 2 վարժարան, նախադպրոցական 16 հիմնարկներ, արտադպրոցական 1 կազմակերպություն՝ ՄՊՄԿ, 2 երաժշտական դպրոց, 1 արվեստի դպրոց, 2 գեղագիտական դաստիարակության կենտրոն, 1 մշակութային կենտրոն, 1 գրադարանային կենտրոնացված համակարգ (3 մասնաճյուղով), 1 մանկապատանեկան համալիր մարզադպրոց:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

• Մշակութային միջոցառումների իրականացում

Ծրագրի նպատակը

Մշակութային միջոցառումների միջոցով բնակչության հանգստի պատշաճ կազմակերպում, մշակութային միջոցառումներին երեխաների ընդգրկվածության մեծացում, բակային ընկերասիրության, տոն և հիշատակի օրերի համատեղ անցկացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է ինչպես տոներին և հիշատակի օրերին, եկեղեցական տոներին նվիրված միջոցառումները, այնպես էլ տարվա ընթացքում տարատեսակ համերգներ, բակային խաղեր, մրցումներ, սպորտլանդիա և այլն:

Աջափնյակ վարչական շրջանում, ըստ ժամանակացույցի, որպես պարտադիր ծրագիր իրականացվում է 17 մշակութային միջոցառում (ՀՀ բանակի կազմավորման օր, Կանանց միջազգային օր, Մայրության և գեղեցկության օր, Հաղթանակի և Շուշիի ազատագրման օր, Ֆիդայինի ոգեկոչման և Հայաստանի առաջին հանրապետության օր, «Վերջին զանգ», Միջմանկապարտեզային սպորտլանդիա, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր, Բակային ճամբարներ և ամառային միջոցառումներ, Երևանյան ամառ-Ուրախ ամառ Աջափնյակից, Վարդավառի տոն, «Գիտելիքի օր», Հայաստանի Անկախության օր, «Ուսուցչի օր», «Գրադարանավարի օր», Ամանոր, բակային միջոցառումներ):

• Սպորտային միջոցառումների իրականացում

Ծրագրի նպատակը

Նպաստել վարչական շրջանի բնակչության շրջանում սպորտի մասսայականացմանը, ինչպես նաև ապահովել երեխաների ակտիվ մասնակցությունը սպորտային միջոցառումներին, խրախուսել առողջ ապրելակերպը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է Աջափնյակ վարչական շրջանում սպորտային միջոցառումների, հուշամրցումների կազմակերպում ու անցկացում: Յուրաքանչյուր տարի նախատեսվում է իրականացնել 7 սպորտային միջոցառում:

3. Կանաչ տարածքների պահպանում և խնամք

Աջափնյակ վարչական շրջանում առկա է 40,11 հա կանաչ տարածք, 33,2կմ ռոտզման ջրագիծ, 17500 հատ ծառ, 28.100 հատ թուփ, թվով 5 պուրակներ, այգիներ, հանգստյան գոտիներ և 150 բակային այգիներ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

Կանաչապատման աշխատանքների իրականացում

Ծրագրի նպատակը

Աջափնյակ վարչական շրջանի կանաչապատ տարածքների պահպանում, խնամք և ավելացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Վարչական շրջանում հաշվառված է 40,11 հա կանաչապատ տարածք: Նորակառույց թաղամասերում (Գ-1, Վ-3, Նորվեգական, Ռումինական) գրունտային ճանապարհներին զուգընթաց, կառուցվելու են նաև կանաչ գոտիներ՝ յուրաքանչյուր տարի դրանց մակերեսների ավելացմամբ:

Բակային տարածքների հիմնանորոգում

Ծրագրի նպատակը

Բնակիչների համար հանգստի բարենպաստ պայմանների ստեղծում՝ քաղաքային գույքի և բակային խաղերի տեղադրմամբ, կանաչ տարածքների ավելացմամբ:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է առկա անբարեկարգ կամ նորոգման կարիք ունեցող բակային և միջբակային տարածքների հիմնանորոգում: Աջափնյակ վարչական շրջանում կբարեկարգվի շուրջ 50 բակային տարածք: Կիրականացվի կանաչ տարածքի վերականգնում, անցուղիների պատրաստում, ռոտզման ցանցի մոնտաժում կամ վերագործարկում, եզրաքարերի նորոգում, թեքահարթակների և աստիճանների պատրաստում, խաղերի, զրուցատաղավարների, սպորտային մարզագույքի տեղակայում:

4. Սոցիալական ապահովության և առողջապահություն

Վարչական շրջանի տարածքում գործում են «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարանը, հանրապետական նշանակության 6 հիվանդանոց («Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն, Պերինատոլոգիայի կենտրոն, Մանկաբարձության և Գինեկոլոգիայի ՀԻ (ՊՄԳՀԻ), «Դիագնոստիկա» բժշկական կենտրոն, Մալայանի անվան ակնաբուժական հանրապետական կենտրոն, Այրվածքների և Ճառագայթային բժշկության գիտական կենտրոն, Մաշկաբանության և ՍՎԲԿ), 2 ամբուլատոր պոլիկլինիկա («Արմենիա» ՀԲԿ պոլիկլինիկա, Իգնացիա ՍՊԸ /պոլիկլինիկա/), ՊՀՀՏ տարածքային և փորձագիտական կենտրոններ (ՀՀ առողջապահության նախարարության ՊՀՀՏ Աջափնյակ և Դավթաշեն տարածքային կենտրոն, Աջափնյակ և Դավթաշեն փորձագիտական տարածքային կենտրոն):

2018-2022թ. նախատեսվող ծրագրեր

- Սոցիալական աջակցության ծրագիր

Ծրագրի նպատակը

Սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցության տրամադրում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

1. Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին դպրոցական պարագաների տրամադրում:
2. Սոցիալապես անապահով ընտանիքներին սննդի փաթեթների տրամադրում:
3. Ընտանիքի օրվան նվիրված միջոցառման կազմակերպում:
4. Սոցիալապես անապահով ընտանիքների համար տոնական ճաշկերույթի կազմակերպում բարեգործական ճաշարանում Ամանորի և Սուրբ ծննդյան տոների, Սուրբ Հարության տոնի, Խաղողօրհնեքի տոնի և Տարեցների տոնի առթիվ:
5. Երեխաների պաշտպանության օրվան նվիրված միջոցառման կազմակերպում սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների համար
6. Սոցիալապես անապահով ընտանիքների համար էքսկուրսիայի կազմակերպում
7. Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա առթիվ միջոցառման կազմակերպում վարչական շրջանի հաշմանդամություն ունեցող երեխաներ ունեցող սոցիալապես անապահով ընտանիքների համար

ԱՎԱՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Ավան վարչական շրջանը գտնվում է Երևան քաղաքի հյուսիսային մասում, սահմանակից է Քանաքեռ-Զեյթուն, Նոր Նորք, Արաբկիր վարչական շրջանների և Կոտայքի մարզի հետ:

Ավան վարչական շրջանի տարածքը կազմում է 726 հա, բնակչությունը՝ 53.0 հազ. մարդ: Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը 3.2%, իսկ բնակչության թվաքանակում՝ 4.9 %:

Հիմնախնդիրներ

1. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների, շքամուտքերի պատուհանների փոխարինում, նոր վերելակների ձեռքբերում և տեղադրում, ներքին կոյուղագծերի և ջրագծերի նորոգում:
2. Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավում՝ հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, գույքի թարմացում, բակերի ոռոգման ցանցերի վերականգնում, նորերի կառուցում և կանաչապատում:
3. Բակային տարածքների բարեկարգում, միջբակային տարածքների լուսավորում, ասֆալտապատում, մայթերի մասնակի և կապիտալ վերանորոգում, խաղահրապարակների ստեղծում և կանաչապատում:
4. Փողոցներում և բակային տարածքներում արտաքին լուսավորության ապահովում, վթարային հենասյուների փոխարինում:
5. Կանաչ տարածքների ընդլայնում, սանմաքրման և աղբահանության աշխատանքների որակի բարելավում, բազմաբնակարան շենքերի պարտադիր նորմերի արդյունավետ և ամբողջական իրականացում:
6. Հանգստի գոտիների ստեղծում, ընդլայնում, այգիների բարեկարգում և կանաչապատում:
7. Տեղաշարժվելու դժվարություններ ունեցողների համար վարչական շրջանի բոլոր փողոցներում թեքահարթակների ստեղծում:
8. Անվտանգ տեղաշարժն ապահովելու համար անցումների ընթացիկ նորոգում և նորերի կառուցում:
9. Սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցության ցուցաբերում:
10. Բուժսարքավորումների և ծառայությունների արդիականացում:
11. Վարչական շրջանի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցում և որակի էական բարելավում:

1. Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Վարչական շրջանում հաշվառված է բնակելի 237 շենք, անհատական բնակելի 1007 տուն, 330 վերելակ, բազմաբնակարանային շենքերի կառավարումն իրականացվում է 9 համատիրությունների միջոցով: Ավան վարչական շրջանի ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 52,39 կմ է:

Ավան վարչական շրջանում կա 95 բակային տարածք: Բակերում առկա են 93 խաղահրապարակ և 12 մինի ֆուտբոլի դաշտ, 340 խաղեր և կարուսելներ, 220 մարզասարքեր, 67 զրուցատաղավարներ, տեղադրված է 1178 նստարան, 615 աղբաման:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Փողոցների, մայրերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում, ասֆալտապատում**

Ծրագրի նպատակը

Վարչական շրջանի փողոցների, մայրերի և միջբակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտբետոնե ծածկի ընթացիկ և կապիտալ վերանորոգում՝ բնակիչների համար հարմարավետ բակեր, խաղահրապարակներ և երթևեկելի անվտանգ ճանապարհներ ու մայրեր ապահովելու նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ավան վարչական շրջանի փողոցների, մայրերի, բակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտբետոնե ծածկի վիճակի ուսումնասիրություն, կլիմայական և այլ պատճառներից առաջացած փոսերի, ճաքերի և քանդված շերտերի ծավալների վերաբերյալ տեխնիկական պայմանների կազմում և վերանորոգման աշխատանքների իրականացում՝ ըստ կազմված տեխ.պայմանների:

Վերանորոգման աշխատանքները ներառում են ասֆալտբետոնե ծածկի վրա առաջացած փոսերից վնասված շերտերի հեռացում, խճե հիմքի իրականացում և ասֆալտապատվում՝ տարեկան 11-12 հազ. քմ ծավալով:

- **Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Ավան վարչական շրջանի բնակիչների համար հանգստի և խաղերի համար առավել հարմարավետ պայմանների ստեղծում, միջբակային տարածքների լուսավորում, կանաչապատում, ինչպես նաև խաղահրապարակների ասֆալտապատում և ընդարձակում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է բակային տարածքների կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ բակերում մայրերի եզրաքարերի վերանորոգում, նստարանների, զրուցատաղավարների, աղբամանների տեղադրում: Ծրագիրը ներառում է նաև երեխաների համար խաղահրապարակներում սպորտային մարզագույքի, մանկական խաղերի տեղադրում, հնացած և վնասված խաղերի վերանորոգում և նորերով փոխարինում: Բակերն ավելի գեղեցիկ ու հարմարավետ դարձնելու նպատակով կստեղծվեն նոր սիզամարգեր, կիրականացվի ծառատունկ, ծաղկապատում, ջրագծերի վերականգնում:

- **Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում**

Ծրագրի նպատակը

Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում, առկա խնդիրների վերացում, բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված հարթ տանիքների հիմնանորոգում իզոգամով, պատերի ամրացում: Կիրականացվի հին վնասված շերտի քանդում, ցեմենտահարթեցնող շերտի իրականացում, նոր իզոգամի տեղադրում, օդափոխության խողովակների վրա մետաղական ծածկի տեղադրում:

- **Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում**

Ծրագրի նպատակը

Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում, առկա խնդիրների վերացում, բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված թեք տանիքների հիմնանորոգում ազդեցիկ ծախսերով: Կկատարվի նաև պատերի ամրացում:

Հին ազդեցիկների ապամոնտաժում, փայտյա կոնստրուկցիաների մասնակի փոխարինում, նոր ջրհորդանների տեղադրում, նոր ցինկապատ ծածկաթիթեղի տեղադրում:

• **Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Բազմաբնակարան շենքերի մուտքերի ամբողջական վերանորոգում

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի մուտքերի, պատերի, առաստաղների, աստիճանավանդակների, բազմաբնակարան շենքերի, պատուհանների վերանորոգում, բացակա դռների տեղադրում: Ավան վարչական շրջանում հաշվառված է 366 շքամուտքից ենթակա է վերանորոգման 103-ը:

• **Վերելակային տնտեսության արդիականացում**

Ծրագրի նպատակը

Բնակիչների անվտանգությունը ապահովելու նպատակով ունենալ անխափան աշխատող վերելակային տնտեսություն: Մշտական հսկողություն սահմանել վերելակների անվտանգության և անխափան աշխատանքն ապահովելու ուղղությամբ:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ավան վարչական շրջանի բազմաբնակարան շենքերում առկա են մարդատար և բեռնատար 330 վերելակներ: Կիրականացվեն վերելակների հիմնանորոգման աշխատանքներ՝ վերելակների շարքից դուրս եկած դետալների և հանգույցների փոխարինում նորով, խցերի փոխարինում կամ նորոգում, ճապանների փոխարինում, շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով:

Վերելակների շարքից դուրս եկած դետալների և հանգույցների փոխարինում նորով, խցերի փոխարինում կամ նորոգում:

2.Կանաչ տարածքների պահպանում և խնամք

Ավան վարչական շրջանում առկա է 34 զբոսայգի և 18 խաղահրապարակ (զբոսայգիներում): Կանաչ տարածությունը 27,97 հա է, սիզամարգերի մակերեսը՝ 26 հա, ոռոգման ցանցի երկարությունը 28,8 կմ է:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

• **Կանաչ տարածքների ավելացում և պահպանում, ծաղկապատում և ծառատունկ**

Ծրագրի նպատակը

Ավան վարչական շրջանի կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում, կանաչապատում և ոռոգման ցանցերի ընթացիկ վերանորոգում: Աշխատանքները ներառում են՝ ծառատունկ, կանաչ տարածքների ծաղկապատում, սիզամարգերի բարեկարգում և ջրագծերի վերականգնում: Կիրականացվի չոր ծառերի հատում և երիտասարդացում, հիվանդ ծառերի խոր էտ, սիզամարգերի մաքրում թափված տերևներից, չորուկներից և աղբից: Առողջ ծառեր և

կանաչապատ տարածքներ ունենալու նպատակով կկատարվի ծառերի բնաբաժակների փոքրում և փխրեցում, սնուցում հանքային պարատանյութերով և բուժում թունաքիմիկատներով: Ծրագիրը կներառի նաև 46 հուշարձանների հարակից տարածքների պահպանում և խնամք:

3.Կրթություն, մշակույթ, սպորտ

Ավան վարչական շրջանում գործում է 7 մանկապարտեզ, 9 դպրոց (1 ավագ, 1 միջնակարգ, 2 հատուկ, 5 հիմնական), 2 ԲՈՒՀ, 1 գրադարան (Ավան վարչական շրջանի ենթակայության):

Վարչական շրջանում գործում է 1 մշակութային կենտրոն, 1 արվեստի դպրոց, 1 մարզադպրոց, 1 շախմատի դպրոց, մինի ֆուտբոլի 12 դաշտ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Մշակութային միջոցառումների կազմակերպում**

Ծրագրի նպատակը

Մշակութային ժառանգության պահպանում և փոխանցում սերունդներին, տոն և հիշատակի օրերի, ազգային ծեսերի, ավանդույթների վերաբերյալ իրազեկում երիտասարդության շրջանում, ժողովրդական ստեղծագործությունների խրախուսում և տարածում:

Անցկացվող մշակութային միջոցառումների միջոցով բնակիչների հետաքրքիր և բավանդակալից առօրյայի կազմակերպում, բակային մրցույթների, խաղերի և բակային ճամբարների կազմակերպմամբ՝ երեխաների զբաղվածության ապահովում, ընկերական հարաբերությունների ձևավորում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է մշակույթի տների, ակումբների, գրադարանների, կրթական և մշակութային այլ հաստատությունների և կազմակերպությունների գործունեության կազմակերպում, դրանց շենքային պայմանների բարելավում, հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, գույքի թարմացում: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն պարտադիր միջոցառումներ տոն և հիշատակի օրերին՝ Հայոց բանակի օր, Ս. Սարգսի տոն, Տյառն ընդառաջի տոն, «Գարնանամուտ», Կանանց միջազգային օր՝ մարտի 8, Մայրության և գեղեցկության տոն՝ ապրիլի 7, «Էրեբունի-Երևան» տոնակատարություն, Բարեկենդանի տոն, Թատրոնի միջազգային օր, Ոստիկանի օր, Հարության տոն՝ Զատիկ, Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր, Աշխատանքի օր (համերաշխության միջազգային օր), Հաղթանակի օր, Ընտանիքի օր, Թանգարանների միջազգային օր, Հանրապետության օր, Երեխաների պաշտպանության միջազգային օր, բուժաշխատողների օր, Համաքաղաքային ծառատունկ, Պարի միջազգային օր, Զազի միջազգային օր, ՀՀ սահմանադրության օր և պետական խորհրդանշանների օր: Երևանյան ամառ ծրագրի շրջանակներում կազմակերպվում են բակային ճամբարներ, Վարդավառ, Խաղողի օրհնություն, Անկախության օր, Ամանորի և Սուրբ ծննդյան տոնակատարություն:

- **Սպորտային միջոցառումների կազմակերպում**

Ծրագրի նպատակը

Մեծացնել Ավան վարչական շրջանի բնակիչների ներգրավվածությունը սպորտային կյանքին, առողջ ապրելակերպի խրախուսում և ֆիզիկապես ամուր և առողջ երիտասարդության ձևավորում, մեծահասակների մասնակցություն մարզական միջոցառումներին:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում կիրականացվեն օրացույցային պլանով նախատեսված միջոցառումներ՝ ներհամայնքային միջոցառումներ, ՀՀ Անկախության տոնին նվիրված դպրոցականների մարզական խաղեր, «Ազգային ժողովի գավաթի» խաղարկություն, «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթ փառատոն, Երևանի քաղաքապետի փոխանցիկ

գավաթի համար «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային ամենամյա ավանդական բակային փառատոն, նախագորակոչային և գորակոչային տարիքի դպրոցականների (16-18 տարեկան) ռազմամարզական խաղեր վարչական շրջանի հանրակրթական դպրոցների միջև, մանկապարտեզների երեխաների մասնակցությամբ հունիսի 1-ին՝ երեխաների պաշտպանության միջազգային օրվան նվիրված մարզահամերգային տոնահանդես:

- **Կրթական միջոցառումների իրականացում**

- Ծրագրի նպատակը**

Ապագայի համար ավելի կրթված և գիտակ երիտասարդության դաստիարակում, անապահով երեխաների ներգրավում կրթական ծրագրերում, կազմակերպվող միջոցառումներում:

- Ծրագրի համառոտ նկարագրություն**

Ծրագրի շրջանակներում կիրականացվեն միջոցառումներ՝ Պոեզիայի համաշխարհային օր, Գիրք նվիրելու օր, «Վերջին Զանգ» կկազմակերպվեն տարեվերջյան միջոցառումներ մանկապարտեզների սաների մասնակցությամբ, շրջանի անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների համար ամառային հանգստի կազմակերպում Ծաղկաձորում, Գիտելիքի օր՝ սեպտեմբերի 1, «Ուսուցչի օր»:

4.Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Ավան վարչական շրջանում գործում է 11 առողջապահական կազմակերպություն՝ «Թիվ 12 պոլիկլինիկա» ԱՊՓԲԸ, «Լիզադենտ ատամնաբուժական կենտրոն» ՓԲԸ, «Հիվանդությունները վերահսկող և կանխարգելող կենտրոն» ՓԲԸ, «Սթրես կենտրոն» ՓԲԸ, «Արթմեդ բուժվերականգնողական կենտրոն» ԲԲԸ, «Հանրապետական կլինիկական անձավաբուժական հիվանդանոց» ՓԲԸ, «Ա.Ալեքսանյանի անվան համաճարակային վիրուսաբանական ինստիտուտ» ՊՈԱԿ, Նարկոլոգիական դիսպանսեր, Հոգեբուժական կլինիկա, Հակատուբերկուլյոզային դիսպանսեր, «Պրոթեզաօրթոպեդիկ ձեռնարկություն» ՄՊԸ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Սոցիալական աջակցության ծրագիր**

- Ծրագրի նպատակը**

Վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցության տրամադրում:

- Ծրագրի համառոտ նկարագրություն**

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է՝

- Սոցիալապես անապահով ընտանիքների 1-4-րդ դասարանի աշակերտներին պայուսակների, գրենական պիտույքների տրամադրում:
- Ամանորյա սննդի և քաղցրավենիքի փաթեթների տրամադրում սոցիալապես անապահով ռիսկի խմբի 1000 ընտանիքի:
- Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցության ցուցաբերում: Կազմակերպվում են տարաբնույթ միջոցառումներ, որի ավարտին տրամադրվում է դրամական, նյութական, պարենային աջակցություն, նվերներ սոցիալապես անապահով ընտանիքներին՝ կանանց միամսյակի, մայիսյան տոների, Ընտանիքի, Տարեցների, Հաշմանդամություն ունեցող անձանց օրերի և Ամանորի կապակցությամբ:

ԱՐԱՔԿԻՐ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Արաքիիր վարչական շրջանը գտնվում է մայրաքաղաքի հյուսիսարևելյան հատվածում: Այն զբաղեցնում է 1329 հա տարածք, որի տեսակարար կշիռը Երևանի տարածքում կազմում է 5,9%: Արաքիիր վարչական շրջանն ունի ընդհանուր սահմաններ Աջափնյակ, Ավան, Դավթաշեն, Կենտրոն և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով այն հարում է Կոտայքի մարզին: Վարչական շրջանի բնակչությունը կազմում է 115.4 հազ. մարդ, իսկ տեսակարար կշիռը Երևանի բնակչության թվաքանակում կազմում է 10,8% :

Հիմնախնդիրներ

1. Հարթ և թեք տանիքների վերանորոգում:
2. Շքապատշգամբների ընթացիկ նորոգում և հիմնանորոգում:
3. Հենապատերի ընթացիկ և հիմնական նորոգում:
4. Վթարայնություն ունեցող շենքերի ամրացում:
5. Անցումների ընթացիկ նորոգում և կառուցում:
6. Հաշմանդամություն ունեցող անձանց համար թեքահարթակների ստեղծում:
7. Վերելակային տնտեսության արդիականացում:
8. Վարչական շրջանի կենտրոնական փողոցների բեռնաթափում, ճանապարհափողոցային ցանցի ընդլայնում (Ա.Խաչատրյան և Մամիկոնյանց փողոցների միացնող հատվածի կառուցում):
9. Տրանսպորտային նոր հանգույցների ստեղծում:
10. Նոր մանկապարտեզի հիմնում:
11. Մինի ֆուտբոլի դաշտերի ավելացում:
12. Նոր կոյուղագծերի կառուցում և հին վերանորոգում:
13. Բակային տարածքների ամբողջական բարեկարգում, ներառյալ միջբակային տարածքների լուսավորում և ասֆալտապատում:
14. Չլուսավորվող փողոցներում արտաքին լուսավորության ապահովում:
15. Աղբամուղերի և աղբախցերի հիմնանորոգում և վերակառուցում:
16. Հեղեղատարների վերանորոգում և նորերի կառուցում:
17. Հանգստի գոտիների և ջրավազանների ստեղծում:
18. Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավում՝ ընթացիկ նորոգում և հիմնանորոգում, գույքի թարմացում:
19. Գրադարանների արդի տեղեկատվական տեխնոլոգիաների ձեռքբերում, ժամանակակից գրականության համալրում, անհրաժեշտ ջերմային ռեժիմի ստեղծում՝ գրքերը պահպանելու համար:
20. Կանաչ տարածքների ընդլայնում:
21. Ոռոգման ցանցի հիմնանորոգում և նորի կառուցում:
22. Բնակչության առողջապահության որակի բարձրացում, ներառյալ սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավում, գույքի արդիականացում, վերազինում:
23. Սոցիալապես անապահով ընտանիքների և փախստականների բնակարային-կոմունալ պայմանների բարելավում:

1. Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Վարչական շրջանում հաշվառված են 692 բազմաբնակարան բնակելի շենքեր, որոնցից 208 բարձրահարկ: Բազմաբնակարան շենքերից 392-ն ունեն թեք լանջավոր, իսկ 300-ը՝ հարթ տանիքներ: Շենքերն ունեն 1978 մուտքեր, գործում է 459 վերելակ:

Արաբկիրում առկա է 1 խոշոր կամուրջ, 1 վերգետնյա, 6 ստորգետնյա անցումներ և 1 էստակադա:

2018-2022 թթ. նախատեսվող ծրագրեր

Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում

Ծրագրի նպատակը

Տարվա ընթացքում վարչական շրջանի ասֆալտբետոնե ծածկի վրա առաջացող փոսերի, անհարթությունների վերանորոգում՝ ճանապարհի անխափան երթևեկությունը ապահովելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Տարեկան ծրագրերի շրջանակում կատարվում է վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայրերի ասֆալտբետոնե ծածկի վիճակի գույքագրում: Գույքագրման արդյունքում կազմվում են հասցեական սխեմաներ՝ անհրաժեշտ աշխատանքների իրականացման համար: Աշխատանքները ներառում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդում, խճե հիմքի իրականացում և 3-4մ ասֆալտբետոնե ծածկի իրականացում:

Աշխատանքները ներառում են դիտահորերի և անձրևոսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում:

Ջրամատակարարման և ջրահեռացման ցանցերի վերանորոգում

Ծրագրի նպատակը

Արաբկիր վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան շենքերում ունենալ անխափան աշխատող ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ, բնակիչների համար ավելի նպաստավոր պայմաններ ստեղծել և պահպանել սանիտարահիգիենիկ պայմանները:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է Արաբկիր վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան շենքերում շարքից դուրս եկած ջրամատակարարման և ջրահեռացման խողովակաշարերի ապամոնտաժում և նորի մոնտաժում: Կիրականացվեն ներկման և ջերմամեկուսացման աշխատանքներ:

Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում

Ծրագրի նպատակը

Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում՝ ջրակայուն տանիքներ ունենալու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Արաբկիր վարչական շրջանում հաշվառված 692 բազմաբնակարան բնակելի շենքերից 300-ն ունեն հարթ տանիքներ, որոնցից վերանորոգման կարիք ունեն 100-ը: Նախատեսվում է շարքից դուրս եկած ծածկույթի քանդում, անհրաժեշտության դեպքում բետոնային հարթեցում, նոր իզոգամի մոնտաժում, պարապետների մետաղական վերանորոգում:

Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում

Ծրագրի նպատակը

Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում՝ բնակիչների համար բարենպաստ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում՝ ապահովելով թեք տանիքների ժամանակակից ծածկեր:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Արաբկիր վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ տանիքների վերանորոգում՝ ֆիզիկապես մաշված թեք տանիքների ազդեցության և մետաղական ծածկերի փոխարինում նորով: Շարքից դուրս եկած ազդեցության և մետաղական ծածկույթով տանիքների քանդում, փայտյա մասերի վերանորոգում, նոր թիթեղների, ջրհորդանների տեղադրում:

Մարդատար և բեռնատար վերելակների վերանորոգում

Ծրագրի նպատակը

Արաբկիր վարչական շրջանում անխափան աշխատող վերելակային տնտեսության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Արաբկիր վարչական շրջանում հաշվառված է 450 վերելակ: Վերելակների շարքից դուրս եկած դետալների և հանգույցների փոխարինում նորով, խցերի փոխարինում կամ նորոգում: Բնակչությանը անվտանգ սպասարկելու և վերելակների անխափան աշխատանքը ապահովելու նպատակով կվերանորոգվի ևս 90 վերելակ: Ձեռք կբերվի անհրաժեշտ շինվածքներ և դետալներ՝ առաջացած խնդիրները վերացնելու համար:

Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում

Ծրագրի նպատակը

Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի նորոգում՝ բնակիչների համար գեղեցիկ և մաքուր մուտքեր ապահովելու նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է Արաբկիր վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ մուտքերի վերանորոգում՝ շարքից դուրս եկած ներկերի, գաջե սվաղի մաքրում, բազրիկների վերանորոգում, պատերի, առաստաղի, պատուհանների, դռների, բազրիկների ներկում, աստիճանների վերանորոգում: Վարչական շրջանում կվերանորոգվի 150 մուտք:

Եզրաքարերի վերանորոգում

Ծրագրի նպատակը

Արաբկիր վարչական շրջանի փողոցների, բակային տարածքների, մայրերի եզրաքարերի վերանորոգում՝ ճանապարհափառվածների բարեկարգման նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Արաբկիր վարչական շրջանի ճանապարհների շարքից դուրս եկած եզրաքարերի ապամոնտաժում և նոր բազալտե եզրաքարերի տեղադրում և փոխարինում, որը ներառում է հին վնասված եզրաքարերի փոխարինում նորերով:

Կախովի պատշգամբների վերանորոգում

Ծրագրի նպատակը

Բնակիչների համար ապահովել անվտանգ, գեղեցիկ տեսք և ամրություն ունեցող պատշգամբներ:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Արաբկիր վարչական շրջանի բազմաբնակարան բնակելի շենքերում առկա շարքից դուրս եկած պատշգամբների ապամոնտաժում և նորի կառուցում: Պատշգամբների կառուցման համար օգտագործվելու են նոր ամրաններ, նոր բազրիքներ, իսկ հարթակը երեսապատելու են կերամիկական սալիկներով:

Բակերի ընթացիկ նորոգում

Ծրագրի նպատակը

Արաբկիր վարչական շրջանում առկա բակերի պահպանում, վերանորոգման կարիք ունեցող և շարքից դուրս եկած բակային գույքի վերականգնում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կիրականացվի նորոգման կարիք ունեցող բակային տարածքների ընթացիկ նորոգում, բակերում և զբոսայգիներում շարքից դուրս եկած խաղերի, զրուցարանների, նստարանների, ցանկապատերի, սալապատ տարածքների վերանորոգում, թեքահարթակների և աստիճանների, կանաչ տարածքների, վերանորոգում:

2. Կրթություն, մշակույթ, սպորտ

Արաբկիր վարչական շրջանում գործում է 21 հանրակրթական դպրոց (17 հիմնական , 4 ավագ), կույրերի համար նախատեսված երեկոյան միջնակարգ դպրոց, 2 երաժշտական դպրոց: Վարչական շրջանում գործում է 13 մանկապարտեզ, Երևանի Արաբկիրի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոցը» և «Ա. Գրիգորյանի անվան սուսերամարտի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ները:

2018-2022 թթ. նախատեսվող ծրագրեր

- **Մշակութային միջոցառումների իրականացում**

Ծրագրի նպատակը

Մշակութային, ինչպես նաև պետական, ազգային ու այլ տոներին նվիրված զանգվածային միջոցառումների կազմակերպում, ազգային մշակույթին նպաստող ծրագրերի իրականացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Մշակույթի ոլորտում նախատեսվում են անցկացնել ՀՀ տոն և հիշատակի օրերին նվիրված մշակութային միջոցառումներ, այդ թվում՝ Հայոց Բանակի 26-ամյակին նվիրված միջոցառում, Կանանց միջազգային օր, Երաժշտական միջազգային փառատոն, Թատրոնի միջազգային օր, Մայրության և գեղեցկության տոն, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր, Հաղթանակի և Շուշիի ազատագրման օր, ՀՀ առաջին հանրապետության օր, Երեխաների իրավունքների պաշտպանության միջազգային օր, «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակներում կազմակերպվող 10-օրյա բակային ճամբարներ, ՀՀ անկախության օր, Ուսուցչի օր , Էրեբունի-Երևան, Ամանորյա միջոցառումներ:

- **Սպորտային միջոցառումների իրականացում**

Ծրագրի նպատակը

Բարձրացնել սպորտի դերն ու նշանակությունը վարչական շրջանի կազմակերպություններում, ունենալ ֆիզիկապես և բարոյապես ուժեղ սերունդ:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Սպորտի ոլորտում նախատեսվում է անցկացնել մարզական միջոցառումներ, այդ թվում՝ Արաբկիր վարչական շրջանի սուսերամարտի բաց առաջնություն, Արաբկիր վարչական շրջանի շախմատի բաց առաջնություն հանրակրթական դպրոցների աշակերտների միջև, Հանրակրթական դպրոցների 27-րդ մարզական խաղերի ծրագրով Արաբկիր վարչական շրջանի և Երևան քաղաքի առաջնություն, Արաբկիր վարչական շրջանի սեղանի թենիսի բաց առաջնություն, «Ազգային ժողովի գավաթի» առաջնություն Արաբկիր վարչական շրջանի հանրակրթական դպրոցների 1-6-րդ դասարանների միջև և Երևան քաղաքի առաջնություն, Արաբկիր վարչական շրջանի ֆուտբոլի բաց առաջնություն պատանիների միջև, ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» մրցույթի Արաբկիր վարչական շրջանի և Երևան քաղաքի առաջնություն, «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» վարչական շրջանի միջբակային առաջնություն և Երևան քաղաքի միջբակային առաջնություն, Արաբկիր վարչական շրջանի սիրողական շախմատի 2017թ. բաց առաջնություն, Արաբկիր վարչական շրջանի բազկամարտի բաց առաջնություն, Արաբկիր վարչական շրջանի վոլեյբոլի բաց առաջնություն, Արաբկիր վարչական շրջանի ձյուդոյի բաց առաջնություն, Նախագորակոչային և գորակոչային տարիքի ռազմամարզական խաղեր Արաբկիր վարչական շրջանի հանրակրթական դպրոցների միջև, Արաբկիր վարչական շրջանի բասկետբոլի բաց առաջնություն:

3. Կանաչ տարածքների պահպանում և խնամք

Վարչական շրջանում հաշվառված է 72.09 հա կանաչապատ տարածք, 250 կանաչապատ բակային տարածք, պուրակները, այգիները և հանգստի գոտիները 4-ն են, այդ թվում՝ 2.9հա պուրակ, 5հա՝ այգի, 8.4հա՝ սիզամարգ, 36.7հա՝ անտառ-պուրակ: Գործող ոռոգման համակարգի երկարությունը՝ 74.5 կմ:

2018-2022 թթ.նախատեսվող ծրագրեր

- **Ոռոգման ցանցի հիմնանորոգում, նոր ցանցի կառուցում**

Ծրագրի նպատակը

Արաբկիր վարչական շրջանի կանաչ տարածքներում անխափան ոռոգման ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Արաբկիր վարչական շրջանի կանաչ տարածքներում առկա խցանված կամ շարքից դուրս եկած ոռոգման ցանցի հիմնանորոգում: Արաբկիր վարչական շրջանում հաշվառված ոռոգման ցանցի երկարությունը 74.5 կմ է: 10.000գծմ նոր ոռոգման ցանցի կառուցումն շնորհիվ կստեղծվի ժամանակակից խողովակաշարերով ոռոգման ցանց, կապահովվի կանաչ տարածքների պահպանումը: Արաբկիր վարչական շրջանում նոր ստեղծված և չորոգվող կանաչ տարածքներում, սիզամարգերում ոռոգման նոր ցանցի անցկացումը ինչպես նաև կանաչապատ տարածքների ավելացումը կնպաստի բնակչության համար բարենպաստ պայմանների ստեղծմանը:

- **Կանաչ տարածքների ընդլայնում**

Ծրագրի նպատակը

Արաբկիր վարչական շրջանում ավելացնել կանաչ տարածքները, բնակչության համար ստեղծել հանգստի գոտիներ:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է վարչական շրջանում հաշվառված թվով 70000 հատ թփերի ավելացում ևս 15000-ով և 800000 հատ ծառերի ավելացում 34000-ով:

Արաբկիր վարչական շրջանում առկա չմշակված տարածքների մաքրում, կանաչապատում, ոռոգման ցանցի անցկացում, ծառատունկ, թփերի տնկում գեղեցիկ միջավայրի ստեղծում (Պալյանայի հարթությանը հարող լեռնային մաս):

4. Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Արաբկիր վարչական շրջանում գործում է 1 բարեգործական ճաշարան՝ Արշավիր և Պայծառ Աբրահամյաններ, որի ծառայություններից օգտվում է 182 կարիքավոր բնակիչ: Վարչական շրջանի տարածքում գործում է 567 հասարակական կազմակերպություն, 3 պոլիկլինիկա և 3 հիվանդանոց, որոնց միջոցով իրականացվում է վարչական շրջանի բնակչության բժշկական սպասարկումը, ինչպես նաև բազմաթիվ այլ բժշկական ծառայություններ մատուցող կառույցներ, այդ թվում՝ հետազոտական, ակնաբուժական, ատամնաբուժական:

2018-2022 թթ. նախատեսվող ծրագրեր

- **Սոցիալապես անապահով անձանց, հասարակական կազմակերպություններին դրամական աջակցություն**

Ծրագրի նպատակը

Սոցիալապես անապահով տարբեր խոցելի խմբերին ֆինանսական աջակցության տրամադրում՝ անհետաձգելի լուծում պահանջող խնդիրները լուծելու համար, հասարակական կազմակերպություններին աջակցություն՝ գործունեություն ծավալելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կարիքավոր ընտանիքներին դրամական օգնության հատկացում՝ դիմումում բարձրացված խնդրի լուծման համար սոցիալական վիճակի ուսումնասիրության արդյունքի հիման վրա, Արաբկիր վարչական շրջանի շահույթ չհետապնդող կազմակերպություններին՝ Վետերանների խորհրդին, Հաշմանդամություն ունեցող անձանց ընկերությանը և Երկրապահ կամավորականների միությանը, հատկացնել ֆինանսական միջոցներ՝ գործունեությունը ծավալելու համար:

- **Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպման, ՀՀ տոների և հիշատակի օրերի առթիվ աջակցություն**

Ծրագրի նպատակը

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին ճամբար տեղափոխելու համար տրասպորտային միջոցով ապահովում, դպրոցահասակ երեխաներին գրենական պիտույքների տրամադրում, էքսկուրսիաների կազմակերպում, սոցիալապես անապահով տարբեր խոցելի խմբերին նյութական կամ ֆինանսական աջակցության տրամադրում՝ տոնը հիշարժան դարձնելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

7-12 տարեկան երեխաների հանգիստը կկազմակերպվի Հայաստանի ճամբարներից մեկում՝ երեք հերթափոխով:

Դպրոցահասակ երեխաներին կհատկացվի պայուսակ և գրենական պիտույքներ, 8-15 տարեկան երեխաների համար կկազմակերպվեն էքսկուրսիաներ, սոցիալական տարբեր խմբերի համար կկազմակերպվեն միջոցառումներ տոների առթիվ, կցուցաբերվի դրամական կամ նյութական աջակցություն:

ԴԱՎԹԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Դավթաշեն վարչական շրջանը զբաղեցնում է 647 հա տարածք, բակչությունը կազմում է 42,5 հազ. մարդ: Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը 2,9% է, իսկ բնակչության թվաքանակում՝ 3,9%:

Դավթաշենն ընդհանուր սահմաններ ունի Աջափնյակ ու Արաբկիր վարչական շրջանների հետ: Արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին:

Վարչական շրջանի մասն են կազմում 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ թաղամասերը և Դավթաշենի սեփական սեկտորը, 1-ին և 2-րդ թաղամասերի միջև ընկած սեփական սեկտորը, Ձոր-1, Ձոր-2 թաղամասերը և Մելքումով փողոցին հարակից սեփական սեկտորը, 3-րդ թաղամասի սեփական տնատիրությունները:

Հիմնախնդիրները

1. *Տ. Պետրոսյանի վերջնամասից 2-րդ թաղամասի ետնամասով Աղաբաբյան փողոց տանող շրջանցիկ ճանապարհի կառուցում (Կենտրոնական այգու վերին հատված):*
2. *Սասնա Ծռեր-Աղաբաբյան փողոցները կապող նոր ճանապարհահատվածի կառուցում:*
3. *Տ. Պետրոսյան և Աղաբաբյան փողոցների հիմնանորոգում:*
4. *Բակային տարածքների ամբողջական բարեկարգում, ներառյալ միջբակային տարածքների լուսավորում և ասֆալտապատում:*
5. *Ոռոգման ցանցի արդիականացում:*
6. *Գրունտային ճանապարհների ասֆալտապատում, արտաքին լուսավորության անցկացում և ջրահեռացման համակարգի ստեղծում (Մելքումովի սեփական սեկտոր, 1-ին և 2-րդ թաղամասերի վերին հատված, Ձոր-2, 3-րդ թաղամաս, գյուղի սեփական սեկտոր):*
7. *Վերելակների հիմնանորոգում կամ նորերով փոխարինում:*
8. *Հարթ տանիքների վերանորոգում:*
9. *3-րդ թաղամասի 6/2 շենքի թեք տանիքի հիմնանորոգում:*
10. *Մանկապարտեզների շենքային պայմանների բարելավում՝ ընթացիկ նորոգում և հիմնանորոգում, մանկապարտեզների բակային տարածքների բարեկարգում:*
11. *Բեմահարթակի և հրապարակի կառուցում:*
12. *Մարզադպրոցի կառուցում:*
13. *Սննդի և սպասարկման ոլորտի ուսուցման գծով կրթօջախի ստեղծում:*

1. Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Դավթաշեն վարչական շրջանում հաշվառված է 191 բազմաբնակարան շենք, 382 շքամուտք, 409 վերելակ: Առկա են շահագործվող 65 բակ, 373 խաղ, 429 աղբաման, 631 նստարան, 99 զրուցարան, 10 ֆուտբոլի դաշտ: Փողոցների երկարությունը 67կմ է:

Վարչական շրջանի տարածքում են Հայրենական Մեծ պատերազմի և Արցախյան ազատամարտի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձանը:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում**

Ծրագրի նպատակը

Վարչական շրջանի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում՝ քաղաքացիների անվտանգությունն ու անխափան երթևեկությունն ապահովելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Տարեկան ծրագրերի շրջանակում կատարվում է վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայթերի ասֆալտբետոնե ծածկի վիճակի գույքագրում: Գույքագրման արդյունքում կազմվում են հասցեական սխեմաներ՝ անհրաժեշտ աշխատանքների իրականացման համար: Աշխատանքները ներառում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդում, առաջացած շին. աղբի բարձում, տեղափոխում (թափոնատեղի), խճե հիմքի իրականացում (մինչև 10%) և 3-4սմ ասֆալտբետոնե ծածկի իրականացում:

Աշխատանքները ներառում են դիտահորերի և անձրևոսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում:

- **Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում՝ առկա խնդիրների վերացում, բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ տանիքների վնասված հատվածների նորոգում իզոգամով:

Դավթաշեն վարչական շրջանում հաշվառված է 188 բազմաբնակարան շենք և 5 մանկապարտեզ, որոնց հարթ տանիքների ընդհանուր մակերեսը կազմում է 116.0 հազ. քմ: Վերանորոգման ենթակա է 70.0 հազ. քմ:

- **Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Դավթաշեն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի նորոգում՝ բնակիչների համար բարեկարգ պայմաններ ապահովելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է Դավթաշեն վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ մուտքերի վերանորոգում՝ թեքահարթակների կառուցում, սալապատում, պատերի և առաստաղի, դռների և պատուհանների վերանորոգում կամ նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների վերանորոգում, վնասված ապակիների փոխարինում նորով:

Դավթաշեն վարչական շրջանում հաշվառված է 374 շքամուտք, վերանորոգման կարիք ունեն 282-ը:

- **Եզրաքարերի վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Դավթաշեն վարչական շրջանի ճանապարհների, մայթերի եզրաքարերի վերանորոգում՝ ճանապարհահատվածների բարեկարգման նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է Դավթաշեն վարչական շրջանի ճանապարհների, մայրերի բազալտե եզրաքարերի վերանորոգում և փոխարինում, որը ներառում է հին վնասված եզրաքարերի փոխարինում:

2. Կրթություն, մշակույթ, սպորտ

Դավթաշեն վարչական շրջանում գործում է 6 դպրոց (4 հիմնական, 1 միջնակարգ և 1 ավագ), 5 մանկապարտեզ որում գործում է 48 խումբ, 1 գրադարան, 1 շախմատի դպրոց, 1 հանդբոլի դպրոց, 1 արվեստի դպրոց:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- Մշակութային միջոցառումների իրականացում

Ծրագրի նպատակը

Բնակչության հանգստի պատշաճ կազմակերպման, երեխաների ընդգրկվածության մեծացման, տոն և հիշատակի օրերի համատեղ անցկացման նպատակով վարչական շրջանում մշակութային միջոցառումների իրականացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է ինչպես տոն և հիշատակի օրերին նվիրված պարտադիր միջոցառումները, այնպես էլ տարվա ընթացքում տարատեսակ համերգներ, սպորտային միջոցառումներ, բակային խաղեր, մրցումներ և այլն:

Դավթաշեն վարչական շրջանում, ըստ ժամանակացույցի, որպես պարտադիր ծրագիր իրականացվում են մշակութային միջոցառումներ՝ Հայոց բանակի օր, Տեառնընդառաջ, Կանանց միջազգային օր, Զատիկ, Մայրության և գեղեցկության օր, 1915թ. Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր, Հաղթանակի տոնակատարություններ, Վերջին զանգ, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Խաղողի օրհնության օր, բակային ժամանցային միջոցառումներ, Գիտելիքի օր, ՀՀ անկախության օր, Ուսուցչի օր, «Էրեբունի-Երևան» տոնակատարություն, Ամանորյա միջոցառումներ, մանկապարտեզների սաներին քաղցրավենիքի բաշխում:

Լրացուցիչ ծրագրերով, համագործակցությամբ ևս իրականացվելու են միջոցառումներ:

- Սպորտային միջոցառումների իրականացում

Ծրագրի նպատակը

Նպաստել Դավթաշեն վարչական շրջանի բնակչության շրջանում սպորտի մասսայականացմանը, խրախուսել առողջ ապրելակերպը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է սպորտային միջոցառումների, հուշամրցաշարերի կազմակերպում ու անցկացում, երեխաների ակտիվ մասնակցության ապահովում սպորտային միջոցառումներին:

3. Կանաչ տարածքների պահպանում և խնամք

Դավթաշեն վարչական շրջանում առկա է 31,49 հա կանաչապատ տարածք, ոռոգման ցանցի երկարությունը կազմում է 34,3 կմ: Վարչական շրջանի տարածքում են գտնվում Կենտրոնական այգին և Կաղնուտի այգին:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

1. Բակային տարածքների հիմնանորոգում

Ծրագրի նպատակը

Բնակիչների լիարժեք հանգիստի համար պայմանների ստեղծում՝ քաղաքային գույքի, խաղերի տեղադրման, կանաչ տարածքների ավելացման միջոցով: Առկա անբարեկարգ կամ նորոգման կարիք ունեցող տարածքների (հիմնականում բակային և միջբակային) հիմնանորոգում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Անբարեկարգ կամ նորոգման կարիք ունեցող տարածքների բարեկարգում, մասնավորապես կանաչ տարածքի վերականգնում (բուսահողի թարմացում, կանաչապատում, ծառատունկ, ծաղկային հատվածի ավելացում), անցուղիների պատրաստում, ոռոգման ցանցի մոնտաժում կամ վերագործարկում, եզրաքարերի նորոգում, թեքահարթակների և աստիճանների պատրաստում, խաղերի, զրուցատաղավարների, սպորտային մարզագույքի տեղակայում:

4. Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Դավթաշեն վարչական շրջանի տարածքում գործում է հ. 20 ամբուլատոր բժշկական կենտրոնը, «Առաքելություն Հայաստան» բարեգործական ճաշարանը:

Վարչական շրջանի տարածքում է գտնվում «Հուլիսի ավան» թաղամասը, որը զբաղեցնում է 15.9 հա տարածք: Կառուցապատումն իրականացվել է քոթեջային տիպի ցածրահարկ շենքերով: Թաղամասում կա 1-2 հարկից բաղկացած 80 տուն: Բնակարանաշինության գործընթացը շարունակական է:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

• Սոցիալական ծրագրերի իրականացում

Ծրագրի նպատակը

Ծրագիրն ուղղված է Դավթաշեն վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն (ֆինանսական և պարենային) ցուցաբերելուն:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում (տրանսպորտային ծախսեր), հարազատ չունեցող անձանց հուղարկավորության ծախսերի ապահովում, ամանորի միջոցառումների շրջանակում սոցիալական անապահով ընտանիքներին սննդի փաթեթների տրամադրում, Կանանց տոն (բազմազավակ մայրերին դրամական պարգևատրում), Սուրբ Զատիկ, Մայրության և գեղեցկության տոն, Մայիսի 1 (աշխատանքի վետերաններին դրամական պարգևատրում), Հաղթանակի և խաղաղության տոն, Ընտանիքի օր (բազմազավակ ընտանիքներին դրամական պարգևատրում), Երեխաների պաշտպանության օր, Գիտելիքի օր (սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին գրենական պիտույքների տրամադրում), Անկախության տոն (արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ընտանիքներին դրամական պարգևատրում), Ուսուցչի օր, Տարեցների միջազգային օր (երկարակյացներին դրամական պարգևատրում), Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օր (հաշմանդամություն ունեցող անձանց դրամական օգնության տրամադրում):

Է Բ Ե Բ ՈՒ Ն Ի Վ Ա Ր Չ Ա Կ Ա Ն Շ Ր Ջ Ա Ն

Էրեբունի վարչական շրջանն ընդգրկում է Երևան քաղաքի հարավարևելյան հատվածը՝ զբաղեցնելով 4749 հա տարածք և ունի 127,2 հազ. բնակչություն: Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը կազմում է 21,3% իսկ բնակչության թվաքանակում՝ 11,8%: Էրեբունին սահմանակից է Երևանի Կենտրոն, Նոր-Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Նուբարաշեն վարչական շրջաններին, ինչպես նաև ՀՀ Կոտայքի և Արարատի մարզերին:

Հիմնախնդիրներ

1. Ոռոգման ցանցի հիմնական և մասնակի վերանորոգում, կոյուղագծերի և նստած դիտահորերի նորոգում, ինչպես նաև շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի հիմնանորոգում:
2. Բազմաբնակարան շենքերի տակ ստորերկրյա ջրերի վերացման նպատակով դրենաժային համակարգի կառուցում:
3. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների և վթարային պատշգամբների վերանորոգում:
4. Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքներին և հասարակական նշանակության կառույցների շրջակայքում կանաչապատ տարածքների ստեղծում:
5. Վթարային շենքերի ամրացում կամ բնակչության տեղափոխում:
6. Հանգստի նոր գոտիների ստեղծում, կանաչ տարածքների ընդլայնում, բակային տարածքների բարեկարգում, միջբակային տարածքների լուսավորում և ասֆալտապատում:
7. Հ.72 և հ.73 մանկապարտեզների վերանորոգում:
8. Երկու նոր մանկապարտեզի կառուցում:
9. Նոր բազմաֆունկցիոնալ սպորտդպրոցի կառուցում:
10. Կրպակների և խանութների արտաքին տեսքի արդիականացմանն ուղղված միջոցառումների իրականացում:
11. Աղբահանության և սանմաքրման ծառայությունների որակի շարունակական բարելավում:
12. Էրեբունի վարչական շրջանի սոցիալապես անապահով բնակիչներին անվճար պրոֆիլակտիկ ստուգման և բժշկական խորհրդատվության տրամադրման պարբերական ակցիաների կազմակերպում:
13. Առաջնային ուշադրություն և հոգածություն միայնակ սոցիալապես անապահով թոշակառուներին՝ առողջական և սոցիալական խնդիրների լուծման հարցում, արտոնությունների տրամադրման և աջակցության հատուկ ծրագրերի շարունակականություն:
14. Օժանդակություն հաշմանդամություն ունեցող բնակիչներին՝ սալակների ձեռքբերման ուղղությամբ, նոր թեքահարթակների կառուցում:
15. Լքյալ և չօգտագործվող հողակտորների սանիտարական վիճակի բարելավում:
16. Քաղաքաշինական միջավայրի բարելավում և արդյունավետ հողօգտագործման ապահովում:
17. Տարհանման կետերի՝ անհրաժեշտ ժամանակակից գույքով վերազինում (ինքնալուսավորվող ցուցանակներ):
18. Էրեբունու փողոցը՝ որպես Երևան քաղաքի հիմնադրման վայրից սկսվող փողոց, զբոսաշրջային կենտրոն դարձնելու աշխատանքների իրականացում:

1. Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Էրեբունի վարչական շրջանում առկա է 261 բազմաբնակարան շենք, 80 բարձրահարկ, 181 ցածրահարկ: Գործում է 218 վերելակ:

Էրեբունի վարչական շրջանում փողոցների ընդհանուր երկարությունը կազմում է 101.9 կմ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Ասֆալտե տոնն ծածկի վերանորոգում և պահպանում**

Ծրագրի նպատակը

Էրեբունի վարչական շրջանի բակային տարածքների, փողոցների և մայրերի ասֆալտե տոնն ծածկի մասնակի վերանորոգում: Անխափան երթևեկությունն ապահովելու համար տարվա ընթացքում ասֆալտ-բետոնե ծածկի վրա առաջացող փոսերի, անհարթությունների վերանորոգում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Տարեկան ծրագրերի շրջանակում կատարվում է Էրեբունի վարչական շրջանի բակերի, միջբակային ճանապարհների և մայրերի ասֆալտե տոնն ծածկի գույքագրում: Գույքագրման արդյունքում կատարվում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդման, խճե հիմքի իրականացման աշխատանքներ, ինչպես նաև դիտահորերի և անձրևոսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում:

Նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի Մուշակյան թաղ., Ջրաշեն թաղ., Վարդաշենի փող., Սարի Թաղի փողոցներ, Նոր Արեշի փողոցներ, Բեռնակիրների փող., Գաջեգործների փող. և մայրեր, Ռոստոմյան փող. և մայրեր, Սասունցի Դավթի փող. մայրեր, Սասունցի Դավթի նրբանցքներ, Աճեմյան փող. և մայրեր, Կուստոյի նրբ. մայրերի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ:

- **Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Էրեբունի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում՝ բնակիչների կենսապայմանների բարելավում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ տանիքների վնասված հատվածների վերանորոգում իզոգամներով:

Մասնավորապես նախատեսվում է օժանդակություն բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին՝ Սասունցի Դավթի փող. հ.70/1, 70/2, 70/3 շենքեր, Գլինկայի փող. հ.6 շենք, Արցախի պող. հ.6 բ. շենք, Խ.Դոնի փող. հ.19, 27 բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգման համար:

- **Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Բազմաբնակարան շենքերի թեք տանիքները վերանորոգում՝ բնակիչների համար բարենպաստ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է Էրեբունի վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ թեք տանիքների վնասված հատվածների վերանորոգում թիթեղյա կամ կղմինդրե ծածկերով:

Մասնավորապես նախատեսվում է օժանդակություն բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին՝ Ռոստոլյան փող. հ.15 շենք, Արցախի պող. հ.1 շենք, Գ.Նժդեհի փող. հ.58 շենքի թեք տանիքների հիմնանորոգման համար:

- **Վերելակների հիմնանորոգում**

Ծրագրի նպատակը

Էրեբունի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների նորոգում և հիմնանորոգում, վերելակային տնտեսության արդիականացում՝ բնակիչների անվտանգության ապահովման նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է վարչական շրջանի Դիմիտրովի փող. հ.76 շ., Դիմիտրովի փող. հ.87 շենքի, Արցախի պող. հ.22/3 շ., Արցախի պող. հ.10 շենք, Աթոյան անց. հ.16 շենք, Խ.Դոնի փող. հ.5 շ., Խ.Դոնի փող. հ.12, 17 բազմահարկ շենքերի վերելակների հիմնանորոգում և առանձին հատվածների ընթացիկ նորոգում:

- **Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Էրեբունի վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի մուտքերի և աստիճանավանդակների պատշաճ տեսքի ապահովում՝ բնակիչների հարմարավետության, բարենպաստ պայմանների ապահովման նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է Էրեբունի վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ մուտքերի վերանորոգման աշխատանքները՝ թեքահարթակների պատրաստում, սալապատում, պատերի և առաստաղների, դռների և պատուհանների վերանորոգում կամ նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների վերանորոգում, վնասված ապակիների փոխարինում նորով:

Մասնավորապես նախատեսվում է օժանդակություն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի կառավարման մարմիններին՝ Տ.Մեծի պող. հ.40, 71 շենքերի, Արցախի պող. հ.4 շենքի, Խ.Դոնի փող. հ.19/1, 10, 12 շենքերի, Գաջեգործների փող. հ.74/աշենքի, Արցախի պող. հ.18, 18ա շենքերի, Գ.Նժդեհի փող. 58 բազմաբնակարան շենքերի մուտքերի և աստիճանավանդակների վերանորոգման համար:

- **Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Էրեբունի վարչական շրջանում գործող նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Երեխաների անվտանգության ու հարմարավետ պայմանների ապահովման նպատակով վարչական շրջանում գործող 12 նախադպրոցական հիմնարկներում կիրականացվեն թեք և հարթ տանիքների, ինչպես նաև առանձին հատվածների վերանորոգման աշխատանքներ:

2. Կրթություն, մշակույթ, սպորտ

Էրեբունի վարչական շրջանի տարածքում գործում է 3 մասնավոր և 22 պետական հանրակրթական դպրոց (3 ավագ, 16 հիմնական, 3 միջնակարգ), Երևանի ենթակայության 12 մանկապարտեզ, 4 գրադարան, 1 մանկապատանեկան ստեղծագործության կենտրոն, 1 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 մարզադպրոց, 1 շախմատի դպրոց:

Կրթական ծրագրերի շրջանակներում իրականացվում են փոխայցելություններ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Հաղրութի և Ստեփանակերտի շրջանների, ինչպես նաև Սևան քաղաքի դպրոցներ, մանկապարտեզներ, մարզադպրոցներ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- Մշակութային և սպորտային միջոցառումների իրականացում

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակը Էրեբունի վարչական շրջանում մշակութային, ինչպես նաև սպորտային միջոցառումների իրականացումն է՝ բնակչության հանգստի պատշաճ կազմակերպման, երեխաների ընդգրկվածության մեծացման, բակային ընկերասիրության, տոն և հիշատակի օրերի համատեղ անցկացման միջոցով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է ինչպես տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումներ, այնպես էլ տարվա ընթացքում տարատեսակ համերգներ, միջոցառումներ, բակային խաղեր, մրցումներ, սպորտլանդիաներ և այլն:

Էրեբունի վարչական շրջանում, ըստ ժամանակացույցի, որպես պարտադիր ծրագիր իրականացվում է շուրջ 20 մշակութային միջոցառում (Հայոց բանակի օր, Տեառնընդառաջ, Կանանց միջազգային օր, Սուրբ Զատիկ, Մայրության և գեղեցկության օր, 1915թ. Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր, Հաղթանակի տոնակատարություններ, Վերջին զանգ, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Խաղողի օրհնության օր, բակային ժամանցային միջոցառումներ, Գիտելիքի օր, ՀՀ անկախության օր, Ուսուցչի օր, ՀՀ Սահմանադրության օր, Երևանյան ամառ միջոցառումներ, Վարդավառին նվիրված միջոցառում, «Էրեբունի-Երևան» տոնակատարություն, ամանորյա միջոցառումներ):

Ծրագրի իրականացման արդյունքում ակնկալվում է նպաստել Էրեբունի վարչական շրջանի բնակչության շրջանում սպորտի մասսայականացմանը, ինչպես նաև ապահովել բնակչության ակտիվ մասնակցությունը սպորտային միջոցառումներին, խրախուսել առողջ ապրելակերպը:

Լրացուցիչ ծրագրերով, համագործակցությամբ ևս իրականացվելու են տարաբնույթ միջոցառումներ:

3. Կանաչ տարածքների պահպանում և խնամք

Էրեբունի վարչական շրջանի կանաչապատ տարածքը կազմում է 20,6 հա, պուրակների, այգիների և հանգստի գոտիների քանակը 2 է: Վարչական շրջանի ոռոգման ցանցի երկարությունը կազմում է 19,5 կմ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- Կանաչ տարածքների հիմնում և պահպանում

Ծրագրի նպատակը

Բնակիչների համար հանգստի պատշաճ պայմանների ստեղծման նպատակով նախատեսվում է Էրեբունի վարչական շրջանի տարածքում ստեղծել նոր կանաչ տարածքներ, պահպանել և բարեկարգել առկա կանաչապատ տարածքները, ինչպես նաև բարելավել էկո համակարգը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Էրեբունի վարչական շրջանի անբարեկարգ կամ նորոգման կարիք ունեցող տարածքների բարեկարգում, մասնավորապես կանաչ տարածքների վերականգնում (բուսահողի թարմացում, կանաչապատում, ծառատունկ, ծաղկային հատվածի ավելացում), ոռոգման ցանցի մոնտաժում կամ վերագործարկում:

Ծրագիրը ներառում է նաև նոր կանաչ տարածքների ստեղծում և պահպանում՝ ապահովելով կանաչ տարածքների մաքրություն, ծառերի երիտասարդացման աշխատանքների կազմակերպում, կանաչ տարածքների բուժանյութերով մշակում:

- **Հուշարձանների վերանորոգում և պահպանում**

Ծրագրի նպատակը

Էրեբունի վարչական շրջանի տարածքում զբոսաշրջության զարգացման, ինչպես նաև պատմամշակութային արժեքների պահպանման նպատակով վարչական շրջանում գտնվող հուշարձանների և մշակութային արժեքների պահպանում և վերանորոգում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է Սասունցի Դավթի արձանի, Գաջեգործների փողոցում գտնվող Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակին նվիրված հուշարձանի, Լուսադբյուր, Արգիշտի և այլ հուշարձանների շրջակա տարածքի բարեկարգում և պահպանում:

- **Նոր զբոսայգու կառուցում**

Ծրագրի նպատակը

Էրեբունի վարչական շրջանի տարածքում նոր զբոսայգու կառուցում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Զբոսաշրջային հետաքրքրության օբյեկտ դարձնելու նպատակով վարչական շրջանում գտնվող «Էրեբունի» պատմագիտական արգելոց-թանգարանին հարող տարածքում կկառուցվի նոր զբոսայգի և հանգստի գոտի:

Նախատեսվում է զբոսայգում կառուցել նոր ոռոգման ցանց, կիրականացվեն ժամանակակից պահանջներին համապատասխանող կանաչապատման աշխատանքներ: Կիրականացվի այգու բարեկարգում, ինչպես նաև լայնածավալ կանաչապատում, դեկորատիվ բարձր որակ ունեցող տնկիների տնկում և ծաղկապատում:

- **Ոռոգման ցանցի կառուցում և վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Ոռոգման ցանցի ընդլայնում և առկա ցանցի պահպանում

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է Այվագովսկի փողոցի ոռոգման ցանցի կառուցումը, որը կոռոգի Էրեբունի փողոցի շրջադարձի այգին, ինչպես նաև գործող ցանցի վերանորոգում, վերականգնում:

4. Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Էրեբունի վարչական շրջանի տարածքում գործում են «Էրեբունի» և «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոնները, որոնք ընդգրկում են 2 ծննդատուն, «Մուրացան» համալսարանական հիվանդանոցը, ՀՀՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալը, 6 ամբուլատոր պոլիկլինիկա, ատամնաբուժարաններ, շտապ օգնության ենթակայան:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն**

Ծրագրի նպատակը

Ծրագիրն ուղղված է Էրեբունի վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն ցուցաբերելուն:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարներում (տրանսպորտային ծախսեր), սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին պարենային աջակցություն, մասնավորապես՝ Ամանորի միջոցառումների շրջանակում սոցիալապես անապահով ընտանիքներին սննդի փաթեթների տրամադրում, Կանանց տոների առթիվ բազմազավակ մայրերին նվերների տրամադրում, Սուրբ Զատիկի, Հաղթանակի և խաղաղության տոնին և Մայիսի 1-ին՝ աշխատանքի և պատերազմի վետերաններին դրամական պարգևատրում, Ընտանիքի օրվա կապակցությամբ՝ բազմազավակ ընտանիքներին աջակցություն, Երեխաների պաշտպանության օրվա, Գիտելիքի օրվա կապակցությամբ սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին գրենական պիտույքների տրամադրում, Անկախության տոնի առթիվ՝ արցախյան պատերազմում զոհված ազատամարտիկների ընտանիքներին նվերների տրամադրում, Ուսուցչի օր, Փախստականների միջազգային օր, Տարեցների միջազգային օրվա առթիվ երկարակյացներին դրամական պարգևատրում, Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օր՝ հաշմանդամություն ունեցող անձանց աջակցություն:

- **Սոցիալապես անապահով անձանց աջակցության ծրագիր**

Ծրագրի նպատակը

Ծրագիրն ուղղված է Էրեբունի վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն (ֆինանսական և պարենային) ցուցաբերելուն:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է սոցիալապես անապահով ընտանիքներին ֆինանսական օգնության տրամադրում և վարչական շրջանում գործող բարեգործական ճաշարանի միջոցով պարենամթերքով ապահովում:

ԿԵՆՏՐՈՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Կենտրոն վարչական շրջանը ներառում է քաղաքի կենտրոնական մասը, սահմանակից է Աջափնյակ, Արաբկիր, Էրեբունի, Մալաթիա-Սեբաստիա, Նոր Նորք, Նորք-Մարաշ, Շենգավիթ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին:

Կենտրոն վարչական շրջանի տարածքը կազմում է 1335 հա, բնակչությունը՝ 125,6 հազ. մարդ, Երևանի բնակչության թվաքանակում Կենտրոնի բնակչության տեսակարար կշիռը 11,7 տոկոս է:

Հիմնախնդիրները

1. Քաղաքաշինական միջավայրի բարելավում և արդյունավետ հողօգտագործման ապահովում:
2. Կենտրոն վարչական շրջանի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների պարզեցում և որակի էական բարելավում:
3. Բակային տարածքների բարեկարգում, կանաչապատում, միջբակային տարածքների լուսավորում, ասֆալտապատում, մայրերի մասնակի և կապիտալ վերանորոգում, խաղահրապարակների ստեղծում, բակերի ոռոգման ցանցերի վերականգնում, նորերի կառուցում, սանմաքրման և աղբահանության որակի բարելավում:
4. Կանաչ տարածքների ընդլայնում և պահպանում, կանաչապատ տարածքների խնամքի նորագույն մոտեցումների կիրառում, հանգստի գոտիների ստեղծում, այգիների բարեկարգում և կանաչապատում:
5. Փողոցներում և բակային տարածքներում արտաքին լուսավորության ապահովում, վթարային հենասյուների փոխարինում:
6. Հաշմանդամություն ունեցող անձանց համար թեքահարթակների ստեղծում:
7. Անվտանգ տեղաշարժն ապահովելու համար անցումների ընթացիկ նորոգում և նորերի կառուցում:
8. Փոքր Կենտրոնը բեռնաթափելու նպատակով տրանսպորտային նոր հանգույցների ստեղծում:
9. Բազմաբնակարան շենքերի պարտադիր նորմերի արդյունավետ և ամբողջական իրականացում:
10. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների, արտաքին պատերի և կախովի պատշգամբների վերանորոգում, շքամուտքերի պատուհանների փոխարինում, նոր վերելակների ձեռք բերում և տեղադրում, ներքին կոյուղագծերի և ջրագծերի նորոգում:
11. Բազմաբնակարան շենքերում բնակֆոնդի պահպանման, վերանորոգման աշխատանքների իրականացմանն ուղղված աջակցության ապահովում,
12. Էլեկտրական մալուխների վերակառուցում՝ ներառյալ բակերը և բազմաբնակարան շենքերը:
13. Աջակցություն սիրիահայերին:
14. Սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցության ցուցաբերում և հասցեականության ապահովում:
15. Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավում՝ հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, գույքի թարմացում, բակերի ոռոգման ցանցերի վերականգնում, նորերի կառուցում և կանաչապատում:
16. Փողոցային տրանսպորտային հոսքերի բեռնաթափում:

1. Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Կենտրոն վարչական շրջանի ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 106,0 կմ է: Վարչական շրջանում հաշվառված է բնակելի 807 շենք, անհատական բնակելի 8300 տներ, 825 վերելակ: Բազմաբնակարանային շենքերի կառավարումն իրականացվում է 42 համատիրությունների և 28 լիազորագրային կառավարման միջոցով:

Կենտրոն վարչական շրջանում կա 425 բակային տարածքներ: Բակերում կա 120 խաղահրապարակ և մինի ֆուտբոլի 25 դաշտ, 340 խաղեր և կարուսելներ, 220 մարզասարքեր, 114 զրուցատաղավարներ, տեղադրված են 676 նստարաններ, 516 աղբամաններ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- Փողոցների, մայրերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում, ասֆալտապատում

Ծրագրի նպատակը

Վարչական շրջանի փողոցների, միջբակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտբետոնե ծածկերի ընթացիկ և կապիտալ վերանորոգում՝ բնակիչների համար հարմարավետ բակեր, խաղահրապարակներ և երթևեկելի հարթ ճանապարհներ ու մայրեր ապահովելու նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կենտրոն վարչական շրջանի փողոցների, բակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտբետոնե ծածկի վիճակի ուսումնասիրություն, կլիմայական և այլ պատճառներից առաջացած փոսերի, ճաքերի և քանդված շերտերի ծավալների վերաբերյալ տեխնիկական պայմանների կազմում և վերանորոգման աշխատանքների իրականացում՝ ըստ կազմված տեխ.պայմանների: Վերանորոգման աշխատանքները ներառում են ասֆալտբետոնե ծածկի վրա առաջացած փոսերից վնասված շերտերի հեռացում, նոր փոսերի ձևավորում և ասֆալտապատում:

- Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում

Ծրագրի նպատակը

Կենտրոն վարչական շրջանի բնակիչների համար հանգստի և խաղերի առավել հարմարավետ պայմանների ստեղծում, միջբակային տարածքների լուսավորում, կանաչապատում, ինչպես նաև խաղահրապարակների բարեկարգում և ընդարձակում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է բակային տարածքների կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ բակերում մայրերի եզրաքարերի վերանորոգում, սալիկների, նստարանների, զրուցատաղավարների, աղբամանների, գիշերային լուսավորության հենասյուների տեղադրում: Ծրագիրը ներառում է նաև երեխաների համար խաղահրապարակներում սպորտային մարզագույքի, մանկական խաղերի տեղադրում, հնացած և վնասված խաղերի վերանորոգում և նորերով փոխարինում: Բակերն ավելի գեղեցիկ ու հարմարավետ դարձնելու նպատակով՝ սիզամարգերի ստեղծում, ծառատունկ, ծաղկապատում, ջրագծերի վերականգնում:

- Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում

Ծրագրի նպատակը

Կենտրոն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում, եղանակային անբարենպաստ պայմանների դեպքում՝ կաթոցների կանխում, վերջին հարկերում բնակվող բնակիչների համար ապահով բնակարանային պայմանների ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված հարթ տանիքների հիմնանորոգում իզոգամով, անհրաժեշտության դեպքում ներառելով նոր ցեմենտ-ավազե սվաղի ծածկույթ: Կենտրոն վարչական շրջանում հաշվառված են 131 հատ թեք տանիք ունեցող շենքեր՝ 113.697 քմ մակերեսով: 5 տարիների ընթացքում նախատեսվում է վերանորոգել 40.000 քմ հարթ տանիք:

• **Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Կենտրոն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում, եղանակային անբարենպաստ պայմանների դեպքում՝ կաթոցների կանխում, վերջին հարկերում բնակվող բնակիչների համար ապահով տանիքների ստեղծում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վնասված թեք տանիքների հիմնանորոգում ազդեցության օգնությամբ, մաշված մետաղական ծածկերի փոխարինում:

Կենտրոն վարչական շրջանում հաշվառված են 567 հատ թեք տանիք ունեցող շենքեր՝ 428.564 քմ մակերեսով: 5 տարիների ընթացքում նախատեսվում է վերանորոգել 15.000 քմ թեք տանիք:

• **Թեքահարթակների կառուցում**

Ծրագրի նպատակը

Հաշմանդամություն ունեցող անձանց համար հանրային տարածքներում տեղաշարժման մատչելիության և հարմարավետության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կենտրոն վարչական շրջանի տարածքում առկա է 468 թեքահարթակ: Ծրագիրը նախատեսում է հինգ տարիների ընթացքում փողոցներում, հանրային շենքերում և այլ վայրերում տարեկան կառուցել 25 հատ թեքահարթակ: Թեքահարթակների կառուցման աշխատանքներում կշարունակվեն ներգրավվել տնտեսվարողները:

• **Բազմաբնակարան շենքերի վերելակների նորոգում**

Ծրագրի նպատակը

Բարձրահարկ շենքերում բնակիչների համար անխափան և անվտանգ վերելակների ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է մշտական հսկողություն, անսարքությունների անմիջական վերացում, վերելակների խցիկների վերանորոգում՝ ամբողջ վերելակային տնտեսության համակարգում և սպասարկում: Կենտրոն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերում կան 825 հատ վերելակներ, որից 21-ը՝ բեռնատար:

• **Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Բազմաբնակարան շենքերի բնակիչների համար մաքուր, հարմարավետ և ապահով շքամուտքերի ստեղծում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է շքամուտքերի ներկում, ծեփապատում, սալիկապատում, ապակեպատում, դռների, պատուհանների վերանորոգում, պատուհանների փոխարինում եվրոպատուհաններով, և ՀԷՑ-երի կողմից նոր մալուխների անցկացում՝ մեկուսատուփերում: Կենտրոն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերում կա 1861 շքամուտք՝ 698 շենքում, վերանորոգվել են 933 շքամուտք, վերանորոգման կարիք ունեն՝ 928-ը:

- **Բազմաբնակարան շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման խողովակաշարերի վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Բազմաբնակարան շենքերում բնակիչների համար կենցաղային հարմարավետ պայմաններում ապահովում, անխափան ջրամատակարարում և ջրահեռացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կենտրոն վաչական շրջանի շենքերի մեծամասնությունը կառուցվել է 1930-ական թվականներից հետո: Միջինը՝ շենքերի խողովակների մաշվածությունը կազմում է 65 տարի: Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգի վերանորոգում, փտած խողովակների փոխարինում պլաստմասե և մետաղյա խողովակներով, ինչպես նաև ջերմամեկուսացման աշխատանքներ:

2. Կանաչապատում

Կենտրոն վարչական շրջանում առկա են 22 զբոսայգիներ, պուրակներ, հանգստյան գոտիներ՝ 18 հա: Կանաչապատ տարածքները 49 հա է, ոռոգման ցանցի երկարությունը 50,1 կմ է, մերձակա անտառային գոտին՝ 120 հա:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Կանաչ տարածքների ընդլայնում և պահպանում**

Ծրագրի նպատակը

Կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում, բնակիչների և զբոսաշրջիկների համար առավել գեղեցիկ, հարմարավետ և մաքուր տարածքների ստեղծում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում, կանաչապատում: Աշխատանքները ներառում են՝ ծառատունկ, կանաչ տարածքների ծաղկապատում, սիզամարգերի բարեկարգում: Կիրականցվի չոր ծառերի հատում և երիտասարդացում, հիվանդ ծառերի խոր էտ, սիզամարգերի մաքրում թափված տերևներից, չորուկներից և աղբից: Առողջ ծառեր և կանաչապատ տարածքներ ունենալու նպատակով կկատարվի ծառերի բնաբաժակների փորում և փխրեցում, սնուցում հանքային պարատանյութերով և բուծում թունաքիմիկատներով: Ծրագիրը կներառի նաև 46 հուշարձանների հարակից տարածքների պահպանում և խնամք:

- **Ոռոգման ցանցի վերանորոգում և ընդլայնում**

Ծրագրի նպատակը

Ոռոգման ցանցի նորոգում և ընդլայնում, ոռոգման համար հարմարավետ պայմանների ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կենտրոն վարչական շրջանում ոռոգման ցանցի երկարությունը 50.1կմ է: Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ոռոգելի կանաչ տարածքների խնամքի և պահապանման համար ոռոգման ցանցերի նորոգում, վնասված երկաթյա և պլաստմասե խողովակների, փականների փոխարինում, ոռոգման ցանցի ընդլայնում, ջրագծերի վերականգնում:

3.Կրթություն, մշակույթ, սպորտ

Կենտրոն վարչական շրջանում գործում է 34 մանկապարտեզ, որից՝ Կենտրոն վարչական շրջանի ենթակայության տակ է գործում 21-ը, 31 դպրոց (6 ավագ, 25 հիմնական), 23 ԲՈՒՀ, արվեստի և երաժշտական 7 դպրոց (վարչական շրջանի ենթակայության՝ 2), միջնակարգ մասնագիտական 2 ուսումնարան, 4 գրադարան (վարչական շրջանի ենթակայության՝ 2), կրթական-մշակութային 9 հաստատություն (վարչական շրջանի ենթակայության՝ 1), 2 մարզադպրոց, 19 թատրոն, 5 մշակութային կենտրոն, 31 թանգարան և ցուցասրահ:

Կենտրոն վարչական շրջանում գործում է 9 կրթական-մշակութային հաստատություն, որից 1-ը՝ վարչական շրջանի ենթակայության, 19 թատրոն, 5 մշակութային կենտրոն, 31 թանգարան և ցուցասրահ:

Կենտրոն վարչական շրջանում գործում է 2 մարզադպրոց, 1 շախմատի դպրոց, մինի ֆուտբոլի 25 դաշտ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- Կրթական միջոցառումների կազմակերպում

Ծրագրի նպատակը

Ապագայի համար ավելի կրթված և զարգացած երիտասարդության դաստիարակում, ավելի շատ անապահով երեխաների ներգրավում կրթական ծրագրերում, կազմակերպվող միջոցառումներում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում Կենտրոն վարչական շրջանի կողմից կիրականացվեն միջոցառումներ՝ Պոեզիայի համաշխարհային օր, «Վերջին Զանգ», կկազմակերպվեն Տարեվերջյան մեծ միջոցառումներ մանկապարտեզների սաների մասնակցությամբ, շրջանի անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաների համար ամառային հանգիստ կկազմակերպվի Հանքավանում: Կկազմակերպվի ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրին մասնակցությունը՝ հյուրընկալ ընտանիքների ապահովմամբ: Նախատեսվում է նաև Գիտելիքի օր՝ սեպտեմբերի 1-ին, Կենդանիների պաշտպանության օր, «Ուսուցչի օր», «Սպորտլանդիա»՝ մանկապարտեզների սաների մասնակցությամբ և այլ ծրագրերի իրականացում:

- Ամառային արձակուրդների ընթացքում բակային ճամբարների կազմակերպում

Ծրագրի նպատակը

Երեխաների համար զվարճալի և հետաքրքիր ամառային արձակուրդների կազմակերպում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակներում կազմակերպել բակային ճամբարներ, զվարճալի խաղեր՝ խաղավարների, ծաղրածուների և հեքիաթների հերոսների մասնակցությամբ, միջբակային մրցույթներ, մանկական ֆիլմերի ցուցադրություններ, բացօթյա նկարչություններ, հայկական և այլ ժողովուրդների պարերի համերգային ծրագրեր՝ արվեստի դպրոցների և այլ պարային համույթների մասնակցությամբ, մարզական էստաֆետային խաղեր՝ տարբեր բակերի երեխաների միջև, շախմատային մրցախաղեր և այլ միջոցառումներ:

• **Մշակութային միջոցառումների անցկացում**

Ծրագրի նպատակը

Մշակութային ժառանգության պահպանում և փոխանցում սերունդներին, տոն և հիշատակի օրերի, ազգային ծեսերի, ավանդույթների վերաբերյալ իրազեկում երիտասարդության շրջանում, ժողովրդական ստեղծագործությունների խրախուսում և տարածում: Անցկացվող մշակութային միջոցառումների միջոցով բնակիչների հետաքրքիր և բավանդակալից առօրյայի կազմակերպում, իսկ բակային մրցույթների, խաղերի և բակային ճամբարների կազմակերպմամբ՝ երեխաների զբաղվածության ապահովում, ընկերական հարաբերությունների ձևավորում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է մշակույթի տների, ակումբների, գրադարանների, կրթական և մշակութային այլ հաստատությունների և կազմակերպությունների գործունեության կազմակերպում, դրանց շենքային պայմանների բարելավում, հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, գույքի թարմացում: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն պարտադիր միջոցառումներ՝ տոն և հիշատակի օրեր, Հայոց բանակի օր, Սիրո և երիտասարդների բարեխոս Ս. Սարգսի տոն, Տյառն ընդառաջի տոն, Կանանց միջազգային օր՝ մարտի 8-ի տոն, Մայրության և գեղեցկության տոն՝ ապրիլի 7, «Էրեբունի-Երևան» տոնակատարություն, Բարեկենդանի տոն, Թատրոնի միջազգային օր, Ոստիկանի օր, Հարության տոն՝ Ջատիկ, Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր, Աշխատանքի օր, համերաշխության միջազգային օր, Հաղթանակի օր, Ընտանիքի օր, Թանգարանների միջազգային օր, Հանրապետության օր, Երեխաների պաշտպանության միջազգային օր, բուժաշխատողների օր, ՀՀ սահմանադրության օր և պետ. խորհրդանշանների օր: «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակներում բակային ճամբարների կազմակերպում, Նկարչության օր՝ հունիսի 28-ին, Հայ գրատպության տարելից՝ հուլիսին, Վարդավառ, Խաղողօրհներգ, Անկախության օր, Երաժշտության միջազգային օր, Գրադարանավարի օր, Բերքի տոն, Ուսանողների միջազգային օր, Ամանորի և Սուրբ ծննդյան տոնակատարություն:

• **Սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում**

Ծրագրի նպատակը

Մեծացնել բնակիչների ներգրավվածությունը սպորտային կյանքին, առողջ ապրելակերպի խրախուսում և ֆիզիկապես առողջ երիտասարդության ձևավորում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում կիրականացվեն օրացույցային պլանով նախատեսված միջոցառումներ,

- 1.«Անկախության տարեդարձին նվիրված դպրոցականների մարզական խաղեր» վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, սեղանի թենիս, ֆուտբոլ, թեթև ատլետիկա,
- 2.«Ազգային ժողովի գավաթի խաղարկություն» 1-6-րդ դասարանցիների միջև (թեթև ատլետիկա),
- 3 Կենտրոն վարչական շրջանի վետերան շախմատիստների առաջնություն,
4. ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթ փառատոն,
5. «Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք» համաքաղաքային ամենամյա ավանդական բակային փառատոն (ֆուտբոլ, վոլեյբոլ, հանդբոլ, բասկետբոլ, հեծանվավազք, մարզատրամաբանական խաղեր),
- 6.Նախագորակոչային և գորակոչային տարիքի դպրոցականների ռազմամարզական խաղեր,
7. Հանրակրթական դպրոցների աշակերտների միջև անցկացվող սպորտլանդիա:

Ծրագիրը ներառում է նաև այլ միջոցառումների կազմակերպում՝ միջբալկան շախմատային մրցաշար, միջդպրոցային սպորտլանդիաներ, տոնական համերգներ:

4. Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Կենտրոն վարչական շրջանում գործում է 29 առողջապահական կազմակերպություն (Երևանի ենթակայության՝ 5), Գերմանական Կարմիր Խաչի բարեգործական ճաշարանը:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Սոցիալապես անապահով անձանց և ընտանիքներին աջակցություն**

Ծրագրի նպատակը

Սոցիալապես անապահով անձանց և ընտանիքների սոցիալական խնդիրների մասնակի լուծում, ՀՄՊ մասնակիցներին և վետերաններին, Արցախյան ազատամարտի զինհաշմանդամներին և ազատամարտում զոհվածների ընտանիքներին ուշադրության ցուցաբերում, տոնական տրամադրության ստեղծում, ուշադրության և հոգածության ցուցաբերում Կենտրոն վարչական շրջանում հաշվառված խիստ կարիքավոր հաշմանդամություն ունեցող անձանց, միայնակ, անժառանգ տարեցների նկատմամբ:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է սոցիալական բեռի թեթևացման նպատակով ֆինանսական աջակցության ցուցաբերում՝ սոցիալապես անապահով և կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված ընտանիքներին և անձանց, սիրիահայերին, 2 հասարակական կազմակերպությունների (ՀՄՊ մասնակիցների միություն, Մանկավարժ վետերանների միություն) և այլն:

Ծրագիրը ներառում է սեպտեմբերի 1-ի կապակցությամբ 2-ից 4-րդ դասարանի սոցիալապես անապահով ընտանիքների երեխաներին պայուսակների և գրենական պիտույքների տրամադրում, հունիսի 1-ի կապակցությամբ՝ 50-10 տարեկան երեխաներին նվերների բաշխում, հագուստի տրամադրում, Ամանորի կապակցությամբ՝ մինչև 6 տարեկան երեխաներին կոնֆետների փաթեթների տրամադրում, ապրիլի 7-ի կապակցությամբ 1-3 ամսական նորածիններին և նրանց մայրերին նվերների տրամադրում:

Ծրագիրը նախատեսում է Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ Կենտրոն վարչական շրջանի թվով 4450 սոցիալապես անապահով ընտանիքներին և հատուկ խմբերին սննդամթերքի փաթեթների բաշխում:

Մայիսի 9-ի կապակցությամբ 72 ՀՄՊ վետերաններ և Արցախյան ազատամարտի՝ 1-ին և 2-րդ խմբի 67 զինհաշմանդամներ կստանան դրամական պարգևատրում, զոհված ազատամարտիկների թվով 90 կանանց և մայրերին Մարտի 8-ի՝ կանանց միջազգային օրվա կապակցությամբ կհանձնվեն նվերներ:

Նոյեմբերի 3-ի՝ Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա կապակցությամբ Կենտրոն վարչական շրջանի խիստ կարիքավոր 1-ին և 2-րդ խմբի 90 հաշմանդամություն ունեցող անձանց, 50 լսողական հաշմանդամություն ունեցող անձանց, 80 տեսողական հաշմանդամություն ունեցող անձանց, և Հոկտեմբերի 1-ի՝ Տարեցների միջազգային օրվա կապակցությամբ 80 միայնակ, անժառանգ տարեցներն կհանձնվեն նվերներ: Միայնակ անժառանգ տարեցներին, առավել խոցելի խմբերի անձանց օրեկան մեկանգամյա սննդի ապահովման նպատակով համագործակցությունը կշարունակվի Գերմանական Կարմիր Խաչ կազմակերպության Երևանյան մասնաճյուղի հետ՝ 70 սոցիալապես անապահով և միայնակ անձանց մեկանգամյա ճաշով ապահովելու համար:

Ծրագիրը ներառում է նաև համագործակցություն «Օրբան» ԲԿ-ի հետ՝ բարեգործական ճաշարանից օգտվել ցանկացողների ցուցակներ կազմելու նպատակով:

ՄԱԼԱԹԻԱ-ՍԵԲԱՍՏԻԱ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանը սահմանակից է Աջափնյակ, Կենտրոն և Շենգավիթ վարչական շրջաններին: Արտաքին սահմանագծով հարում է Արարատի և Արմավիրի մարզերին:

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի տարածքը կազմում է 2516 հա, բնակչությունը՝ 136.7 հազ. մարդ: Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը 11.3% է, իսկ բնակչության թվաքանակում՝ 12.7%:

Վարչական շրջանն ընդգրկում է Հաղթանակ թաղամասը, Լենիգրադյան, Շերամի, Բաբաջանյան փողոցներով և Իսակովի պողոտայով ճյուղավորված բնակելի զանգվածները:

Հիմնախնդիրները

1. Բակային տարածքների բարեկարգում, ներառյալ միջբակային տարածքների լուսավորում և ասֆալտապատում, մայթերի մասնակի և կապիտալ վերանորոգում, խաղահրապարակների ստեղծում:
2. Հանգստի գոտիների ստեղծում, այգիների կանաչապատում և բարեկարգում:
3. Վարչական շրջանի կողմից բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարելավում:
4. Բազմաբնակարան շենքերի աղբահանության որակի բարելավում, սանմաքրման և պարտադիր նորմերի արդյունավետ իրականացում:
5. Կառուցապատվող «Մուշ» և «Հաղթանակ» թաղամասերի, «ՌԱՕ ՄԱՐՍ» գործարան տանող ճանապարհների վերանորոգում, փողոցների կառուցում, արտաքին լուսավորության անցկացում:
6. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների վերանորոգում, վերելակների նորոգում և տեղադրում, բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում:
7. Ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի նորոգում, ոռոգման ցանցի ընդլայնում:
8. Հենապատերի հիմնանորոգման և վերանորոգման աշխատանքների շարունակականության ապահովում, քարաթափման կանխարգելիչ միջոցառումների իրականացում:
9. Վերգետնյա և ստորգետնյա անցումների, թեքահարթակների կառուցման ծրագրի շարունակականության ապահովում, առկա թեքահարթակների վերանորոգում և պատշաճ տեսքի պահպանում:
10. Արտաքին լուսավորության ապահովում՝ ներառյալ չլուսավորվող փողոցները և տարածքները, վթարային հենասյուների փոխարինում:
11. Կարիքավոր ընտանիքներին աջակցության ծրագրերի շարունակականության ապահովում:
12. Մոցիալապես անապահով անձանց համար բժշկական օգնությունների՝ հետազոտությունների և բուժումների, անվճար կազմակերպում:
13. Աջակցության հատուկ ծրագրերի շարունակականության ապահովում (բարեգործական ճաշարաններ, աջակցություն սիրիահայ ընտանիքներին, երեխաների ամառային հանգստի կազմակերպում):
14. Կրթօջախների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավում՝ հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, գույքի թարմացում, բակերի ոռոգման ցանցերի վերականգնում, նորերի կառուցում և կանաչապատում:

1. Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Վարչական շրջանն ունի 5597 բնակելի տուն և 589 բազմաբնակարան բնակելի շենք, որոնցից 495-ը բարձրահարկ են (9-16 հարկանի): Առկա է 92 թեք և 497 հարթ տանիք, 996 վերելակ: Վարչական շրջանն ունի 122 փողոց, որոնց ընդհանուր երկարությունը կազմում է 97,79 կմ: Շրջանի փողոցների և բակերի արտաքին լուսավորության ցանցի երկարությունը 93,11 կմ է: Վարչական շրջանում առկա է 120 վերանորոգված խաղահրապարակ, 12 մինի ֆուտբոլի դաշտ, 548 խաղեր և կարուսելներ, 183 մարզասարք, 168 զրուցատաղավար, 1667 նստարան, 594 աղբաման:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- Փողոցների, մայրերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում, ասֆալտապատում, եզրաքարերի նորոգում

Ծրագրի նպատակը

Տրանսպորտի երթևեկությունը և բնակիչների տեղաշարժն առավել անվտանգ և հարմարավետ դարձնելու նպատակով վարչական շրջանի փողոցների, մայրերի և միջբակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտբետոնե ծածկի, եզրաքարերի ընթացիկ և կապիտալ վերանորոգում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Վարչական շրջանի փողոցների ընդհանուր երկարությունը 97.79 կմ է: Ծրագրի շրջանակներում կատարվում է վարչական շրջանի փողոցների, մայրերի, բակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտբետոնե ծածկի, եզրաքարերի վիճակի ուսումնասիրություն, ըստ տեխնիկական պայմանների կազմվում են հասցեական սխեմաներ: Վերանորոգման աշխատանքները կիրականացվեն որակավորում ունեցող մասնագետների մասնակցությամբ՝ ըստ կազմված տեխնիկական պայմանների և սխեմաների: Թեքված և կոտրված եզրաքարերը կփոխարինվեն նորերով:

- Բակային տարածքների բարեկարգում

Ծրագրի նպատակը

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բնակիչների հանգստի համար առավել հարմարավետ պայմանների ստեղծում, միջբակային տարածքների լուսավորում, կանաչապատում, ինչպես նաև խաղահրապարակների ասֆալտապատում և ընդարձակում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսում է բակային տարածքների կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ աստիճանների սալիկապատում բազալտե սալիկներով, բազրիքների տեղադրում, արտաքին լուսավորության անցկացում, նստարանների, զրուցատաղավարների, աղբամանների տեղադրում, խաղահրապարակներում սպորտային մարզագույքի, մանկական խաղերի տեղադրում, հնացած և վնասված խաղերի վերանորոգում և նորերով փոխարինում: Բակերն ավելի գեղեցիկ ու հարմարավետ դարձնելու նպատակով՝ սիզամարգերի կանաչապատում, ծառատունկ, ծաղկապատում, ջրագծերի վերականգնում:

- Բազմաբնակարան շենքերի վերելակների վերանորոգում և արդիականացում

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է ապահովել վերելակային տնտեսության անվտանգ շահագործումը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բազմաբնակարան շենքերում առկա է 996 վերելակ, որից 961-ը մինչև 1985թ. արտադրության են: Անհրաժեշտություն կա այդ վերելակների վերանորոգման, ճոպանների ստուգման և խցերի արդիականացման: Ծրագրի

շրջանակներում կկատարվի շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների վիճակների ուսումնասիրում և գույքագրում, կիրականացվեն անհրաժեշտ վերանորոգման աշխատանքներ և կարդիականացվեն հնաոճ վերելակների խցերը: Կիրականացվեն նաև հորդանների մաքրման և ճուպանների վիճակի ստուգման աշխատանքներ:

- **Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում**

Ծրագրի նպատակը

Վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում, կաթոցների կանխում, վերջին հարկերում բնակվող բնակիչների համար ապահով տանիքների ստեղծում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակում գույքագրված բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վնասված ծավալների ուսումնասիրում, հասցեական սխեմաների կազմում, դրանց նորոգում՝ ջրամեկուսիչ շերտի քանդում և ջրամեկուսիչ շերտի իզոգամապատում: Շրջանում առկա է հարթ տանիք ունեցող 497 շենք՝ 246675քմ ընդհանուր մակերեսով: Վերանորոգման կարիք ունի շուրջ 86400քմ տանիք:

- **Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում**

Ծրագրի նպատակը

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում, կաթոցների կանխում, վերջին հարկերում բնակվող բնակիչների համար ապահով տանիքների ստեղծում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակում գույքագրված բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վնասված ծավալների ուսումնասիրում, հասցեական սխեմաների կազմում, դրանց նորոգում ազդեցություն ունի: Վարչական շրջանում առկա է թեք տանիք ունեցող 92 շենք՝ 70910քմ ընդհանուր մակերեսով: Վերանորոգման կարիք ունի շուրջ 20000քմ տանիք:

- **Բազմաբնակարան շենքերի մուտքերի վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի բնակիչների համար ապահով, մաքուր և հարմարավետ մուտքերի ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան բնակելի շենքերի անբարեկարգ մուտքերի վերանորոգում, սալիկապատում, պատերի և առաստաղի ներկում, դռների և պատուհանների վերանորոգում կամ նորերով փոխարինում, բազմաբնակարան, աստիճանների վերանորոգում, վնասված ապակիների փոխարինում նորերով, մուտքերի դռների տեղադրում և ներկում: Շրջանում առկա բազմաբնակարան շենքերի մուտքերի ընդհանուր թիվը՝ 1221, որից վերանորոգման կարիք ունի 800 մուտք:

2. Կանաչ տարածքների պահպանում և խնամք

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կանաչապատ տարածքի մակերեսը կազմում է 90.01հա, առկա է 9 այգի և պուրակ: Ոռոգման ցանցի երկարությունը 40.7 կմ է:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում**

Ծրագրի նպատակը

Շրջակա միջավայրի բացասական ազդեցությունը մարդկաց առողջության վրա մեղմացնելու նպատակով կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում նախատեսվում է կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում, կանաչապատում և ոռոգման ցանցերի ընթացիկ վերանորոգում: Նախատեսվում է կատարել ծառատունկ, կանաչ տարածքների ծաղկապատում, սիզամարգերի բարեկարգում և ոռոգման ցանցի վերականգնում: Կիրականցվի չոր ծառերի հատում և երիտասարդացում, հիվանդ ծառերի խորը էտ, բուժում թունաքիմիկատներով: Ծրագիրը կներառի նաև հուշարձանների հարակից տարածքների պահպանում և խնամք:

3. Կրթություն, մշակույթ, սպորտ

Վարչական շրջանում գործում է 24 դպրոց, որից ավագ դպրոց՝ 4, միջնակարգ՝ 1, կրթահամալիր՝ 1, հիմնական՝ 14 և 4 մասնավոր դպրոց: Վարչական շրջանում գործում է 24 մանկապարտեզ, որից երկուսը մասնավոր են:

Գործում է երեք մշակութային օջախ՝ Ալ. Աճեմյանի անվան երաժշտական և «Մալաթիա» արվեստի դպրոցները, «Սեբաստիա» մշակութային կենտրոնը և գրադարանը:

Գործում է 4 մարզադպրոց՝ մանկապատանեկան համալիր մարզադպրոց, Վ.Զատիկյանի անվան մարզակումբ, Շախմատի դպրոց և Օլիմպիական հերթափոխի հանրապետական մարզադպրոց:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Մանկապարտեզների շենքերի վերանորոգում, բակերի բարեկարգում, ոռոգման ցանցի վերականգնում**

Ծրագրի նպատակը

Վարչական շրջանի մանկապարտեզներում վերանորոգման աշխատանքների իրականացում՝ նպատակ ունենալով բարեկեցիկ, հարմարավետ պայմաններ ստեղծել երեխաների կրթադաստիարակչական գործունեության իրականացման համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Հ.հ. 76, 77, 78, 80, 81, 83, 84, 85, 86, 87, 88, 89, 90, 92, 93, 94, 95, 97 մանկապարտեզներում շենքային պայմանների ուսումնասիրում, աշխատանքային սխեմաների կազմում և ըստ աշխատանքների կատարման ժամանակացույցի՝ վերանորոգման աշխատանքների իրականացում:

- **Կրթական միջոցառումների կազմակերպում**

Ծրագրի նպատակը

Ապահովել կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների շարունակականությունը ավելի կրթված և զարգացած սերունդ դաստիարակելու համար, կազմակերպել դպրոցների շենքերում ներառական կրթության համար լիարժեք պայմանների ապահովման կրթական ծրագրեր:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի կողմից կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ «Գիտելիքի օրվա», «Վերջին Զանգի», «Գիրք նվիրելու օրվա», «Ուսուցչի օրվա» կապակցությամբ, կկազմակերպվեն հայ դասականների ստեղծագործությունների քննարկումներ և նոր գրքերի շնորհահանդեսներ:

- **Մշակութային միջոցառումների անցկացում**

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակը Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանում մշակութային միջոցառումների իրականացումն է՝ բնակչության հանգստի պատշաճ կազմակերպման, երեխաների ընդգրկվածության մեծացման, բակային ընկերասիրության, տոն և հիշատակի օրերի համատեղ անցկացման միջոցով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում կիրականացվեն միջոցառումներ տոն և հիշատակի օրերին: Կիրականացվեն հետևյալ տոնական ծրագրերը և միջոցառումները՝ «Հայոց բանակի օր», «Տյառն ընդառաջ», «Կանանց միջազգային օր», «Մայրության և գեղեցկության տոն», «Էրեբունի-Երևան» տոնակատարություն, Հարության տոն՝ «Զատիկ», «Բարեկենդանի տոն», Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր, Հաղթանակի օր, Աշխատանքի օր, «Հանրապետության օր», «Երեխաների պաշտպանության միջազգային օր», «Ուրախ ժամանց», «ՀՀ սահմանադրության օր և պետ. խորհրդանշանների օր»: «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակներում կկազմակերպվեն բակային ճամբարներ, «Վարդավառ», «Անկախության օր», «Ամանորի և Սուրբ ծննդյան» տոնակատարություն:

Միջոցառումների և ծրագրերի կատարմանն իրենց ակտիվ մասնակցությունը կունենան վարչական շրջանում գործող մշակութային կենտրոնների սաները՝ «Տարոն» գեղագիտական կենտրոն, «Սեբաստիա», «Դիսնեյ» և «Վալենս» մշակույթի կենտրոններ:

- **Սպորտային միջոցառումների կազմակերպում**

Ծրագրի նպատակը

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի բնակիչների սպորտային կյանքի ակտիվացում, ներգրավվածության բարձրացում, առողջ ապրելակերպի խրախուսում: Պատանիների, երիտասարդների ֆիզիկական պատրաստվածության բարձրացում և առողջ ապրելակերպին ուղղված միջոցառումներին բնակիչների մասնակցության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կկազմակերպվեն սպորտային ծրագրերի օրացուցային պլանով նախատեսված միջոցառումներ՝ վարչական շրջանի շախմատի օլիմպիադա, ՀՀ Անկախության տարեդարձին նվիրված դպրոցականների մարզական խաղեր, վարչական շրջանի մանկապարտեզների սպորտկոմիտեի, վարչական շրջանի ղեկավարի գավաթի ֆուտբոլի մրցաշար, ՀՀ Ազգային ժողովի գավաթի խաղարկություն, վարչական շրջանի ղեկավարի գավաթի բասկետբոլի մրցաշար, ՀՀ Նախագահի մրցանակի համար, «Լավագույն մարզական Ընտանիք» մրցույթ, համաքաղաքային բակային փառատոն «Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք», Նախագորակոչային, գորակոչային տարիքի երիտասարդության(16-18 տարեկան) հանրապետական ռազմամարզական խաղեր:

4.Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Վարչական շրջանում գործում են «Աստղիկ» ԲԿ, «Արմենիկում» ԲԿ, «Սուրբ Աստվածածին» ծննդատունը, թվով 6 պոլիկլինիկաներ, որից 2-ը՝ ատամնաբուժական:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Սոցիալապես անապահով անձանց աջակցություն**

Ծրագրի նպատակը

Վարչական շրջանում գրանցված սոցիալապես անապահով տարբեր խոցելի խմբերին ֆինանսական աջակցության տրամադրում՝ անհետաձգելի խնդիրները լուծելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ֆինանսական աջակցության տրամադրում սոցիալապես առավել խոցելի խմբերին, բազմազավակ ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող քաղաքացիներին, անժառանգ թոշակատուներին:

• **Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն**

Ծրագրի նպատակը

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի պատերազմի մասնակիցներին, հաշմանդամություն ունեցող երեխաներին, անժառանգ հաշմանդամություն ունեցող տարեցներին, բազմազավակ մայրերին և սոցիալապես անապահով այլ խավերին տոնական օրերին աջակցություն:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Վարչական շրջանի սոցիալական ծրագրերի շրջանակներում սոցիալապես անապահով տարբեր խավերի աջակցության նպատակով կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝

- «Հաղթանակի օրվան» նվիրված՝ Հայրենական Մեծ պատերազմի վետերաններին և նրանց հավասարեցված անձանց կտրամադրվի դրամական աջակցություն:
- «Հաշմանդամություն ունեցող անձանց միջազգային օրվա»՝ դեկտեմբերի 3-ի կապակցությամբ հաշմանդամություն ունեցող անձանց կտրամադրվեն նվերներ:
- «Տարեցների միջազգային օրվա»՝ հոկտեմբերի 1-ին կապակցությամբ տարեցներին կտրամադրվեն նվերներ, դրամական աջակցություն և կկազմակերպվի ճաշկերույթ:
- «Սուրբ Զատիկի» տոնի կապակցությամբ նախատեսվում է անապահով ընտանիքներին տրամադրել բնամթերային օգնություն:
- «Ամանորի» կապակցությամբ անապահով ընտանիքներին և երեխաներին կտրամադրվի սննդային փաթեթ:
- «Երեխաների պաշտպանության միջազգային օրվա» կապակցությամբ կկազմակերպվի միջոցառում:
- «Ընտանիքի միջազգային օրվա» կապակցությամբ օրինակելի ընտանիքներին կտրամադրվի աջակցություն:
- «Դուք մենակ չեք» ծրագրով սոցիալապես անապահով միայնակ տարեցներին կտրամադրվի պարենային փաթեթ:
- Սոցիալական աջակցություն կտրամադրվի սիրիահայ ընտանիքներին:

Մարտի 8-ին և ապրիլի 7-ին կկազմակերպվեն կանանց նվիրված միջոցառումներ:

Սոցիալապես անապահով ընտանիքների 2-ից 4-րդ դասարանում սովորող երեխաներին կհատկացվի դպրոցական պայուսակ և գրենական պիտույքներ (տետրեր, գրիչ, քանոն, գունավոր մատիտ, սրիչ, նկարչական ալբոմ և թղթապանակ):

ՆՈՐ ՆՈՐՔ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նոր Նորք վարչական շրջանը գտնվում է Երևանի հյուսիսարևելյան հատվածում, սահմանակից է Ավան, Կենտրոն, Էրեբունի, Նորք-Մարաշ և Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջաններին, արտաքին սահմանագծով հարում է Կոտայքի մարզին: Նոր Նորք վարչական շրջանի տարածքը կազմում է 1411 հա, որը կազմում է Երևան քաղաքի ընդհանուր տարածքի 15.4%: Վարչական շրջանի բնակչությունը կազմում է 131.0 հազ. մարդ: Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը 6.3% է, իսկ բնակչության թվաքանակում՝ 12.2%:

Հիմնախնդիրներ

1. Բակային տարածքների բարեկարգում, ներառյալ՝ միջբակային տարածքների լուսավորում, ասֆալտապատում:
2. Փողոցներում և տարածքներում արտաքին լուսավորության ապահովում, մայթերի մասնակի և կապիտալ վերանորոգում, վթարային հենասյուների փոխարինում:
3. Արդյունավետ հողօգտագործման ապահովում, քաղաքաշինական միջավայրի բարելավում:
4. Կանաչ տարածքների ընդլայնում, հանգստի գոտիների և խաղահրապարակների ստեղծում, այգիների բարեկարգում և կանաչապատում:
5. Ոռոգման ցանցի վերականգնում, նորի կառուցում:
6. Բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի էական բարելավում:
7. Հաշմանդամություն ունեցող անձանց համար հավասար և մատչելի պայմանների ապահովում՝ թեքահարթակների կառուցում:
8. Բազմաբնակարան շենքերի պարտադիր նորմերի արդյունավետ և ամբողջական իրականացում, սանմաքրման և աղբահանության որակի բարելավում:
9. Բազմաբնակարան շենքերում բնակֆոնդի պահպանման, վերանորոգման աշխատանքների իրականացմանն ուղղված աջակցության ապահովում:
10. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների, արտաքին պատերի և կախովի պատշգամբների վերանորոգում, ջրամուտքերի պատուհանների փոխարինում, նոր վերելակների ձեռքբերում և տեղադրում, ներքին կոյուղագծերի և ջրագծերի նորոգում:
11. Անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն:
12. Դպրոցների, մանկապարտեզների, մարզական և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավում՝ հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, գույքի թարմացում:

1. Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Նոր Նորք վարչական շրջանի փողոցների և ճանապարհների երկարությունը 87.4 կմ է:

Վարչական շրջանում հաշվառված է 681 բազմաբնակարան շենք: Գործում է 593 վերելակ: Բազմաբնակարանային շենքերի կառավարումն իրականացվում է 30 համատիրությունների միջոցով:

Նոր Նորք վարչական շրջանում առկա է 335 բակային տարածք: Առկա է 143 խաղահրապարակ և 18 մինի ֆուտբոլի դաշտ, տեղադրված են 307 խաղեր, 150 մարզասարքեր, 126 զրուցատաղավարներ, 700 նստարաններ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում**

Ծրագրի նպատակը

Վարչական շրջանի բնակիչների համար բարեկարգ և հարմարավետ բակերի, խաղահրապարակների ստեղծում, անվտանգ և անխափան երթևեկության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել փողոցների, մայրերի, միջբակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտբետոնե ծածկի վիճակի ուսումնասիրություն, կլիմայական և այլ պատճառներից առաջացած փոսերի, ճաքերի և քանդված շերտերի ծավալների վերաբերյալ տեխնիկական պայմանների կազմում և 9000քմ վերանորոգման աշխատանքների իրականացում՝ ըստ կազմված հասցեական սխեմաների: Վերանորոգման աշխատանքները ներառում են ասֆալտբետոնե ծածկի վրա առաջացած փոսերից վնասված շերտերի հեռացում, նոր փոսերի ձևավորում և ասֆալտապատում:

- **Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում, հանգստի գոտիների և խաղահրապարակների ստեղծում**

Ծրագրի նպատակը

Նոր Նորք վարչական շրջանի բնակիչների հանգստը և ժամանցը կազմակերպելու նպատակով առավել բարեկարգ և հարմարավետ պայմանների ստեղծում՝ միջբակային տարածքների բարեկարգում, կանաչապատում, լուսավորում, հանգստի գոտիների և խաղահրապարակների ստեղծում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսվում է 5 և ավելի բակային տարածքների կապիտալ վերանորոգման աշխատանքներ՝ աստիճանների, եզրաքարերի վերանորոգում, սալիկների, նստարանների, զրուցատաղավարների, աղբամանների, գիշերային լուսավորության հենասյուների տեղադրում, խաղահրապարակներում սպորտային մարզադաշտի և մանկական խաղերի տեղադրում, հնացած և վնասված խաղերի վերանորոգում և նորերով փոխարինում: Բակերն ավելի գեղեցիկ ու հարմարավետ դարձնելու նպատակով՝ սիզամարգերի կանաչապատում, ծառատունկ, ծաղկապատում, ջրագծերի վերականգնում:

- **Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում**

Ծրագրի նպատակը

Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում՝ բնակիչների համար բարենպաստ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նոր Նորք վարչական շրջանում առկա է թեք տանիքներով 342 շենք՝ ընդհանուր 357090քմ մակերեսով: Տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել 2000քմ թեք տանիքների վերանորոգում՝ ագրոհեռձաքարի փոխարինում նորով, նոր թիթեղների, ջրհորդանների և ջրթափ խողովակների տեղադրում:

- **Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում**

Ծրագրի նպատակը

Վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում՝ առկա խնդիրների վերացում, եղանակային անբարենպաստ պայմանների դեպքում կաթոցների

կանխում, բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովում, բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսվում է բազմաբնակարան շենքերի վնասված 9000քմ հարթ տանիքների նորոգում իզոգամով: Աշխատանքները ներառում են շարքից դուրս եկած ծածկույթի քանդում, նոր իզոգամի տեղադրում, անհրաժեշտության դեպքում՝ բետոնային հարթեցում, պարապետների մետաղական վերանորոգում: Նոր Նորք վարչական շրջանում առկա է հարթ տանիքներով 339 շենք՝ 197543քմ ընդհանուր մակերեսով:

• **Վերելակային տնտեսության արդիականացում**

Ծրագրի նպատակը

Վերելակային տնտեսության հիմնանորոգում՝ վերելակների անխափան աշխատանքի ապահովում և բնակչության անվտանգ սպասարկում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսվում է Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի 5 և ավել վերելակների նորոգում, հիմնանորոգում և անվտանգ շահագործում: Վարչական շրջանում հաշվառված է 593 վերելակ:

Աշխատանքները ներառում են վերելակների շարքից դուրս եկած դետալների և հանգույցների, ճոպանների փոխարինում նորերով, շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով:

• **Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Նոր Նորք վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում՝ բնակիչների համար հարմարավետ պայմանների ստեղծում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի 80 շքամուտքերի վերանորոգում: Ներառվում է պատերի և առաստաղների շարքից դուրս եկած ներկերի, գաջե սվաղի մաքրում, բազրիքների վերանորոգում, պատերի, առաստաղի, պատուհանների, դռների, բազրիքների ներկում:

• **Քաղաքային կահավորանքի վերանորոգում, նոր նստարանների և զրուցատաղավարների տեղադրում**

Ծրագրի նպատակը

Բնակիչների համար հարմարավետ պայմանների ստեղծում՝ հանրային օգտագործման տարածքներում քաղաքային կահավորանքի՝ նստարանների, զրուցարանների վերանորոգում և ավելացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նոր Նորք վարչական շրջանի փողոցներում, զբոսայգիներում, պուրակներում և բակային տարածքներում տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսվում է 75 նստարանի, 8 զրուցատաղավարի տեղադրում, առկա նստարանների և զրուցարանների վերանորոգում և ներկում:

2. Կանաչ տարածքների պահպանում և խնամք

Նոր Նորք վարչական շրջանի կանաչ տարածությունը 65,2 հա է, առկա է 23 զբոսայգի և պուրակ: Ոռոգման ցանցի երկարությունը 35.1 կմ է:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Կանաչ տարածքների ընդլայնում, խնամք և պահպանում, ծաղկապատում և ծառատունկ**

Ծրագրի նպատակը

Նոր Նորք վարչական շրջանի տարածքների ընդլայնում, պահպանում և ոռոգում, բնակիչների լիարժեք հանգիստը կազմակերպելու համար բարեկարգ և հարմարավետ միջավայրի ապահովում, շրջակա միջավայրի բարելավում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում, կանաչապատում և ոռոգման ցանցերի ընթացիկ վերանորոգում: Աշխատանքները ներառում են բակային տարածքների և փողոցների կանաչապատում, կանաչապատ տարածքներից և սիգամարգերից աղբի հավաքում, էտաժ ծառերի տեղափոխում, ծառատունկ՝ Թաթուլ Կրպեյանի, Ֆ. Նանսենի և Տիգրան Մեծի այգիներում, ինչպես նաև բակային տարածքներում, նախատեսվում է իրականացնել տարեկան 3500 ծառերի և թփերի ծառատնկման, ծաղկատնկման աշխատանքներ, չոր և հիվանդ ծառերի մասնակի և խորը էտ, ծառերի սնուցում հանքային պարարտանյութերով, բուժում՝ թունաքիմիկատներով, կրապատում, ոռոգում: Ծրագիրը կներառի նաև հուշարձանների հարակից տարածքների պահպանում և խնամք:

- **Ոռոգման ցանցերի ընթացիկ վերանորոգում, ջրագծերի վերականգնում**

Ծրագրի նպատակը

Ոռոգման ցանցի անխափան աշխատանքի ապահովում՝ վարչական շրջանի կանաչ տարածքների խնամքի և պահպանման նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նոր Նորք վարչական շրջանում ոռոգման ցանցի երկարությունը 35.1 կմ է: Տարեկան ծրագրի շրջանակներում՝ կանաչ տարածքների խնամքի և պահպանման համար նախատեսվում է իրականացնել ոռոգման ցանցերի նորոգում՝ շարքից դուրս եկած փականների փոխարինում նորերով, խողովակների ներկում:

3. Կրթություն, մշակույթ, սպորտ

Նոր Նորք վարչական շրջանում գործում է 22 մանկապարտեզ, 20 դպրոց (5 ավագ, 15 հիմնական), 1 ԲՈՒՀ, 1 արվեստի և 1 երաժշտական դպրոց, միջին մասնագիտական 2 քոլեջ, 1 ուսումնարան, 1 հատուկ դպրոց, 1 ճեմարան, 1 գրադարան, 1 մշակույթի կենտրոն, 1 թանգարան, 1 հայորդաց տուն, 4 մարզադպրոց:

Վարչական շրջանում գործում է 4 մշակութային հաստատություն՝ Ս.Ասլամազյանի անվան երաժշտական դպրոց, Հ.Դանիելյանի անվան արվեստի դպրոց, մշակույթի կենտրոն, կենտրոնական գրադարան, ինչպես նաև հայորդաց տուն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ենթակայության, 2 եկեղեցի՝ Սուրբ Սարգիս և Սուրբ Աստվածածին, 1 թանգարան՝ Նանսենի անվան:

Գործում է 4 մարզադպրոց՝ Երևանի Աշոտ Ղուլյանի անվան մանկապատանեկան մարզատեխնիկական կենտրոն, Երևանի Ռուդոլֆ Կարապետյանի անվան մանկապատանեկան համալիր մարզադպրոց, Երևանի Տորք Անգեղ մարզամշակութային կենտրոն, Երևանի Նոր Նորքի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց:

2018-2022թթ. նախատեսվող աշխատանքներ

- **Մանկապարտեզների ընթացիկ նորոգում**

- **Ծրագրի նպատակը**

- Նախադպրոցական տարիքի երեխաների համար հարմարավետ պայմանների ապահովում՝ նախադպրոցական կրթությունը պատշաճ մակարդակով կազմակերպելու նպատակով շենքային հարմարավետ պայմանների ստեղծում, գույքի թարմացում:

- **Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Յուրաքանչյուր տարի նախատեսվում է իրականացնել 2 և ավել մանկապարտեզների վերանորոգում՝ տանիքների նորոգում, դռների լուսամուտների փոփոխում, կահույքի խոհանոցային պարագաների թարմացում:

- **Բակային ճամբարների և մանկական զվարճալի միջոցառումների կազմակերպում**

- **Ծրագրի նպատակը**

- Երեխաների ամառային հանգիստի արդյունավետ կազմակերպում:

- **Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Տարեկան ծրագրի շրջանակներում նախատեսվում է կազմակերպել «Երևանյան ամառ» ծրագրով 15-20 բակային միջոցառումներ, բակային ճամբարներ, մանկական զվարճալի միջոցառումներ և խաղեր, կրկեսային ծրագրեր, էքսկուրսիաներ:

- **Մշակութային միջոցառումների կազմակերպում**

- **Ծրագրի նպատակը**

- Վարչական շրջանում անցկացվող մշակութային միջոցառումների միջոցով բնակիչների հետաքրքիր և բովանդակալից առօրյայի կազմակերպում, ինչպես նաև երեխաների զբաղվածության ապահովում:

- **Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Տարեկան ծրագրի շրջանակներում ՀՀ պետական տոներին և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների կազմակերպում, ինչպես նաև տարվա ընթացքում տարատեսակ միջոցառումների և համերգային ծրագրերի կազմակերպում:

- **Սպորտային միջոցառումների անցկացում**

- **Ծրագրի նպատակը**

- Նոր Նորք վարչական շրջանի բնակչության շրջանում առողջ ապրելակերպի արմատավորում և բնակչության առողջության ամրապնդում, երեխաների բազմակողմանի ու ներդաշնակ զարգացման գործում ֆիզիկական կուլտուրայի և սպորտի դերի բարձրացում:

- **Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Ծրագրով նախատեսվում է օրացույցային պլանով նախատեսված 5 սպորտային միջոցառումների, հուշամրցաշարերի կազմակերպում և անցկացում:

4. Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Նոր Նորք վարչական շրջանում գործում է «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնը, 5 ամբուլատոր պոլիկլինիկական հիմնարկ, 6 բարեգործական ճաշարան՝ «Նոր Նորք», «ՀՕՖ», «Զատիկ», «Առաքելություն Հայաստան», «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին և ՀԲԸՄ» և «Հայ ավետարանական մկրտական քրիստոնյաների եկեղեցի»:

2018-2022թթ. նախատեսվող աշխատանքներ

- **Սոցիալապես անապահով անձանց աջակցություն**

Ծրագրի նպատակը

Նոր Նորք վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալ-կենցաղային պայմանների բարելավման նպատակով դրամական, նյութական և պարենային աջակցություն:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը ներառում է սոցիալապես անապահով ընտանիքների համար տոնական և հիշատակի օրերի կապակցությամբ միջոցառումների կազմակերպում, միջոցառումներում ընդգրկված անձանց դրամական, նյութական աջակցության և սննդային փաթեթների տրամադրում, անապահով ընտանիքների բուժօգնության կազմակերպում, հարազատ չունեցող քաղաքացիների հուղարկավորության կազմակերպում:

- **Սոցիալապես անապահով ընտանիքների 2-ից 4-րդ դասարանների երեխաներին պայուսակների և գրենական պիտույքների տրամադրում**

Ծրագրի նպատակը

Կրթությունը պատշաճ կազմակերպելու նպատակով սոցիալապես անապահով ընտանիքների աջակցություն:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել սոցիալապես անապահով ընտանիքների 2-ից 4-րդ դասարանների երեխաներին պայուսակների և գրենական պիտույքների տրամադրում՝ ըստ դպրոցների կողմից ներկայացված ցուցակների և դիմումների:

- **Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում՝ մարզաառողջարանային ճամբարում:**

Ծրագրի նպատակը

Համապատասխան սոցիալական խմբերի ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգիստը կազմակերպվում է Ծաղկաձորի «ԼԱՎԱ Աղբյուր» ճամբարում՝ 3 հերթափոխով, յուրաքանչյուր հերթափոխում՝ 35 երեխա, տրամադրվում է շապիկ, գլխարկ, ժամանցային խաղեր և փոխադրամիջոց:

ՆՈՐՔ-ՄԱՐԱԶ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նորք-Մարաշ վարչական շրջանը զբաղեցնում է 476 հա տարածք, որը կազմում է Երևան քաղաքի ընդհանուր տարածքի 2.1 %-ը: Այն սահմանակից է Կենտրոն, Էրեբունի և Նոր Նորք վարչական շրջաններին: Նորք-Մարաշ վարչական շրջանի բնակչության թիվը կազմում է 11.8 հազ. մարդ, որը Երևանի բնակչության թվաքանակում կազմում է 1,1%:

Հիմնախնդիրներ

1. Փողոցների ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգում, մայրերի կառուցում:
2. Ոռոգման ցանցի ընդլայնում՝ նոր ցանցի կառուցում, գործող ցանցի հիմնանորոգում:
3. Նոր հասարակական հանգստի վայրերի և մարզահրապարակների կառուցում:
4. Խմելու ջրագծերի և կոյուղագծերի հիմնանորոգում:
5. Նորքի անտառների վերականգնում:
6. Կրպակների և խանութայինների արտաքին տեսքի արդիականացմանն ուղղված միջոցառումների իրականացում:
7. Գյուղատնտեսական արտադրանքի շուկայի կազմակերպում:
8. Կենտրոնական փողոցներում մեծ գովազդային վահանակների տեղադրում:
9. Հանրակրթական դպրոցների, մարզադպրոցի, երաժշտական դպրոցի և մանկապարտեզների հիմնանորոգում, ինչպես նաև գույքի նորացում:
10. Ա. Բսահակյանի անվան գրադարանի մասնաճյուղի հիմնանորոգում և նոր գրքային ֆոնդի համալրում:
11. Սոցիալապես անապահով բնակիչներին անվճար պրոֆիլակտիկ ստուգման և բժշկական խորհրդատվության տրամադրման պարբերական ակցիաների կազմակերպում:

1.Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Նորք-Մարաշ վարչական շրջանում առկա է թվով 11 բնակելի շենք, որոնք կառուցված են մասնավոր ներդրումների հաշվին: Վարչական շրջանում առկա է 1 հասարակական հանգստի վայր, 8 մարզական խաղահրապարակ:

Վարչական շրջանի փողոցների թիվը 25-ն է, որոնց երկարությունը կազմում է 49.0 կմ:

2018-2022 թթ. նախատեսվող ծրագրեր

- Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում, մայրերի հիմնանորոգում

Ծրագրի նպատակը

Վարչական շրջանի ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում, փողոցների բարեկարգում՝ քաղաքացիների անվտանգությունն ու անխափան երթևեկությունն ապահովելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կիրականացվեն ասֆալտբետոնե ծածկի հիմնանորոգման աշխատանքներ՝ վարչական շրջանի մի շարք հասցեներում՝ առաջնայնությունը տալով կենտրոնական, երթևեկությամբ ծանրաբեռնված փողոցներին, միաժամանակ կիրականացվեն ընթացիկ նորոգման աշխատանքներ: Կիրականացվի վնասված, վթարված ծածկի քանդում, վերանորոգման աշխատանքների իրականացում:

Հետիոտնի տեղաշարժն առավել հարմարավետ և անվտանգ դարձնելու նպատակով նախատեսվում է իրականացնել Նորք-Մարաշ վարչական շրջանի Ա.Արմենակյան, Գ.Հովսեփյան, Նորքի 5 փող. մայրերի հիմնանորոգման և կառուցման աշխատանքներ՝ 5400զժմ ծավալով:

- **Ոռոգման ցանցի հիմնանորոգում**

- **Ծրագրի նպատակը**

- Կանաչապատ տարածքների պահպանում և խանամք, ոռոգման ջրի կորուստների հնարավորինս նվազեցմանն ուղղված միջոցառումների իրականացում:

- **Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Նախատեսվում է Նորք-Մարաշ վարչական շրջանի Ա.Արմենակյան և Գ.Հովսեփյան փող. ոռոգման ցանցի հիմնանորոգում՝ 5000զժմ ծավալով՝ հասարակական հանգստի վայրերի (այգիների), խաղահրապատակների, մասնավոր տնատիրությունների կանաչապատ տարածքների պահպանման նպատակով:

- **Նախադպրոցական հաստատությունների հիմնանորոգում և վերանորոգում**

- **Ծրագրի նպատակը**

- Նախադպրոցական կրթության պայմանների բարելավում:

- **Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Նախատեսվում է իրականացնել նախադպրոցական հաստատությունների շենքային պայմանների ընթացիկ նորոգման աշխատանքներ՝ առաջնային ուշադրություն դարձնելով տանիքի, ջրագծերի և կոյուղագծերի, կաթսայատներին, ներքին ցանցի ջերմամեկուսացման և էներգախնայողության աշխատանքներին: Նախատեսվում է երեխաների համար ստեղծել նախադպրոցական կրթության համար հարմարավետ պայմաններ: Նախատեսվում է յուրաքանչյուր տարի ընթացիկ նորոգման աշխատանքներ իրականացնել երկու հաստատությունում:

2. Կրթություն, մշակույթ, սպորտ

Վարչական շրջանում գործում է 4 նախադպրոցական հաստատություն, երեք հանրակրթական դպրոց, մեկ գերատեսչական «Օլիմպոս» կրթահամալիր՝ ավագ դպրոց և երկու հատուկ նշանակության դպրոց՝ «Լսողության խանգարումներ ունեցող երեխաների գիշերօթիկ» և «Թիվ 2 օժանդակ» դպրոցներ:

Երևանի Նորք-Մարաշ վարչական շրջանում գործում է մեկ գրադարան, մեկ մարզադպրոց, մեկ երաժշտական և մեկ շախմատի դպրոց:

2018-2022 թթ. նախատեսվող ծրագրեր

- **Արտադպրոցական դաստիարակություն**

- **Ծրագրի նպատակը**

- Մարզադպրոց հաճախող սաների հաճախումների ավելացում, առողջ ապրելակերպի խրախուսում, երաժշտական դպրոցի կրթական պայմանների բարելավում և խմբերի ավելացում:

- **Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Մարզադպրոցի և երաժշտական դպրոցի գույքի փոխարինում նոր ժամանակակից գույքով, երաժշտական գործիքների, պարային խմբերի հագուստների ձեռքբերում: Մարզական դպրոցի սաների և բնակիչների առողջ ապրելակերպի խրախուսման, ինչպես նաև մարզումներ իրականացնելու համար անհրաժեշտ մարզագույքի ձեռքբերում:

- **Մշակութային միջոցառումների իրականացում**

- Ծրագրի նպատակը**

- Մշակութային կյանքի ակտիվացում, պետական, ազգային ու ավանդական տոների պահպանում

- Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Ծրագիրը ներառում է ինչպես տոն և հիշատակի օրերին նվիրված միջոցառումները, այնպես էլ տարվա ընթացքում տարատեսակ համերգներ, միջոցառումներ, բակային խաղեր, մրցումներ, սպորտախմբիկներ և այլն:

- Նորք-Մարաշ վարչական շրջանում, ըստ ժամանակացույցի՝ որպես պարտադիր ծրագիր իրականացվում են մշակութային միջոցառումներ՝ Հայոց բանակի օր, Տեառնընդառաջ, Կանանց միջազգային օր, Զատիկ, Մայրության և գեղեցկության օր, Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր, Հաղթանակի տոնակատարություններ, Վերջին զանգ, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Խաղող օրհնության օր, բակային ժամանցային միջոցառումներ, Գիտելիքի օր, ՀՀ անկախության օր, Ուսուցչի օր, «Էրեբունի-Երևան» տոնակատարություն և այլն:

- **Սպորտային միջոցառումների իրականացում**

- Ծրագրի նպատակը**

- Առողջ ապրելակերպի խթանում:

- Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Նախատեսվում է սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում՝ բնակչության տարբեր տարիքային խմբերի մասնակցությամբ, վարչական շրջանի երիտասարդ ընտանիքների ընդգրկում սպորտային ծրագրերին: Նախատեսվում են անցկացնել հետևյալ միջոցառումները՝ ՀՀ անկախության տարեդարձին նվիրված դպրոցականների քաղաքային մարզական խաղեր, «Առողջ սերունդ» պաշտպանված հայրենիք համաքաղաքային բակային ավանդական փառատոն, ՀՀ ազգային ժողովի գավաթի խաղարկություն, Երեխաների պաշտպանության միջազգային օր, Շախմատի Երևան քաղաքի, Լավագույն մարզական ընտանիք, Շախմատի օլիմպիադա, Նախագորակոչային և զորակոչային տարիքի երիտասարդների հանրապետական ռազմամարզական խաղեր, Մասնակցություն լայնամասշտաբ սպորտային միջոցառումներին, «Կաշվե գնդակ» ֆուտբոլի առաջնություն, Ըմբշամարտի հուշամրցաշարի կազմակերպում, Սպորտային բաց առաջնությունների մասնակցություն:

3. Կանաչ տարածքների պահպանում և խնամք

Նորք-Մարաշ վարչական շրջանում առկա է մոտ 1.51 հա հասարակական նշանակության կանաչ գոտի, ոռոգման ցանցի երկարությունը կազմում է 14,8 կմ:

2018-2022 թթ. նախատեսվող ծրագրեր

- **Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգման ու պահպանում**

- Ծրագրի նպատակը**

- Վարչական շրջանի բնակչության համար բակային տարածքների և հանգստի վայրերի ստեղծում:

- Ծրագրի համառոտ նկարագրություն**

Վարչական շրջանի բնակչության համար հասարակական նշանակության հանգստի վայրերի ստեղծում, կանաչ տարածքների ավելացում, առողջ ապրելակերպի խթանում՝ բակային խաղահրապարակներում մարզական խաղերի տեղադրման միջոցով:

Նախատեսվում է նոր այգիների, հանգստի գոտիների, պուրակների ստեղծում:

Մարզական խաղահրապարակների կառուցում՝ հավասարաչափ բաշխված ըստ թաղամասերի, հարմարեցված ըստ տնատիրության տարածքների:

- **Կանաչ տարածքների հիմնում և պահպանում**

- Ծրագրի նպատակը**

- Ծրագրի նպատակն է նոր կանաչ տարածքների հիմնումը, պահպանումը, նոր ծաղկային տարածքների ստեղծումը, անտառապատ տարածքների վերականգնումն և պահպանումը:

- Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Նախատեսվում է իրականացնել առկա կանաչ տարածքների ամենօրյա մշակում, խնամք, ծառերի և թփերի բուծում, կանաչապատ և ծաղկային տարածքների ընդլայնում ու պահպանում, ծառատունկ, սիզամարգերի ստեղծում և բարեկարգում:

4.Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Նորք-Մարաշ վարչական շրջանում գործում են 6 առողջապահական հիմնակրկներ՝ «Նորք-Մարաշ» բժշկական կենտրոնը սրտաբանական, «Վնասվածքաբանության, օրթոպեդիայի և վերականգնողական կենտրոնը», «Նորք» ինֆեկցիոն հանրապետական կենտրոնը, «Հովարդ Կարագյոզյան» մանկական ատամնաբուժական կենտրոնը, «Մր. Մարիամ» առողջապահական կենտրոնը և «Թիվ 5 պոլիկլինիկան»:

Վարչական շրջանում գործում են նաև Մանկան տուն և Նորքի տուն-ինտերնատը:

2018-2022 թթ. նախատեսվող ծրագրեր

- **Սոցիալական աջակցության ծրագիր**

- Ծրագրի նպատակը**

- Սոցիալապես անապահով անձանց և ընտանիքներին սոցիալական աջակցության տրամադրում:

- Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Ծրագրի շրջանակում նախատեսվում է՝

- սոցիալապես անապահով ընտանիքների 2-ից 5-րդ դասարան հաճախող երեխաներին դպրոցական պայուսակների և գրենական պիտույքների տրամադրում,
 - սոցիալապես անապահով ընտանիքներին ֆինանսական աջակցության տրամադրում,
 - սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների հանգստի կազմակերպում ճամբարներում,
 - սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական օրերին աջակցություն:

ՆՈՒԲԱՐԱՇԵՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Նուբարաշեն վարչական շրջանը սահմանակից է Կոտայքի և Արարատի մարզերին, Շենգավիթ և Էրեբունի վարչական շրջաններին: Նուբարաշեն վարչական շրջանի տարածքը կազմում է 1724 հա, բնակչությունը՝ 9.8 հազ. մարդ: Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը 7,7% է, իսկ բնակչության թվաքանակում՝ 0,9%:

Հիմնախնդիրներ

1. Նուբարաշենի գործող քաղաքային աղբավայրի փակում (մեկուսացում), ժամանակակից միջազգային չափանիշներին համապատասխանող նոր աղբավայրի կառուցում:
2. Հասարակական տրանսպորտի բարեփոխում, բնակիչների տրանսպորտային սպասարկման որակի բարելավում:
3. Հանգստի գոտիների ստեղծում, բակային տարածքների բարեկարգում, նոր բակային տարածքների ստեղծում, ասֆալտապատում, արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում, կանաչ տարածքների ավելացում, կանաչապատ տարածքների խնամք, ռոտզման ցանցի ավելացում:
4. Քաղաքաշինական նորմերի բարելավում, արդյունավետ հողօգտագործման ապահովում:
5. Բազմաբնակարան շենքերի պարտադիր նորմերի իրականացում:
6. Արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում, ներառյալ միջբակային տարածքների և սեփական սեկտորի լուսավորում, վթարային հենասյուների փոխարինում:
7. Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների, ջրամուտքերի, կոյուղագծերի և ջրագծերի նորոգում:
8. Վերելակային տնտեսության ամբողջական արդիականացում և անվտանգ սպասարկում:
9. Բազմաբնակարան շենքերում բնակֆոնդի պահպանման, վերանորոգման աշխատանքների իրականացմանն ուղղված աջակցության ապահովում:
10. Առողջապահական և սոցիալական աջակցության ծրագրերի առավել հասցեականության ապահովում:
11. Կրթօջախների և մշակութային օջախների շենքային պայմանների բարելավում, գույքի թարմացում, բակերի ռոտզման ցանցերի վերականգնում և կանաչապատում:
12. Բնակչություն, ներառյալ իրավաբանական և ֆիզիկական անձանց և վարչական շրջանի աշխատակազմ հետադարձ կապի ապահովում և առավել թափանցիկության ապահովում:

1. Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Նուբարաշեն վարչական շրջանում հաշվառված է 1512 սեփական տնտեսություն, 35 բազմաբնակարան շենք: Գործում է 6 վերելակ: Նուբարաշեն վարչական շրջանի փողոցների և ճանապարհների երկարությունը՝ 20,9 կմ է: Նուբարաշենում տեղադրված են 100 աղբաման, 114 նստարան:

Նուբարաշեն վարչական շրջանի 35 բակային տարածքներում տեղադրված է 8 խաղահրապարակ, 16 մարզասարք, 30 զրուցատաղավար, 10 կարուսել: Առկա է մինի ֆուտբոլի 3 դաշտ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում**

- Ծրագրի նպատակը**

- Վարչական շրջանի փողոցների, մայրերի և միջբակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում՝ քաղաքացիների անվտանգությունն ու անխափան երթևեկությունն ապահովելու համար:

- Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Ծրագիրը նախատեսում է փողոցների, մայրերի, բակային տարածքների և խաղահրապարակների ասֆալտբետոնե ծածկի վիճակի ուսումնասիրություն՝ մասնակի և կապիտալ վերանորոգում իրականացնելու նպատակով: Գույքագրման արդյունքում կազմվում են հասցեական սխեմաներ՝ անհրաժեշտ աշխատանքների իրականացման համար: Աշխատանքները ներառում են վնասված, վթարված, ձևախախտված ծածկի քանդում, խճե հիմքի իրականացում, ասֆալտբետոնե ծածկի իրականացում: Աշխատանքները ներառում են դիտահորերի և անձրևոսիչների նիշերի ուղղում և վերատեղադրում:

- **Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում**

- Ծրագրի նպատակը**

- Վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում, բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:

- Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի վնասված թեք տանիքների հիմնանորոգում՝ ցինկապատ պրոֆիլավորված հարթ թիթեղներով:

- Նուբարաշեն վարչական շրջանում հաշվառված է 34 բազմաբնակարան շենք և 1 մանկապարտեզ, որոնց թեք տանիքների ընդհանուր մակերեսը կազմում է 26,373 քմ: Վերանորոգման ենթակա է 17.305 քմ:

- **Վերելակային տնտեսության արդիականացում**

- Ծրագրի նպատակը**

- Վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակների նորոգում և հիմնանորոգում, վերելակային տնտեսության արդիականացում՝ բնակիչների անվտանգության ապահովում:

- Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Ծրագիրը նախատեսում է ապահովել վերելակային տնտեսության ամբողջական արդիականացումը և անվտանգ շահագործումը: Ծրագիրը ներառում է վարչական շրջանի 1/1, 1/2, 1/3, 1/4 բազմաբնակարան շենքերի վերելակների հիմնանորոգում և առանձին հատվածների ընթացիկ նորոգում: Ձեռք կբերվի նաև անհրաժեշտ շինվածքներ և դետալներ՝ առաջացած խնդիրները վերացնելու համար:

- **Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում**

- Ծրագրի նպատակը**

- Ավարտին հասցնել բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգման աշխատանքները՝ բնակիչների համար բարեկարգ պայմաններ ապահովելու նպատակով:

- Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Ծրագիրը նախատեսում է բնակելի ֆոնդի շենքային պայմանների բարելավում և բնակիչների համար հարմարավետ պայմանների ստեղծում, շենքերի անբարեկարգ

մուտքերի վերանորոգում՝ շարքից դուրս եկած ներկերի, գաջե սվաղի մաքրում, բազրիքների վերանորոգում, պատերի, առաստաղի, պատուհանների, դռների, բազրիքների ներկում, աստիճանների վերանորոգում: Վարչական շրջանում հաշվառված է 109 մուտք, որոնցից կվերանորոգվի 70-ը:

- **Նոր արտաքին լուսավորության ցանցի անցկացում**

- Ծրագրի նպատակը**

- Հանրային օգտագործման տարածքներում արտաքին լուսավորության ապահովում, առկա ցանցի ընդլայնում:

- Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Ծրագիրը նախատեսում է փողոցներում, զբոսայգիներում, պուրակներում, բակային տարածքներում և նորաստեղծ թաղամասերում արտաքին լուսավորության ցանցի ստեղծում և ընդլայնում, բնակչության համար հարմարավետ պայմանների ապահովում: Նոր արտաքին լուսավորության ցանցեր կանցկացվեն հիմնանորոգվող բակային տարածքներում, զբոսայգիներում և նորաստեղծ թաղամասերում:

- **Բակային տարածքների հիմնանորոգում**

- Ծրագրի նպատակը**

- Նուբարաշեն վարչական շրջանի բնակիչների հանգստի համար առավել հարմարավետ պայմանների ստեղծում, նորաստեղծ թաղամասերի, միջբակային տարածքների լուսավորում, կանաչապատում, ինչպես նաև խաղահրապարակների բարեկարգում և նոր բակային տարածքների ստեղծում:

- Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Ծրագիրը նախատեսում է բակային տարածքների հիմնանորոգման աշխատանքներ՝ բարեկարգվող բակերում եզրաքարերի վերանորոգում, սալիկների, նստարանների /60/, զրուցատաղավարների /20/ և նոր աղբամանների /70/ տեղադրում: Ծրագիրը ներառում է նաև խաղահրապարակներում սպորտային մարզագույքի /10/, մանկական խաղերի /10/ տեղադրում, իսկ հանրային օգտագործման տարածքներում քաղաքային կահավորանքի վերանորոգում և ավելացում:

2. Կանաչ տարածքների պահպանում և խնամք

Նուբարաշեն վարչական շրջանում առկա է 4 զբոսայգի (3,5 հա) և 10 խաղահրապարակ: Վարչական շրջանի կանաչապատ տարածքները կազմում են 4,9 հա, որից փողոցների սիզամարգերը՝ 0,4 հա, զբոսայգիները՝ 3,0 հա, պուրակները՝ 0,16 հա, ոռոգման ցանցի երկարությունը 6,4 կմ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Կանաչապատման աշխատանքների իրականացում**

- Ծրագրի նպատակը**

- Նուբարաշեն վարչական շրջանի տարածքը առավել հարմարավետ և գեղեցիկ դարձնելու նպատակով կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում, ծաղկապատում, ծառատունկի կազմակերպում:

- Ծրագրի համառոտ նկարագրություն**

- Ծրագիրը նախատեսում է կանաչ տարածքների ընդլայնում, կանաչ տարածքների ծաղկապատում, սիզամարգերի ավելացում: Կիրականացվի ծառերի սանիտարական էտ և երիտասարդացում, սիզամարգերի մաքրում թափված տերևներից, աղբի և կտրած

չորուկների հեռացում վարչական շրջանի տարածքից, ինչպես նաև կիրականացվի ծառատունկ:

Ծրագիրը կներառի նաև 6 հուշարձանների հարակից տարածքների պահպանում և խնամք:

3. Կրթություն, մշակույթ, սպորտ

Նուբարաշեն վարչական շրջանի տարածքում գործում է 1 մանկապարտեզ, 1 նախակրթարան, 2 հանրակրթական դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 շախմատի մանկապատանեկան կենտրոն, 1 մարզամշակութային կենտրոն, 1 գրադարան, ընտանիքի և երեխաների աջակցման կենտրոն, մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հ.11 օժանդակ (գիշերօթիկ) դպրոց, «Նուբարաշենի մարզառաջնական հատուկ մասնագիտացված դպրոց» ՊՈԱԿ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- Մշակութային միջոցառումների կազմակերպում

Ծրագրի նպատակը

Տոն և հիշատակի օրերի, ազգային տոնակատարությունների, եկեղեցական տոների, ժողովրդական ավանդույթների վերաբերյալ իրազեկում երիտասարդության շրջանում, բնակիչների հետաքրքիր և բովանդակալից առօրյայի կազմակերպում, իսկ բակային ճամբարների, սպորտային խաղերի և մրցույթների կազմակերպմամբ՝ երեխաների զբաղվածության ապահովում և ազգաբնակչության տարբեր տարիքային անձանց ընդգրկում մարզաառողջարարական ծրագրերում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է կրթական և մշակութային կազմակերպությունների գործունեության կազմակերպում: Ծրագրի շրջանակում կիրականացվեն հետևյալ միջոցառումները՝ Հայոց բանակի օր, Բարեկենդանի տոն, Սուրբ Սարգսի տոն, Տեառնընդառաջի տոն, Կանանց միջազգային օր, Մայրության, գեղեցկության և սիրո տոն, Ծաղկազարդի տոն, Սուրբ Զատիկի տոն, Հուշարձանների պահպանության օր, Ցեղասպանության զոհերի հիշատակի օր, Հաղթանակի և խաղաղության տոն, Թանգարանների միջազգային օր, Հանրապետության տոն, Երեխաների պաշտպանության միջազգային օր, ՀՀ սահմանադրության օր, Վարդավառի տոն, Խաղողօրհնէք կամ Սուրբ Աստվածածնի Վերափոխման տոն, ՀՀ անկախության տոն, Գրադարանավարի օր, Էրեբունի-Երևան տոնակատարություն, Ամանորի և Սուրբ ծննդյան տոն: «Երևանյան ամառ» եռամյա միջոցառումների ծրագրի շրջանակում կկազմակերպվեն բակային ճամբարներ, մանկական զվարճալի միջոցառումներ և «Ողջույն Նուբարաշենից» տոնական միջոցառումը:

- Բակային ճամբարների և մանկական զվարճալի միջոցառումների կազմակերպում

Ծրագրի նպատակը

Բակային ճամբարների և մանկական զվարճալի միջոցառումների կազմակերպում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է ամառային արձակուրդների ընթացքում «Երևանյան ամառ» ծրագրի շրջանակներում երեխաների համար հետաքրքիր և բովանդակալից առօրյայի կազմակերպում՝ փոքրիկ երգիչների, խաղավար ծաղրածուների, մուլտ հերոսների և աճապարանների մասնակցությամբ, ինչպես նաև կկազմակերպվեն ուրախ սպորտային խաղեր: «Երևանյան ամառ» միջոցառումները կեզրափակվեն «Ողջույն Նուբարաշենից» տոնական մեծ միջոցառմամբ:

• **Սպորտային միջոցառումների կազմակերպում**

Ծրագրի նպատակը

Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասսայականացում, շնորհալի պատանիների հայտնաբերում և ընդգրկում մանկապատանեկան մարզադպրոցներում, վարչական շրջանի բնակիչների ներգրավածություն սպորտային կյանքին, մարզատողջարարական ծրագրերին, առողջ ապրելակերպի սերմանում, ֆիզիկապես պատրաստված երիտասարդության ձևավորում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում Նուբարաշեն վարչական շրջանում կիրականացվեն օրացույցային պլանով նախատեսված հետևյալ միջոցառումները.

1. Ներհամայնքային միջոցառումներ,
2. «Անկախության 26-րդ տարեդարձին նվիրված դպրոցականների 26-րդ մարզական խաղեր» (վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, սեղանի թենիս, ֆուտբոլ, ֆուտզալ, աթլետիկա մարզաձևեր),
3. «Ազգային ժողովի գավաթի խաղարկության խաղեր» 1-ից 6-րդ դասարանցիների միջև (թեթև աթլետիկա),
4. ՀՀ Նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթ փառատոն,
5. «Առողջ սերունդ՝ պաշտպանված հայրենիք» համաքաղաքային ամենամյա ավանդական բակային փառատոն (վոլեյբոլ, բասկետբոլ, ֆուտբոլ, հանդբոլ, հեծանվավազք, աթլետիկա, մարզատրամբանական խաղեր),
6. Նախագորակոչային և գորակոչային տարիքի դպրոցականների ռազմամարզական խաղեր,
7. Նուբարաշեն վարչական շրջանի հանրակրթական դպրոցների աշակերտների միջև անցկացվող սպորտլանդիա:

Ծրագիրը ներառում է նաև տարաբնույթ միջոցառումների կազմակերպում՝ շախմատի, ֆուտբոլի մրցաշարեր, սպորտլանդիաներ, տոնական հեծանվաշքերներ:

• **Կրթական միջոցառումների իրականացում**

Ծրագրի նպատակը

Կրթված, արժանապատիվ և հայրենասեր երիտասարդության դաստիարակում, կրթության դերի բարձրացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում Նուբարաշեն վարչական շրջանում կիրականացվեն հետևյալ միջոցառումները.

Գիրք նվիրելու օր, Պոեզիայի միջազգային օր, Մայրենիի օր, Ֆրանկոֆոնիայի օրերը Հայաստանում, Վերջին զանգ, մանկապարտեզների սաների տարեվերջյան հանդեսներ, անապահով դպրոցահասակ երեխաների հանգստի կազմակերպում Հանքավանի ճամբարներում, մասնակցություն ՀՀ սփյուռքի նախարարության «Արի տուն» ծրագրին, Գիտելիքի օր, Ուսուցչի օր, «Սպորտլանդիա» մանկապարտեզների սաների մանակցությամբ: Կկազմակերպվեն միջոցառումներ գրողների հոբելյանական տարելիցներին նվիրված, հանդիպումներ ժամանակակից գրողների հետ, գրքի շնորհանդեսներ:

4. Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Նուբարաշեն վարչական շրջանում գործում է 2 առողջապահական կազմակերպություն՝ Նուբարաշեն հոգեբուժական կլինիկան և «Նուբարաշենի պոլիկլինիկա» ՓԲԸ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Սոցիալապես անապահով անձանց աջակցություն**

Ծրագրի նպատակը

Սոցիալապես անապահով ընտանիքների սոցիալական խնդիրների լուծում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրով նախատեսվում է դրամական աջակցության տրամադրում Նուբարաշեն վարչական շրջանի կյանքի դժվարին պայմաններում հայտնված բնակիչներին (միայնակ տարեցներ, բազմազավակ ընտանիքներ, հաշմանդամություն ունեցող անձինք, արցախյան հերոսամարտի զինհաշմանդամներ, զոհված ազատամարտիկների ընտանիքներ)՝ նպատակ ունենալով լուծել սոցիալապես խիստ կարիքավոր բնակիչների սոցիալական խնդիրները, ինչպիսիք են կոմունալ կուտակված վճարների իրականացում, դեղորայքի ձեռքբերում, երեխայի ուսման վարձի վճարում և այլն:

- **Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն**

Ծրագրի նպատակը

Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն:

Ծրագրի համառոտ նկարագրություն

1. Հաղթանակի տոնի կապակցությամբ դրամական աջակցություն զոհված ազատամարտիկների ընտանիքներին, արցախյան պատերազմի 1-ին և 2-րդ խմբի զինհաշմանդամներին և Հայրենական Մեծ պատերազմի մասնակիցներին:
2. Ամանորյա սննդային փաթեթների տրամադրում սոցիալապես անապահով ընտանիքներին:

- **Սոցիալապես անապահով ընտանիքների 2-ից 4-րդ դասարանների երեխաներին պայուսակների և գրենական պիտույքների տրամադրում**

Ծրագրի նպատակը

Սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցության տրամադրում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Սոցիալապես անապահով ընտանիքների 2-ից 4-րդ դասարանների երեխաներին պայուսակների և գրենական պիտույքների տրամադրում:

ՇԵՆՊԱՎԻԹ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Շենգավիթ վարչական շրջանը սահմանակից է Էրեբունի, Կենտրոն, Մալաթիա-Սեբաստիա և Նուբարաշեն վարչական շրջաններին և Արարատի մարզին: Շենգավիթ վարչական շրջանի տարածքը կազմում է 4060 հա, բնակչությունը՝ 139.6 հազ. մարդ: Երևանի տարածքում վարչական շրջանի տեսակարար կշիռը 18,2% է, իսկ բնակչության թվաքանակում՝ 13.0 %:

Վարչական շրջանն ընդգրկում է Նոր Խարբերդ, Չարբախ, Ն. Չարբախ, Վ.Շենգավիթ, Ն.Շենգավիթ, Աերացիա, Նորագավիթ թաղամասերը, Գ.Նժդեհ, Բագրատունյաց, Արշակունյաց, Արտաշիայան և հարակից փողոցներով ձյուղավորված բնակելի զանգվածները:

Հիմնախնդիրներ

1. Բակային տարածքների ամբողջական բարեկարգում, ներառյալ միջբակային տարածքների լուսավորում և ասֆալտապատում:
2. Առկա լուսավորության ցանցի լուսատուների փոխարինում էներգախնայող լուսատուներով, արտաքին լուսավորության ապահովում:
3. Այգիների ու պուրակների, հանգստի գոտիների ստեղծում:
4. Կանաչ տարածքների ընդլայնում, առկա կանաչ տարածքների ռոտման ցանցի փոխարինում:
5. Հաշմանդամություն ունեցող անձանց համար թեքահարթակների ստեղծում, այդ թվում՝ նաև վերգետնյա և ստորգետնյա անցումներում:
6. Անվտանգ տեղաշարժն ապահովելու համար անցումների ընթացիկ նորոգում և կառուցում:
7. Շենքերի գեղարվեստական ձևավորում, ներառյալ վթարային շքապատշգամբների բարեկարգում:
8. Հարթ և թեք տանիքների վերանորոգում, առանձին դեպքերում, ըստ անհրաժեշտության, դրանց հիմնանորոգման աշխատանքների իրականացում:
9. Շենքերի տեխնաիկական վիճակի մասնագիտական փորձաքննության անցկացում:
10. Չկարգավորվող և խրոնիկ աղբավայրերի վերացում:
11. Ջրամատակարարման և ջրահեռացման, ինչպես նաև կոյուղու նոր ցանցի կառուցում, գործող ցանցի վերակառուցում:
12. Բնակչության առողջապահության որակի բարձրացում, ներառյալ սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավում, գույքի արդիականացում, վերազինում:
13. Կրթօջախների, մարզական և մշակութային հիմնարկների շենքային պայմանների բարելավում՝ ընթացիկ նորոգում և հիմնանորոգում, գույքի թարմացում:
14. Բնակչության, ներառյալ իրավաբանական և ֆիզիկական անձանց և վարչական շրջանի աշխատակազմ հետադարձ կապի և թափանցիկության ապահովում:
15. Քաղաքաշինական միջավայրի բարելավում և առավել արդյունավետ հողօգտագործման ապահովում:
16. Նոր Խարբերդ թաղամասի գազիֆիկացում:
17. Նոր կառուցապատվող թաղամասերում ճանապարհների կառուցում և մասնավոր հատվածում առկա հողային պաստառով ճանապարհների ասֆալտապատում:
18. Վերելակային տնտեսության արդիականացում:

19. Չորրորդ աստիճանի վթարային շենքերի բնակիչների վերաբնակեցում;

1.Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Շենգավիթ վարչական շրջանն ունի 636 բազմաբնակարան բնակելի շենք, 138-ը՝ բարձրահարկ (9-16 հարկանի), 279 վերելակ:

Հաշվառված է 5 գետնանցում, 3 վերգետնյա անցում: Փողոցների երկարությունը կազմում է 147,7 կմ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

• Ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում

Ծրագրի նպատակը

Վարչական շրջանի ճանապարհների ասֆալտբետոնե ծածկի վերանորոգում և պահպանում՝ քաղաքացիների անվտանգությունն ու անխափան երթևեկությունն ապահովելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կիրականացվեն ասֆալտապատման աշխատանքներ շրջանի այն թաղամասերում և փողոցներում, որտեղ առկա են առաջնահերթ խնդիրներ: Կտարվեն մշտական աշխատանքներ՝ ասֆալտբետոնե ծածկը պահպանելու համար: Կիրականացվեն փոսալցման աշխատանքներ: Նոր Խարբերդ և Ն.Չարբախ թաղամասերում կան գրունտային ճանապարհներ, որտեղ անհրաժեշտ է նոր ճանապարհ կառուցել, իսկ Աերացիա թաղամասում և Կաշեգործների փողոցում, ինչպես նաև մի շարք այլ փողոցներում կիրականացվեն հիմնանորոգման աշխատանքներ:

• Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների վերանորոգում

Ծրագրի նպատակը

Քաղաքացիների համար բարենպաստ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Շենգավիթ վարչական շրջանում հաշվառված է 87960քմ հարթ տանիք: Ծրագրի շրջանակում նախատեսվում է իրականացնել բազմաբնակարան շենքերի շարքից դուրս եկած հարթ տանիքների վերանորոգում՝ իզոգամի մասնակի նորոգում կամ հին, վնասված իզոգամի փոխարինում նորով:

• Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների վերանորոգում

Ծրագրի նպատակը

Քաղաքացիների բարեկեցության, անվտանգության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Վարչական շրջանում հաշվառված է 394070քմ թեք տանիք: Նախատեսվում է իրականացնել թեք տանիքի ծածկանյութի (ազբոշիֆեր կամ թիթեղ) փոխարինում նորով, իսկ հիմնանորոգման ընթացքում՝ փայտյա կարկասի փոխարինում:

• Եզրաքարերի վերանորոգում

Ծրագրի նպատակը

Շենգավիթ վարչական շրջանի ճանապարհների, մայրերի եզրաքարերի վերանորոգում՝ քաղաքին պատշաճ տեսք հաղորդելու նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Չեխովի, Մանանդյան, Արագածի փողոցներում և Ալեքսիա թաղամասում կիրականացվի մաշված եզրաքարերի ապամոնտաժում և նոր եզրաքարերի տեղադրում: Այն հասցեները, որոնք կընդգրկվեն ասֆալտապատման ծրագրում, ասֆալտապատմանը զուգահեռ կիրականացվեն եզրաքարերի վերանորոգման աշխատանքներ:

• **Հենապատերի վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակը քաղաքացիների անվտանգության ու բարեկեցության ապահովումն է, ինչպես նաև՝ քաղաքին պատշաճ տեսք հաղորդելը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Վարչական շրջանի տարածքում կիրականացվեն հենապատերի վերանորոգման աշխատանքներ ըստ անհրաժեշտության՝ ամրացում, բացակայող երեսպատման սալերի տեղադրում: Ծրագրի նպատակն է անցորդների և մեքենաների համար ապահովել անվտանգ երթևեկություն:

• **Վերելակների հիմնանորոգում**

Ծրագրի նպատակը

Քաղաքացիների անվտանգության ու բարեկեցության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կիրականացվեն վերելակների վերանորոգում վարչական շրջանի բոլոր բազմաբնակարան շենքերում, կսահմանվի մշտական հսկողություն վերելակների անվտանգության և անխափան աշխատանքն ապահովելու ուղղությամբ: Կշարունակվի հսկողությունը վարչական շրջանի բոլոր բազմաբնակարան շենքերի վերելակների աշխատանքի և անվտանգության նկատմամբ: Բազմաբնակարան շենքերում, որտեղ առկա են բեռնատար վերելակներ, կիրականացվեն հիմնանորոգման աշխատանքներ՝ բեռնախցիկի, ճոպանների փոխարինում, շարժիչի վերանորոգում կամ փոխարինում նորով:

• **Վթարային պատշգամբների վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Քաղաքացիների բարեկեցության, անվտանգության, շենքի ճարտարապետական տեսքի ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է իրականացնել վթարային պատշգամբների վերանորոգման կամ հիմնանորոգման աշխատանքներ: Կկատարվի ինչպես ցեմենտ-ավազի շաղախով ամրացում ու ներկում, այնպես էլ, անհրաժեշտության դեպքում, կրող տարրերի փոխարինում նորով, վերանորոգում:

• **Բազմաբնակարան շենքերի մուտքերի բարեկարգում**

Ծրագրի նպատակը

Բազմաբնակարան շենքերի մուտքերի պատշաճ տեսքի ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է իրականացնել մուտքերի վերանորոգում՝ դռների տեղադրում, պատերի հարթեցում և ներկում, ապակեպատում, պատուհանների տեղադրում, շքամուտքի հարթակի բետոնապատում, բազրիքների տեղադրում, աստիճանավանդակի նորոգում:

• **Բակային տարածքների և խաղահրապարակների հիմնանորոգում և պահպանում**

Ծրագրի նպատակը

Բակային տարածքներում քաղաքացիների ժամանցը և հանգիստը կազմակերպելու համար պայմանների ստեղծում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է իրականացնել ինքնակամ զավթված տարածքների ցանկապատերից ազատում, ապամոնտաժում, կիրականացվեն մանկական խաղերի, աղբամանների ու նստարանների տեղադրում, կստեղծվեն ասֆալտապատ անցուղիներ: Տարածքներում կիրականացվեն կանաչապատման, ռոտոման ցանցի անցկացման աշխատանքներ: Արդեն բարեկարգված բակային տարածքներում ու խաղահրապարակներում կիրականացվի կանաչապատ տարածքների խնամք, գույքի ընթացիկ վերանորոգում:

• **Շենքերի գեղարվեստական լուսավորում**

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է քաղաքի պատշաճ գեղագիտական տեսքի ապահովումը, ինչպես նաև շենքերի ճարտարապետական տեսքի ընդգծումը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Կիրականացվեն վարչական շրջանի գլխավոր փողոցների գեղարվեստական լուսավորման աշխատանքներ, կտեղադրվեն համապատասխան լուսատուներ:

2. Կրթություն, մշակույթ, սպորտ

Շենգավիթ վարչական շրջանում գործում է 29 դպրոց (4 ավագ, 25 հիմնական), 22 մանկապարտեզ, որից 1-ը՝ քաղաքային ենթակայության, 4 գրադարան, 4 մարզադպրոց («Երևանի Շենգավիթի համալիր մարզաձևերի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, «Երևանի ակրոբատիկայի և գեղարվեստական մարմնամարզության մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, «Երևանի սեղանի թենիսի և թենիսի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ, «Երևանի Շենգավիթի շախմատի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ), 1 մարզակումբ («Երևանի Շենգավիթի նետաձգության մարզակումբ» ՀՈԱԿ), 2 երաժշտական դպրոց («Երևանի Ա.Տիգրանյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ, «Երևանի Ս. Ջրբաշյանի անվան երաժշտական դպրոց» ՀՈԱԿ) և 3 կրթամշակութային հիմնարկ (Թիվ 5 մշակույթի, պատանեկան ստեղծագործական և Կ. Նիկողոսյանի անվ. մանկապատանեկան արվեստի կենտրոններ):

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

• **Նախադպրոցական ուսուցում և արտադպրոցական դաստիարակություն**

Ծրագրի նպատակը

Ապահովել երեխաների ուսուցումը, ժամանցը և հանգիստը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է բարելավել շենքային պայմանները՝ առաջնային ուշադրություն դարձնելով տանիքի, ջրագծերի և կոյուղագծերի ներքին ցանցի և ջերմամեկուսացման և էներգախնայողության աշխատանքներին:

Նախատեսվում է մանկապարտեզների խմբասենյակներն ապահովել գույքով, իսկ բակերը համալրել մանկական խաղերով:

Իրականացնել գիտելիքների հաղորդման, արտադպրոցական կրթության տարբեր ուղղությունների գծով ունակությունների և հմտությունների ձևավորման, անձի տվյալներին և պահանջներին համապատասխան մտավոր ու ստեղծագործական ընդունակությունների, ֆիզիկական որակների զարգացման գործընթաց:

- **Գրադարանային ծառայությունների մատուցում**

Ծրագրի նպատակը

Գրադարանային ֆոնդի համալրում և պահպանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի իրագործման արդյունքում նախատեսվում է իրականացնել գրքային ֆոնդի թարմացում, պահպանում, հասանելիության բարձրացում, ընթերցողների թվի ավելացում:

- **Մշակութային միջոցառումների իրականացում**

Ծրագրի նպատակը

Բնակչության հանգստի պատշաճ կազմակերպում և պատանի դրամատուրգների ստեղծագործական տաղանդի բացահայտում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Վարչական շրջանում նախատեսվում է ըստ ժամանակացույցի կազմակերպել մշակութային միջոցառումներ, ինչպես նաև «Հազարան-բլուր» պատանեկան նոր փառատոնը: Կիրականացվեն միջոցառումներ նվիրված Բանակի օրվան, Տյառնընդառաջին, Գիրք նվիրելու, Մայրենի լեզվի, Կանանց տոնին, Թատրոնի օրվան, ծիծաղի միջազգային օրվան, Ցեղասպանության հիշատակին, Հաղթանակի օրվան, Հայաստանի Առաջին Հանրապետության օրվան, Երեխաների իրավունքների պաշտպանության օրվան, ՀՀ պետական խորհրդանիշների օրվան, կանանց տոնին, Խաղողօրհներթի, ՀՀ անկախության, Սուրբ Գևորգի, Վարդավառի և Ամանորի տոներին:

- **Սպորտային միջոցառումների կազմակերպում**

Ծրագրի նպատակը

Քաղաքացիների շրջանում առողջ ապրելակերպի խթանման պատակով մարզական միջոցառումների կազմակերպում և իրականացում, տարբեր տարիքային խմբերի շրջանում, խմբակային մարզաձևերի մասսայականացմանն ուղղված աշխատանքների իրականացում: Նախագորակոչային և գորակոչային տարիքի պատանիներին նախապատրաստում ռազմական հմտություններին:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է ռազմական ինստիտուտներում անցկացնել նախագորակոչային և գորակոչային տարիքի պատանիների համար ռազմամարզական խաղեր, պարբերաբար դպրոցներ և կրթամշակութային կենտրոններ հրավիրել համապատասխան մասնագետների՝ սեմինարներ, դասախոսություններ և ռազմամարզական խաղեր իրականացնելու համար: Վարչական շրջանի դպրոցների աշակերտների միջև անցկացնել ռազմամարզական խաղերի մրցաշար:

- **Համայնքային մշակույթի և ազատ ժամանցի կազմակերպում**

Ծրագրի նպատակը

Ժամանցի կազմակերպում, մշակույթին, հայրենասիրական դաստիարակությանը, պետականությանը, ազգային և պետական խորհրդանիշերին, ավանդույթներին, կրոնին, տոների և հիշատակի օրերին նվիրված միջոցառումների իրականացում: Ամառային արձակուրդներին երեխաների ժամանցը կազմակերպելու համար դպրոցներին կից ստեղծել զարգացման կենտրոններ՝ երեխաներին մշտական ուշադրություն ցուցաբերելու նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է կազմակերպել դասական և ազգային երաժշտության բացօթյա համերգ, որի նպատակն է հաղորդակցվել ազգային երգին ու մշակույթին: Կոմիտասի անվան պանթեոնում և վարչական շրջանի այգիներում, համագործակցության նպատակով նաև քաղաքից դուրս կիրականացվեն ժամանցային միջոցառումներ: Ինչպես նաև Շենգավիթ վարչական շրջանի համատիրությունների միջև կանցկացվեն սպորտային մրցաշարեր (ֆուտբոլ, բասկետբոլ և շախմատ): Նախատեսվում է վարչական շրջանի Կ. Նիկողոսյանի անվ. մանկապատանեկան արվեստի կենտրոնում ստեղծել «Մշակութային դարբնոց»:

3. Կանաչ տարածքների պահպանում և խնամք

Շենգավիթ վարչական շրջանի կանաչապատ տարածքների մակերեսը կազմում է 62,58 հա, ոռոգման ցանցի երկարությունը 105,3 կմ է, պուրակների, այգիների և հանգստի գոտիները 4 են: Վարչական շրջանի ջրամատակարարումը իրականացվում է 5 աղբյուրներից, շրջանում գործում է 1 ջրամբար:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- **Կանաչ տարածքների պահպանում և խնամք**

Ծրագրի նպատակը

Շենգավիթ վարչական շրջանի կանաչ տարածքների, այգիների և պուրակների պահպանում և խնամք:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է իրականացնել վարչական շրջանի այգիների, պուրակների և սիզամարգերի խնամք, ոռոգման ջրագծերի վերանորոգում, ծաղկային և գեղարվեստական կոմպոզիցիաների տեղադրում, ամենամյա զարնանային և աշնանային ծառատունկի իրականացում՝ ծառերի և թփերի անհրաժեշտ խմբաքանակներով տնկում, վարչական շրջանի հուշարձանների մաքրման և շրջակա տարածքի ծաղկապատման աշխատանքներ, շաբաթօրյակների կազմակերպում:

4. Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Վարչական շրջանի տարածքում գործում են 2 բժշկական կենտրոն («Շենգավիթ», «Սուրբ Աստվածամայր»), 2 ատամնաբուժական պոլիկլինիկա, Հիգիենիկ և հակահամաճարակային կենտրոնը: Կան բժշկական ծառայություններ մատուցող այլ մասնավոր կլինիկաներ:

«Առաքելություն Հայաստան» ՀԿ ենթակայությամբ գործում է բարեգործական ճաշարան, որից օգտվում են շուրջ 151 շահառուներ:

2018-2022թթ. նախատեսվող ծրագրեր

- Սոցիալապես անապահով անձանց և ընտանիքներին աջակցության ծրագիր

Ծրագրի նպատակը

Բավարարել բնակչության խոցելի խմբերի սոցիալ-տնտեսական պայմանները:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակում նախատեսվում է՝

- սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում ճամբարներում,
- սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշատակի օրերին աջակցություն,
- սոցիալապես անապահով անձանց աջակցություն, հաշմանդամություն ունեցող անձանց հասարակության մեջ ինտեգրման նպատակով կիրականացվեն համապատասխան ծրագրեր:

ՔԱՆԱՔԵՌ-ԶԵՅԹՈՒՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՇՐՋԱՆ

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանը սահմանակից է Ավան, Արաբկիր, Կենտրոն և Նոր Նորք վարչական շրջաններին: Վարչական շրջանի տարածքը կազմում է 773 հա, Երևանի տարածքում տեսակարար կշիռը՝ 3.5%: Բնակչությունը՝ 74.0 հազ. մարդ, Երևանի բնակչության թվաքանակում տեսակարար կշիռը 6.9 % է:

Հիմնախնդիրներ

1. Զբոսայգիների, կանաչ գոտիների ստեղծում և ընդլայնում:
2. Բակային տարածքներում մանկական խաղերի, մարզական սարքավորումների, նստարանների և աղբամանների, զրուցարանների տեղադրում և նստարանների, զրուցարանների վերանորոգում:
3. Ասֆալտե տունե ծածկի վերանորոգում և պահպանում:
4. Արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում:
5. Բազմաբնակարան շենքերի հարթ և թեք տանիքների նորոգում, ինչպես նաև կախովի պատշգամբների վերանորոգում:
6. Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում՝ պատուհանների և դռների փոխարինում նորերով:
7. Վերելակների նորոգում և փոխարինում նորերով:
8. Ջրատար և կոյուղատար խողովակաշարերի փոխարինում և նորոգում:
9. Միջշենքային և շենքերի հարակից տարածքներում բետոնե աստիճանների նորոգում, հենապատերի և ցանկապատերի կառուցում և վերանորոգում, առկա հենապատերի նորոգում և նորերի կառուցում, փողոցների, մայրերի եզրաքարերի տեղադրում:
10. Վարչական շրջանի փողոցներում (Ռուբինյանց փող., Ներսիսյան փակուղի, Պ.Սևակ փող.-Կ.Ուլենցու փող. Խաչմերուկից դեպի Ռուբինյանց փող., Ա.Ահարոնյան փող. – Կ.Ուլենցու փող. Խաչմերուկից դեպի Ռուբինյանց փող., Գոգոլի փող., Լեփսիուսի փող.) ռոտզման ցանցի անցկացում:
11. Դպրոցական և նախադպրոցական ուսումնական, մարզական և մշակութային հաստատությունների շենքային պայմանների բարելավում՝ հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, գույքի թարմացում, ռոտզման ցանցերի վերականգնում, նորերի կառուցում և կանաչապատում:
12. Վարչական շրջանում առկա բազմաֆունկցիոնալ դաշտերի արդյունավետ օգտագործում, բնակչության տարբեր տարիքային խմբերի ընդգրկում մարզաառողջարարական ծրագրերում, երիտասարդության շրջանում առողջ ապրելակերպի խրախուսում:
13. Խոցելի խավի ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպմանն ուղղված կրթական, մշակութային և ճանաչողական ծրագրերի իրականացում:
14. Բնակարանի կարիք ունեցող սոցիալապես անապահով ընտանիքների համար ժամանակավոր կացարանների կամ մատչելի սոցիալական բնակարանների կառուցում:
15. Առողջապահական ծառայությունների որակի բարձրացում, մատչելիության և հասանելիության բարելավում:
16. Քանաքեռի բնակիչների համար նոր պոլիկլինիկայի կառուցում:

17. Հաշմանդամություն ունեցող անձանց համար աշխատանքային անհրաժեշտ ու բավարար պայմանների ստեղծում, զբաղվածության ապահովում:
18. Հաշմանդամություն ունեցող անձանց անհրաժեշտ դեղամիջոցներով և պարագաներով ապահովում:
19. Վարչական շրջանում բնակվող սիրիահայ ընտանիքներին աջակցության ցուցաբերում:

1. Բնակարանային-կոմունալ տնտեսություն և բարեկարգում

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ներհամայնքային փողոցների և ճանապարհների երկարությունը 59,4 կմ է: Առկա է 353 բակային տարածք, 78 խաղահրապարակներ, մինի ֆուտբոլի 7 բազմաֆունկցիոնալ և 7 ասֆալտապատ դաշտեր, 399 խաղեր և մարզասարքեր, 52 տաղավարներ: Տեղադրված են 447 նստարաններ, 194 աղբամաններ: Վարչական շրջանում հաշվառված է բնակելի 358 շենք, անհատական բնակելի 3140 տներ, 218 վերելակ: Բազմաբնակարան շենքերի կառավարումն իրականացվում է 23 համատիրությունների և 4 լիազորագրային կառավարման միջոցով:

2018-2022թթ. նախատեսվող աշխատանքներ

- Փողոցների, մայրերի և միջբակային տարածքների մասնակի և կապիտալ վերանորոգում, ասֆալտապատում

Ծրագրի նպատակը

Վարչական շրջանի փողոցների, մայրերի և միջբակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտբետոնե ծածկերի ընթացիկ և կապիտալ վերանորոգում՝ բնակիչների համար հարմարավետ բակեր, խաղահրապարակներ և երթևեկելի հարթ ճանապարհներ ու մայրեր ապահովելու նպատակով:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի փողոցների, մայրերի, բակային տարածքների, խաղահրապարակների ասֆալտբետոնե ծածկի վիճակի ուսումնասիրություն, կլիմայական և այլ պատճառներից առաջացած փոսերի, ճաքերի և քանդված շերտերի ծավալների վերաբերյալ տեխնիկական պայմանների կազմում և վերանորոգման աշխատանքների իրականացում՝ ըստ կազմված տեխ. պայմանների: Վերանորոգման աշխատանքները ներառում են ասֆալտբետոնե ծածկի վրա առաջացած փոսերից վնասված շերտերի հեռացում, խճե հիմքի իրականացում և ասֆալտապատում:

- Բակային տարածքների բարեկարգում և վերանորոգում

Ծրագրի նպատակը

Բնակիչների ակտիվ հանգստի և սպորտային խաղերի կազմակերպման նպատակով բակերի խաղահրապարակների հիմնանորոգում, կանաչ տարածքների ստեղծում, արտաքին լուսավորության ցանցի անցկացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսում է կանաչ գոտիների ստեղծում, ոռոգման և արտաքին լուսավորության ցանցի անցկացում, ինչպես նաև նախորդ տարիներին կառուցված բակերում վերանորոգման, ներկման աշխատանքների իրականացում: Կոտեղադրվեն մանկական խաղեր, մարզական սարքավորումներ, նստարաններ, զրուցարաններ:

Ելնելով վարչական շրջանի երկրաբանական առանձնահատկություններից՝ բետոնե աստիճանների, հենապատերի և ցանկապատերի կառուցում, հենապատերի սվաղում ու ներկում, փողոցների, մայթերի եզրաքարերի տեղադրում և վերատեղադրում:

- **Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում**

Ծրագրի նպատակը

Բազմաբնակարան շենքերի թեք տանիքների նորոգում, առկա խնդիրների վերացում, բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում բազմաբնակարան շենքերի անբարեկարգ թեք տանիքների վերանորոգում՝ մաշված մետաղական ծածկերի փոխարինում և ազդեցության փոխարինում մետաղական նոր ծածկերով: Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում հաշվառված 358 բազմաբնակարան շենքերից 228-ը թեք տանիքով շենքեր են՝ 175364 քմ մակերեսով, վերանորոգման ենթակա ծավալը՝ 14000քմ:

- **Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում**

Ծրագրի նպատակը

Բազմաբնակարան շենքերի հարթ տանիքների նորոգում, առկա խնդիրների վերացում, բնակիչների համար բարեկարգ պայմանների ապահովում և բազմաբնակարան շենքերի ենթակառուցվածքների պահպանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում հաշվառված բազմաբնակարան շենքերի անբարեկարգ տանիքների վերանորոգում՝ անհրաժեշտության դեպքում ներառելով նոր ցեմենտ-սվաղե սվաղի և իզոգամի ծածկույթի իրականացում:

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում հաշվառված 358 բազմաբնակարան շենքերից 130-ը հարթ տանիքով բարձրահարկ շենքեր են՝ 76322 քմ մակերեսով:

- **Վերելակային տնտեսության արդիականացում**

Ծրագրի նպատակը

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բազմաբնակարան շենքերի վերելակային տնտեսության արդիականացում, անվտանգ շահագործման ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Վարչական շրջանում հաշվառված է 216 վերելակ: Ծրագիրը նախատեսում է վերելակների մաշված և շարքից դուրս եկած պահեստամասերի փոխարինում նորերով, կարգաբերում և սպասարկում:

- **Բազմաբնակարան շենքերի շքամուտքերի վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Բազմաբնակարան շենքերի մուտքերի նորոգում՝ բնակիչների համար բարեկարգ պայմաններ ապահովելու համար:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է բազմաբնակարան շենքերի բարեկարգման ենթակա մուտքերի հիմնանորոգման աշխատանքներ, մասնավորապես թեքահարթակների կառուցում,

սալապատում, պատերի և առաստաղի վերանորոգում, դռների և պատուհանների նորերով փոխարինում, բազրիքների, աստիճանների վերանորոգում:

Վարչական շրջանում հաշվառված է 959 մուտք, որից կվերանորոգվի՝ 580 մուտք:

- **Արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում**

Ծրագրի նպատակը

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի փողոցների և բակային տարածքների արտաքին լուսավորության ցանցի ընդլայնում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Վարչական շրջանում առկա է 138000գծմ արտաքին լուսավորության ցանց: Ծրագիրը նախատեսում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տարածքում չլուսավորվող փողոցների և բակերի արտաքին լուսավորության ցանցի անցկացում և արդիականացում՝ լարերի անցկացում, սյուների և լուսացրիչների տեղադրում:

- **Քաղաքային կահավորանքի վերանորոգում և ավելացում**

Ծրագրի նպատակը

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի քաղաքային կահավորանքի վերանորոգում և ավելացում՝ բնակիչների հանգիստի համար պայմանների ստեղծում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բակային տարածքներում և խաղահրապարակներում մանկական խաղերի, մարզական սարքավորումների, նստարանների և աղբամանների, զրուցարանների տեղադրման, վերանորոգման և ներկման աշխատանքներ:

- **Բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների վերանորոգում**

Ծրագրի նպատակը

Վթարային պատշգամբների ամրացում, բնակչության անվտանգության ապահովում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի տարածքում վթարային պատշգամբների ամրացում, պոկված սվաղի վերականգնում, անհրաժեշտության դեպքում ամրանների եռակցում, բազրիքների նորոգում և տեղադրում, կերամիկական սալիկների տեղադրման և ներկման աշխատանքներ:

2.Կրթություն, մշակույթ, սպորտ

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում գործում է թվով 15 մանկապարտեզ, որից Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի ենթակայության են 14-ը, 9 հիմնական դպրոց, 3 ավագ դպրոց, 1 մասնագիտացված կրթահամալիր՝ խոսքի ծանր խանգարումներով երեխաների համար, 1 հատուկ ֆիզմաթ դպրոց, ՌԴ ՊՆ 1 միջնակարգ դպրոց, 1 կերպարվեստի դպրոց, 2 արվեստի դպրոց, 1 երաժշտական դպրոց, 1 կենտրոնացված գրադարանային համալիր՝ 2 մանսաճյուղով, 1 մարզադպրոց, 1 մշակութային կենտրոն, 1 շախմատի դպրոց, 3 թանգարան, 5 ԲՈՒՀ, 2 քոլեջ, միջնակարգ մասնագիտական 1 ուսումնարան: Քանաքեռ-Զեյթուն շրջանում գործում է 1 մարզադպրոց, 1 շախմատի դպրոց:

2018-2022թթ. նախատեսվող աշխատանքներ

• Մշակութային միջոցառումների իրականացում

Ծրագրի նպատակը

Բնակչության հանգստի պատշաճ կազմակերպման, երեխաների ընդգրկվածության մեծացման, բակային ընկերասիրության, տոն և հիշատակի օրերի համատեղ անցկացման նպատակով վարչական շրջանում մշակութային միջոցառումների իրականացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագիրը նախատեսում է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի կողմից կրթամշակութային հաստատությունների՝ մշակույթի տան, կենտրոնացված գրադարանային համալիրի, երաժշտական և արվեստի դպրոցների գործունեության կազմակերպում, դրանց շենքային պայմանների բարելավում, հիմնանորոգում, ընթացիկ նորոգում, գույքի թարմացում: Ծրագրի շրջանակներում կիրականացվեն պարտադիր միջոցառումներ՝ տոն և հիշատակի օրերին՝ «Հայոց բանակի օր», «Տյառնընդառաջի տոն», «Ռուսաստանի Դաշնության Զինված ուժերի օր», «Կանանց միջազգային օր», «Հայոց Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր», «Աշխատանքի օր», «Հաղթանակի օր և Շուշիի ազտագրման օր», «Ռուս սահմանապահի օր», «Երեխաների պաշտպանության միջազգային օր», «Ս. Աստվածածնի և խաղաղօրհների տոն», «ՀՀ Անկախության հռչակման օր», «Երևանի օր», «Ամանորի և Սուրբ Ծննդյան տոներ»:

Նախատեսվում է նաև կազմակերպել Բարեկենդանի տոն, Թատրոնի միջազգային օր, Հարության տոն՝ «Ձատիկ», Ընտանիքի օր, Թանգարանների միջազգային օր, Առաջին Հանրապետության օր, ՀՀ սահմանադրության օր և պետ. խորհրդանշանների օր, նկարչության օր, Վարդավառ, Երաժշտության միջազգային օր, Պարի միջազգային օր, Գրադարանավարի օր, Բերքի տոն, Ուսանողների միջազգային օր:

«Երևանյան ամառ» ծրագրի շրջանակներում կազմակերպվում են բակային ժամանցային ծրագրեր, ճամբարներ՝ հնգօրյա տևողությամբ, մի քանի փուլով: «ՀՕՖ» և «ԶՍՏԻԿ» երեխաների աջակցման կենտրոնների և Մարի Իզմիրյանի անվան մասնագիտացված մանկատան երեխաների համար կազմակերպվում են էքսկուրսիաներ, զվարճալի ժամանց:

• Սպորտային միջոցառումների կազմակերպում և անցկացում

Ծրագրի նպատակը

Ծրագրի նպատակն է մեծացնել Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի բնակիչների ներգրավվածությունը սպորտային կյանքին, մարզաառողջարարական ծրագրերին, խրախուսել առողջ ապրելակերպը երիտասարդության շրջանում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում կիրականացվեն օրացույցային պլանով նախատեսված միջոցառումներ.

- 1.«Անկախության տոնին նվիրված խաղեր» (վոլեյբոլ, բասկետբոլ, հանդբոլ, սեղանի թենիս, ֆուտբոլ, թեթև ատլետիկա):
- 2.«Ազգային ժողովի գավաթի խաղարկություն» 1-ից 6-րդ դասարանցիների միջև (թեթև ատլետիկա):
3. ՀՀ նախագահի մրցանակի համար «Լավագույն մարզական ընտանիք» հանրապետական մրցույթ փառատոն:
- 4.«Առողջ սերունդ, պաշտպանված հայրենիք» համաքաղաքային ամենամյա ավանդական բակային փառատոն (ֆուտբոլ, վոլեյբոլ, հանդբոլ, բասկետբոլ, հեծանվավազք, մարզատրամպանական խաղեր):

5.Նախագորակոչային և գորակոչային տարիքի դպրոցականների ռազմամարզական խաղեր:

6. Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի հանրակրթական դպրոցների աշակերտների միջև անցկացվող սպորտլանդիա:

7.Շախմատի առաջնություն՝ շախմատի դպրոցի, «Զեյթուն» մշակ. կենտրոնի, Ա. Տեր-Ղևոնդյանի անվ. երաժշտ. դպրոցի սաների միջև:

8. Շաշկիի առաջնություն «Զեյթուն» մշակ. կենտրոնի սաների միջև:

Նախատեսվում է շախմատային առաջնությունների, ֆուտբոլի ընկերական հանդիպումների և այլ սպորտաձևերի մրցումների կազմակերպում:

- **Կրթական միջոցառումների իրականացում**

Ծրագրի նպատակը

Արժևորել կրթության նշանակությունը և ուսուցչի դերը երեխաների ձևավորման և դաստիարակության գործընթացում: Խոցելի խավի ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմերպմանն ուղղված կրթական, ճանաչողական ծրագրերի իրականացում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել հետևյալ միջոցառումները՝ «Վերջին Զանգ», «Մանկապարտեզների ավարտական հանդեսներ», «Գիտելիքի օր՝ սեպտեմբերի 1», «Ուսուցչի օր», «Սպորտլանդիա»՝ մանկապարտեզների սաների մասնակցությամբ:

3.Կանաչ տարածքների պահպանում և խնամք

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանում առկա է 52հա կանաչ տարածք, մեկ զբոսայգի և հինգ պուրակ, գործում է 17.5կմ ռոդման ջրագիծ:

2018-2022թթ. նախատեսվող աշխատանքներ

- **Կանաչ տարածքների ստեղծում, պահպանում և խնամք:**

Ծրագրի նպատակը

Վարչական շրջանի կանաչ տարածքի ընդլայնում, չոռոզվող տարածքների բարեկարգում և կանաչապատում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Վարչական շրջանում նախատեսվում է կանաչ տարածքների ընդլայնում, պահպանում, կանաչապատում և ռոդման ցանցերի ընթացիկ վերանորոգում: Նախատեսվում է կատարել ծառատունկ, կանաչ տարածքների ծաղկապատում, սիզամարգերի բարեկարգում և ռոդման ցանցի վերականգնում: Կիրականցվի չոր ծառերի հատում և երիտասարդացում, հիվանդ ծառերի խորը էտ, բուծում՝ թունաքիմիկատներով: Ծրագիրը կներառի նաև թվով 10 հուշարձանների հարակից տարածքների պահպանում և խնամք:

4.Սոցիալական ապահովություն և առողջապահություն

Վարչական շրջանում գործում է երեք բարեգործական ճաշարան, որոնցում ընդգրկված է մոտ 450 շահառու: Վարչական շրջանում է գտնվում Սոցիալական տունը, որտեղ ժամանակավոր կացարան է հատկացվել մոտ 45 անօթևանների: Վարչական շրջանի տարածքում գործում է 7 հիվանդանոց և 2 պոլիկլինիկա:

2018-2022թթ. նախատեսվող աշխատանքներ

- **Սոցիալապես անապահով անձանց և ընտանիքներին աջակցություն**

Ծրագրի նպատակը

Ծրագիրն ուղղված է Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի սոցիալապես անապահով ընտանիքներին օգնություն (ֆինանսական և պարենային) ցուցաբերելուն:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է սոցիալական բեռի թեթևացման նպատակով ֆինանսական, նյութական և պարենային աջակցության ցուցաբերում: Սոցիալապես անապահով ընտանիքների անդամներին անվճար բաղնիքի ծառայության մատուցման համար կտրոնների տրամադրում, ինչպես նաև սոցիալապես անապահով ընտանիքների անդամներին ու հարազատ չունեցող անձանց հուղարկավորության արարողության ծախսերի աջակցություն:

- **Սոցիալապես անապահով ընտանիքներին տոնական և հիշակի օրերին աջակցություն**

Ծրագրի նպատակը

Սոցիալապես անապահով ընտանիքներին ու անձանց տոնական և հիշատակի օրերին դրամական, պարենային, նյութական աջակցության ցուցաբերում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրի շրջանակներում կտրամադրվի դրամական աջակցություն փետրվարի 23-ի և մայիսյան հաղթանակների տոների կապակցությամբ՝ ՀՄՊ և թիկունքի վետերաններին, զոհված ազատամարտիկների ընտանիքներին, հաշմանդամություն ունեցող ազատամարտիկներին, տարեցների միջազգային օրվա կապակցությամբ՝ շրջանի ամենատարեց բնակիչներին: Ընտանիքի միջազգային օրվա կապակցությամբ 4 և ավելի երեխա ունեցող ընտանիքներին, աշխատանքի օրվա կապակցությամբ աշխատանքի վետերաններին, հաշմանդամություն ունեցող անձանց օրվա կապակցությամբ առավել կարիքավոր հաշմանդամություն ունեցող անձանց, Ամանորի ու Սբ. Ծննդյան տոների կապակցությամբ սոցիալապես անապահովներին կտրամադրվի սննդի փաթեթներ: Սոցիալապես անապահով ընտանիքների դպրոցահասակ երեխաներին սեպտեմբերի 1-ի կապակցությամբ կհատկացվի դպրոցական պարագաների փաթեթ, ինչպես նաև երեխաների պաշտպանության միջազգային օրվա կապակցությամբ սոցիալապես անապահով, բազմազավակ ընտանիքների երեխաներին, մանկուց հաշմանդամություն ունեցող երեխաներին կտրամադրվեն նվերներ:

- **Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում**

Ծրագրի նպատակը

Սոցիալապես անապահով ընտանիքների երեխաների ամառային հանգստի կազմակերպում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Նախատեսվում է զոհված, հաշմանդամություն ունեցող զինծառայողների, ծնողազուրկ ու սակավ ապահովված բազմազավակ ընտանիքների 7-13 տարեկան երեխաների ամառային հանգստի կազմակերպում Ծաղկաձորում, վարչական շրջանում գործող ՀԿ-ների հետ համատեղ բակային ճամբարների կազմակերպում, ինչպես նաև երկկողմանի և միակողմանի ծնողազուրկ երեխաների մեկօրյա հանգստի կազմակերպում:

- **Բարեգործական ճաշարանների գործունեության կազմակերպում**

Ծրագրի նպատակը

Առավել կարիքավոր ընտանիքներին ու անձանց օրական մեկանգամյա սննդի տրամադրում:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Ծրագրով նախատեսվում է վարչական շրջանում գործող Գերմանական Կարմիր Խաչի «Գթության խոհանոց» բարեգործական ճաշարանին ֆինանսական աջակցություն (սննդի պատրաստման համար), ինչպես նաև տոնական օրերին (Ամանոր, Մարտի 8, Մր. Հարության տոն) բարեգործական ճաշարանների թվով 350 շահառուների համար տոնական միջոցառումների կազմակերպում:

- **Համագործակցություն շրջանում գործող հասարակական կազմակերպությունների և հիմնադրամների հետ**

Ծրագրի նպատակը

Շրջանում գործող հասարակական կազմակերպությունների ու հիմնադրամների հետ համատեղ ծրագրերի իրականացում՝ ուղղված սոցիալական բեռի թեթևացմանը:

Ծրագրի համառոտ նկարագրություն

Սոցիալապես անապահով ընտանիքների ու սոցիալական տարբեր խմբերի անձանց համար տարաբնույթ համատեղ ծրագրերի (պարենային, նյութական աջակցության ցուցաբերում) իրականացում, տոնական օրերին համատեղ միջոցառումների կազմակերպում: ասֆ Աջակցություն հասարակական կազմակերպությունների գործունեությանը՝ այցելություն ԼՂՀ զորամասեր և ՀՀ սահմանամերձ շրջաններ: